GLOBAL CREDIT

RENESA
investment company

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱԶԴԱԳԻՐ

ԹՈՂԱՐԿՈՂ՝

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒնիվերսալ վարկային կազմակերպություն
փակ բաժնետիրական ընկերություն
ՀՀ, ք. Երևան, 0054, Սասնա Ծռեր 2 շենք, թիվ 251 տարածք
Հեռ.՝ +(374 11) 70 01 00, 70 02 00, Ֆաքս՝ +(374 11) 70 01 00
Էլ.փոստ՝ info@globalcredit.am
Ինտերնետային կայք՝ www.globalcredit.am

ԳԼԽԱՎՈՐ ՏԵՂԱԲԱՇԽՈՂ՝

«ՌԵՆԵՍԱ» փակ բաժնետիրական ընկերություն
ՀՀ, ք.Երևան, Վարդանանց 16
Հեռ.՝ +(374 10) 54 83 87, Ֆաքս՝ +(374 10) 54 83 83
Էլ.փոստ՝ info@renesa.am
Ինտերնետային կայք՝ www.renesa.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԱՆՑՎԱԾ Է ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ
օրը 31 ամիս 10 տարի 19

Գրանցված է ՀՀ ԿԲ նախագահի
թիվ N 1/825Ա որոշմամբ:

ԱՌԱՋԻՆ ՏՐԱՆՇ

Արժեթղթերի դասը, տեսակը՝	*անվանական արժեկտրոնային պարտատոմս*
Արժեթղթերի ձևը՝	*ոչ փաստաթղթային*
Արժեթղթերի քանակը՝	*10,000 (տասը հազար) հատ*
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	*100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար*
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	*1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար*
Արժեկտրոն՝	*6.5 (վեց ամբողջ հինգ տասնորդական) %*
Շրջանառության ժամկետը՝	*2 (երկու) տարի*
Տեղաբաշխման ձևը՝	*չերաշխավորված*

ԵՐԿՐՈՐԴ ՏՐԱՆՇ

Արժեթղթերի դասը, տեսակը՝	*անվանական արժեկտրոնային պարտատոմս*
Արժեթղթերի ձևը՝	*ոչ փաստաթղթային*
Արժեթղթերի քանակը՝	*50, 000 (հիսուն հազար) հատ*
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	*10, 000 (տասը հազար) ՀՀ դրամ*
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	*500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ*
Արժեկտրոն՝	*9 (ինը) %*
Շրջանառության ժամկետը՝	*1 (մեկ) տարի*
Տեղաբաշխման ձևը՝	*չերաշխավորված*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

		էջ
	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ	5
ԲԱԺԻՆ 1	ԱՄՓՈՓԱԹԵՐԹ	
1.1	Տեղեկատվություն Թողարկողի և Թողարկողի գործունեության վերաբերյալ	7
1.2	Թողարկողին և թողարկողի արժեթղթերին առնչվող ռիսկերը	12
1.3	Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները	14
1.4	Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին տեղեկություններ	15
1.5	Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը	16
1.6	Թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ հիմնական տվյալները	17
1.7	Արժեթղթերի առաջարկի և առևտրին թույլտվության համակողմանի նկարագիրը	18
1.8	Կազմակերպության ամփոփ ֆինանսական տվյալները	19
ԲԱԺԻՆ 2	ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	
2.1	Ռիսկային գործոններ	22
2.2	Հիմնական տեղեկատվություն	24
2.3	Տեղեկատվություն առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ	25
2.4	Առաջարկի ժամկետները և պայմանները	34
2.5	Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	38
2.6	Լրացուցիչ տեղեկատվություն	39
ԲԱԺԻՆ 3	ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	
3.1	Անկախ աուդիտորները	40

3.2	Ռիսկային գործոններ	41
3.3	Տեղեկատվություն Թողարկողի մասին	47
3.4	Բիզնեսի նկարագիրը	48
3.5	Թողարկողի կառուցվածքը	58
3.6	Զարգացման վերջին միտումները	59
3.7	Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը	60
3.8	Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները	61
3.9	Հսկող անձինք	67
3.10	Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին	67
3.11	Էական պայմանագրեր	68
3.12	Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը	68
3.13	Այլ տեղեկատվություն	69
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	

GLOBAL CREDIT

RENESA
investment company

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

Էդուարդ Մարության	**Խորհրդի նախագահ**		29.10.2019թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արայիկ Կարապետյան	**Խորհրդի անդամ**		29.10.2019թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Լուիզա Իգրարյան	**Խորհրդի անդամ և Գործադիր տնօրեն**		29.10.2019թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արամ Ղուկասյան	**Գործադիր տնօրենի տեղակալ**		29/10/2019թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արթուր Կարապետյան	**Գործադիր տնօրենի տեղակալ**		29.10.19թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Օնիկ Խերանյան	**Վերստուգիչ**		29.10.2019թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սուսաննա Խաչատրյան	**Գլխավոր հաշվապահ**		29.10.19թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Վաղինակ Սարոյան	**«ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ Գործադիր տնօրեն**		29.10.19թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը պետք է դիտվի որպես «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Թողարկող» կամ «Ընկերություն») պարտատոմսերի ազդագրի (այսուհետ՝ «Ազդագիր») ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ազդագրի վրա:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ծեռք բերել Ազդագիրը և դրան կից ներկայացվող փաստաթղթերը փաստաթղթային տարբերակով Թողարկողի և/կամ «ՌԵՆԵՍԱ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Տեղաբաշխող) գրասենյակներից, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ վերջիններիս www.globalcredit.am և www.renesa.am ինտերնետային կայքերից:

1.1 Տեղեկատվություն Թողարկողի և Թողարկողի գործունեության վերաբերյալ

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է.

հայերեն՝ «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն

ռուսերեն՝ Закрытое акционерное общество Универсальная кредитная организация “ГЛОБАЛ КРЕДИТ”

անգլերեն՝ “GLOBAL CREDIT” closed joint-stock company universal credit organization

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է.

հայերեն՝ «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ

ռուսերեն՝ ЗАО УКО “ГЛОБАЛ КРЕДИТ”

անգլերեն՝ “GLOBAL CREDIT” UCO CJSC

Թողարկողի պետական գրանցման համարը՝ 35, տրված՝ 26.10.2010թ., փոփոխված 10.04.2015թ.

Թողարկողի գտնվելու վայրն է՝ ՀՀ, քաղաք Երևան, 0054, Սասնա Ծռեր 2 շենք, թիվ 251 տարածք

Կապի միջոցները՝ *Հեռ.՝* +(374 11) 70 01 00, 70 02 00
Ֆաքս՝ +(374 11) 70 01 00
Էլ.փոստ՝ info@globalcredit.am
Ինտերնետային կայք՝ www.globalcredit.am

Թողարկողի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն

Ընկերությանը և թողարկվող արժեթղթերին առնչվող հարցերի դեպքում կարելի է կապնվել Ընկերության գործադիր տնօրենի տեղակալ Արամ Ղուկասյանի հետ հետևյալ հեռախոսահամարներով՝ +(374 11) 70 01 00, 70 02 00, +(374 55) 41 11 41 (էլ.փոստ՝ ghukasyan@globalcredit.am):

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» Ունիվերսալ վարկային կազմակերպությունը (համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 26.10.2010թ. թիվ 267Ա որոշման) գրանցված ունիվերսալ վարկային կազմակերպություն է, որը հիմնադրվել է «Վաշինգթոն Քափիթալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ և «Կրեդիտ Յունիոն» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ միաձուլման արդյունքում: Հիմնադրման առաջին իսկ օրվանից «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ ակտիվ գործունեություն է ծավալում ՀՀ վարկավորման շուկայում՝ առաջարկելով վարկերի լայն տեսականի հասարակության տարբեր շերտերի և նպատակների համար:

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն 2014թ.ին ձեռք է բերել նաև ՀՀ գյուղատնտեսության բնագավառում ակտիվ վարկային գործունեություն ծավալած «Ջի Էֆ Սի Ջեներալ Ֆայնենշլ Ընդ Քրեդիթ Քոմփանի» ՈՒՎԿ ՍՊԸ-ի 100% բաժնեմասը, որն էլ այնուհետև ՀՀ օրենսդրության համաձայն միացել է «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ին (մասնակիցների/բաժնետերերի համատեղ ընդհանուր ժողովի 2014թ. հունիսի 09-ի որոշմամբ (արձանագրություն թիվ 03)):

Ներկայումս ընկերությունը հանդիսանում է «ԿՐԵԴԻՏ ՅՈՒՆԻՈՆ», «ՎԱՇԻՆԳԹՈՆ ՔԱՓԻԹԱԼ» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերությունների և «Ջի Էֆ Սի Ջեներալ Ֆայնենշլ Ընդ Քրեդիթ Քոմփանի» ՈՒՎԿ ՍՊԸ-ի իրավահաջորդը:

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ գործունեության **նպատակն ու առաքելությունը** ՀՀ ֆինանսական շուկայի առաջատար դիրքերում հայտնվելն է, հանրությանը վարկային գործառնությունների իրականացման լայն հնարավորություններով ներկայանալն ու նոր վարկատեսակների մշակմամբ ու ներդրմամբ մրցակցային շուկայում լուրջ դերակատարություն ունենալը:

Թողարկողի գործունեության **հիմնական ռազմավարությունը** նպատակաուղղված է ակտիվ վարկային քաղաքականության վարմանը: Վերջինս իր դրսևորումներն է ստացել վարկերի առավել լայն տեսականու, ինչպես նաև վարկերի տրամադրման առավել մատչելի պայմանների առաջարկմամբ, վարկերի տրամադրման ու վարկային ծառայությունների մատուցման մասնագիտական մոտեցմամբ, հաճախորդների սպասարկման որակի բարձրացմամբ և այլն: Ընկերության առաքելության կարևոր կողմերից է նաև բնակչության առավել խոցելի և համեմատաբար ցածր եկամուտներ ունեցող և տնտեսապես ակտիվ բնակչության համար փոխառու միջոցների հասանելի դարձնելը, ինչպես նաև վարկառուների կենսամակարդակի բարելավումը:

Թողարկողի կանոնադրական կապիտալը 31.07.2019թ. կազմում է 2,000,000,000 (երկու միլիարդ) ՀՀ դրամ, որը բաժանված է 2 000 000 (երկու միլիոն) սովորական բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

2019թ.-ի հուլիսի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերն են հանդիսանում՝

Բաժնետերեր և ներդրողներ	Մասնակցության չափը կանոնադրական կապիտալում	Բաժնետոմսերի քանակը
Գագիկ Նիկոլի Վարդանյան	33.52995%	670 599
Էդուարդ Մուրադի Մարության	33.3314%	666 628
Արայիկ Ռազմիկի Կարապետյան	28.1186%	562 372
Կարեն Իլյիչի Դարբինյան	5.02005%	100 401

Բիզնեսի նկարագիրը

Թողարկողը՝ հանդիսանալով ունիվերսալ վարկային կազմակերպություն, իրականացնում է «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով և Թողարկողի կանոնադրությամբ (այսուհետ՝ «Կանոնադրություն») սահմանված ֆինանսական գործառնությունները:

Ընկերությունը ֆինանսական ծառայություններ է մատուցում գրեթե բոլոր ոլորտներում: Մասնավորապես, Թողարկողն ակտիվ է ինչպես առևտրի, այնպես էլ արտադրության ու սպասարկման ոլորտի ֆինանսավորման մեջ: Միաժամանակ Ընկերությունն իր ամուր դիրքերն է պահում գյուղատնտեսության ֆինանսավորման ոլորտում՝ միկրոֆինանսական և գյուղատնտեսական վարկեր տրամադրելով Հայաստանի Հանրապետության 7 (յոթ) մարզերում: Թողարկողը, համագործակցելով մի շարք պետական և միջազգային մասնավոր կառույցների հետ, ներգրավված և սեփական ռեսուրսներով ակտիվորեն իրականացնում է նաև հիփոթեքային վարկավորում՝ ֆինանսավորելով բնակելի անշարժ գույքի ձեռքբերումը, վերանորոգումը և կառուցապատումը: Էներգախնայողությանը և արևային էներգիայի օգտագործմանն ուղղված

նախագծերի վարկավորման շրջանակներում Ընկերությունը հանդիսանում է առաջատարներից մեկը: Տրամադրվում են վարկեր ֆիզիկական և իրավաբանական անձանց ինչպես արևային ջրատաքացուցիչների, այնպես էլ ֆոտովոլտային փոքր կայանների տեղադրման և շահագործման նպատակով: Ֆինանսավորման ակտիվ ուղղություններից է նաև սպառողական վարկավորումը, ինչը հաճախորդների կողմից նույնպես ունի մեծ պահանջարկ:

Վերոհիշյալ բոլոր ուղղություններն էլ Ընկերության համար ունեն առաջնային նշանակություն: Նախատեսվում է նշված վարկային պրոդուկտների պորտֆելների մակարդակի պահպանում և աճ: Վարկավորման ծավալների ավելացման, ինչպես նաև մրցակցային դիրքի պահպանման նպատակով մի կողմից դիվերսիֆիկացվում են ներգրավվող փոխառու միջոցների ուղղությունները, իսկ մյուս կողմից Ընկերության բաժնետերերն ավելացնում են կազմակերպության կանոնադրական կապիտալը: Բացի դա, Ընկերության վարկային գործիքների նկատմամբ աճող պահաջարկի բավարարման, ինչպես նաև հետագա աճի ապահովման, վարկերի տրամադրման գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման նպատակով ստեղծվում են վարկերի տրամադրման նոր ուղղություններ, մասնավորապես վեբ կայքի միջոցով առցանց դիմումների ընդունում և վարկի հաստատում, առցանց վարկավորում, ֆակտորինգային նախագծեր, վարկավորում բջջային հավելվածների միջոցով և այլն:

Ֆինանսական գործառնությունները Ընկերության կողմից իրականացվում են ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով կանխիկ և անկանխիկ եղանակներով:

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն իր ակտիվ վարկային քաղաքականությունն իրականացնում է նաև շնորհիվ տեղական և միջազգային համագործակցող ֆինանսական կազմակերպությունների.

- «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ,
- «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ,
- Գյուղական ֆինանսավորման կառույց-ծրագրերի իրականացման գրասենյակ («ԳՖԿ-ԾԻԳ») պետական հիմնարկ,
- «Արտաքին ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» Պետական հիմնարկ (ԱՖԾԿԿ),
- «Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամ,
- Frontier Markets Advisory F.Z.E. ընկերություն,
- Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
- ««Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ» հիմնարկ (ԳՀՀ-ԾԳԿ)

Ընկերությունը անդամակցում է նաև *«Վարկային կազմակերպությունների միությանը»:*

Ընկերության վարկային պրոդուկտների սակագների էական աճ վերջին տարում չի արձանագրվել, իսկ իրականացված գրեթե բոլոր փոփոխություններն ուղղված են եղել ծառայությունների մատուցման որակի բարձրացմանը և տնտեսության տարբեր ոլորտներին վարկավորվելու հնարավորության մեծացմանը:

Թողարկողի ակտիվների և եկամտաբեր ակտիվների վերաբերյալ տեղեկատվությունը վերջին երկու տարիների՝ 2017 և 2018թթ.-երի վերջի և 2019թ.-ի առաջին կիսամյակի դրությամբ ներկայացվում է ստորև.

Հազ.ՀՀ դրամ

	2019թ. 1-ին կիս.	2018թ.	2017թ.
Ընդհանուր ակտիվներ	**28,441,343**	**27,840,215**	**16,591,451**
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝	**27,324,686**	**25,806,481**	**15,967,116**
- Ներդրումային արժեթղթեր	7,939,850	8,397,644	3,388,879
- Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ, դրամական շուկայում տեղաբաշխումներ, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	19,384,836	17,408,837	12,578,237
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում (%)	**96.07%**	**92.69%**	**96.24%**

Թողարկողը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ճանաչվել է «ԳԼՈԲԱԼ ԿԵՐԵԴԻՏ ԵՎ ՌԵՆԵՍԱ» ֆինանսական խմբի անդամ: Վերոնշյալ խմբի անդամներ են հանդիսանում «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն և «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ-ն: Ընկերությունը նաև «ՌԵՆՇԻՆ» ՍՊԸ-ի հետ ունի ընդհանուր սեփականատերեր և ընդհանուր շահեր:

Ընկերությունը չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

Ընկերության կազմակերպական կառուցվածքը ներկայացվում է ստորև.



1.2 Թողարկողին և թողարկողի արժեթղթերին առնչվող ռիսկերը

- **Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկեր**

Թողարկվող պարտատոմսերում ներդրում կատարելը համարվում է ռիսկային և յուրաքանչյուր ներդրող պարտատոմսերում ներդրում կատարելու վերաբերյալ որոշում կայացնելուց առաջ պետք է ուսումնասիրի և գնահատի ներդրումների հետ կապված բոլոր հնարավոր ռիսկերը:

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված, ինչպես նաև Թողարկողի գործունեությանը առնչվող բոլոր ռիսկերը հնարավոր չէ ներկայացնել Ազդագրում: Այստեղ ներկայացված են միայն նրանք, որոնք Թողարկողի և Տեղաբաշխողի կարծիքով էական են:

Ներդրողները, ձեռք բերելով պարտատոմսեր, ենթարկվում են հետևյալ ռիսկերի.

Շուկայական կամ տոկոսադրույքի ռիսկ (market, or interest-rate risk)

Տոկոսադրույքի փոփոխությունը հանգեցնում է պարտատոմսի գնի փոփոխությանը: Պարտատոմսի գինը և տոկոսադրույքը գտնվում են հակադարձ կախվածության մեջ, այսինքն՝ տոկոսադրույքի բարձրացման պայմաններում պարտատոմսի գինն ընկնում է, և հակառակը:

Վերաներդրման ռիսկ (reinvestment risk)

Սա պարտատոմսի եկամտաբերության նվազեցումն է, պայմանավորված այն հանգամանքով, որ պարտատոմսից ստացված տոկոսները/արժեկտրոնային վճարները կամ պարտատոմսի մարման ժամանակ ստացվող միջոցները կվերաներդրվեն ավելի ցածր տոկոսադրույքով:

Անվճարունակության ռիսկ (insolvency risk)

Այս ռիսկը դրսևորվում է Թողարկողի կողմից ներդրողների հանդեպ իր պարտավորությունների չկատարմամբ կամ ոչ լիարժեք կատարմամբ: Ներդրողները ներդրումային որոշումներ կայացնելիս պետք է հաշվի առնեն այդ հանգամանքը և ուշադրություն դարձնեն Թողարկողի անվճարունակության ի հայտ գալու հավանականությանը, ինչը ենթադրում է Թողարկողի եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունների պարբերաբար ուսումնասիրություն, ինչպես նաև մատուցվող ծառայությունների հուսալիության գնահատում:

Գնաճային ռիսկ (inflation risk)

Այս ռիսկի էությունը կայանում է նրանում, որ պարտատոմսերի իրական եկամտաբերության մակարդակը կարող է լինել զրոյական կամ բացասական՝ կապված գնաճի մակարդակից: Գնաճի բարձր մակարդակի դեպքում Թողարկողի կողմից պարտատոմսերի դիմաց առաջարկվող եկամտաբերությունը կարող է դառնալ ոչ շահավետ:

Արտարժութային ռիսկ (exchange-rate or currency risk)

Տվյալ ռիսկը առաջանում է փոխարժեքի անբարենպաստ փոփոխության կամ տատանումների արդյունքում, ինչը կարող է հանգեցնել ներդրողի մոտ պարտատոմսերից ստացվող եկամտի նվազեցմանը:

Իրացվելիության ռիսկ (liquidity risk)

Միշտ գոյություն ունի այն ռիսկը, որ ներդրողը չի կարող վաճառել իր պարտատոմսը երկրորդային շուկայում կամ կարող է վաճառել սակայն իր համար ոչ շահավետ գնով՝ պայմանավորված պարտատոմսերի շուկայի իրացվելիության և զարգացվածության ցածր մակարդակով:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկ (legal risk)

Շուկան կարգավորող և Թողարկողի գործունեությանը վերաբերող օրենսդրական դաշտի փոփոխությունները կարող են ազդել արժեթղթերից ստացվող եկամուտների վրա:

Աշխարհաքաղաքական ռիսկ (geopolitical risk)

ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վրա կարող են ազդել քաղաքական, տարածաշրջանային, ինչպես նաև միջազգային աշխարհաքաղաքական իրավիճակների փոփոխությունները, ինչն էլ իր անմիջական ազդեցությունն է ունենում Թողարկողի գործունեության և պարտատոմսերի շուկայի վրա:

- **Թողարկողին առնչվող ռիսկեր**

Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության հետ կապված ռիսկերից կարելի է առանձնացնել նաև Թողարկողի **վարկային ռիսկը**, որը կարող է առաջանալ պայմանավորված վերջինիս պարտապանների կողմից իրենց պարտավորությունների չկատարմամբ, Թողարկողի **իրացվելիության ռիսկը**՝ պայմանավորված ընկերության պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ դրամական միջոցների ոչ բավարար քանակով: Թողարկողի **արտարժութային ռիսկը** առաջանում է փոխարժեքի անբարենպաստ փոփոխության կամ տատանումների արդյունքում, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական դիրքերի և դրամական հոսքերի վրա: Թողարկողին առնչվող ռիսկերից է նաև **համբավի ռիսկը**՝ այն հավանականությունը, որ Ընկերության վերաբերյալ հանրության բացասական կարծիքը (իրականությանը համապատասխանող կամ չհամապատասխանող) կհանգեցնի հաճախորդների թվաքանակի նվազմանը, իրականացվող գործառնությունների ծավալների և Ընկերության եկամուտների կրճատմանը: **Գործառնական ռիսկի** առաջացման պատճառ կարող են հանդիսանալ ներքին գործընթացների անկատարությունը, մարդկանց, համակարգերի ոչ պատշաճ գործունեությունը կամ տեխնիկական միջոցների խափանումը, որոնք կարող են հանգեցնել անկանխատեսելի վնասների: Կարևոր է նաև **մրցակցային ռիսկը**, որն ի հայտ է գալիս ֆինանսական ոլորտին խիստ բնորոշ և անընդհատ աճող մրցակցության պայմաններում, ինչի արդյունքում մրցակիցների գործողությունները կարող են իրենց ազդեցությունն ունենալ Ընկերության ֆինանսատնտեսական ցուցանիշների վրա:

1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման միտումները պայմանավորված են Ընկերության որդեգրած ռազմավարությամբ: Այդ է վկայում Ընկերության վարած ակտիվ քաղաքականությունը վերջին տարիներին, ինչը ամուր հիմք է ստեղծում հետագա գործունեությունը արդյունավետ և տևական ժամանակ շարունակելու համար: Թողարկողի ղեկավար անձինք մշտապես ուշադրություն են դարձնում տնտեսությունում տեղի ունեցող

շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ համապատասխանեցնելով Թողարկողի տնտեսական գործունեությունը վերջիններիս:

2018 թվականի ընթացքում տեղի է ունեցել Ընկերության ակտիվների 67.8% աճ նախորդ տարվա՝ 2017թ.-ի նկատմամբ, որը պայմանավորված է տրամադրված վարկերի, կնքված ռեպո համաձայնագրերի ծավալի աճով: 2018թ.-ի վարկային պորտֆելը 2017թ.-ի համեմատ աճել է 38.4%-ով՝ կազմելով 17,408,837 հազ. ՀՀ դրամ: 2017 թվականի համեմատ, 2018 թվականին սպառողական վարկերը նվազել են՝ 39.7%-ով, սակայն կտրուկ աճ է գրանցվել ավտոմեքենայի ձեռքբերման վարկերի գծով՝ 615.3%: Թողարկողի տարվա զուտ շահույթը շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո 2018թ.-ին կազմել է 504,185 հազ. դրամ, որը 27,940 հազ. ՀՀ դրամով ավել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշից: Չնայած այն հանգամանքին, որ 2017թ.-ի համեմատ 2018թ.-ին 59.5% զուտ տոկոսային եկամուտների գծով աճ է գրանցվել՝ նույն ժամանակահատվածում արժեզրկման գծով ծախսերը 2017թ.-ի համեմատ 119.4%- ով աճել են: 2019թ.-ի հունիսի 30-ի դրությամբ Ընկերության զուտ շահույթը կազմել է 234,553 հազ.դրամ:

Գործունեության անցած տարիների ընթացքում Ընկերության ֆինանսական վիճակի վրա էական բացասական ազդեցություն ունեցող իրադարձություններ տեղի չեն ունեցել, դատական ընդդեմ հայցեր չեն եղել և ներկայիս գնահատականներով առկա չեն այնպիսի գործոններ, որոնք կարող են հետագայում բացասական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական վիճակի և շահութաբերության վրա: Թողարկողի հիմնական տնտեսական գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաները ուժի մեջ են (2010թ.-ի հոկտեմբերի 26-ի ՀՀ Կենտրոնական բանկի թիվ 267 Ա որոշմամբ գրանցվել և լիցենզավորվել է «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը՝ գրանցման վկայական թիվ 107, լիցենզիա թիվ 35): Առաջիկայում հնարավոր է լինեն կազմակերպական փոփոխություններ: Ներկայումս պահպանվում են զարգացման հիմնական միտումները:

1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին տեղեկություններ

Ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով յուրաքանչյուր տարի հրավիրում է արտաքին աուդիտ և անցնում աուդիտորական ստուգում:

Ընկերության 2016թ.-ի ֆինանսական գործունեության աուդիտն իրականացրել է «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ն: «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ն հանդիսանում է ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված և KPMG Europe LLP-ի կողմից վերահսկվող ընկերություն, շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-

Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան փող., 26/1 շենք, «Էրեբունի-Պլազա» բիզնես-կենտրոն 8-րդ հարկ, հեռախոս՝ (+37410) 566 762, ֆաքս՝ (+37410) 566 762, էլ.փոստ՝ general@kpmg.co.am, ինտերնետային կայք՝ www.kpmg.am, տնօրեն՝ Տիգրան Գասպարյան: Թողարկողի 2017-2018թթ.-երի ֆինանսական գործունեության աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն, որը Grant Thornton International Ltd (GTIL)-ի անդամ է: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0012, Վաղարշյան 8/1, հեռախոս՝ (+37410) 26 09 64, ֆաքս՝ (+37410) 26 09 61, էլ.փոստ՝ gta@am.gt.com, ինտերնետային կայք՝ www.grantthornton.am, տնօրեն-բաժնետեր՝ Գագիկ Գյուլբուդաղյան:

1.5 Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը

Ընկերության կանոնադրությամբ սահմանված Թողարկողի կառավարման մարմիններն են՝

ա) ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը

բ) ընկերության խորհուրդը

գ) ընկերության գործադիր տնօրենը

Թողարկողի բաժնետերերը 4-ն են, մասնավորապես՝ Գագիկ Նիկոլի Վարդանյանը (33.53% բաժնեմասով), Էդուարդ Մուրադի Մարությանը (33.33% բաժնեմասով), Արայիկ Ռազմիկի Կարապետյանը (28.12% բաժնեմասով) և Կարեն Իլյիչի Դարբինյանը (5.02% բաժնեմասով):

Թողարկողի խորհուրդը բաղկացած է 3 անդամից՝

Հ/հ	Անուն Ազգանուն	Պաշտոն	Փորձառություն
1.	Էդուարդ Մարության	Խորհրդի նախագահ	25 տարի
2.	Արայիկ Կարապետյան	Խորհրդի անդամ	31 տարի
3.	Լուիզա Իգրարյան	Խորհրդի անդամ	22 տարի

Ընկերության կառավարմանը մասնակցող անձինք են՝

Հ/հ	Անուն Ազգանուն	Պաշտոն	Փորձառություն
1.	Լուիզա Իգրարյան	Գործադիր տնօրեն	22 տարի
2.	Արամ Ղուկասյան	Գործադիր տնօրենի տեղակալ	20 տարի
3.	Արթուր Կարապետյան	Գործադիր տնօրենի տեղակալ	26 տարի

4.	Օնիկ Խերանյան	Վերստուգիչ	15 տարի
5.	Սուսաննա Խաչատրյան	Գլխավոր հաշվապահ	21 տարի

Ընկերությունը 30.06.2019թ.-ի դրությամբ ունեցել է 82 (ութսուներկու) աշխատակից և թվով 14 առանձնացված ստորաբաժանում: Առաջիկայում կազմակերպական էական փոփոխություններ չեն ակնկալվում:

1.6 Թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ հիմնական տվյալներ.

Առաջին տրանշ

Թողարկվող պարտատոմսերն անվանական, արժեկտրոնային, անբաժանելի, ոչ փաստաթղթային և առանց ապահովվածության պարտատոմսեր են: Թողարկվող և տեղաբաշխվող պարտատոմսերի ծավալը 1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար է, քանակը՝ 10,000 (տասը հազար) հատ: Մեկ պարտատոմսի անվանական արժեքը 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար է: Շրջանառության ժամկետը 24 (քսանչորս) ամիս է, արժեկտրոնի տոկոսադրույքը տարեկան ֆիքսված 6.5 (վեց ամբողջ հինգ տասնորդական) տոկոս է՝ արժեկտրոնների կիսամյակային վճարումների պարբերականությամբ: Թողարկվող պարտատոմսերը փոխարկելի չեն և չունեն հետգնման հնարավորություն: Թողարկման արժույթն ԱՄՆ դոլարն է:

Արժեկտրոնային եկամուտների կուտակումը կկատարվի տեղաբաշխման օրվանից սկսած, իսկ վճարումը կատարվելու է տեղաբաշխման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ և 24-րդ ամիսների համապատասխան օրերին: Եթե արժեկտրոնային եկամտի վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարումը կկատարվի այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու է ԱՄՆ դոլարով, սակայն վճարումը կկատարվի համարժեք ՀՀ դրամով անկանխիկ եղանակով՝ հաշվարկված վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքով:

Պարտատոմսերի մարումը կկատարվի թողարկման և տեղաբաշխման օրվանից (թողարկման և տեղաբաշխման օրերը նույնն են) հաշվարկված 24-րդ ամսվա համապատասխան օրը: Եթե մարման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարումը կկատարվի տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պարտատոմսի մարման և վճարման ամսաթվերը նույնն են:

Երկրորդ տրանշ

Թողարկվող պարտատոմսերն անվանական, արժեկտրոնային, անբաժանելի, ոչ փաստաթղթային և առանց ապահովվածության պարտատոմսեր են: Թողարկվող և տեղաբաշխվող պարտատոմսերի ծավալը 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ է, քանակը՝ 50,000 (հիսուն հազար) հատ: Մեկ պարտատոմսի անվանական արժեքը 10,000 (տասը

հազար) ՀՀ դրամ է: Շրջանառության ժամկետը 12 (տասներկու) ամիս է, արժեկտրոնի տոկոսադրույքը տարեկան ֆիքսված 9 (ինը) տոկոս է՝ արժեկտրոնների կիսամյակային վճարումների պարբերականությամբ: Թողարկվող պարտատոմսերը փոխարկելի չեն և չունեն հետգնման հնարավորություն: Թողարկման արժույթը ՀՀ դրամն է:

Արժեկտրոնային եկամուտների կուտակումը կկատարվի տեղաբաշխման օրվանից սկսած, իսկ վճարումը կատարվելու է տեղաբաշխման օրվան հաջորդող 6-րդ և 12-րդ ամիսների համապատասխան օրերին: Եթե արժեկտրոնային եկամտի վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարումը կկատարվի այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու և վճարվելու է ՀՀ դրամով անկանխիկ եղանակով:

Պարտատոմսերի մարումը կկատարվի թողարկման և տեղաբաշխման օրվանից (թողարկման և տեղաբաշխման օրերը նույնն են) հաշվարկված 12-րդ ամսվա համապատասխան օրը: Եթե մարման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարումը կկատարվի տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պարտատոմսի մարման և վճարման ամսաթվերը նույնն են:

Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցները Թողարկողն օգտագործելու է բացառապես վարկային քաղաքականության ընդլայնման ուղղությամբ, այդ թվում նոր վարկատեսակների մշակման և ներդրման, ինչպես նաև գործող վարկատեսակներով առավել ակտիվ վարկավորման ուղղությամբ: Ընկերությունը նախատեսում է գործող և նոր վարկատեսակների տրամադրմամբ մեծացնել վարկային պորտֆելի ծավալը, բավարարել մատուցվող ֆինանսական ծառայությունների նկատմամբ հաճախորդների աճող պահանջարկը:

1.7 Արժեթղթերի առաջարկի և առևտրին թույլտվության համակողմանի նկարագիրը

Պարտատոմսերի առաջարկն ուղղված է ֆիզիկական և իրավաբանական անձանց (այդ թվում որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողներին), անհատ ձեռնարկատերերին և Թողարկողի բաժնետերերին:

Թողարկողը առաջին և երկրորդ տրանշների տեղաբաշխումն իրականացնելու է միևնույն օրը: Թողարկողի պարտատոմսերը տեղաբաշխվելու են «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի առաջնային տեղաբաշխման հարթակում, ստանդարտ փակ (եվրոպական) մեկանգամյա աճուրդի անցկացման միջոցով՝ համաձայն «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ–ի «Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններ»-ի, ընդ որում աճուրդին ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտեր չեն կարող ներկայացվել:

Առաջարկվող պարտատոմսերի տեղաբաշխման համար նախատեսված է չերաշխավորված տեղաբաշխում՝ լավագույն ջանքերի սկզբունքով: Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնելու նպատակով Թողարկողը «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ ներդրումային ընկերության հետ կնքել է «Տեղաբաշխման ծառայությունների մատուցման» պայմանագիր: Վերջինս պարտավորվում է պայմանագրի դրույթներին համապատասխան իրականացնել Ընկերության անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային 1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար և 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ թողարկման ծավալով պարտատոմսերի չերաշխավորված տեղաբաշխում:

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո Թողարկողը հնարավորինս սեղմ ժամկետում պետք է դիմի Բորսա՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով:

Թողարկողը պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիությունը ապահովելու նպատակով կօգտվի շուկա ստեղծողի (market maker) ծառայություններից, որոնք կմատուցվեն «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ կողմից:

1.8 Ընկերության ամփոփ ֆինանսական տվյալները

Թողարկողի 2015-2019թթ.-ի ֆինանսական ցուցանիշները հետևյալն են՝

N	Ցուցանիշի անվանումը	30.06. 2019թ.*	2018թ.	2017թ.	2016թ.**	2015թ.
1.	Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո, հազ.ՀՀ դրամ, ***(ԶՇ)***	234,553	504,185	476,245	298,889	341,831
2.	Սեփական կապիտալի միջին մեծություն, հազ. ՀՀ դրամ, ***(ՍԿ)***	2,158,890	2,069,055	1,910,740	1,573,266	1,150,732
3.	**Սեփական կապիտալի շահութաբերություն ROE=*(ԶՇ)/(ՍԿ)* , %**	10.86%	24.37%	24.92%	19%	29.71%
4.	Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո, հազ. ՀՀ դրամ, ***(ԶՇ)***	234,553	504,185	476,245	298,889	341,831
5.	Ընդհանուր ակտիվների միջին մեծություն, հազ. ՀՀ դրամ, ***(ՄԸԱ)***	28,140,779	22,215,833	14,326,355	11,170,453	9,400,377

6.	**Ակտիվների շահութաբերություն, ROA=*(ԶՇ)/(ՄԸԱ)* , %**	0.83%	2.27%	3.32%	2.68%	3.64%
7.	Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո, հազ. ՀՀ դրամ, ***(ԶՇ)***	234,553	504,185	476,245	298,889	341,831
8.	Գործառնական եկամուտ, հազ. ՀՀ դրամ, ***(ԳԵ)***	2,695,389	3,227,004	2,009,530	1,204,344	835,577
9.	**Զուտ շահույթի մարժա, NPM=*(ԶՇ)/(ԳԵ)* , %**	8.70%	15.62%	23.7%	24.82%	40.91%
10.	Գործառնական եկամուտ, հազ. ՀՀ դրամ, ***(ԳԵ)***	2,695,389	3,227,004	2,009,530	1,204,344	835,577
11.	Ընդհանուր ակտիվների միջին մեծություն, հազ. ՀՀ դրամ, ***(ՄԸԱ)***	28,140,779	22,215,833	14,326,355	11,170,453	9,400,377
12.	**Ակտիվների օգտագործման գործակից, AU=*(ԳԵ)/(ՄԸԱ)* , %,**	9.58%	14.53%	14.03%	10.78%	8.89%
13.	Ընդհանուր ակտիվների միջին մեծություն, հազ. ՀՀ դրամ, ***(ՄԸԱ)***	28,140,779	22,215,833	14,326,355	11,170,453	9,400,377
14.	Սեփական կապիտալի միջին մեծություն, հազ. ՀՀ դրամ, ***(ՍԿ)***	2,158,890	2,069,055	1,910,740	1,573,266	1,150,732
15.	**Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր, EM=*(ՄԸԱ)/(ՍԿ)***	13.03	10.74	7.5	7.1	8.17
16.	Զուտ տոկոսային եկամուտ, հազ. ՀՀ դրամ, ***(ԶՏԵ)***	1,494,855	2,831,519	1,775,173	1,031,101	672,552
17.	Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն, հազ. ՀՀ դրամ, ***(ՄԵԱ)***	27,315,575	21,636,790	13,681,568	10,674,942	9,029,272
18.	**Զուտ տոկոսային մարժա NIM=*(ԶՏԵ)/(ՄԵԱ)*, %**	5.47%	13.09%	13%	9.66%	7.45%
19.	Տոկոսային եկամուտ, հազ. ՀՀ դրամ, ***(ՏԵ)***	2,461,391	4,400,622	2,707,698	1,812,496	1,358,995

20.	Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն, հազ. ՀՀ դրամ, ***(ՄԵԱ)***	**27,315,575**	**21,636,790**	**13,681,568**	**10,674,942**	**9,029,272**
21.	**Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, *ԵԱԵ=(ՏԵ)/(ՄԵԱ)*, %**	**9.01%**	**20.34%**	**19.8%**	**16.99%**	**15.05%**
22.	Տոկոսային ծախսեր, հազ. ՀՀ դրամ, ***(ՏԾ)***	**966,536**	**1,569,103**	**932,525**	**781,395**	**686,443**
23.	Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, հազ. ՀՀ դրամ, ***(ՏԾՊ)***	**25,990,237**	**25,471,925**	**14,420,812**	**10,076,808**	**8,647,997**
24.	**Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, *ԾՏՊ=(ՏԾ)/(ՏԾՊ)*, %**	**3.72%**	**6.16%**	**6.47%**	**7.75%**	**7.94%**
25.	Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո, հազ. ՀՀ դրամ, ***(ԶՇ)***	**234,553**	**504,185**	**476,245**	**298,889**	**341,831**
26.	Բաժնետոմսերի միջին կշռված թիվը (հատ), ***(ԲՔ)***	**1,500,000**	**1,500,000**	**1,500,000**	**1,500,000**	**1,000,000**
27.	**Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով, հազ. ՀՀ դրամ, *EPS=(ԶՇ)/(ԲՔ)*,**	**0.16**	**0.336**	**0.317**	**0.199**	**0.342**
28.	**Սպրեդ *ՍՊ=(ԵԱԵ)-(ԾՏՊ)*, %**	**5.29%**	**14.18%**	**13.33%**	**9.24%**	**7.11%**

*** Նշյալ ժամանակաշրջանի տվյալները հաստատված չեն արտաքին աուդիտի կողմից**

**** Վերահաշվարկված**

ԲԱԺԻՆ 2. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1 Ռիսկային գործոններ

Ներդրումները արժեթղթերում մշտապես ուղեկցվում են ռիսկերով: Պարտատոմսերը կարող են ներդրողների համար ապահովել հաստատուն եկամուտների հոսք, ինչպես նաև օգնել նվազեցնել փաթեթի ռիսկը: Չնայած այս հանգամանքին՝ գոյություն ունեն մի շարք ռիսկային գործոններ, որոնք կարող են արժեզրկել պարտատոմսերը և որոնց մասին պետք է իմանա յուրաքանչյուր ներդրող: Այդ իսկ պատճառով, նախքան ներդրումային որոշում կայացնելը անհրաժեշտ է, որպեսզի ներդրողը մանրամասն ուսումնասիրի և գնահատի ներդրման հետ կապված ռիսկերը, որից հետո միայն կատարի ներդրումներ թողարկվող պարտատոմսերում:

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված, ինչպես նաև Թողարկողի գործունեությանը առնչվող բոլոր ռիսկերը հնարավոր չէ ներկայացնել Ազդագրում: Այստեղ ներկայացված են միայն այն ռիսկային գործոնները, որոնք Թողարկողի և Տեղաբաշխողի կարծիքով էական են: Միաժամանակ ներդրողը պետք է գիտակցի և հաշվի առնի այն հանգամանքը, որ ներքոնշյալ ռիսկերից բացի հնարավոր է նաև այլ անցանկալի իրավիճակների և երևույթների առաջացում, որոնք հետագայում կարող են ազդել թողարկողի ֆինանսական դրության և պարտատոմսերի գնի, իրացվելիության ու եկամտաբերության վրա:

Ներդրողները, ձեռք բերելով պարտատոմսեր, ենթարկվում են հետևյալ ռիսկերի.

Տոկոսադրույքի ռիսկ

Պարտատոմսի գնի և տոկոսադրույքի միջև գոյություն ունի հակադարձ կախվածություն, այսինքն՝ տոկոսադրույքի բարձրացման պայմաններում պարտատոմսի գինն ընկնում է, և հակառակը: Կախված տնտեսության վիճակից՝ տոկոսադրույքները կարող են ժամանակի ընթացքում փոփոխվել, ինչը կարող է ազդել պարտատոմսերի գրավչության վրա: Վերջինս կարող է հանգեցնել պարտատոմսերի եկամտաբերության փոփոխմանը:

Վերաներդրման ռիսկ

Գնելով պարտատոմսեր ներդրողները իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկ: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ պարտատոմսից ստացված տոկոսները/արժեկտրոնային վճարները կամ պարտատոմսի մարման ժամանակ ստացվող միջոցները հնարավոր է վերաներդրվեն ավելի ցածր տոկոսադրույքով՝ կապված այդ պահին տնտեսությունում գործող տոկոսադրույքներից:

Անվճարունակության ռիսկ

Պարտատոմսը իրենից ներկայացնում է պարտքային արժեթուղթ, ինչը նշանակում է, որ թողարկող ընկերությունը պարտավոր է ըստ սահմանված կարգի և ժամկետների կատարել վճարներ գնորդներին: Պետք է նշել, որ **Թողարկողի պարտատոմսերում կատարված ներդրումների արժեկտրոնային և մարման եկամուտները չեն երաշխավորվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից,** և Թողարկողն ինքն է պատասխանատվություն կրում պարտավորությունների չկատարման կամ ոչ լիարժեք կատարման համար: Ներդրողները պետք է ուշադրություն դարձնեն Թողարկողի անվճարունակության ի հայտ գալու հավանականության վրա և հաշվի առնեն այդ հանգամանքը ներդրումային որոշումներ կայացնելիս:

Գնաճային ռիսկ

Այս ռիսկը դրսևորվում է նրանում, որ պարտատոմսերի իրական եկամտաբերության մակարդակը կարող է լինել զրոյական կամ բացասական՝ կապված գնաճի մակարդակից: Գնաճի բարձր մակարդակի դեպքում Թողարկողի կողմից պարտատոմսերի դիմաց առաջարկվող եկամտաբերությունը կարող է դառնալ ոչ շահավետ:

2018թ.-ի արդյունքներով ՀՀ-ում տարեկան գնաճը կազմել է 2.5%: Ընդ որում, տարեսկզբին ձևավորված համեմատաբար բարձր գնաճային սպասումներն տարեվերջին մոտ աստիճանաբար թուլացան, ինչը պայմանավորված էր ինչպես ՀՀ Կառավարության կողմից զսպողական հարկաբյուջետային քաղաքականության իրականացմամբ, այդպես էլ չորրորդ եռամսյակում արտաքին հատվածում գնաճային միջավայրի թուլացման ազդեցությամբ: 2019թ.-ի օգոստոս ամսվա վերջին 12-ամսյա գնաճը կազմել է 0.6%, իսկ Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) 2019 և 2020թթ.-երին Հայաստանի համար կանխատեսել է համապատասխանաբար 2.6% և 3.2% գնաճ:

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկը առաջանում է փոխարժեքի անբարենպաստ փոփոխության կամ տատանումների արդյունքում: Թողարկվող արտարժութային պարտատոմսերում ներդրումները կատարվում են ԱՄՆ դոլարով, ինչը նշանակում է, որ փոխարժեքի տատանումը կարող է բացասաբար ազդել նրանց վրա, ովքեր պատրաստվում են ստացված միջոցները ծախսել ՀՀ դրամով: Ընդ որում, ԱՄՆ դոլարի փոխարժեքի բարձրացումը հայկական դրամի նկատմամբ, այլ հավասար պայմաններում, բարենպաստ կլինի ՀՀ արժույթ օգտագործողների համար և հակառակը: Թողարկվող դրամային պարտատոմսերում ներդրումներ կատարողը կարող է

վնասներ կրել արտարժույթի անբարենպաստ փոփոխության կամ տատանումների արդյունքում այն դեպքում, երբ ներդրողը պարտատոմսից ստացված միջոցները օգտագործելու է արտարժույթով (օրինակ՝ պարտատոմսի մարումից հետո ստացված միջոցները և տոկոսները փոխարկում է արտարժույթի):

Իրացվելիության ռիսկ

Միշտ գոյություն ունի այն ռիսկը, որ ներդրողը չի կարող վաճառել իր պարտատոմսը երկրորդային շուկայում կամ իր համար ոչ շահավետ գնով է վաճառում՝ պայմանավորված պարտատոմսերի շուկայի իրացվելիությամբ, ինչը ենթադրում է ոչ բավարար քանակի գնորդների և վաճառողների առկայություն շուկայում: Թողարկողը դիմելու է Բորսա պարտատոմսերը ցուցակելու նպատակով, սակայն դիմումը կարող է և չբավարարվել: Պետք է նշել, որ ցուցակված լինելը դեռևս չի երաշխավորում պարտատոմսերի իրացվելիությունը, և ներդրողը պետք է գնահատի այն ռիսկի հավանականությունը, որ երկրորդային շուկայում պարտատոմսերի վաճառքը կարող է սահմանափակվել շուկայի այլ անդամների կողմից տվյալ գործիքի վերաբերյալ բավարար հետաքրքրվածության բացակայության պատճառով: Տվյալ դեպքում Թողարկողի պարտատոմսերի իրացվելիության բարձրացման համար թողարկվելիք պարտատոմսերը օժտված են որոշակի ներդրումային որակներով, մասնավորապես կարելի է նշել, որ Թողարկողը օգտվելու է շուկա ստեղծողի ծառայություններից: Թողարկողի նախորդ թողարկումների արժեթղթերը ձևավորել են ակտիվ երկրորդային շուկա՝ ունենալով բարձր իրացվելիություն: Այդ են վկայում Ընկերության պարտատոմսերով Բորսայում կնքված գործարքների քանակն ու ծավալները. մինչև 2019թ.-ի օգոստոսի 31-ը Ընկերության նախորդ թողարկումների դոլարային պարտատոմսերով կնքվել է 160 (մեկ հարյուր վաթսուն) գործարք՝ 1,901,203 (մեկ միլիոն ինը հարյուր մեկ հազար երկու հարյուր երեք) ԱՄՆ դոլար ծավալով, իսկ դրամային պարտատոմսերով՝ 36 (երեսունվեց) գործարք 180,703,457 (մեկ հարյուր ութսուն միլիոն յոթ հարյուր երեք հազար չորս հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով:

2.2 Հիմնական տեղեկատվություն

Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցները Ընկերությունն օգտագործելու է բացառապես վարկային քաղաքականության ընդլայնման ուղղությամբ, այդ թվում նոր վարկատեսակների մշակման և ներդրման, ինչպես նաև գործող վարկատեսակներով առավել ակտիվ վարկավորման ուղղությամբ: Ընկերությունը նախատեսում է գործող և նոր վարկատեսակների տրամադրմամբ մեծացնել վարկային պորտֆելի ծավալը, բավարարել մատուցվող ֆինանսական ծառայությունների նկատմամբ հաճախորդների աճող պահանջարկը:

2.3 Տեղեկատվություն առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ

2.3.1. Թողարկողի պարտատոմսերն անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային և առանց ապահովվածության պարտատոմսեր են:

«Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ ՀԿԴ) կողմից Ընկերության պարտատոմսերին շնորհվել են համապատասխանաբար հետևյալ ԱՄՏԾ-ները (արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիր)՝

Առաջին տրանշ՝ **AMGLBLB28ER0**

Երկրորդ տրանշ՝ **AMGLBLB19ER9**

2.3.2. Ընկերության պարտատոմսերի թողարկումն ու տեղաբաշխումն իրականացվում է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների: Թողարկման և տեղաբաշխման շուրջ ծագող վեճերը, այդ թվում դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.3.3. Թողարկվող և տեղաբաշխվող ոչ փաստաթղթային պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրը կվարի ՀԿԴ-ն՝ ըստ Թողարկողի ու ՀԿԴ-ի միջև «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Հաշվի օպերատոր) միջնորդությամբ 2019 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված թիվ 101019/1 և թիվ 101019/2 պայմանագրերի (Հավելված 8):

2.3.4. **Առաջին տրանշ**

Թողարկվող պարտատոմսերի ընդհանուր ծավալը *1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար* է, քանակը՝ *10,000 (տասը հազար) հատ*: Մեկ պարտատոմսի անվանական արժեքը *100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար* է: Շրջանառության ժամկետը սահմանվում է մինչև պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրը ներառյալ, արժեկտրոնի տոկոսադրույքը տարեկան ֆիքսված *6.5 (վեց ամբողջ հինգ տասնորդական) տոկոս* է՝ արժեկտրոնների կիսամյակային վճարումների պարբերականությամբ: Թողարկվող պարտատոմսերը փոխարկելի չեն և չունեն հետգնման հնարավորություն:

Երկրորդ տրանշ

Երկրորդ տրանշով թողարկվող պարտատոմսերի ընդհանուր ծավալը *500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ* է, քանակը՝ *50,000 (հիսուն հազար) հատ*: Մեկ պարտատոմսի անվանական արժեքը *10,000 (տասը հազար) ՀՀ դրամ* է: Շրջանառության ժամկետը սահմանվում է մինչև պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրը ներառյալ, արժեկտրոնի տոկոսադրույքը տարեկան ֆիքսված *9 (ինը) տոկոս* է՝ արժեկտրոնների կիսամյակային վճարումների պարբերականությամբ: Թողարկվող պարտատոմսերը փոխարկելի չեն և չունեն հետգնման հնարավորություն:

2.3.5. Առաջին տրանշի թողարկման արժույթը ԱՄՆ դոլարն է, իսկ երկրորդինը՝ ՀՀ դրամը:

2.3.6. Թողարկողը օգտվելու է շուկա ստեղծողի (market maker) ծառայություններից:

2.3.7. Ընկերության լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարվում են «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ, որի համաձայն Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են 4-րդ հերթին: Ընդ որում, յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո:

Ընկերության պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից՝ պարտատոմսերից բխող պահանջները ենթակա չեն վերադասակարգման:

Պարտատոմսերի մարումը չի երաշխավորվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

2.3.8. Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ինքնուրույն տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը: Պարտատոմսերից բխող իրավունքներն են՝

- ստանալ մարման գումարը անվանական արժեքով, ինչպես նաև պարտատոմսերով նախատեսված արժեկտրոնային եկամուտները,
- թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում դատական կարգով օգտվել պարտատիրոջ՝ օրենքով վերապահված իրավունքներից,
- ՀԿԴ հաշվի օպերատորների միջոցով ստանալ իր արժեթղթերի հաշվից քաղվածք,
- օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը,
- օրենքով և իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

Պարտատոմսերում ներդրումներ կատարող անձինք պարտավոր են նախքան պարտատոմսերի ձեռք բերումը ՀԿԴ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում կամ ՀԿԴ հաշվի օպերատորներից որևէ մեկում ունենալ սեփականակատիրոջ (անվանատիրոջ) արժեթղթերի հաշիվ, ինչպես նաև կատարել պարտատոմսերի ձեռք բերման կամ օտարման հետ կապված պարտադիր վճարները՝ կապված սեփականության իրավունքի գրանցման կամ գործարքների ձևակերպման հետ:

2.3.9. Արժեկտրոնների վճարումը.

Առաջին տրանշ

Պարտատոմսերի նկատմամբ արժեկտրոնային եկամուտը սահմանվում է տարեկան 6.5 (վեց ամբողջ հինգ տասնորդական) տոկոս, որը վճարվելու է կիսամյակային պարբերականությամբ՝

պարտատոմսի անվանական արժեքի 3.25 (երեք ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

Արժեկտրոնների հաշվարկման և վճարման օր է հանդիսանում պարտատոմսերի տեղաբաշխման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ ամիսների համապատասխան օրերը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու է ԱՄՆ դոլարով, սակայն վճարումը կկատարվի համարժեք ՀՀ դրամով անկանխիկ եղանակով՝ հաշվարկված վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա համար ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքով:

Արժեկտրոնային եկամտի գումարը վճարվելու է հաշվարկման նախորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձանց (սեփականատերեր կամ անվանատերեր)՝ վերջիններիս բանկային հաշվին համապատասխան վճարումների մուտքագրման միջոցով: Վճարվելիք արժեկտրոնները հաշվարկվելու են տասնորդական ճշտությամբ՝ կլորացված ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ՝ ըստ կլորացման թվաբանական կանոնների:

Երկրորդ տրանշ

Պարտատոմսերի նկատմամբ արժեկտրոնային եկամուտը սահմանվում է տարեկան 9 (ինը) տոկոս, որը վճարվելու է կիսամյակային պարբերականությամբ՝ պարտատոմսի անվանական արժեքի 4.5 (չորս ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

Արժեկտրոնների հաշվարկման և վճարման օր է հանդիսանում պարտատոմսերի տեղաբաշխման օրվան հաջորդող 6-րդ և 12-րդ ամիսների համապատասխան օրերը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու և վճարվելու է ՀՀ դրամով անկանխիկ եղանակով:

Արժեկտրոնային եկամտի գումարը վճարվելու է հաշվարկման նախորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձանց (սեփականատերեր կամ անվանատերեր)՝ վերջիններիս բանկային հաշվին համապատասխան վճարումների մուտքագրման միջոցով: Վճարվելիք արժեկտրոնները հաշվարկվելու են տասնորդական ճշտությամբ՝ կլորացված ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ՝ ըստ կլորացման թվաբանական կանոնների:

Արժեկտրոնային եկամտի գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$I = (FV \times C) / f$$

որտեղ՝
I – արժեկտրոնային եկամուտ
FV – մեկ պարտատոմսի անվանական արժեք
C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույք
f – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվ (կիսամյակային վճարման դեպքում f=2)

Թողարկողի պարտատոմսերի տարեկան արդյունավետ եկամտաբերությունը առաջին տրանշի համար կազմում է 6.61 (վեց ամբողջ վաթսունմեկ հարյուրերորդական) տոկոս, իսկ երկրորդ տրանշի համար՝ 9.21 (ինն ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) տոկոս: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$R = \left(1 + \frac{C}{f}\right)^{f} - 1$$

որտեղ՝
R - պարտատոմսերի արդյունավետ տոկոսադրույք
C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույք
f – արժեկտրոնի վճարման հաճախականություն

Արժեկտրոնների կուտակված եկամուտը հաշվարկվում է հետևյալ բանաձևով ՝

$$AI = FV * \frac{C}{f} * \frac{DCS}{DCC}$$

որտեղ՝
AI – կուտակված արժեկտրոնային եկամուտ
FV –պարտատոմսի անվանական արժեք
C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույք
f – արժեկտրոնի վճարման հաճախականություն (կիսամյակային վճարումների դեպքում f=2)

DCS – գործարքի կատարման (settlement) օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած փաստացի օրերի քանակ (օրերի հաշվարկման պայմանականությունը՝ Փաստացի/փաստացի)

DCC – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի վճարման օրը եղած փաստացի օրերի քանակ (օրերի հաշվարկման պայմանականությունը՝ Փաստացի/փաստացի)

Արժեկտրոնի կուտակումը սկսում է հաշվարկվել պարտատոմսերի թողարկման/տեղաբաշխման օրվանից (թողարկման և տեղաբաշխման օրերը նույնն են): Կուտակված արժեկտրոնը կլորացվում է ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ՝ ըստ կլորացման թվաբանական կանոնների:

Տեղաբաշխման ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարման և մարման ժամանակացույցը կհրապարակվի Թողարկողի և Տեղաբաշխողի ինտերնետային կայքերում:

2.3.10. Պարտատոմսերի մարումը.

Առաջին տրանշ

Պարտատոմսերի մարումը կկատարվի թողարկման և տեղաբաշխման օրվանից հաշվարկված 24-րդ ամսվա համապատասխան օրը: Եթե մարման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարումը կկատարվի տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պարտատոմսերի մարման և վճարման ամսաթվերը նույնն են:

Պարտատոմսերի մարման գումարների վճարումը կատարվում է մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձանց՝ վերջիններիս բանկային հաշիվներին համապատասխան վճարումների մուտքագրման միջոցով: Բանկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունների բացակայության դեպքում Թողարկողը երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ սեփականատերերի վճարումները փոխանցում է նոտարի դեպոզիտ:

Պարտատոմսերի մարման դիմաց վճարումները կատարվելու են ԱՄՆ դոլարով անկանխիկ եղանակով:

Թողարկողի կողմից պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

Երկրորդ տրանշ

Պարտատոմսերի մարումը կկատարվի թողարկման և տեղաբաշխման օրվանից հաշվարկված 12-րդ ամսվա համապատասխան օրը: Եթե մարման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարումը կկատարվի տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պարտատոմսերի մարման և վճարման ամսաթվերը նույնն են:

Պարտատոմսերի մարման գումարների վճարումը կատարվում է մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձանց՝ վերջիններիս բանկային հաշիվներին համապատասխան վճարումների մուտքագրման միջոցով: Բանկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունների բացակայության դեպքում Թողարկողը երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ սեփականատերերի վճարումները փոխանցում է նոտարի դեպոզիտ:

Պարտատոմսերի մարման դիմաց վճարումները կատարվելու են ՀՀ դրամով անկանխիկ եղանակով:

Թողարկողի կողմից պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

2.3.11. Պարտատոմսի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$P = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{f*100}\right)^{i-1+\tau}} + \frac{A}{\left(1+\frac{y}{f*100}\right)^{N-1+\tau}}, \tau = \frac{DSN}{DCC}$$

որտեղ՝

P – պարտատոմսի գինն է,

f – արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

y – պարտատոմսի մինչև մարում եկամտաբերությունն է,

C – տարեկան արժեկտրոնի չափն է,

A - պարտատոմսի անվանական արժեքն է,

N – հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվն է,

i – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոփոխվում է տվյալ պահից մինչև վերջնական մարում մնացած արժեկտրոնների վճարումների քանակից կախված, ընդ որում՝ i արժեքը փոփոխվում է ըստ աճման և ընդունում է 1-ից մինչև N արժեքները (երբ N-ը ընդունում է 1 արժեք, i-ն նույնպես ընդունում է 1 արժեքը),

DSN – գործարքի կատարման օրվան (settle date) հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած փաստացի օրերի քանակն է (օրերի հաշվարկման պայմանականությունը՝ Փաստացի/փաստացի),

DCC – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի վճարման օրը եղած փաստացի օրերի քանակն է (օրերի հաշվարկման պայմանականությունը՝ Փաստացի/փաստացի):

Պարտատոմսերի արժեքը կլորացվում է ստորակետից հետո 4 (չորս) նիշի ճշտությամբ:

2.3.12. Պարտատոմսի մինչև մարում եկամտաբերությունը հաշվարկվում է 2.3.11 ենթակետում նշված բանաձևով:

2.3.13. ՀՀ ԿԲ ֆինանսական վերահսկողության վարչությունը բավարարել է «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի դիմումը, համաձայն որի Ընկերությանը թույլատրվում է պարտատոմսերի թողարկման միջոցով ներգրավել միջոցներ նաև ֆիզիկական անձանցից:

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի անվանական պարտատոմսերը թողարկվում են համաձայն Թողարկողի Խորհրդի թիվ 233-Լ որոշման, որն ընդունվել է 2019թ.-ի հոկտեմբերի 02-ին (Հավելված 6):

Թողարկողը առաջին և երկրորդ տրանշների տեղաբաշխումն իրականացնելու է միևնույն օրը: Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը տեղի կունենա ՀՀ ԿԲ-ի կողմից պարտատոմսերի Ազդագրի գրանցումից հետո մինչև 2019թ.-ի դեկտեմբերի 25-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում որոշված օրը: Թողարման և տեղաբաշխման օրը կսահմանվի Ընկերության գործադիր տնօրենի որոշմամբ: Այդ մասին տեղեկատվությունը կհրապարակվի տեղաբաշխումից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օր առաջ Թողարկողի և Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքերում՝ www.globalcredit.am և www.renesa.am: Թողարկման և տեղաբաշխման օրերը նույնն են:

2.3.14. Պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ, պարտատոմսերի ձեռքբերման քանակի, ազատ շրջանառության հետ կապված որևէ սահմանափակումներ չեն սահմանվում՝ բացառությամբ օրենքով և ենթաօրենսդրական ակտերով սահմանված դեպքերի: Մասնավորապես, Թողարկողը պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում կարող է իրականացնել միայն կարգավորվող շուկայում: Ներդրողների կողմից կարգավորվող շուկայում գնված Թողարկողի պարտատոմսերի հետագա վերավաճառքը այլ ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց իրականացվում է միայն կարգավորվող շուկայում:

2.3.15. Պարտատոմսերում ներդրում կատարող անձինք ընդհանուր առմամբ եկամուտ են ստանում հետևյալ դեպքերում՝ արժեկտրոնային եկամուտ և կապիտալի հավելաճ (մինչև մարումը վաճառքի և ձեռք բերման գնի դրական տարբերություն):

Թողարկվող պարտատոմսերից ստացվող եկամուտները ենթակա են հարկման ըստ հետևյալ հարկատեսակների.

- շահութահարկ (իրավաբանական անձանց համար)
- եկամտային հարկ (ֆիզիկական անձանց համար)

- ***Պարտատոմսերից ստացվող եկամտի շահութահարկով հարկման կարգն ու նկարագիրը.***

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունները /բացառությամբ ՀՀ Հարկային Օրենսգրքի 103-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի/, ՀՀ-ում հաշվառված անհատ ձեռնարկատերերը և նոտարները, ՀՀ-ում հաշվառված, կանոնները գրանցած պայմանագրային ներդրումային ֆոնդերը /բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի/, ոչ ռեզիդենտ կազմակերպությունները, ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:

Շահութահարկով հարկման օբյեկտ է համարվում՝

- ռեզիդենտ կազմակերպությունների, ՀՀ-ում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար՝ ՀՀ աղբյուրներից և (կամ) ՀՀ-ից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող կամ ստացման ենթակա համախառն եկամուտը, բացառությամբ ՀՀ-ում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների անձնական եկամուտների,
- ՀՀ-ում հաշվառված, կանոնները գրանցած ներդրումային ֆոնդերի (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի), ինչպես նաև «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված արժեթղթավորման հիմնադրամի համար՝ զուտ ակտիվների հանրագումարը,
- ոչ ռեզիդենտ կազմակերպությունների, ինչպես նաև մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով ՀՀ աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ ՀՀ աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով ՀՀ աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց՝ ՀՀ աղբյուրներից ստացվող անձնական եկամուտների:

Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի (մշտական հաստատությանը վերագրվող եկամուտների գծով ձևավորվող հարկման բազայի մասով) հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է *20 (քսան)* տոկոս դրույքաչափով:

ՀՀ-ում հաշվառված, կանոնները գրանցած ներդրումային ֆոնդերի (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի), ինչպես նաև «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ստեղծված արժեթղթավորման հիմնադրամի հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է 0.01 *(զրո ամբողջ մեկ հարյուրերորդական)* տոկոս դրույքաչափով:

Առանց մշտական հաստատության ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

- պասիվ եկամուտների (տոկոս) մասով՝ *10 (տասը)* տոկոս
- արժեթղթերի օտարումից ստացվող ակտիվների արժեքի հավելաճի մասով՝ *0 (զրո)* տոկոս

Եթե մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի եկամուտները չեն վերագրվում մշտական հաստատությանը, ապա այդ եկամուտների գծով ձևավորվող հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է նախորդ կետում սահմանված դրույքաչափերով:

Ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների գծով ձևավորվող հարկման բազայի մասով շահութահարկը, համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 132-րդ հոդվածի, հաշվարկում և պահում է հարկային գործակալը, վերջինս տվյալ դեպքում հանդիսանում է Թողարկողը:

- ***Պարտատոմսերից ստացվող եկամտի եկամտային հարկով հարկման կարգն ու նկարագիրը.***

Հայաստանի Հանրապետությունում եկամտային հարկ վճարողներ են համարվում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ որպես ֆիզիկական անձինք, եկամտային հարկ վճարողներ են համարվում միայն անձնական եկամուտների մասով:

Ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար հարկման օբյեկտ է համարվում ՀՀ աղբյուրներից և (կամ) ՀՀ-ից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ ՀՀ-ում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների ձեռնարկատիրական եկամուտների.

Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար հարկման օբյեկտ է համարվում ՀՀ աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով ՀՀ աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց մշտական հաստատությանը վերագրվող եկամուտների, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեությունից ստացվող եկամուտների:

Եկամտային հարկով հարկվում է միայն Ընկերության պարտատոմսերի համար վճարված տոկոսային եկամուտը: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար հարկման դրույքաչափը սահմանված է 10%: Ֆիզիկական անձանց եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկում և պահում է հարկային գործակալը, վերջինս տվյալ դեպքում հանդիսանում է Ընկերությունը

Արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները կարող են փոփոխության ենթարկվել հարկային օրենսդրության փոփոխությունների արդյունքում: Սույն կետում նշված տեղեկատվությունը չի հանդիսանում հարկային խորհրդատվություն և ներդրողները ներդրումային որոշումներ կայացնելիս պետք է հիմնվեն տվյալ պահին գործող ՀՀ հարկային օրենսգրքի և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի վրա և/կամ օգտվեն մասնագիտացված հարկային խորհրդատվական ծառայություններից: Սույնով Թողարկողը զերծ է մնում ներդրողների կողմից հնարավոր պահանջներից՝ կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների կիրառման և/կամ փոփոխության արդյունքում առաջացած ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվության հետ:

2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները

2.4.1. Առաջարկի պայմանները, առաջարկի վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են առաջարկից օգտվելու համար:

ա. Ընկերության կողմից թողարկվող անվանական պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմում է՝

Առաջին տրանշ՝ 1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար, քանակը՝ 10,000 (տասը հազար) հատ պարտատոմս, յուրաքանչյուրը 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով և 24 (քսանչորս) ամիս շրջանառության ժամկետով,

Երկրորդ տրանշ՝ 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ, քանակը՝ 50,000 (հիսուն հազար) հատ պարտատոմս, յուրաքանչյուրը 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով և 12 (տասներկու) ամիս շրջանառության ժամկետով:

բ. Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրը Ընկերության գործադիր տնօրենի որոշմամբ կսահմանվի ՀՀ ԿԲ-ի կողմից պարտատոմսերի Ազդագրի գրանցումից հետո մինչև 2019թ.-ի դեկտեմբերի 25-ը ներառյալ: Առաջին և երկրորդ տրանշների տեղաբաշխումն իրականացվելու է միևնույն օրը: Ժամկետների հնարավոր փոփոխությունները կարող են կատարվել Ընկերության Խորհրդի որոշմամբ: Թողարկման և տեղաբաշխման օրերը նույնն են:

Այդ մասին տեղեկատվությունը կհրապարակվի տեղաբաշխումից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օր առաջ Թողարկողի և Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքերում՝ www.globalcredit.am և www.renesa.am: Նշված տեղեկությունը կարող է հրապարակվել/տարածվել նաև այլ միջոցներով:

Թողարկողի պարտատոմսերը տեղաբաշխվելու են «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բորսա) տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) մեկանգամյա աճուրդի անցկացման միջոցով՝ համաձայն Բորսայի «Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններ»-ի, ընդ որում աճուրդին ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտեր չեն կարող ներկայացվել:

Աճուրդն անցկացվելու է դրա համար նախատեսված արժեթղթերի և դրամական միջոցների նախնական դեպոնացմամբ: Տեղաբաշխման ընթացքում որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակից (այսուհետ՝ գնորդ) գործարքներ կարող է կնքել նախապես դեպոնացված դրամական միջոցների սահմաններում, իսկ տեղաբաշխողը՝ նախապես դեպոնացված արժեթղթերի սահմաններում: Տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում գնորդները կարող են կատարել դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացումներ և ապադեպոնացումներ՝ համաձայն Բորսայի «Կորպորատիվ արժեթղթերի առևտրի կանոններով» և ՀԿԴ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով» սահմանված ընթացակարգերի:

գ. Տեղաբաշխմանը «Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններ»-ով սահմանված կարգով ուղղակիորեն որպես գնորդ կարող են մասնակցել միայն Բորսայի անդամները, որոնք կարող են հանդես գալ իրենց անունից և իրենց հաշվին կամ իրենց անունից և հաճախորդի հաշվին: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողները աճուրդին կարող են մասնակցել Բորսայի անդամների միջոցով՝ վերջիններիս կողմից սահմանված կարգով և պայմաններով: Բորսայի անդամների ցանկը ներկայացված է Բորսայի պաշտոնական կայքում՝ www.amx.am: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողները անհրաժեշտ է, որպեսզի ուսումնասիրեն Բորսայի տարբեր անդամների կողմից առաջարկվող պայմանները՝ իրենց համար օպտիմալ տարբերակ գտնելու և իրենց կողմից աճուրդին մասնակցելու գործընթացների վերաբերյալ առավել սպառիչ և մանրամասն տեղեկություններ ստանալու համար:

դ. Գնորդները պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով գնման մրցակցային հայտեր են ներկայացնում տեղաբաշխման համակարգ՝ տեղաբաշխման օրվա ժամը 11:00-ից մինչև 13:30-ը: Գնորդները իրավունք ունեն նաև մինչև հայտերի ներկայացման ժամանակաշրջանի ավարտը հանել Հերթում գտնվող՝ իրենց կողմից ներկայացված հայտերը, ինչպես նաև փոփոխել դրանցում նշված պայմանները: Տեղաբաշխողի կողմից կտրման գնի ընտրությունը, հաստատումը և

աճուրդի անցկացումը, որի ընթացքում տեղի է ունենում արժեթղթերով առքուվաճառքի գործարքների կնքման գործընթացը, տեղի է ունենում մինչև տեղաբաշխման օրվա ժամը 15:00-ն: Գնման մրցակցային հայտով գործարքները կնքվում են այն գներով, որոնք նշված են գնման հայտերում՝ ըստ գների նվազման հաջորդականության: Միևնույն գին ունեցող հայտերը բավարարվում են ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության:

ե. Որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակցի կողմից ներկայացված մրցակցային հայտերում նշված արժեթղթերի ընդհանուր քանակի համար սահմանափակում չկա: Գնորդը կարող է տեսնել միայն իր կողմից տեղաբաշխման համակարգ ներկայացված բոլոր գնման հայտերը:

Տեղաբաշխման աճուրդը կարող է հետաձգվել, ընդմիջվել կամ դադարեցվել, աճուրդի ընթացքում տեխնիկական ընդմիջում կարող է հայտարարվել, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է չեղյալ համարվել Բորսայի՝ «Առևտրի ընդհանուր կանոններ»-ով և «Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններ»-ով սահմանված ընթացակարգերով և սահմանված դեպքերում:

զ. Բորսան տեղաբաշխման ավարտից հետո տեղաբաշխման արդյունքների մասին տեղեկատվությունը հրապարակում է իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ համաձայն Բորսայի՝ «Տեղեկատվության բացահայտման կանոններ»-ի:

Թողարկողն իր պաշտոնական ինտերնետային կայքում (www.globalcredit.am) տեղաբաշխման ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացում հրապարակում է աճուրդի արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն՝ ներկայացնելով առաջարկությունների ընդհանուր ծավալը, բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը, տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված գինը (եկամտաբերությունը) և այլն:

է. Թողարկողի պարտատոմսերի դիմաց սեփականության իրավունքը հավաստող քաղվածքները տրամադրվում են ՀԿԴ-ի հաշվի օպերատորի կողմից հաստատված կարգով և ժամկետներում:

2.4.2. Տեղաբաշխման պլանը

ա. Պարտատոմսերի առաջարկն ուղղված է ֆիզիկական և իրավաբանական անձանց (այդ թվում որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողներին), անհատ ձեռնարկատերերին և Թողարկողի բաժնետերերին:

բ. Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 1 ժամվա ընթացքում Բորսայի իրավասու ստորաբաժանումը Բորսայի՝ «Առևտրի ընդհանուր կանոններ»-ին համապատասխան

ձևակերպում է կնքված գործարքների գրանցման վկայականները և ուղարկում Բորսայի համապատասխան անդամին: Իրենց հայտերի բավարարման մասին Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն տեղեկանում են Բորսայի այն անդամից, ում միջոցով մասնակցել են տեղաբաշխման աճուրդին:

2.4.3 Առաջարկի գինը

Տեղաբաշխման համակարգում գրանցվելուց հետո տեղաբաշխման մասնակիցները տեղաբաշխման նստաշրջանի բացման պահից տեղաբաշխման համակարգ են մուտքագրում պարտատոմսերի գնման հայտերը: Թողարկողը և Տեղաբաշխողը միասին սահմանում են կտրման նվազագույն գին, որից ցածր գնով ներկայացված հայտերը չեն բավարարվում: Կտրման գնի վերաբերյալ տեղեկատվությունը ներառվում է պարտատոմսերի տեղաբաշխման վերաբերյալ հրապարակվող հայտարարության մեջ:

Բորսայի անդամները, որոնց կազմում կամ անունից հանդես են գալիս գործարքի կողմ հանդիսացող տեղաբաշխման մասնակիցները պարտավոր են Բորսային վճարել Բորսայի «Սակագների մասին կանոններով» սահմանված համապատասխան միջնորդավճարները: Պարտատոմսերի ձեռք բերման դիմաց գանձվող միջնորդավճարների վերաբերյալ Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողները տեղեկանում են Բորսայի այն անդամից, ում միջոցով մասնակցել են տեղաբաշխման աճուրդին և ձեռք են բերել տեղաբաշխվող պարտատոմսերը:

2.4.4 Տեղաբաշխումը

ա. Թողարկվող պարտատմսերի տեղաբաշխման համար իրականացվելու է լավագույն ջանքերի սկզբունքով չերաշխավորված տեղաբաշխում: Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնելու նպատակով Թողարկողը «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ ներդրումային ընկերության հետ 2019թ.-ի հոկտեմբերի 3-ին կնքել է «Տեղաբաշխման ծառայությունների մատուցման» պայմանագիր (Հավելված 7): Վերջինս պարտավորվում է պայմանագրի դրույթներին համապատասխան իրականացնել Թողարկողի անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային 1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար և 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ թողարկման ծավալով պարտատոմսերի չերաշխավորված տեղաբաշխում՝ առանց աճուրդի ժամանակ չտեղաբաշխված պարտատոմսերը ձեռք բերելու պայմանի: Վերոնշյալ պայմանագրով մատուցվող ծառայությունների դիմաց Թողարկողը պարտավորվում է Տեղաբաշխողին վճարել 7 (յոթ) միլիոն ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

«ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ ներդրումային ընկերության հասցեն է՝ ՀՀ, ք.Երևան, Վարդանանց 16, հեռ.՝ +(374 10) 54 83 87, ֆաքս՝ +(374 10) 54 83 83, Էլ.փոստ՝ info@renesa.am, պաշտոնական ինտերնետային կայք՝ www.renesa.am:

բ. Տեղաբաշխման աճուրդի ընթացքում Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողները պարտատոմսեր կարող են ձեռք բերել Բորսայի անդամների միջոցով՝ վերջիններիս կողմից սահմանված սակագներով և պայմաններով: Բորսայի անդամների ցանկը ներկայացված է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի պաշտոնական կայքում՝ www.amx.am: Իսկ արդեն երկրորդային շուկայում (տեղաբաշխումից հետո) պարտատոմսերի առքուվաճառքի գործարք կնքելու համար ներդրողները պետք է դիմեն կա՛մ ներդրումային ընկերություններին, կա՛մ բրոքերային ծառայություն մատուցող բանկերին:

Պարտատոմսերում ներդրում կատարող անձինք պետք է ունենան արժեթղթերի հաշիվներ, որոնք բացվում և սպասարկվում են ՀԿԴ հաշվի օպերատորների միջոցով: ՀԿԴ օպերատորների ցանկը ներկայացված է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.cda.am:

Պարտատոմսեր ձեռք բերող անձը, նախքան ներդրում իրականացնելը, պարտավոր է նաև ցանկացած բանկում իր անվամբ բացել դոլարային և դրամային բանկային հաշիվ (նման հաշիվներ չունենալու դեպքում):

2.5 Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո Թողարկողը հնարավորինս սեղմ ժամկետում պետք է դիմի Բորսա՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով: Բորսայի կողմից տեղաբաշխված պարտատոմսերի ցուցակման դիմումի մերժման պարագայում թողարկումը չեղյալ է համարվում և Ընկերությունը պարտավորվում է 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում հետ վերադարձնել պարտատոմսերի սեփականատերերի վճարած գումարները՝ ներառյալ կուտակված տոկոսները: Թողարկողը, պարտատոմսերի ցուցակումից հետո, մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին կհրապարակի իր ինտերնետային կայքում:

Այս պահին Թողարկողի կողմից սույն Ազդագրով գրանցվող պարտատոմսերի առևտուրը թույլատրված չէ ոչ մի շուկայում:

Թողարկողը պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիությունն ապահովելու նպատակով կօգտվի շուկա ստեղծողի (market maker) ծառայություններից, որոնք կմատուցվեն «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ կողմից՝ համաձայն վերջինիս

հետ կնքվելիք Բորսայում պարտատոմսերի առք ու վաճառքի գնանշումներ կազմակերպելու վերաբերյալ պայմանագրի:

2.6 Լրացուցիչ տեղեկատվություն

Սույն բաժնի պատրաստման ընթացքում որպես խորհրդատու հանդես է եկել «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ-ն: Ներկայացված տեղեկատվությունը չի ենթարկվել ստուգման անկախ աուդիտորի կողմից, ինչպես նաև նշված տեղեկատվության համար աղբյուր չեն հանդիսացել երրորդ անձինք:

Թողարկողին վարկանշող կազմակերպությունների կողմից որևէ վարկանիշ չի շնորհվել:

ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1 Անկախ աուդիտորները

Թողարկողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով յուրաքանչյուր տարի հրավիրում է արտաքին աուդիտ և անցնում աուդիտորական ստուգում:

Կարևորելով բարձր մասնագիտական և հարուստ փորձառության գործոնը՝ Ընկերության 2013-2016թթ.-երի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտորական ստուգումը իրականացրել է «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ն, իսկ 2017-2018թթ.-երին՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ -ն հանդիսանում է ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված և KPMG Europe LLP-ի կողմից վերահսկվող ընկերություն, շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ հասցեն է՝ Հայաստան, 0010, Երևան, Վազգեն Սարգսյան փող., 26/1 շենք, «Էրեբունի-Պլազա» բիզնես-կենտրոն 8-րդ հարկ, հեռախոս՝ +374(10) 566 762, ֆաքս՝ +374(10) 566 762, էլ.փոստ՝ general@kpmg.co.am, ինտերնետային կայք՝ www.kpmg.am, տնօրեն՝ Տիգրան Գասպարյան:

Ընկերության 2017-2018թթ.-երի ֆինանսական գործունեության աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն: Թողարկողը, ստուգումների արդյունավետության և տեղեկատվության անաչառության պահպանման նպատակով, նպատակահարմար է գտել 2017-2018թթ.-երի ֆինանսատնտեսական գործունեության արտաքին աուդիտը վստահել այլ կառույցի՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ին:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն, որը Grant Thornton International Ltd (GTIL)-ի անդամ է: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0012, Վաղարշյան 8/1, հեռախոս՝ (+37410) 26 09 64, ֆաքս՝ (+37410) 26 09 61, էլ.փոստ՝ gta@am.gt.com, ինտերնետային կայք՝ www.grantthornton.am, տնօրեն-բաժնետեր՝ Գագիկ Գյուլբուդաղյան:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից Թողարկողի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ անկախ աուդիտորական եզրակացությունները 2017-2018թթ.-երի համար ներկայացված են համապատասխանաբար Հավելված 3-ում և Հավելված 2-ում:

Վերջին երեք տարիների ընթացքում Ընկերության աուդիտն իրականացնող անձանց կողմից աշխատանքի հրաժարման դեպք չի եղել:

3.2 Ռիսկային գործոններ

Թողարկողի պարտականությունների կատարումը ուղիղ համեմատական կախվածության մեջ է իր ֆինանսական վիճակից: Յուրաքանչյուր ընկերության գործունեության հետ կապված կան որոշակի ռիսկեր, որոնք կարող են ազդեցություն ունենալ նրա ֆինանսական հնարավորությունների վրա: Թողարկողի պարտատոմսերում ներդրումներ կատարելուց առաջ յուրաքանչյուր ներդրող ինքնուրույն, կամ եթե անհրաժեշտ է, խորհրդատուի օգնությամբ պետք է գնահատի ներդրումների հետ կապված իր ռիսկերը:

Հաջորդիվ ներկայացվում է այն ռիսկերի ոչ սպառիչ ցանկը (Թողարկողի և Տեղաբաշխողի կարծիքով էական համարվող), որոնք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության վրա:

Ընդհանուր ռիսկային գործոններ

- **Մակրոտնտեսական ռիսկեր** - ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը և վարկավորման շուկաների փոփոխությունները կարող են իրենց ազդեցությունն ունենալ Թողարկողի գործունեության ֆինանսական արդյունքների վրա: Մակրոտնտեսական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունները կարող են բացասաբար անդրադառնալ տնտեսական ակտիվության և բնակչության եկամուտների մակարդակի վրա, վերջինս իր բացասական ազդեցությունը կունենա Ընկերության կողմից տնտեսության տարբեր ճյուղերի վարկավորման ծավալների վրա, ինչն էլ կհանգեցնի Ընկերության ֆինանսական ցուցանիշների, մասնավորապես եկամուտների և շահույթի նվազմանը:
- **Քաղաքական ռիսկեր** - քաղաքական, տարածաշրջանային, ինչպես նաև միջազգային աշխարհաքաղաքական իրավիճակների փոփոխությունները իրենց անմիջական ազդեցությունն են ունենում Թողարկողի գործունեության և պարտատոմսերի շուկայի վրա:
- **Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկ** - Շուկան կարգավորող և Թողարկողի գործունեությանը վերաբերող օրենսդրական դաշտի փոփոխությունները կամ նոր օրենսդրական ակտերի սահմանումը կարող են առաջացնել հավելյալ ծախսեր կամ ազդել արժեթղթերից ստացվող եկամուտների վրա: Ներդրողը պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ տվյալ ռիսկը իր մեջ ներառում է նաև հարկերի հաշվարկման և գանձման հնարավոր փոփոխությունները:

Թողարկողի հետ կապված ռիսկեր

- **Վարկային ռիսկ** – սա Թողարկողի նկատմամբ վերջինիս պարտապանների և փոխառուների կողմից իրենց պայմանագրային պարտավորությունների չկատարման արդյունքում Թողարկողի մոտ ֆինանսական վնասների առաջացման հնարավորությունն է: Թողարկողը իր վարկային ռիսկը կառավարելու համար մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր, ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները և Վարկային կոմիտեի ստեղծումը, որն ակտիվորեն վերահսկում է վարկային ռիսկը: Թողարկողը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը, ինչպես նաև սահմանում է մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի նկատմամբ ռիսկի ընդունելի մակարդակի սահմանաչափերը: Ընկերության վարկային քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Ընկերության խորհրդի կողմից: Ընկերությունը ընդհանուր սահմանաչափեր է սահմանում վարկային պորտֆելի նկատմամբ՝ նպատակ ունենալով կառավարել պորտֆելի աշխարհագրական, ոլորտային, ճյուղային և տեսակային կենտրոնացվածության մակարդակը: Կազմակերպության վարկային պորտֆելի կենտրոնացվածության մակարդակը ըստ վարկատեսակների միջինից ցածր է, որը հաշվարկվում է ըստ Հերֆինդալ-Հիրշմանի գործակցի (Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցն ընդունում է արժեքներ 0-1 միջակայքում և բնութագրում է կենտրոնացվածությունը. 0-ին մոտ արժեքները բնութագրում են կենտրոնացվածության ցածր աստիճան): Ստորև ներկայացվում է Թողարկողի 2012-2019թթ.-երի համար վարկային պորտֆելի կենտրոնացվածության գործակիցը՝ ըստ վարկատեսակների.

Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակից

Ցուցանիշ	30.06.2019	2018	2017	2016*	2015	2014	2013	2012
Վարկային պորտֆել /ըստ վարկատեսակների/	0.3473	0.3219	0.3273	0.3485	0.3797	0.3768	0.4744	0.4785

* վերահաշվարկված

Ստորև ներկայացվում է Ընկերության հաճախորդներին տրամադրված վարկերի դասակարգման և վարկային ռիսկի կառավարման համար վնասների և կորուստների պահուստին կատարվող հատկացումների վերաբերյալ տեղեկատվությունը 2019թ.-ի հունիսի 30-ի դրությամբ:

Ռիսկի դասերը	Վարկեր							
	Քանակ		Գումար/հազ.դր/		Տրված վարկերի գծով պահուստ			
					մնացորդ/հազ.դր/		%	
	դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ
1. Ստանդարտ	9,882	729	12,452,701	3,442,542	124,527	34,425	1.0%	1.0%
2. Հսկվող	1,879	35	2,158,452	116,153	215,845	13,938	10.0%	12.0%
3. Ոչ ստանդարտ	1,073	24	1,735,239	73,708	347,048	17,690	20.0%	24.0%
4. Կասկածելի	839	14	1,421,709	12,459	710,854	7,476	50.0%	60.0%
Ընդամենը	**13,673**	**802**	**17,768,101**	**3,644,862**	**1,398,274**	**73,529**	**7.87%**	**2.02%**
Խնդրահարույց վարկերի տեսակարար կշիռ %	**27.73**	**9.1**	**29.92**	**5.55**	-	-	-	-

Ընկերության վարկային պորտֆելում դասակարգված (ժամկետանց կամ արժեզրկված) վարկերի տեսակարար կշիռը 2019թ.-ի հունիսի 30-ի դրությամբ կազմել է 25.77%:

- **Իրացվելիության ռիսկ** – Իրացվելիությունը Թողարկողի հնարավորությունն է ապահովել և բավարարել դրամական միջոցների նկատմամբ սպասվող (ամենօրյա) և անկանխատեսելի ի հայտ եկող պահանջները՝ ֆինանսական պարտավորությունների ժամանակին կատարման համար: Այս ամենի տակ հասկացվում է ակտիվները նվազագույն ծախսերով և խելամիտ գնով դրամական միջոցների վերածելու հնարավորությունը: Թողարկողի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Թողարկողի ղեկավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում իրացվելիության ռիսկի վերահսկողությանը/կառավարմանը և այս ռիսկի սահմանափակման համար ներգրավում է լրացուցիչ դրամական միջոցներ, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Ընկերությունը, իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու հեշտությամբ բավարարելու նպատակով, ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, մշտապես ապահովում ու պահպանում է իրացվելիության ցուցանիշը բարձր մակարդակի վրա: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Ընկերության խորհրդի կողմից: Իրացվելիության կառավարման գործընթացում Ընկերությունն առաջնորդվում է հետևյալ հիմնական սկզբունքներով.
  - ներգրավման կայուն բազայի ստեղծում և պահպանում,
  - վարկային պորտֆելի որակի և դիվերսիֆիկացիայի ապահովում,

- ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքների համաձայնեցում, դրանց պարբերական վերլուծություն, այդ թվում իրացվելիության գծով առկա խնդիրների վերաբերյալ կառավարչական որոշումներ ընդունելու նպատակով սթրես թեստերի իրականացում:

Միջոցներ ներգրավելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում Թողարկողն օգտվում է իրացվելի միջոցների պահանջների բավարարման հետևյալ հիմնական առաջնահերթ աղբյուրներից.

- հակադարձ ռեպո համաձայնագրերով պարտատոմսերի վաճառք,
- բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից, վարկերի ներգրավում/ բացված վարկային գծերի օգտագործում,
- բարձր իրացվելի արժեթղթերի վաճառք:

Ստորև ներկայացվում են 30.06.2019թ. դրությամբ Ընկերության իրացվելիության վերաբերյալ սթրես թեսթի արդյունքները, որը նախատեսում է.

- ժամկետանց/դասակարգված վարկերի ամբողջական դուրսգրում,
- որոշ ներգրավումների երկարաձգման անհնարություն,
- տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների, տրամադրված վարկերի գծով վաղաժամկետ մարումների բացառում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅՈՒՆ (մլն. ՀՀ դրամ)							
Ակտիվների հոդվածներ	ցպահանջ	մինչև 30 օր	31-60 օր	61-90 օր	91-120 օր	121-150 օր	151-180 օր
Իրացվելիության ճեղքվածք	15.4	-392.7	-40.3	164.9	-49.0	212.8	135.4
Իրացվելիության կուտակային ճեղքվածք	15.4	-377.3	-417.6	-252.7	-301.7	-88.9	46.5

Սթրես թեսթի արդյուքները ցույց են տալիս, որ մինչև 6 ամիս ժամկետում Ընկերության իրացվելիության կուտակային ճեղքվածքը դրական է (46 մլն. ՀՀ դրամ):

30.06.2019թ. դրությամբ Թողարկողի կողմից տրամադրված վարկային գծերի չօգտագործված մասը կազմում է ընդամենը 97 (իննսունյոթ) մլն. ՀՀ դրամի համարժեք գումար, ինչը էական ազդեցություն չի կարող ունենալ Ընկերության իրացվելիության վրա:

- **Արտարժութային ռիսկ** – սա առաջանում է փոխարժեքի անբարենպաստ փոփոխության կամ տատանումների արդյունքում, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական դիրքերի և դրամական հոսքերի վրա: Ընդհանուր առմամբ արտարժույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում: Ընկերությունն ունի մի շարք

արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ: Արտարժութային դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Ստորև ներկայացվում է փոխարժեքի անբարենպաստ փոփոխության արդյունքում Ն1 (ընդհանուր կապիտալի համարժեքություն) և Ն3 (մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափ) նորմատիվների մեծությունների հնարավոր փոփոխության վերլուծությունը, որն իրականացվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի 10, 20, 30 և 50 դրամով արժեզրկման սցենարների հիման վրա:

30/06/2019- ՀՀ ԿԲ փոխարժեք՝ 1 ԱՄՆ դոլար = 477.11 ՀՀ դրամ

	Ն1 նորմատիվ %	Ն3 նորմատիվ %
ՀՀ ԿԲ Նորմատիվների սահմանաչափերը	Նվազագույն 12.00	Առավելագույն 25.00
Փաստացի 30.06.2019թ.	12.30%	16.9%
Սցենար 1 ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ 10 դրամով արժեզրկում	12.23%	16.9%
Սցենար 2 ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ 20 դրամով արժեզրկում	12.16%	16.9%
Սցենար 3 ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ 30 դրամով արժեզրկում	12.09%	16.9%
Սցենար 4 ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ 50 դրամով արժեզրկում	11.96%	16.9%

- **Տոկոսադրույքի ռիսկ** – սա այն հավանականությունն է, որ տոկոսադրույքների մակարդակի անբարենպաստ փոփոխություններն ուղղակիորեն բացասաբար կազդեն Ընկերության կապիտալի և/կամ շահույթի վրա: Տոկոսադրույքի ռիսկի վերլուծությունն առ 30.06.2019թ. ցույց է տալիս, որ Ընկերության համար տոկոսադրույքի անբարենպաստ փոփոխություն է համարվում շուկայում տոկոսադրույքների աճը, քանի որ Ընկերության ակտիվների տոկոսադրույքների վերանայումը միջինում տեղի է ունենում ավելի ուշ, քան պարտավորություններինը, այսպիսով 30.06.2019թ. դրությամբ շուկայում տոկոսադրույքների 1 (մեկ) %-ով բարձրացումը միջնաժամկետ հատվածում կարող է բերել Ընկերության ընդհանուր կապիտալի 2 (երկու) %-ով նվազման:
- **Գործառնական ռիսկ** – Թողարկողի գործունեության ընթացքում ի հայտ եկող ռիսկերից է գործառնական ռիսկը, որը կարող է հանգեցնել անկանխատեսելի վնասների: Գործառնական ռիսկը պայմանավորված է ընկերության անձնակազմի ոչ համարժեք հմտությամբ կամ սխալ գործողություններով, ընթացիկ աշխատանքի կազմակերպման և կատարման թերություններով, սարքավորումների տեխնիկական անսարքությամբ, ընթացակարգերի անկատարությամբ: Գործառնական ռիսկը նվազագույնի հասցնելու

նպատակով Ընկերությունում փաստաթղթավորված կերպով նկարագրված են գրեթե բոլոր բիզնես գործընթացները, կազմված են ներքին իրավական ակտեր, սահմանված են համապատասխան սահմանաչափեր, կիրառվում են կրկնակի ստուգման/ հաստատման սկզբունքները, սահմանված են հաշվետվությունների տեսակներ և պարբերականություններ: Հնարավոր վնասների կանխարգելման միջոցներից է հանդիսանում Թողարկողի կառուցվածքային ստորաբաժանումներում ներքին հսկողության և ռիսկ-մենեջմենթի համակարգերի առկայությունը:

- **Համբավի ռիսկը** – սա այն հավանականությունն է, որ Ընկերության վերաբերյալ հանրության բացասական կարծիքը (իրականությանը համապատասխանող կամ չհամապատասխանող) կհանգեցնի հաճախորդների թվաքանակի նվազման, կոնտրագենտների/հաճախորդների հետ իրականացվող գործառնությունների ծավալի կրճատման, ծախսատար դատական գործընթացների և եկամտաբերության անկման: Համբավի ռիսկը կարող է առաջացնել նաև իրացվելիության խնդիրներ, Ընկերության արժեթղթերի գների անկում և այլն: Ուստի այս առումով Թողարկողը մեծ ուշադրություն է դարձնում իր գործարար համբավին և բարձր է գնահատում վերջինս՝ իրականացնելով բոլոր միջոցառումները այն մշտապես բարձր պահելու համար:
- **Մրցակցային ռիսկ** – ՀՀ-ում գործում է գրեթե չորս տասնյակ վարկային կազմակերպություն, մեկ տասնյակից ավել բանկ, արտասահմանյան բանկերի ներկայացուցչություն, որոնք ակտիվ գործունեություն են իրականացնում ՀՀ ֆինանսական շուկայում: Թողարկողը հանդիսանում է խոշոր վարկային կազմակերպություն և իր կողմից կատարվող գործառնությունների ծավալով շուկայում համարվում է առաջատարներից մեկը: Հարկ է նշել, որ Թողարկողը գիտակցում է մրցակցային ռիսկը և հաստատուն կերպով բարելավում է հաճախորդներին մատուցվող ծառայությունների և սպասարկման որակը, օգտագործում է ժամանակակից տեխնոլոգիաները՝ շարունակելով ամրապնդել շուկայում իր դիրքերը: 30.06.2019թ.-ի դրությամբ ՀՀ գործող վարկային կազմակերպությունների շարքում Թողարկողը ըստ ընդհանուր ակտիվների մեծության ցուցանիշի զբաղեցնում է 6-րդ տեղը[1]:

Ընկերությունը կձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցառումները վերոնշյալ ռիսկերի բացահայտման, գնահատման, կառավարման, ինչպես նաև ռիսկային գործոնների ազդեցության նվազեցման առումով: Այնուամենայնիվ, բացասական ռիսկերի ազդեցությունը նվազեցնելու նպատակով ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը չի երաշխավորվում

[1] Տեղեկատվության աղբյուր՝ ԱՌՔԱ գործակալության "Кредитные организации Армении" հաշվետվությունը

Ընկերության կողմից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ շատ դեպքերում ռիսկային գործոնները Ընկերության հսկողությունից դուրս են:

3.3 Տեղեկատվություն Թողարկողի մասին

Թողարկողի պատմությունը և զարգացումը

ա. Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է.

հայերեն՝ «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն

ռուսերեն՝ Закрытое акционерное общество Универсальная кредитная организация “ГЛОБАЛ КРЕДИТ”

անգլերեն՝ “GLOBAL CREDIT” closed joint-stock company universal credit organization

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է.

հայերեն՝ «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ

ռուսերեն՝ ЗАО УКО “ГЛОБАЛ КРЕДИТ”

անգլերեն՝ “GLOBAL CREDIT” UCO CJSC

բ. Թողարկողի պետական գրանցման վայրն է՝ ՀՀ, քաղաք Երևան, 0054, Սասնա Ծռեր 2 շենք, թիվ 251 տարածք, պետական գրանցման համարը՝ 35, գրանցված՝ 26.10.2010թ. փոփոխված՝ 10.04.2015թ.,

գ. «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» Ունիվերսալ վարկային կազմակերպությունը (համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 26.10.2010թ. թիվ 267Ա որոշման՝ փոփոխված 10.04.2015թ.) գրանցված ունիվերսալ վարկային կազմակերպություն է, որը հիմնադրվել է «Վաշինգթոն Քափիթալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ և «Կրեդիտ Յունիոն» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ միաձուլման արդյունքում: Հիմնադրման առաջին իսկ օրվանից «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ ակտիվ գործունեություն է ծավալում ՀՀ վարկավորման շուկայում՝ առաջարկելով վարկերի լայն տեսականի հասարակության տարբեր շերտերի և նպատակների համար:

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն 2014թ.ին ձեռք է բերել նաև ՀՀ գյուղատնտեսության բնագավառում ակտիվ վարկային գործունեություն ծավալած «Ջի էֆ Սի Ջեներալ Ֆայնենշլ Ընդ Քրեդիթ Քոմփանի» ՈՒՎԿ ՍՊԸ-ի 100% բաժնեմասը, որն էլ այնուհետև ՀՀ օրենսդրության համաձայն միացել է «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ին (մասնակիցների/բաժնետերերի համատեղ ընդհանուր ժողովի 2014թ. հունիսի 09-ի որոշմամբ (արձանագրություն թիվ 03)):

Ներկայումս ընկերությունը հանդիսանում է «ԿՐԵԴԻՏ ՅՈՒՆԻՈՆ», «ՎԱՇԻՆԳԹՈՆ ՔԱՓԻԹԱԼ» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերությունների և «Ջի Էֆ Սի Ջեներալ Ֆայնենշլ Ընդ Քրեդիթ Քոմփանի» ՈՒՎԿ ՍՊԸ-ի իրավահաջորդը:

դ. Թողարկողի գտնվելու վայրն է ՀՀ, քաղաք Երևան, 0054, Սասնա Ծռեր 2 շենք, թիվ 251 տարածք

Կապի միջոցները՝ *Հեռ.՝* +(374 11) 70 01 00, 70 02 00
Ֆաքս՝ +(374 11) 70 01 00
Էլ.փոստ՝ info@globalcredit.am
Ինտերնետային կայք՝ www.globalcredit.am

Թողարկողի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն

Ընկերությունը մասնաճյուղեր և ներկայացուցչություններ չունի:

Ընկերությունը փաստացի գործունեություն է սկսել իրականացնել 2010թ.-ի հոկտեմբերի 26-ից: «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի գործունեության **հիմնական նպատակը** ՀՀ ֆինանսական շուկայի առաջատար դիրքերում հայտնվելն է, հանրությանը վարկային գործառնությունների իրականացման լայն հնարավորություններով ներկայանալն ու նոր վարկատեսակների մշակմամբ ու ներդրմամբ մրցակցային շուկայում լուրջ դերակատարություն ունենալը:

Թողարկողի ապրանքային նշանն է՝

GLOBAL CREDIT,

որը հաստատվել է 27.02.2015թ.-ին ՀՀ Մտավոր սեփականության գործակալության ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժնի կողմից:

ե. Վերջին շրջանում Ընկերության հետ տեղի չեն ունեցել այնպիսի դեպքեր, որոնք ներդրողը կկարևորեր Ընկերության իրացվելիության մասին պատկերացում կազմելու համար: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ իրացվելիությունը գտնվում է տնօրինության ուշադրության կենտրոնում և բոլոր ջանքերը գործադրվում են դրա արդյունավետ կառավարման համար:

3.4 Բիզնեսի նկարագիրը

3.4.1. Հիմնական գործունեությունը

Թողարկողն իրականացնում է «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և իր Կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունները:

Ընկերությունը կարող է իրավաբանական անձանցից, իր մասնակիցներից, անհատ ձեռնարկատերերից, Հայաստանի Հանրապետությունից և համայնքներից, այլ պետություններից, միջազգային կազմակերպություններից ներգրավել փոխառություններ և կնքել նմանատիպ գործարքներ:

Ընկերության գործունեության հիմնական ուղղվածությունը վարկերի տրամադրումն է: Ընկերությունը ձգտում է դրանք հասանելի դարձնել տնտեսության տարբեր հատվածների, ինչպես նաև հասարակության լայն շրջանակների համար: Դա է վկայում մատուցվող ֆինանսական ծառայությունների բազմազանությունը, մասնավորապես՝

- Հիփոթեքային վարկեր, այդ թվում՝ սեփական ռեսուրսներով տրամադրում է բնակելի անշարժ գույքի ձեռքբերման, վերանորոգման, «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՓԲԸ հետ համագործակցության շրջանակներում բնակելի անշարժ գույքի ձեռք բերման, կառուցապատման և վերանորոգման հիփոթեքային վարկեր, իսկ «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական ծրագրի շրջանակներում բնակելի անշարժ գույքի ձեռքբերման վարկեր: Ընկերության կողմից տրամադրվում է նաև արևային և էներգաարդյունավետ համակարգերի ձեռքբերման վարկեր, այդ թվում՝ բնակարանային միկրովարկեր և էներգաարդյունավետ վերանորոգում իրականացնելու համար տրամադրվող վարկեր, արևային ջրատաքացուցիչների և ֆոտովոլտային փոքր կայանների տեղադրման և շահագործման նպատակով տրամադրվող վարկեր: Ընկերությունն իրականացնում է նաև հիփոթեքային վարկի կանխավճարի վարկավորում:
- Ձեռնարկատիրական վարկեր փոքր և միջին բիզնեսի զարգացման նպատակով, այդ թվում՝ տնտեսական գործունեության ընդլայնման, տրանսպորտային միջոցների ձեռք բերման նպատակներով, ինչպես նաև ֆինանսական հոսքերով ապահովված բիզնես վարկեր, երաշխիքներ:
- Սպառողական վարկերի լայն տեսականի, այդ թվում՝ ոսկու գրավադրմամբ վարկեր, ավտովարկեր, ուսանողական, տուրիստական վարկեր, շարժական և/կամ անշարժ գույքի գրավադրմամբ վարկեր, թոշակային վարկ և այլն:
- Միկրոֆինանսական և գյուղատնտեսական վարկերի տրամադրում գյուղական տնտեսություններին Հայաստանի Հանրապետության 7 մարզերում, ինչպես նաև Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի շրջանակներում տրամադրվող վարկերը:
- Ֆակտորինգային գործառնություններ. Ընկերությունը հանդիսանում է այն եզակի վարկային կազմակերպություններից, որոնք մատուցում են ֆակտորինգային ծառայություններ, և լուրջ դերակատարություն ունի տվյալ ոլորտի հեռանկարային զարգացման գործում:

- Պետական և կորպորատիվ արժեթղթերով գործառնություններ և այլն:

Ֆինանսական գործառնությունները Ընկերության կողմից իրականացվում են ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով կանխիկ և անկանխիկ եղանակներով:

Վերոհիշյալ բոլոր ուղղություններն էլ Ընկերության համար ունեն առաջնային նշանակություն: Նախատեսվում է նշված վարկային պրոդուկտների պորտֆելների մակարդակի պահպանում և աճ: Վարկավորման ծավալների ավելացման, ինչպես նաև մրցակցային դիրքի պահպանման նպատակով մի կողմից դիվերսիֆիկացվում են ներգրավվող փոխառու միջոցների ուղղությունները, իսկ մյուս կողմից Ընկերության բաժնետերերն ավելացնում են կազմակերպության կանոնադրական կապիտալը: Բացի դա, Ընկերության վարկային գործիքների նկատմամբ աճող պահանջարկի բավարարման, ինչպես նաև հետագա աճի ապահովման, վարկերի տրամադրման գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման նպատակով ստեղծվում են վարկերի տրամադրման նոր ուղղություններ, մասնավորապես վեբ կայքի միջոցով առցանց դիմումների ընդունում և վարկի հաստատում, առցանց և բջջային հավելվածների միջոցով վարկավորում և այլն:

2018թ.-ի պարտատոմսերի թողարկումից հետո Ընկերությունն աճեցրել է իր վարկային պորտֆելը և գործարկել է մի շարք նոր վարկատեսակներ, զգալիորեն մեծացրել է սպառողական վարկերի, մասնավորապես ավտովարկերի ծավալները: Արդյունքում սպառողական վարկերի պորտֆելը 2018թ.-ին 2017թ.-ի նկատմամբ աճել է 179.7%-ով, իսկ 2019թ.-ի հունիսի 30-ի դրությամբ 2018թ.-ի դեկտեմբերի նկատմամբ աճել է ավելի քան 27%-ով:

Ընկերության կողմից տրամադրված վարկերի և փոխառությունների ծավալների աճի դինամիկան ներկայացվում է ստորև (Գծապատկեր 1).

Գծապատկեր 1. Թողարկողի տրամադրած վարկերի և փոխառությունների դինամիկան /հազ.դրամ/



Ինչպես տեսնում ենք Գծապատկեր 1-ում Թողարկողի վարկային պորտֆելը գրանցել է դինամիկ աճ. հատկապես վերջին հաշվետու տարվա ընթացքում այդ աճը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 38.4%, իսկ գործունեության սկզբի (2010թ.) համեմատ պորտֆելի աճը 2019թ.-ի հունիսի 30-ի դրությամբ կազմել է ավելի քան 793%: 2019թ.-ի հունիսի 30-ի դրությամբ 2018թ.-ի նկատմամբ վարկային պորտֆելի աճը կազմել է 11.12%:

Գծապատկեր 2-ում ներկայացված են Ընկերության հաճախորդների քանակը ըստ վարկատեսակների՝ 31.12.2017թ., 30.06.2018թ., 31.12.2018թ.,30.06.2019 դրությամբ: Ինչպես տեսնում ենք Ընկերության հաճախորդների կազմում միշտ գերակշռող են սպառողական և հիփոթեքային վարկերի վարկառուները:

Գծապատկեր 2. Հաճախորդների քանակը՝ ըստ վարկատեսակների









Առաջիկա տարիներին Ընկերությունը նախատեսում է ակտիվորեն միջոցառումներ իրականացնել վարկային պորտֆելի մեծացման ուղղությամբ: Միաժամանակ, Ընկերությունը քայլեր է ձեռնարկելու, որպեսզի պահպանի տրված վարկերի որակը, բարելավի վարկային գործիքները և տրամադրի որակյալ ֆինանսական ծառայություններ:

3.4.2. Հիմնական շուկաներ

3.4.2.1. Ընկերությունն առանձնանում է ՀՀ ֆինանսական շուկայում իր կողմից առաջարկվող որակյալ ծառայությունների լայն տեսականիով: Ընկերության ծառայությունների մատուցման հիմնական շուկաներն են բնակարանային վարկավորման, ձեռնարկատիրական, գյուղատնտեսական և սպառողական վարկավորման շուկաները: Հաճախորդներին տրամադրված վարկերը ըստ վարկի դասերի ներկայացվում են Գծապատկեր 3-ում:

Ինչպես երևում է Գծապատկեր 3-ից Թողարկողի վարկային պորտֆելում մինչև 2018թ.-ը մեծ տեսակարար կշիռ են ունեցել հիփոթեքային վարկերը՝ կազմելով վարկային պորտֆելի 48.4%-ը և 47.45%-ը համապատասխանաբար 2016 և 2017թթ.-ին, իսկ 2018թ.-ին և 2019թ.-ի հունիսի 30-ի դրությամբ տվյալ ցուցանիշը նվազել է՝ կազմելով համապատասխանաբար վարկային պորտֆելի 33.7%-ը և 30.25%-ը: 2018թ.-ին և 2019թ.-ի հունիսի 30-ի դրությամբ կտրուկ աճել են սպառողական վարկերը՝ համապատասխանաբար կազմելով վարկային պորտֆելի 42.2%-ը և 48.1%-ը: Սպառողական վարկերի նմանատիպ աճը պայմանավորված է եղել Ընկերության կողմից տրամադրվող ավտոմեքենաների գրավադրմամբ վարկերի ծավալների կտրուկ ավելացմամբ, որոնց տեսակարար կշիռը Ընկերության ընդհանուր վարկային պորտֆելում 2018թ.-ին կազմել է 34.6%, իսկ 30.06.2019թ.-ի դրությամբ այդ ցուցանիշը եղել է՝ 40.1%: Թողարկողի կողմից տրամադրված բիզնես վարկերը 2017թ.-ին կազմել են Թողարկողի վարկային պորտֆելի 21.4%-ը, 2018թ.-ին՝ 14.2%-ը, և 2019թ.ի հունիսի 30-ի դրությամբ՝ 12.9%-ը:

Գծապատկեր 3. Վարկերի ծավալներն ըստ վարկատեսակների/հազ.դրամ/



*վերահաշվարկված

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության վարկային պորտֆելի մեծ տեսակարար կշիռ ունեն հիփոթեքային վարկերը, ուստի ՀՀ հիփոթեքային շուկան մշտապես գտնվում է Ընկերության ուշադրության կենտրոնում և իրականացվում են տվյալ շուկայի ուսումնասիրություններ և վերլուծություններ:

Ֆինանսական ծառայություններ մատուցելիս Ընկերությունն առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով՝ պրոֆեսիոնալիզմ, թափանցիկություն, ճկունություն, արդյունավետություն, նորարարություն:

Ընկերությունը ձգտում է հաստատել երկարաժամկետ համագործակցություն յուրաքանչյուր հաճախորդի հետ: Այս նպատակով հաճախորդների հետ իր աշխատանքում ընկերությունը հավատարիմ է մնում կորպորատիվ քաղաքականության հետևյալ սկզբունքներին.

- Հուսալիություն, հաճախորդների որակյալ սպասարկման բարձր մակարդակի պահպանում, հաճախորդների շահերի պաշտպանություն,
- Հաճախորդների շահերից ելնելով պատասխանատու վարկավորում,

- Համապատասխանություն օրենքներին, էթիկայի նորմերի և արդար համագործակցության կանոնների պահպանում, իր պարտավորությունների ժամանակին կատարում և դրական հեղինակության ձևավորում,
- Քաղաքական դաշտում չեզոքության պահպանում և անկախություն որևէ կուսակցությունից և խմբավորումից,
- Գործունեության իրականացում՝ ի շահ հաճախորդների և բաժնետերերի:

3.4.2.2. Թողարկողն իր ակտիվ վարկային քաղաքականությունն իրականացնում է նաև շնորհիվ տեղական և միջազգային համագործակցող ֆինանսական կազմակերպությունների: Հիփոթեքային վարկավորման շուկայում Ընկերությունը հանդիսանում է.

- «Հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման» պետական նպատակային ծրագրի մասնակից, որն իրականացվում է «Ազգային հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորող վարկային կազմակերպության հետ մեկտեղ՝ սկսած 2009թ-ից: Վերջինիս միակ հիմնադիրն է հանդիսանում ՀՀ Կենտրոնական բանկը: Վերաֆինանսավորումն իրականացվում է սեփական, ինչպես նաև Հիփոթեքային շուկայի զարգացման ծրագրի շրջանակներում ՀՀ Կառավարությունից ներգրավված միջոցներով:
- «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի մասնակից, որն իրականացվում է «Բնակարան երիտասարդներին» վերաֆինանսավորող վարկային կազմակերպության հետ՝ սկսած 2010թ.-ից: «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի գործունեության հիմնական նպատակն է ձևավորել միջին և ցածր եկամուտ ունեցող երիտասարդների՝ բնակարանային ապահովվածության, կրթության և առօրյա այլ խնդիրների լուծմանն ուղղված՝ շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկավորման հնարավորություններ:

Ընկերությունը հանդիսանում է նաև՝

- «Վարկային կազմակերպությունների միության» (ՎԿՄ) անդամ սկսած 2010թ.-ից, թեև «Ջի-Էֆ-Սի Ջեներալ Ֆայնենշլ ընդ Քրեդիթ Քոմփանի» ՈւՎԿ ՍՊԸ-ն, որի իրավահաջորդն է Թողարկողը, հանդիսանում էր ՎԿՄ հիմնադիր-անդամ 2008 թ.-ից:
- «Ինգո Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ի ապահովագրական գործակալ՝ սկսած 2010թ.-ից:

Թողարկողը համագործակցում է նաև միջազգային և հայաստանյան հետևյալ կառույցների հետ՝

- «Գյուղական Ֆինանսավորման Կառույց-ծրագրերի իրականացման գրասենյակ» Պետական հիմնարկ (ԳՖԿ), որը հիմնվել է 2005 թ. հուլիսի 14-ի N 1005-Ն ՀՀ

Կառավարության որոշմամբ որպես ինքնուրույն կառույց ՀՀ ֆինանսների նախարարության համակարգում, այնուհետև ՀՀ Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1783-Ն որոշմամբ միացման ձևով վերակազմակերպվել և վերանվանվել է ՀՀ ԿԱ ԳՏՏՋ ԾԻԳ ՊՀ գյուղական ֆինանսավորման կառույց՝ նպատակ ունենալով ուղղորդել և կառավարել գյուղական տարածքներում Մասնակից Ֆինանսական Կառույցների (ՄՖԿ) միջոցով վարկավորման համար նախատեսված փոխառությունները: ԳՖԿ-ի կողմից իրականացվում է փոքր և միջին գյուղական բիզնեսի զարգացմանն ուղղված փոխառության Համաձայնագրերի կնքումը տարբեր ունիվերսալ վարկային կազմակերպությունների հետ, որոնց շարքում ծրագրին իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերում Թողարկողը 2014 թ.-ի նոյեմբեր ամսից: Այս համագործակցության նպատակն է գյուղատնտեսական գործունեության ակտիվացմանը աջակցելը, գյուղական տարածքներում փոքր և միջին արտադրողների ու ձեռնարկատերերի համար ֆինանսական միջոցները առավել մատչելի և հասանելի դարձնելը: ԳՖԿ-ի գործառույթներն իրականացվում են «Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի» (ԳԶՄՀ-IFAD) շրջանակներում:

- «Արտաքին Ֆինանսական Ծրագրերի Կառավարման Կենտրոն» պետական հիմնարկ (ԱՖԾԿԿ), որը հիմնադրվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի՝ 2000թ-ի մարտի 29-ի թիվ 37 հրամանի համաձայն: Իր գործունեության ընթացքում ԱՖԾԿԿ-ն ղեկավարվում է ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով ու ՀՀ կառավարության ու ՀԲ միջև կնքված վարկային և դրամաշնորհային համաձայնագրերով և Կանոնադրությամբ: ԱՖԾԿԿ-ի գործունեության նպատակն է Համաշխարհային բանկի կողմից ՀՀ-ին տրամադրված վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին ծրագրերի իրականացումը:
- «Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամ, որը քրիստոնեական շահույթ չհետապնդող միջազգային կազմակերպություն է: Վերջինիս նպատակն է վերացնել անբավարար բնակարանային պայմաններն ամբողջ աշխարհում: Հայաստանում Հաբիթաթը սկսել է գործունեությունը 2000թ.-ին և այժմ իրականացնում է տների և բնակարանների վերակառուցման ու վերանորոգման ծրագրեր, տրամադրում բնակարանաշինության միկրոֆինանսավորման ծառայություններ՝ համագործակցելով ֆինանսական կազմակերպությունների հետ:
- “Frontier Markets Advisory F.Z.E.” ընկերությունը, որը հանդիսանում է FRONTERA CAPITAL խմբի անդամ: Կառույցի հիմնական գործունեությունը հանդիսանում է ֆինանսական ծառայությունների (փոխառություններ, հեջավորման ծառայություններ,

ֆինանսական խորհրդատվություն և այլն) մատուցումը աշխարհի տարբեր երկրներում այլ ֆինանսական կառույցներին՝ բանկերին և վարկային կազմակերպություններին:

- «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամ, վերջինս վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ոլորտների զարգացման միջավայր ձևավորող պետական կառույց է, որը կայուն էներգետիկայի լավագույն փորձառությունն է ներդնում Հայաստանի էներգետիկ անվտանգության և անկախության ապահովման ու տնտեսական աճին նպաստելու համար: Համագործակցելով ՀՎԷԷՀ-ի հետ Թողարկողը հիմնադրամից ներգրաված միջոցներով իրականացնում է արևային ջրատաքացուցիչների և ֆոտովոլտային կայանների ֆինանսավորման ծրագիրը ՀՀ չգազաֆիկացված համայնքներում:
- ««Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ» հիմնարկ (ԳՀՀ-ԾԳԿ), որը հիմնադրվել է 1998 թվականին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից և որի նպատակն է աջակցել Հայաստանի ֆինանսական համակարգին՝ արտաքին եւ ներքին աղբյուրներից ստացված միջոցները ուղղելով տնտեսության որոշակի հատվածների զարգացմանը:

Ընկերությունը շարունակելու է աշխատանքը ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային ֆինանսական հաստատությունների հետ, որոնց հետ համագործակցության արդյունքում ներգրավված դրամական փոխառու միջոցներն ուղղվում են դեպի երկրի տնտեսության զարգացման համար առավել կարևոր ճյուղերը, ինչպես նաև ծառայում են ցածր եկամուտ ունեցող գործարար ակտիվ բնակչության կենսամակարդակի բարելավմանը:

3.4.2.3. ՀՀ ֆինանսական վարկավորման շուկայում մրցակցային դիրքի առումով Թողարկողը, ունենալով վարկային ծառայությունների լայն տեսականի, ունի իր ուրույն դերն ու նշանակալությունը: Կազմակերպության բարի համբավը, ճանաչելիության և վստահության բարձր մակարդակը, մատուցվող ծառայությունների որակը, առավել հասանելի լինելն ու լայն տեսականիով հանրությանը ներկայանալը հանդիսանում են Ընկերության ռազմավարության կարևորագույն գործոնները: Վերջինիս մասին վկայում են Կազմակերպության ֆինանսական ցուցանիշները, որոնք առաջին իսկ տարվանից ցուցաբերում են միայն դրական աճման միտումներ:

ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված հիփոթեքային վարկերի պորտֆելում թողարկողի ունեցած մասնաբաժինը ներկայացվում է Գծապատկեր 4-ում:

Գծապատկեր 4. Թողարկողի և ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված հիփոթեքային վարկերի ծավալները (մլրդ. ՀՀ դրամ)



Հաշվի առնելով վարկային կազմակերպությունների քանակը՝ Թողարկողի կողմից տրամադրված հիփոթեքային վարկերի տեսակարար կշիռը բավականին մեծ է ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված ընդհանուր հիփոթեքային վարկերի ծավալում, մասնավորապես՝ 2017 և 2018թթ.-ներին կազմելով համապատասխանաբար 21.43% և 20.58%, իսկ 2019թ.-ի հունիսի 30-ի դրությամբ՝ 20.16%: Վարկային կազմակերպությունների ընդհանուր վարկային ներդրումներում Թողարկողի վարկային պորտֆելի մասնաբաժինը 2010-2019թթ.-ին հետևյալն է.

մլն.ՀՀ դրամ

	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.*	2017թ.	2018թ.	30.06.2019թ.
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներ	59 672	81 054	113 504	137 143	167 351	180 649	207 172	262 897	306 286	379 789
Թողարկողի վարկային պորտֆել	2 164	3 074	5 057	5 669	7 570	9 578	11 003	12 578	17 409	19 344
Թողարկողի բաժինը (%)	3.63	3.76	4.46	4.13	4.52	5.3	5.32	4.79	5.68	5.09

*վերահաշվարկված

Թողարկողի ՀՀ վարկային կազմակերպությունների շարքում զբաղեցրած դիրքը ըստ մի շարք ֆինանսական ցուցանիշների 31.12.2018թ. և 30.06.2019թ.-ի դրությամբ հետևյալն է.

31.12.2018թ.**

N	Ակտիվներ	Պարտավորություններ	Վարկային պորտֆել	Կապիտալ	Շահույթ հարկումից հետո
1.					
2.		25,818,170			
3.					
4.					
5.					
6.	28,080,069				
7.					
8.			17,173,402		
9.					
10.					
11.					604,054
12.					
13.				2,261,899	
14.					

**Տեղեկատվության աղբյուր՝ «ԱՌՔԱ» գործակալության "Кредитные организации Армении" հաշվետվությունը

30.06.2019թ.*

N	Ակտիվներ	Պարտավորություններ	Վարկային պորտֆել	Կապիտալ	Շահույթ հարկումից հետո
1.					
2.					
3.					
4.					
5.		26,264,883			
6.	28,441,343				
7.			19,344,257		
8.					
9.					
10.					234,553
11.					
12.					
13.					
14.				2,176,460	

*Տեղեկատվության աղբյուր՝ «ԱՌՔԱ» գործակալության "Кредитные организации Армении" հաշվետվությունը

3.5 Թողարկողի կառուցվածքը

Թողարկողը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ճանաչվել է «ԳԼՈԲԱԼ ԿԵՐԵԴԻՏ ԵՎ ՌԵՆԵՍԱ» ֆինանսական խմբի անդամ: Վերոնշյալ խմբի անդամներ են հանդիսանում «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն և «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ-ն: Ընկերությունը նաև «ՌԵՆՇԻՆ» ՍՊԸ-ի հետ ունի ընդհանուր սեփականատերեր և ընդհանուր շահեր:

Ստորև ներկայացվում է Ընկերության ներքին վարչակազմակերպչական կառուցվածքը.



3.6 Զարգացման վերջին միտումները

Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագները մրցունակ են և մատչելի տվյալ շուկայում գործող նմանատիպ ծառայությունների համեմատ: Վերջին հաշվետու տարվա ավարտից մինչև Ազդագրի ներկայացման օրն ընկած ժամանակահատվածի համար մատուցվող ծառայությունների սակագների էական աճ չի գրանցվել: Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է Թողարկողի ակտիվապասիվային ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն, որը պոտենցիալ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

հազ.դր

	2017թ.	2018թ.	Աճ/Նվազում	Աճ/Նվազում %
Միջոցների ներգրավում				
Վարկեր և փոխառություններ	12,938,601	23,991,737	11,053,136	85.4
Միջոցների տեղաբաշխում				
Ներդրումային արժեթղթեր	3,388,879	8,397,644	5,008,765	147.8
Հաճախորդներին տրված վարկեր	12,578,237	17,408,837	4,830,600	38.4

Հաճախորդներին տրված վարկերը 2018թ.-ի դեկտեմբերի 31-ի նկատմամբ 2019թ.-ի հունիսի 30-ին ավելացել են 1,935,420 հազ. ՀՀ դրամով կամ 11.1%-ով:

Թողարկողի գործունեության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ իմանալու համար ներդրողը կարող է ծանոթանալ Ընկերության տարեկան և միջանկյալ հաշվետվություններին, որոնք տեղադրված են Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքի «Հաշվետվություններ» բաժնում:

3.7 Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը

3.7.1 Թողարկողը շահույթի գծով կանխատեսումներն իրականացնում է ելնելով մի շարք գործոններից: Մասնավորապես հաշվի է առնվում կապիտալի եկամտաբերության գործակիցը, և վերջինով պայմանավորված շահույթի կանխատեսման կարևորագույն գործոններ են դիտարկվում տոկոսային և ոչ տոկոսային եկամուտներն ու ծախսերը, ինչպես նաև զուտ մասհանումների ցուցանիշը:

2019թ.-ին Ընկերությունը սկսել է վարկային գործիքների թվայնացման լայնածավալ գործընթաց, որը նախատեսվում է ավարտել մինչև սույն տարվա ավարտը, երբ մասնաճյուղերի բացակայության պայմաններում կունենա ամբողջությամբ ավտոնոմ շուրջօրյա (24/7) աշխատող վարկավորման մեխանիզմ: Նպատակ է դրվել փորձարկել վարկավորման տարբեր մոդելներ, այդ թվում նաև կառավարման և սքորինգային մոդելներ: Փորձարկումների փուլն արդեն ավարտվել է, և մոտ երկու շաբաթ հետո կազմակերպությունը կգործարկի իր «e-commerce» վարկավորման գործիքը: Փորձարկման սկզբնական շրջանում առաջարկվող թեթև պայմաններով վարկերի ստացման պարագայում այդ վարկերի ժամկետանցության տոկոսը բավական աճեց, ինչի հետ կապված Գլոբալ Կրեդիտ ընկերությունը իր ձևավորած շահույթի հաշվին վարկերի պահուստավորման կարգի համաձայն իրականացրել է համարժեք պահուստավորում:

Կորուստների վերականգնման և ժամկետանց վարկերի հավաքագրման նպատակով Ընկերությունը սկսել է համագործակցել նաև խնդրահարույց վարկերի հավաքագրման-իրավաբանական ընկերության հետ, ինչի արդյունքում արդեն բազմապատկվել են վերականգնվող ժամկետանց վարկերի հավաքագրման ծավալները: Ձեռնարկվող լայնածավալ միջոցառումների շնորհիվ վստահաբար ընկերությունը կապահովի կորուստների վերադարձ և շարունակական բարձր շահույթ: Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով նախորդ ժամանակահատվածների ընթացքում Ընկերության գործունեության փորձը, հնարավոր պահուստավորման մակարդակը, գործունեության վրա ազդող այլ գործոնները և պորտֆելի ծավալն ու դրա շահութաբերության մակարդակը, կարող ենք ասել, որ 2019 թ.-ի համար զուտ շահույթ չի ակնկալվում, իսկ 2020 և 2021թթ.-երին Թողարկողի միջին տարեկան ակնկալվող շահույթը կանխատեսվում է, որ կկազմի համապատասխանաբար 600 մլն և 800 մլն ՀՀ դրամ:

3.7.2 Ընկերության կառավարման մարմինները, Ընկերության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված իրենց իրավասությունների շրջանակներում, հնարավորություն ունեն ազդելու (կառավարելու) Ընկերության գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

- վարկային քաղաքականություն՝ վարկատեսակների մշակման և ակտիվների կառավարման առումով,
- Ընկերության կողմից ներգրավվող միջոցների ծավալների կառավարում,
- Ընկերության տեխնիկատեխնոլոգիական բազայի արդիականացմանն ուղղված ներդրումների կառավարում,
- աշխատակազմի քանակի, վարձատրության, գործուղման, խրախուսման և վերապատրաստման ծախսերի կառավարում,
- Ընկերության գործունեության ռիսկերի կառավարման արդյունավետ գործիքների ներդրման հետ կապված ծախսերի կառավարում,
- Ընկերության տարածքային ստորաբաժանումների ընդլայնման և արդիականացման հետ կապված որոշումների և ծախսերի կառավարում,
- Ընկերության կազմակերպաիրավական կառուցվածքի փոփոխություն, վերջինիս հետ կապված գործառույթների ծախսատարության կառավարում:

Թողարկողի կառավարման մարմինները կարող են արձագանքել, հանդես գալ առաջարկությամբ, սակայն չեն կարող ազդել Ընկերության գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

- ֆինանսական շուկայում առաջարկի և պահանջարկի արդյունքում ձևավորվող տոկոսադրույքների, դրանց փոփոխությունների և վարքագծի կառավարում,
- անհաղթահարելի ուժի ազդեցության գործոնների կառավարում,
- փոխարժեքային տատանումների կառավարում,
- ՀՀ ֆինանսական շուկայում մրցակցային հարաբերությունների, պահանջարկի արդյունավետ կառավարում և այլն:

3.8 Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

3.8.1. Թողարկողի կանոնադրությամբ սահմանված Ընկերության կառավարման մարմիններն են՝

ա) ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը

բ) ընկերության խորհուրդը

գ) ընկերության գործադիր տնօրենը

Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը ներկայացվում է ստորև.



Թողարկողի կանոնադրությամբ սահմանված է կառավարման մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակը:

3.8.1.1. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը նրա բաժնետերերի ընդհանուր ժողովն է: Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում.

ա) Թողարկողի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

բ) Թողարկողի վերակազմակերպումը (խորհրդի ներկայացմամբ),

գ) Թողարկողի լուծարումը,

դ) Ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,

ե) Թողարկողի խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

է) Թողարկողի կանոնադրական կապիտալի նվազեցումը,

ը) Թողարկողի վերստուգողի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը,

թ) Թողարկողի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

ժ) Թողարկողի տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվետվության, տարեկան շահաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահաբաժինների չափի և վճարման կարգի հաստատումը,

ժա) Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը,

ժբ) Թողարկողի կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության միջոցով (խորհրդի ներկայացմամբ),

ժգ) բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը (խորհրդի ներկայացմամբ),

ժդ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը (խորհրդի ներկայացմամբ),

ժե) Թողարկողի խորհրդի անդամների և վերստուգողի վարձատրության պայմանների և ծախսերի հատուցման կարգի ու պայմանների որոշումը:

Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում նաև հետևյալ հարցերը, որոնց որոշումների ընդունումը ժողովի որոշմամբ կարող է փոխանցվել Թողարկողի խորհրդին.

ա. Թողարկողի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում

բ. դուստր, կախյալ, հոլդինգային ընկերությունների, այլ կազմակերպությունների, առևտրային կազմակերպությունների միությունների ստեղծումը և մասնակցությունը դրանց, եթե դա ժողովի կողմից հաստատման ենթակա խոշոր գործարք չի հանդիսանում:

Բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունները չեն կարող փոխանցվել Խորհրդին, Թողարկողի գործադիր տնօրենին կամ այլ անձանց:

3.8.1.2. Ընկերության խորհուրդն իրականացնում է Թողարկողի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ իր իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

Ընկերության խորհրդի նախագահն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ա. կազմակերպում է խորհրդի աշխատանքները,

բ. գումարում է խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,

գ. կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը,

դ. Թողարկողի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում նախագահում է Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովներում:

Ընկերության խորհրդի իրավասություններն են՝

ա. Թողարկողի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը և Թողարկողի քաղաքականությունների ու ներքին կանոնակարգերի հաստատումը,

բ. Թողարկողի վարչակազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատումը,

գ. Թողարկողի ամենամյա ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը,

դ. Թողարկողի բաժնետերերի տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը, դրանց օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,

ե. Թողարկողի գործադիր տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների ու կարգի հաստատումը,

զ. Թողարկողի վերստուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների, ինչպես նաև Թողարկողի բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ բաժնետերերի ընդհանուր ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը,

է. Թողարկողի բաժնետոմսերի դիմաց միջանկյալ շահաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը,

ը. սույն ենթաբաժնի 3.8.1 կետի (բ), (ժբ) - (ժե) կետերով նախատեսված հարցերի ներկայացումը բաժնետերերի ընդհանուր ժողովի քննարկմանը,

թ. Թողարկողի կանոնադրական կապիտալի ավելացումը՝ բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով, եթե տեղաբաշխվող բաժնետոմսերը չեն կազմում Թողարկողի արդեն տեղաբաշխված բաժնետոմսերի 25 (քսանհինգ) և ավելի տոկոսը, և դրանով պայմանավորված Թողարկողի կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը կամ կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

ժ. Թողարկողի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,

ժա. Թողարկողի գույքի շուկայական արժեքի որոշումը՝ օրենքով սահմանված կարգով,

ժբ. Թողարկողի արտաքին աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,

ժգ. Թողարկողի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,

ժդ. Թողարկողի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը,

ժե. Թողարկողի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 (քսանհինգ) – 50 (հիսուն) տոկոսը կազմող արժեքով խոշոր գործարք կնքելու մասին որոշման կայացումը,

ժզ. շահագրգռվածության առկայության դեպքում գործարք կնքելու մասին որոշման կայացումը,

ժէ. Թողարկողի տարեկան հաշվետվության նախնական հաստատումը,

ժը. Թողարկողի վերստուգողի կողմից իրականացվող ստուգումներին հատուկ մասնագետների ներգրավմանը հավանություն տալը:

Թողարկողի Խորհրդի բացառիկ իրավասությունները չեն կարող փոխանցվել Թողարկողի գործադիր տնօրենին կամ այլ անձանց:

3.8.1.3. Թողարկողի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գործադիր տնօրենը: Թողարկողի գործադիր տնօրենի հետ աշխատանքային պայմանագիրն Թողարկողի անունից կնքում է Ընկերության խորհրդի նախագահը: Ընկերության գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալ(ներ):

Ընկերության գործադիր տնօրենն իրականացնում է հետևյալ գործառույթները.

ա. ներկայացնում է թողարկողին երրորդ անձանց հետ հարաբերություններում, պետական և այլ մարմիններում, այլ կազմակերպություններում,

բ. տնօրինում է Թողարկողի գույքը և ֆինանսական միջոցները, Թողարկողի անունից կնքում է գործարքներ,

գ. գործում է Թողարկողի անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր,

դ. աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Թողարկողի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

ե. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Թողարկողի խորհրդի կողմից հաստատվող ներքին կանոնակարգերը, Թողարկողի վարչակազմակերպական կառուցվածքը,

զ. իրականացնում է Թողարկողի գործունեության ղեկավարման հետ կապված այլ գործառույթներ, որոնց կատարումը վերապահված չէ Թողարկողի մյուս կառավարման մարմինների իրավասությանը:

3.8.2. Տեղեկություններ Ընկերության կառավարման մարմինների անդամների վերաբերյալ.

Խորհուրդ

N	Անուն, ազգանուն	Բնակության վայր	Զբաղեցրած պաշտոն	Իրավասություններն ու պարտականությունները	Ընկերությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը
1.	**Էդուարդ Մարության**	**ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փողոց, 5ա շենք, բնակարան թիվ 251**	**Խորհրդի նախագահ**	**Իրականացնում է Ընկերության կանոնադրությամբ, ՀՀ օրենսդրությամբ և «Խորհրդի գործունեության» ներքին կարգով սահմանված գործառույթներ (Տե՛ս կից ներկայացվող Կանոնադրությունում)**	**«ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ բաժնետեր և խորհրդի նախագահ, «ՌԵՆՇԻՆ» ՍՊԸ մասնակից և գլխավոր տնօրեն**

2.	Արայիկ Կարապետյան	ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ 1 փողոց, տուն 4	Խորհրդի անդամ	Իրականացնում է Ընկերության կանոնադրությամբ, ՀՀ օրենսդրությամբ և «Խորհրդի գործունեության» ներքին կարգով սահմանված գործառույթներ (Տե՛ս կից ներկայացվող Կանոնադրությունում)	«ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ բաժնետեր և խորհրդի անդամ, «ՌԵՆՇԻՆ» ՍՊԸ մասնակից և խորհրդի նախագահ
3.	Լուիզա Իգրարյան	ՀՀ, ք. Երևան, Շահումյան 7-րդ փողոց, 1-ին նրբանցք, տուն 4	Խորհրդի անդամ	Իրականացնում է Ընկերության կանոնադրությամբ, ՀՀ օրենսդրությամբ և «Խորհրդի գործունեության» ներքին կարգով սահմանված գործառույթներ (Տե՛ս կից ներկայացվող Կանոնադրությունում)	

Գործադիր տնօրեն

N	Անուն, ազգանուն	Բնակության վայր	Զբաղեցրած պաշտոն	Իրավասություններն ու պարտականությունները	Թողարկող կազմակերպությունից դուրս ծավալած գործունեությունը
1.	Լուիզա Իգրարյան	ՀՀ, ք. Երևան, Շահ ումյան 7-րդ փողոց, 1-ին նրբանցք, տուն 4	Գործադիր տնօրեն	Իրականացնում է Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը	

3.8.3. Սույն Ազդագրի ներկայացման պահի դրությամբ Թողարկողի և նրա կառավարման մարմինների անդամների միջև շահերի բախման դեպքեր և հիմքեր չկան:

3.9 Հսկող անձինք

Ընկերության հսկող անձինք են հանդիսանում՝

ա. Գագիկ Նիկոլի Վարդանյանը (անձնագիր GJ600812, տրված 01.05.2015թ, 001- (Կանադա) կողմից), որպես Թողարկողի բաժնետոմսերի 33.53%-ի սեփականատեր,

բ. Էդուարդ Մուրադի Մարությանը (անձնագիր AK0657349, տրված 16.11.2010թ 011-ի կողմից), որպես Թողարկողի բաժնետոմսերի 33.33%-ի սեփականատեր,

գ. Արայիկ Ռազմիկի Կարապետյանը (անձնագիր AS0427105, տրված 28.11.2018թ 011-ի կողմից), որպես Թողարկողի 28.12% բաժնետոմսերի սեփականատեր,

դ. Կարեն Իլյիչի Դարբինյանը (անձնագիր AM0300300, տրված 17.05.2011թ 001-ի կողմից), որպես Թողարկողի բաժնետոմսերի 5.02%-ի սեփականատեր:

3.10 Տեղեկատվություն Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

3.10.1 Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Թողարկողի 2017-2018թթ.-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունները և անկախ աուդիտորական եզրակացությունները (պատճենները) ներառված են սույն Ազդագրի համապատասխանաբար Հավելված 3-ում և Հավելված 2-ում, իսկ 2019թ.-ի առաջին և երկրորդ եռամսյակների ֆինանսական հաշվետվությունները՝ Հավելված 1-ում: Ներդրողները թողարկողի ֆինանսական հաշվետվություններին կարող են ծանոթանալ նաև Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.globalcredit.am :

3.10.2 Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

Սույն Ազդագրում ներառված վերջին (ամենաթարմ) ֆինանսական հաշվետվության վերջին օրվանից մինչև Ազդագիրը գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում տեղի է ունեցել Ընկերության ֆինանսական վիճակի էական փոփոխություն, մասնավորապես 2019թ.-ի 3-րդ եռամսյակում 2019թ.-ի 2-րդ եռամսյակի համեմատ էական փոփոխության են ենթարկվել Ընկերության հետևյալ հիմնական ցուցանիշները.

Հազ. ՀՀ դրամ

N	Ցուցանիշի անվանումը	30.09. 2019թ.*	30.06. 2019թ.*	Փոփոխություն	Փոփոխություն %
1.	Սեփական կապիտալ	2,000,000	1,500,000	500,000	33
2.	Ընդհանուր ակտիվներ	34,824,534	28,441,343	6,383,191	22
3.	Ընդհանուր պարտավորություններ	32,248,353	26,264,883	5,983,470	23
4.	Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	27,069	304,092	(277,023)	(74)

* Նշյալ ժամանակաշրջանի տվյալները հաստատված չեն արտաքին աուդիտի կողմից

Սեփական կապիտալի փոփոխությունը պայմանավորված է 2019թ.-ի հուլիսի 31-ին կատարված կապիտալի համալրմամբ: Ընդհանուր ակտիվների 22% աճը պայմանավորված է պետական պարտատոմսերի պորտֆելի աճով, որի հետևանքով ընդհանուր պարտավորությունների կազմում աճել է նաև հակադարձ ռեպո պայմանագրերի ծավալը: Զուտ շահույթի (նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը) ցուցանիշի փոփոխությունը պայմանավորված է Սպառողական վարկերի փորձարկման և սքորինգային համակարգի գործարկման արդյունքում սկզբնական շրջանում առաջարկվող թեթև պայմաններով վարկերի համեմատական ռիսկայնության հետ, որոնց ժամկետանցության տոկոսը սկզբում բավական աճեց: Դրանով պայմանավորված Գլոբալ Կրեդիտ ընկերությունը իր ձևավորած շահույթի հաշվին վարկերի պահուստավորման կարգի համաձայն իրականացրել է համարժեք պահուստավորում (առավել մանրամասն ներկայացվում է 3.7.1 կետում):

3.10.3 Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Սույն Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամիսների ընթացքում Ընկերության ներգրավվածությամբ և նրա ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա էական ազդեցություն ունեցող դատական, արբիտրաժային և (կամ) վարչական վարույթներ առկա չեն:

3.11 Էական պայմանագրեր

Կազմակերպությունը Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 1 (մեկ) տարվա ընթացքում իր բնականոն գործունեության շրջանակներից դուրս որևէ պայմանագիր չի կնքել և ներկայումս չունի նաև գործողության մեջ գտնվող նմանատիպ պայմանագիր:

3.12 Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

Սույն Ազդագրում ներկայացվող պարտատոմսերի թողարկման կազմակերպման պայմանների և այլ հարցերի վերաբերյալ որպես խորհրդատու հանդես է գալիս «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ-ն (ՀՀ, ք.Երևան, Վարդանանց 16, հեռ.՝ +(374 10) 54 83 83, 54 83 87, ֆաքս՝ +(374 10) 54 83 83, Էլ.փոստ՝ info@renesa.am, պաշտոնական ինտերնետային կայք՝ www.renesa.am): Այլ անձանց մասնագիտական կարծիք կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն սույն Ազդագրում չի օգտագործվել:

3.13 Այլ տեղեկատվություն

Սույն Ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում թողարկողի կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, աուդիտորական եզրակացությունները մշտապես մատչելի են հանրությանը էլեկտրոնային ձևով Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.globalcredit.am :

ՄԻՋԱՆԿՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Ձև 6)
30 հունիս 2019թ.
ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ ,ք.Երևան Սասնա Ծռեր 2/251

(հազ.դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ տարվա նույն ժամանակաշրջան-	Հաշվետու տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը	Նախորդ տարվա սկզբից մինչև նախորդ տարվա նույն ժամանակաշրջան
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	1,284,383	756,420	2,461,391	1,392,281
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(491,455)	(394,231)	(966,536)	(678,325)
Զուտ տոկոսային եկամուտ	792,928	362,189	1,494,855	713,956
Շահաբաժնի տեսքով եկամուտներ	-			
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	508,939	241,967	950,965	465,602
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(12,253)	(8,243)	(25,335)	(13,525)
Առևտրային նպատակով պահվող ներդրումներից զուտ շահույթ/(վնաս)	-			
Վաճառքի նպատակով ներդրումներից զուտ շահույթ/(վնաս)	5,725		4,200	
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներից զուտ շահույթ/(վնաս)	-			
Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ/(վնաս)	3,370	752	3,766	3,912
Այլ գործառնական եկամուտներ	109,992	97,608	266,938	160,655
Գործառնական եկամուտ	1,408,701	694,273	2,695,389	1,330,600
Վարկերից և այլ փոխառություններից առաջացած կորուստներ	(1,105,290)	(314,570)	(1,943,080)	(616,099)
Ընդհանուր վարչական ծախսեր	(218,285)	(151,903)	(404,671)	(331,679)
Այլ գործառնական ծախսեր	(24,958)	(25,685)	(43,546)	(56,752)
	-			
Շահույթ մինչև հարկվելը	60,168	202,115	304,092	326,070
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(21,000)	(38,000)	(69,539)	(61,527)
Շահույթ հարկումից հետո	39,168	164,115	234,553	264,543
Մեկ բաժնետոմսին ընկնող բազային շահույթ				
Մեկ բաժնետոմսին ընկնող նոսրացված շահույթ				

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 10.07.2019թ.

Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն՝ Լուիզա Իգրարյան

Գլխավոր հաշվապահ՝ Սուսաննա Խաչատրյան

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (Ձև7)

30 հունիս 2019թ.

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ ,ք.Երևան Սասնա Ծռեր 2/251

(հազ.դրամ)

	Անվանումը	Ծանոթագրություն	Հաշվետու ժամանակաշրջան 30.06.2019թ.	Նախորդ ժամանակաշրջան 31.12.2018թ.
1	Ակտիվներ			
1.1	Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	12	71,242	108,279
1.2	Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ներդրումներ			
1.3	Բանկերում տեղաբաշխված միջոցներ	13		
1.4	Դրամական շուկայում այլ տեղաբաշխումներ	14	40,579	500,307
1.5	Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	15	19,344,257	17,173,402
1.6	Վաճառքի համար նախատեսված ներդրումներ	16	7,924,850	8,382,486
1.7	Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ		-	1,043,150
1.8	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	17		157
1.9	Վարձակալության գծով ստացվելիք գումարներ			
1.1	Ներդրումներ այլ անձանց կանոնադրական		15,000	15,000
1.11	Կապիտալ ներդրումներ բանկի հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում		23,253	
1.11.1	Վաճառքի համար նախատեսված ներդրումներ/գույք		173,457	190,415
1.12	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	18	204,270	198,331
1.13	Հետաձգված հարկային ակտիվներ		6,199	2,834
1.14	Ստացվելիք տոկոսներ	19	557,583	371,066
1.15	Այլ ակտիվներ	20	80,653	94,642
	Ընդամենը՝ ակտիվներ		**28,441,343**	**28,080,069**
2	Պարտավորություններ			
2.1	Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր	21	7,400,929	6,526,008
2.2	Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ	22	6,782,435	6,356,876
2.3	Հաճախորդներից ներգրավված փոխառություններ	23	2,981,604	3,162,695
2.4	Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ		105,419	195,121
2.5	Վարձակալության գծով վճարվելիք գումարներ			
2.6	Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթեր	24	1,453,506	1,467,135
2.7	Պահուստներ		5,836	5,640
2.8	Վճարվելիք գումարներ		7,246,073	7,838,882
2.9	Հետաձգված հարկային պարտավորություններ		49,268	49,268
2.1	Վճարվելիք տոկոսներ	25	125,690	120,329
2.11	Այլ պարտավորություններ	26	114,123	96,216
	Ընդամենը՝ Պարտավորություններ		**26,264,883**	**25,818,170**
3	Կապիտալ			
3.1	Կանոնադրական կապիտալ	27	**1,500,000**	**1,500,000**
3.3	Պահուստներ՝		175,814	195,806
3.3.1	Գլխավոր պահուստ		77,328	77,328
3.3.2	Վերագնահատման պահուստներ	28	98,486	118,478
3.4	Կուտակված շահույթ		500,646	566,093
	Ընդամենը՝ Կապիտալ		**2,176,460**	**2,261,899**
	Հաշվարկված շահաբաժին			
	Ընդամենը՝ Պարտավորություններ և կապիտալ		**28,441,343**	**28,080,069**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 10.07.2019թ.

Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն՝ **Լուիզա Իգրարյան**

Գլխավոր հաշվապահ՝ **Սուսաննա Խաչատրյան**

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն (Ձև 8)

30 հունիս 2019թ.

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ ,ք.Երևան Սասնա Ծռեր 2/251

հազ դրամ

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ			Էմիսիոն եկամուտ	Պահուստներ	Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնություններից	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումներ	Դրամական հոսքերի հեջավորում	Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումից	Չբաշխված շահույթ/վնասներ	Ընդամենը	Ոչ վերահսկող մասնակցություն	Սեփական կապիտալի ընդամենը
	Կանոնադրական կապիտալում տեղաբաժնի չվճարված մասհանվող կապիտալ	Հետ գնված սեփական բաժնետոմսեր	Կանոնադրական կապիտալ ընդամենը										
Հոդվածներ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Նախորդ հաշվետու ժամանակաշրջան (I եղյուսակ)													
1.Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2017 թ.	1,500,000		1,500,000		56,077		24,549			451,265	2,031,892		2,031,892
1.1.Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը										(293,673)	(293,673)		(293,673)
2. Վերահաշվարկված մնացորդը	1,500,000		1,500,000		56,077		24,549			157,592	1,738,219	-	1,738,219
3.Բաժնետերերի հետ գործարքներ բաժնետոմսերի գծով,այդ թվում՝											-		
3.1.Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի աճ													
3.2.Կանոնադրական կապիտալի նվազում ,այդ թվում՝հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի											-		-
4.Համապարփակ եկամուտ										264,543	264,543		264,543
5.Շահաբաժիններ										(403,751)	(403,751)		(403,751)
6.Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում(նվազում), այդ թվում՝											-		-
6.1.Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում											-		-
7.Ներքին շարժեր,այդ թվում՝											-		-
7.1 Մասնահանումներ գլխավոր պահուստին					21,250					(21,250)			
7.2 Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի											-		-
7.3 Էմիսիոն վնասի ծածկում											-		-
7.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում													
7.5 Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր							(68,174)				(68,174)		(68,174)
8. Մնացորդը առ 30 հունիս 2018 թ.	1,500,000	-	1,500,000		77,327	-	(43,625)	-	-	(2,866)	1,530,837	-	1,530,837
Հաշվետու ժամանակաշրջան (II եղյուսակ)													
9.Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2018 թ.	1,500,000		1,500,000		77,327		118,478			566,093	2,261,899		2,261,899
9.1.Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը													
10. Վերահաշվարկված մնացորդը	1,500,000		1,500,000		77,327		118,478			566,093	2,261,899	-	2,261,899
11.Բաժնետերերի հետ գործարքներ բաժնետոմսերի գծով,այդ թվում՝											-		
11.1.Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի աճ													
11.2.Կանոնադրական կապիտալի նվազում ,այդ թվում՝հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի հաշվին											-		-
12.Համապարփակ եկամուտ										234,553	234,553		234,553
13.Շահաբաժիններ										(300,000)	(300,000)		(300,000)
14.Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում(նվազում), այդ թվում՝											-		-
14.1.Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում											-		-
15.Ներքին շարժեր,այդ թվում՝											-		-
15.1 Մասնահանումներ գլխավոր պահուստին													
15.2 Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում											-		-
15.3 Էմիսիոն վնասի ծածկում											-		-
15.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում													
15.5 Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր							(19,992)				(19,992)		(19,992)
16. Մնացորդը առ 30 հունիս 2019 թ.	1,500,000	-	1,500,000		77,327	-	98,486	-	-	500,646	2,176,460	-	2,176,460

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 10.07.2019թ.

Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն՝ Լուիզա Իգդարյան

Գլխավոր հաշվապահ՝ Սուսաննա Խաչատրյան

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ (Ձև 9)

30 հունիսի 2019թ.

(հազ.դրամ)

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ ,ք.Երևան Սասնա Ծռեր 2/251

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1. Դրամական միջոցներ զուտ հոսքեր գործառնական գործունեությունից	**(862,619)**	**(5,539,559)**
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	**1,117,086**	**693,939**
Ստացված տոկոսներ	1,074,686	826,326
Վճարված տոկոսներ	(682,213)	(509,230)
Կորուստների վերականգնում	184,152	104,800
Ստացված շահաբաժիններ		
Ստացված զուտ կոմիսիոն գումարներ	925,630	531,674
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(139,573)	(126,355)
Վճարված հարկեր	(245,596)	(133,276)
Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	**(1,979,705)**	**(6,233,498)**
Տեղաբաշխված միջոցներ նվազում (ավելացում)	(1,559,306)	(1,398,388)
Ներգրավված միջոցների ավելացում (նվազում)	(395,208)	
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում)		(4,741,558)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում (ավելացում)		
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից	(25,191)	(93,552)
2. Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ ներդրումային	**-29,056**	**-2,440**
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի նվազում (ավելացում)		
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում		
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)	(23,253)	
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(6,003)	(2,440)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում	200	
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		
3. Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական	**854,785**	**5,488,358**
Վճարված շահաբաժիններ	(300,000)	(403,751)
Բանկերից ստացված վարկերի ավելացում (նվազում)	814,665	4,725,698
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)	340,120	1,166,411
Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)		
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական հիմնադրամում		
Ֆինանսական վարձակալության դիմաց վճարվելիք գումարների ավելացում (նվազում)		
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից		
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական	(475)	(3,538)
Դրամական միջոցների զուտ հոսք	**(36,890)**	**(53,641)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	**109,240**	**213,634**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	**71,875**	**156,455**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 10.07.2019թ.

Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն՝ **Լուիզա Իգրարյան**

Գլխավոր հաշվապահ՝ **Սուսաննա Խաչատրյան**

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձև թիվ 30

Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

Վարկային կազմակերպության անվանումը **Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ ՓԲԸ**

Ամսաթիվը 01/04/19 30/06/19

(հազ.դրամ)

Նորմատիվներ	Փաստացի մեծություն	ՀՀ ԿԲ սահմանված նորմատիվի թույլատրելի մեծություն	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	*2*	*3*	*4*
Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը	1,500,000	150,000	Խախտում չկա
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	2,343,977	1,000,000	Խախտում չկա
Ն1 ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցության նվազագույն չափը	12.30%	12.00%	Խախտում չկա
Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	21.20%	25.00%	Խախտում չկա

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 10.07.2019թ.

Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն՝ **Լուիզա Իգրարյան**

Գլխավոր հաշվապահ՝ **Սուսաննա Խաչատրյան**

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ ինտերնետային կայքի հասցեն է՝ www.globalcredit.am ,որտեղ գտնվում է ընկերության ֆինանսական հաշվետվությունների ամբողջ փաթեթը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Ձև 6)

31 մարտի 2019թ.

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ ,ք.Երևան Սասնա Ծռեր 2/251

(հազ.դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ տարվա նույն ժամանակաշրջան-	Հաշվետու տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը	Նախորդ տարվա սկզբից մինչև նախորդ տարվա նույն ժամանակաշրջան
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	1,177,008	635,861	1,177,008	635,861
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(475,081)	(284,094)	(475,081)	(284,094)
Զուտ տոկոսային եկամուտ	701,927	351,767	701,927	351,767
Շահաբաժնի տեսքով եկամուտներ				
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	442,026	223,635	442,026	223,635
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(13,082)	(5,282)	(13,082)	(5,282)
Առևտրային նպատակով պահվող ներդրումներից զուտ շահույթ/(վնաս)				
Վաճառքի նպատակով ներդրումներից զուտ շահույթ/(վնաս)	(1,525)		(1,525)	
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներից զուտ շահույթ/(վնաս)				
Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ/(վնաս)	396	3,160	396	3,160
Այլ գործառնական եկամուտներ	156,946	63,047	156,946	63,047
Գործառնական եկամուտ	1,286,688	636,327	1,286,688	636,327
Վարկերից և այլ փոխառություններից առաջացած կորուստներ	(837,790)	(301,529)	(837,790)	(301,529)
Ընդհանուր վարչական ծախսեր	(186,386)	(179,776)	(186,386)	(179,776)
Այլ գործառնական ծախսեր	(18,588)	(31,067)	(18,588)	(31,067)
Շահույթ մինչև հարկվելը	243,924	123,955	243,924	123,955
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(48,539)	(23,527)	(48,539)	(23,527)
Շահույթ հարկումից հետո	195,385	100,428	195,385	100,428
Մեկ բաժնետոմսին ընկնող բազային շահույթ				
Մեկ բաժնետոմսին ընկնող նոսրացված շահույթ				

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 15.04.2019թ.

Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն՝ **Լուիզա Իգրարյան**

Գլխավոր հաշվապահ՝ **Սուսաննա Խաչատրյան**

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (Ձև7)

31 մարտի 2019թ.

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ ,ք.Երևան Սասնա Ծռեր 2/251

(հազ.դրամ)

	Անվանումը	Ծանոթագրություն	Հաշվետու ժամանակաշրջան 31.03.2019թ.	Նախորդ ժամանակաշրջան 31.12.2018թ.
1	Ակտիվներ			
1.1	Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	12	107,502	108,279
1.2	Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ներդրումներ			
1.3	Բանկերում տեղաբաշխված միջոցներ	13		
1.4	Դրամական շուկայում այլ տեղաբաշխումներ	14	26,907	500,307
1.5	Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	15	18,485,994	17,173,402
1.6	Վաճառքի համար նախատեսված ներդրումներ	16	8,414,387	8,382,486
1.7	Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ		-	1,043,150
1.8	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	17	26	157
1.9	Վարձակալության գծով ստացվելիք գումարներ			
1.1	Ներդրումներ այլ անձանց կանոնադրական		15,000	15,000
1.11	Կապիտալ ներդրումներ բանկի հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում			
1.11.1	Վաճառքի համար նախատեսված ներդրումներ/գույք		221,011	190,415
1.12	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	18	205,333	198,331
1.13	Հետաձգված հարկային ակտիվներ		6,199	2,834
1.14	Ստացվելիք տոկոսներ	19	514,429	371,066
1.15	Այլ ակտիվներ	20	54,552	94,642
	Ընդամենը՝ ակտիվներ		**28,051,340**	**28,080,069**
2	Պարտավորություններ			
2.1	Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր	21	7,063,519	6,526,008
2.2	Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ	22	6,511,045	6,356,876
2.3	Հաճախորդներից ներգրավված փոխառություններ	23	3,207,759	3,162,695
2.4	Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ		165,722	195,121
2.5	Վարձակալության գծով վճարվելիք գումարներ			
2.6	Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթեր	24	1,472,167	1,467,135
2.7	Պահուստներ		4,588	5,640
2.8	Վճարվելիք գումարներ		6,984,888	7,838,882
2.9	Հետաձգված հարկային պարտավորություններ		49,268	49,268
2.1	Վճարվելիք տոկոսներ	25	172,476	120,329
2.11	Այլ պարտավորություններ	26	89,225	96,216
	Ընդամենը՝ Պարտավորություններ		**25,720,657**	**25,818,170**
3	Կապիտալ			
3.1	Կանոնադրական կապիտալ	27	**1,500,000**	**1,500,000**
3.3	Պահուստներ՝		69,205	195,806
3.3.1	Գլխավոր պահուստ		77,328	77,328
3.3.2	Վերագնահատման պահուստներ	28	(8,123)	118,478
3.4	Կուտակված շահույթ		761,478	566,093
	Ընդամենը՝ Կապիտալ		**2,330,683**	**2,261,899**
	Հաշվարկված շահաբաժին			
	Ընդամենը՝ Պարտավորություններ և կապիտալ		**28,051,340**	**28,080,069**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 15.04.2019թ.

Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն՝ **Լուիզա Իգրարյան**

Գլխավոր հաշվապահ՝ **Սուսաննա Խաչատրյան**

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն (Ձև 8)

31 մարտի 2018թ.

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ ,ք.Երևան Սասնա Ծռեր 2/251

հազ դրամ

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ: Կանոնադրական կապիտալ	Կանոնադրական կապիտալ: հետ գնված կապիտալ	Կանոնադրական կապիտալ: զուտ գումար	Էմիսիոն եկամուտ	գլխավոր պահուստ	փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնություններից	վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումներ	դրամական հոսքերի հեջավորում	ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից	չբաշխված շահույթ/վնաս	ընդամենը	չվերահսկվող բաժնեմաս	ընդամենը կապիտալ
Հոդվածներ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Նախորդ հաշվետու ժամանակաշրջան (I աղյուսակ)													
1.Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2017 թ.	1,500,000		1,500,000		56,077		24,549			451,265	2,031,892		2,031,892
1.1.Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը													
2. Վերահաշվարկված մնացորդը	1,500,000		1,500,000		56,077		24,549			451,265	2,031,892	-	2,031,892
3.Բաժնետերերի հետ գործարքներ բաժնետոմսերի գծով,այդ թվում՝											-		
3.1.Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի աճ													
3.2.Կանոնադրական կապիտալի նվազում ,այդ թվում 'հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի											-		-
4.Համապարփակ եկամուտ										100,428	100,428		100,428
5.Շահաբաժիններ													
6.Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում(նվազում), այդ թվում՝											-		-
6.1.Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում											-		-
7.Ներքին շարժեր,այդ թվում `											-		-
7.1 Մասնահանումներ գլխավոր պահուստին					-					-			
7.2 Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի											-		-
7.3 Էմիսիոն վնասի ծածկում											-		-
7.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում													
7.5 Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր							107,234				107,234		107,234
8. Մնացորդը առ 31 մարտ 2018 թ.	1,500,000	-	1,500,000		56,077	-	131,783	-	-	551,693	2,239,554	-	2,239,554
Հաշվետու ժամանակաշրջան (II աղյուսակ)													
9.Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2018 թ.	1,500,000		1,500,000		77,327		118,478			566,093	2,261,899		2,261,899
9.1.Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը													
10. Վերահաշվարկված մնացորդը	1,500,000		1,500,000		77,327		118,478			566,093	2,261,899	-	2,261,899
11.Բաժնետերերի հետ գործարքներ բաժնետոմսերի գծով,այդ թվում՝											-		
11.1.Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի աճ													
11.2.Կանոնադրական կապիտալի նվազում ,այդ թվում 'հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի հաշվին											-		-
12.Համապարփակ եկամուտ										195,385	195,385		195,385
13.Շահաբաժիններ													
14.Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում(նվազում), այդ թվում՝											-		-
14.1.Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում											-		-
15.Ներքին շարժեր,այդ թվում `											-		-
15.1 Մասնահանումներ գլխավոր պահուստին													
15.2 Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում											-		-
15.3 Էմիսիոն վնասի ծածկում											-		-
15.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում													
15.5 Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր							(126,601)				(126,601)		(126,601)
16. Մնացորդը առ 31 մարտ 2019 թ.	1,500,000	-	1,500,000		77,327	-	(8,123)	-	-	761,478	2,330,683	-	2,330,683

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 15.04.2019թ.

Վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավար՝ Լուիզա Իգիթյան

Գլխավոր հաշվապահ՝ Սուսաննա Խաչատրյան

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ (Ձև 9)

31 Մարտի 2019թ.

(հազ.դրամ)

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ ,ք.Երևան Սասնա Ծռեր 2/251

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1. Դրամական միջոցներ զուտ հոսքեր գործառնական գործունեությունից	**(785,166)**	**(594,665)**
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	**566,928**	**385,209**
Ստացված տոկոսներ	493,897	363,182
Վճարված տոկոսներ	(303,718)	(125,660)
Կորուստների վերականգնում	71,856	47,546
Ստացված շահաբաժիններ		
Ստացված զուտ կոմիսիոն գումարներ	428,944	218,353
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(67,423)	(58,743)
Վճարված հարկեր	(56,628)	(59,469)
Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	**(1,352,094)**	**(979,874)**
Տեղաբաշխված միջոցներ նվազում (ավելացում)	(580,112)	(361,760)
Ներգրավված միջոցների ավելացում (նվազում)	(759,004)	
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում)		(604,304)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում (ավելացում)		
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից	(12,978)	(13,810)
2. Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ ներդրումային	**-2,229**	**-1,618**
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի նվազում (ավելացում)		
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում		
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(2,229)	(1,618)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում		
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		
3. Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական	**786,726**	**755,838**
Վճարված շահաբաժիններ		
Բանկերից ստացված վարկերի ավելացում (նվազում)	533,014	(234,898)
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)	253,712	990,736
Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)		
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական հիմնադրամում		
Ֆինանսական վարձակալության դիմաց վճարվելիք գումարների ավելացում (նվազում)		
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից		
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական	(20)	(1,140)
Դրամական միջոցների զուտ հոսք	**(669)**	**159,555**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	**109,240**	**213,634**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	**108,551**	**372,049**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 15.04.2019թ.

Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն՝ **Լուիզա Իգրարյան**

Գլխավոր հաշվապահ՝ **Սուսաննա Խաչատրյան**

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձև թիվ 30

Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

Վարկային կազմակերպության անվանումը **Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ ՓԲԸ**

Ամսաթիվը 01/01/19 31/03/19

(հազ.դրամ)

Նորմատիվներ	Փաստացի մեծություն	ՀՀ ԿԲ սահմանված նորմատիվի թույլատրելի մեծություն	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	*2*	*3*	*4*
Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը	1,500,000	150,000	Խախտում չկա
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	2,443,203	1,000,000	Խախտում չկա
Ն1 ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցության նվազագույն չափը	13.40%	12.00%	Խախտում չկա
Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	16.20%	25.00%	Խախտում չկա

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 15.04.2019թ.

Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն՝ **Լուիզա Իգրարյան**

Գլխավոր հաշվապահ՝ **Սուսաննա Խաչատրյան**

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԸՆ ինտերնետային կայքի հասցեն է՝ www.globalcredit.am ,որտեղ գտնվում է ընկերության ֆինանսական հաշվետվությունների ամբողջ փաթեթը:

Ֆինանսական հաշվետվություններ Անկախ աուդիտորի և եզրակացություն

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն

31 դեկտեմբերի 2018թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	9
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	11
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	13
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	15
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	17

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1
Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia
T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական

Grant Thornton

հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

ՖՀՄՍ 9-ի առաջին անգամ կիրառումը

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների 4.4 ծանոթագրությունում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ 32.1 ծանոթագրությունում:

Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (ՀՀՄՍԽ) թողարկել է ՖՀՄՍ 9-ը *«Ֆինանսական գործիքներ»*, որը փոխարինում է ՀՀՄՍ 39-ին՝ *«Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը»*: ՖՀՄՍ 9-ի ներդրման արդյունքում առաջացող հիմնական փոփոխություններն են. Ընկերության արժեզրկումից կորուստները ներկայում հիմնված են ակնկալվող կորուստների, այլ ոչ թե փաստացի կորուստների մոդելի վրա, Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգման և չափման փոփոխությունները, որոնք մանրամասն նկարագրված են ֆինանսական հաշվետվություններին կից 4.4 ծանոթագրությունում:

Ինչպես նկարագրված է ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում, ֆինանսական ակտիվները դասակարգվել են, իսկ արժեզրկումից կորուստները հաշվառվել են համաձայն ՖՀՄՍ 9-ի *«Ֆինանսական գործիքներ»*: Սա համարվում է աուդիտի առանցքային հարց, քանի որ ՖՀՄՍ 9-ը նոր և բարդ հաշվապահական հաշվառման ստանդարտ է, որը պահանջում է էական դատողություններ ֆինանսական ակտիվների դասակարգման, ինչպես նաև արժեզրկման պահուստների որոշման համար:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են բիզնես մոդելի գնահատումը, որի շրջանակում պահվում են ակտիվները, գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթները հիմնավորված են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներով, ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Բանկի ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք, ինչպես հարկն է, չեն արտացոլվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման և դասակարգման հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- ուսումնասիրվել է Ընկերության՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգման և չափման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ,
- դիտարկվել և ստուգվել են Ընկերության՝ բիզնես մոդելի գնահատումը և պայմանագրային այն դրամական միջոցների հոսքերի թեստավորումը, որոնք առաջացնում են «միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ» հանդիսացող դրամական հոսքեր (SPPI թեստ)
- ստուգվել են սկզբնական մնացորդների ճշգրտումների համապատասխանությունը:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

Grant Thornton

- ուսումնասիրվել է Ընկերության՝ ՖՀՄՄՍ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՄՍ 9-ի պահանջների հետ,
- գնահատվել է արժեզրկման պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը, ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, պարտքային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի ամսաթվի/տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:
- գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը, ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը:
- սստուգվել է Ընկերության՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերը տարբեր փուլերում դասակարգելու հիմքերի համապատասխանությունը:
- որպես ռիսկերի օրինակ՝ ստուգվել է Ընկերության փուլավորման ճշտությունը
- գնահատվել և թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Ընկերության կողմից ընդունված մոդելավորման առանցքային ենթադրությունների վրա և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ:
- Ընկերության ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրության համար մատչելի տեղեկատվություն:
- ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացրել ընթացակարգեր՝ վարկի որակի էական վատթարացման ռիսկերը գնահատելու և անհատական գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկների ժամանակին բացահայտելու նպատակով:
- ստուգվել են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում ընդգրկված վարկերի և փոխատվությունների, արտահաշվեկշռային հոդվածների, ներդրումային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Տեսական հիմնավորումները ընդունվել են, իսկ մոդելների մաթեմատիկական ճշտությունը թեստավորվել,
- արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով ընդունվել են նման տվյալների ընտրության գործընթացը, Ընկերության համար դրա համապատասխանությունը և նման տվյալների նկատմամբ վերահսկողությունն ու կառավարումը,
- մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ թեստավորում պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և ակնկալվող պարտքային կորուստների մոդել),
- ստուգվել է սկզբնական մնացորդների ճշգրտումների համապատասխանությունը:

Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը ներառում է Ընկերության տարեկան հաշվետվությունը 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված

Grant Thornton

տարվա համար՝ բացի ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունից: Տարեկան հաշվետվությունը ենթադրաբար մեզ կտրամադրվի աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք չենք տրամադրում կարծիք, որը որևէ այլ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Մեր կողմից իրականացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերոնշյալ այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռքբերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

Grant Thornton

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց տրամադրում ենք հավաստիացում, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք մեր բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց ներկայացված հարցերից մենք առանձնացնում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտորի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հանրային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում

Grant Thornton

ենք, որ տվյալ հարցերը չպետք է ներկայացվեն աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրանց ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրանց ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Անկախ աուդիտի առաջադրանքի պատասխանատուն հանդիսանում է Արմեն Հովհաննիսյանը:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն

Արմեն Հովհաննիսյան
Առաջադրանքի պատասխանատու

12 մարտի 2019թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2018թ.	2017թ.
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	7	4,400,622	2,707,698
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	7	(1,569,103)	(932,525)
Զուտ տոկոսային եկամուտներ		2,831,519	1,775,173
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	8	55,671	34,378
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	8	(44,152)	(28,342)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		11,519	6,036
Զուտ առևտրային եկամուտ	9	7,261	8,510
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչման գծով օգուտ		26,933	-
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ օգուտ/(վնաս)		-	18,397
Այլ եկամուտներ	10	349,772	201,414
Արժեզրկման գծով ծախսեր	11	(1,808,504)	(824,128)
Անձնակազմի գծով ծախսեր	12	(386,454)	(298,140)
Այլ ծախսեր	13	(412,511)	(285,345)
Շահույթ մինչև հարկումը		619,535	601,917
Շահութահարկի գծով ծախս	14	(115,350)	(125,672)
Տարվա շահույթ		504,185	476,245

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2018թ.	2017թ.
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում			
Իրական արժեքի պահուստի շարժ (պարտքային գործիքներ)			
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ		155,256	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների իրացումից շահույթին կամ վնասին և այլ համապարփակ ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ օգուտ		(25,593)	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություն		4,503	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ		(25,933)	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով զուտ օգուտ		108,233	-
Իրական արժեքի պահուստի շարժ (վաճառքի համար մատչելի)			
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ		-	23,736
Վաճառքի համար մատչելի արժեթղթերի իրացումից շահույթին կամ վնասին և այլ համապարփակ ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ օգուտ		-	(16,415)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ		-	(1,463)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով օգուտ		-	5,858
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		108,233	5,858
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		612,418	482,103

17-ից 92 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	108,279	213,634
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	1,499,983	-
Ներդրումային արժեթղթեր			
- Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	17	-	370,317
- Հետգնման պայմանագրերով գրավադրված վաճառքի համար մատչելի արժեթղթեր	17	-	3,018,562
* Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	17	15,000	-
* Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	17	8,382,644	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	18	17,408,837	12,578,237
Հիմնական միջոցներ	19	78,226	107,886
Ոչ նյութական ակտիվներ	20	84,546	85,266
Բռնագանձված գրավ	21	190,415	155,142
Այլ ակտիվներ	22	72,285	62,407
Ընդամենը՝ ակտիվներ		27,840,215	16,591,451
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	23	23,991,737	12,938,601
Թողարկված պարտքային արժեթղթեր	24	1,480,188	1,482,211
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		78,126	28,045
Հետաձգված հարկային պարտավորություն	14	1,570	27,590
Այլ պարտավորություններ	25	147,275	118,213
Ընդամենը՝ պարտավորություններ		25,698,896	14,594,660

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	26	1,500,000	1,500,000
Այլ պահուստներ		126,005	14,731
Չբաշխված շահույթ		515,314	482,060
Ընդամենը՝ սեփական կապիտալ		2,141,319	1,996,791
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		27,840,215	16,591,451

Ֆինանսական հաշվետվությունները՝ ներկայացված 9-ից 92 էջերում, ստորագրվել են Ընկերության գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից 2019թ. մարտի 12-ին:

Լուիզա Իգրարյան	Սուսաննա Խաչատրյան
Գործադիր տնօրեն	Գլխավոր հաշվապահ

17-ից 92 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնետիրական կապիտալ	Իրական արժեքի պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2017թ. հունվար 1-ի դրությամբ	1,500,000	8,873	315,815	1,824,688
Տարվա շահույթ	-	-	476,245	476,245
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք				
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	-	23,736	-	23,736
Վաճառքի համար մատչելի արժեթղթերի իրացումից շահույթին կամ վնասին և այլ համապարփակ ֆինանսական արդյունքին փոխանցած զուտ օգուտ	-	(16,415)	-	(16,415)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	(1,463)	-	(1,463)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	5,858	476,245	482,103
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	(310,000)	(310,000)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	-	(310,000)	(310,000)
Հաշվեկշիռը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,500,000	14,731	482,060	1,996,791

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Բաժնետիրական կապիտալ	Իրական արժեքի պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,500,000	14,731	482,060	1,996,791
ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցությունը (ծանոթ. 6)		3,041	(67,180)	(64,139)
Վերահաշվարկված հաշվեկշիռը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	1,500,000	17,772	414,880	1,932,652
Տարվա շահույթ	-	-	504,185	504,185
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք				
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	-	155,256	-	155,256
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումների իրացումից շահույթին կամ վնասին և այլ համապարփակ ֆինանսական արդյունքին փոխանցած զուտ օգուտ	-	(25,593)	-	(25,593)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ	-	4,503	-	4,503
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	(25,933)	-	(25,933)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	108,233	504,185	612,418
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	(403,751)	(403,751)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	-	(403,751)	(403,751)
Հաշվեկշիռը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,500,000	126,005	515,314	2,141,319

17-ից 92 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2018թ.	2017թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված տոկոսներ	4,179,998	2,607,656
Վճարված տոկոսներ	(1,557,341)	(905,742)
Ստացված կոմիսիոն և այլ վճարներ	55,671	34,378
Վճարված կոմիսիոն և այլ վճարներ	(44,152)	(28,342)
Ներդրումային արժեթղթերից զուտ օգուտ	26,933	18,397
Զուտ առևտրային եկամուտ	7,261	8,510
Այլ եկամուտներ	349,772	200,589
Վճարումներ աշխատակիցների և նրանց անունից	(374,165)	(270,934)
Այլ ծախսեր	(379,343)	(254,156)
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	2,264,634	1,410,356
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(6,593,584)	(2,572,443)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	-	101,136
Այլ ակտիվներ	(19,880)	(51,572)
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Այլ պարտավորություններ	10,766	9,650
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեության համար օգտագործված մինչև շահութահարկը	(4,338,064)	(1,102,873)
Վճարված շահութահարկ	(101,187)	(74,440)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(4,439,251)	(1,177,313)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների առք	(5,923)	(78,278)
Վարկեր ֆինանսական կազմակերպություններին	(450,416)	-
Ներդրումային արժեթղթերի իրացում	329,724	165,038
Բռնագանձված գրավների իրացում	89,623	-
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	(6,263,847)	(3,194,725)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր	(6,300,839)	(3,107,965)

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2018թ.	2017թ.
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Պարտքային արժեթղթերի թողարկումից ստացվելիք գումարներ	708,171	783,860
Թողարկված պարտատոմսերի մարում	(710,831)	(486,864)
Վարկերի և փոխառությունների ստացում	11,395,664	5,981,354
Վարկերի և փոխառությունների մարում	(352,110)	(1,962,876)
Վճարված շահաբաժիններ	(403,751)	(310,000)
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական միջոցներ	10,637,143	4,005,474
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում	(102,947)	(279,804)
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(1,447)	3,080
Դրամական միջոցների ակնկալվող պարտքային կորուստների պահուստում փոփոխությունների ազդեցությունը	(85)	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ (ծանոթ. 6)	212,758	490,358
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (ծանոթ. 15)	108,279	213,634

17-ից 92 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» Ունիվերսալ վարկային կազմակերպութուն ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է 2010թ. Հոկտեմբերի 26-ին «Վաշինգթոն Քափիթալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ և «Կրեդիտ Յունիոն» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի միաձուլման արդյունքում և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Ընկերությունը գրանցվել է 2010թ. հոկտեմբերի 26-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N 35 արտոնագրային համարով:

Ընկերության հիմնական գործունեությունը միկրո և միջին չափի վարկերի տրամադրումն է անհատներին և իրավաբանական անձանց Հայաստանի Հանրապետությունում:

Ընկերության գրասենյակը գտնվում է Երևանում: Ընկերությունը մասնաճյուղեր չունի: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Սասնա Ծռեր 2 շենք, թիվ 251 տարածք:

2 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական ու տնտեսական բարեփոխումները, և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս բարփոխումներից, ինչպես նաև Եվրասիական Տնտեսական Միությունում զարգացումներից, որի հետ շարունակվում է ՀՀ տնտեսության ինտեգրումը:

Ընկերության ղեկավարությունը կարծում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Ընկերության տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ընկերությունը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Ընկերության հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար (նախքան 2018թ. հունվարի 1-ը՝ վաճառքի համար մատչելի ակտիվների համար): Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Ընկերության գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Ընկերությունը: Ընկերության գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընթացիկ տարում Ընկերությունն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2018թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որոնք ուժի մեջ են մտել, բայց դեռ կիրառելի չեն:

ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»*

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է *ՀՀՄՍ 39-ին* 2018թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Ընկերությունը 2017թ.-ի համար չի վերաներկայացրել ՖՀՄՍ 9-ի շրջանակում ֆինանսական գործիքների վերաբերյալ համեմատական տեղեկատվությունը: Հետևաբար, 2017թ. համեմատական տեղեկատվությունը ներկայացվում է ՀՀՄՍ 39-ի համաձայն և համադրելի չէ 2018թ. ներկայացված տեղեկատվության հետ: 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ՖՀՄՍ 9-ի ներդրման հետևանքով առաջացած տարբերությունները ճանաչվել են անմիջապես չբաշխված շահույթում և բացահայտվել 6 ծանոթագրությունում:

Դասակարգման և չափման փոփոխություններ

ՖՀՄՍ 9-ի պահանջով դասակարգման և չափման կատեգորիան որոշելու համար բոլոր ֆինանսական ակտիվները, բացառությամբ բաժնային գործիքների և ածանցյալների, պետք է գնահատվեն կազմակերպության ակտիվների կառավարման բիզնես մոդելի և գործիքների պայմանագրային դրամական միջոցների հոսքերի բնութագրերի համադրությամբ:

ՀՀՄՍ 39-ի համաձայն ֆինանսական ակտիվների (իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, վաճառքի համար մատչելի, մինչև մարման ժամկետը պահվող և ամորտիզացված արժեքով) չափման դասակարգումները փոխարինվել են հետևյալով՝

- պարտքային գործիքներ ամորտիզացված արժեքով,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ, որոնց ապաճանաչումից օգուտը կամ վնասը փոխանցվում է շահույթին կամ վնասին,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքներ, որոնց ապաճանաչումից օգուտը կամ վնասը չի փոխանցվում շահույթին կամ վնասին,

- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

Ֆինանսական պարտավորությունների հաշվառումը հիմնականում շարունակում է մնալ այնպիսին, ինչպիսին եղել է ՀՀՄՍ 39-ի համաձայն, բացառությամբ կազմակերպության իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտավորությունների գծով սեփական պարտքային ռիսկի մասով առաջացող օգուտի կամ վնասի հաշվառմանը: Այս փոփոխությունները արտացոլվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և հետագա ապադասակարգման դեպքում չեն տեղափոխվում շահույթի կամ վնասի մասին հաշվետվություն:

Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգումը բացատրվում է 4.4.2 ծանոթագրությունում: 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ՖՀՄՍ 9-ի կիրառման քանակական ազդեցությունը բացահայտվում է ծանոթագրություն 6-ում:

Արժեզրկման հաշվարկի փոփոխություններ

ՖՀՄՍ 9-ի ներդրումը հիմնավոր կերպով փոխել է Ընկերության՝ վարկերի գծով արժեզրկման հաշվառումը փոխարինելով ՀՀՄՍ 39-ի «կրած կորուստների» մոդելը՝ ապագայի վրա հիմնված «ակնկալվող պարտքային կորուստների» մոդելով: ՖՀՄՍ 9-ը պահանջում է Ընկերությունից ճանաչել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չհաշվառվող բոլոր վարկերի և այլ պարտքային ֆինանսական ակտիվների ինչպես նաև վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխիքների պայմանագրերի գծով ակնկալվող պարտքային կորուստները: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ բաժնային գործիքների համար արժեզրկումից կորուստ չի հաշվարկվում:Պահուստը որոշվում է ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա, որը կապված է հաջորդ 12 ամիսների ընթացքում դեֆոլտի հավանականության հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել պարտքային ռիսկի զգալի աճ: Եթե ֆինանսական ակտիվը համապատասխանում է գնված կամ ստեղծված արժեզրկված ֆինանսական ակտիվի սահմանմանը, ապա պահուստը հաշվարկվում է ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների փոփոխության հիման վրա:

Ընկերության արժեզրկման գնահատման մանրամասները բացահայտվում են 32.1.2 ծանոթագրությունում: 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ՖՀՄՍ 9-ի կիրառման քանակական ազդեցությունը բացահայտվում է ծանոթագրության 6-ում:

ՖՀՄՍ 7

ՖՀՄՍ 9-ի և ՀՀՄՍ 39-ի միջև տարբերություններն արտացոլելու համար ՖՀՄՍ 7 *Ֆինանսական գործիքներ. բացահայտումներն* արդիականացվել են, և Ընկերությունն այն ընդունել է ՖՀՄՍ 9-ի հետ միասին՝ 2018թ. հունվարի 1-ից սկսվող տարվա համար: Փոփոխությունները ներառում են անցումային բացահայտումներ, ինչպես նկարագրված է ծանոթագրություն 6-ում, ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների վերաբերյալ որակական և քանակական տեղեկատվություն, ինչպիսիք են օգտագործված ենթադրություններն ու ելակետային տվյալները՝ նշված ծանոթագրություն 32.1.2-ում:

Ներքոհիշյալ այլ ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2018թ-ին, որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» և «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ». պարզաբանումներ (ՖՀՄՍ 15 փոփոխություններ)*
- *«Բաժնետոմսերի վրա հիմնված վճարման» գործարքների դասակարգում և չափում (ՖՀՄՍ 2 փոփոխություններ)*
- *2014-2017թթ. ՖՀՄՍ տարեկան բարեփոխումներ. ՖՀՄՍ 1 և ՀՀՄՍ 28 փոփոխություններ*

- *ՀՀՄՍ 40 (Փոփոխություններ) «Ներդրումային գույք»՝ Ներդրումային գույքի վերադասակարգումներ*
- *ՖՀՄՄԿ 22 «Արտարժույթով գործարքներ և կանխավճարներ»:*

3.5 Ընկերության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

ՖՀՄՍ 16, «Վարձակալություն»

ՖՀՄՍ 16-ը կփոխարինի ՀՀՄՍ 17-ին՝ *«Վարձակալություն»* և նրա 3 մեկնաբանություններին: Այն ամբողջացնում է ՀՀՄՍԽ-ի՝ վարձակալության հաշվառման վերանայման երկարաժամկետ ծրագիրը: Վարձակալությունը կարտացոլվի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ճանաչելով օգտագործման իրավունքը որպես ակտիվ և վարձակալության գծով պարտավորությունը: ՖՀՄՍ 16-ը նախատեսում է 2 կարևոր պարզեցում ցածրարժեք ակտիվների և կարճաժամկետ՝ 12 ամիս կամ պակաս ժամկետով վարձակալությունների համար:

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի վաղաժամկետ կիրառում, այնուամենայնիվ, Ընկերությունը որոշել է այն վաղաժամ չկիրառել:

Ղեկավարությունը ներկայում գնահատում է ստանդարտի լիարժեք ազդեցությունը: Մինչ այժմ Ընկերությունը՝

- որոշել է օգտվել գործնական նպատակահարմարությունից ՝չկատարելու առկա վարձակալությունների ամբողջական վերանայում և կիրառելու ՖՀՄՍ 16-ը միայն նոր կամ փոփոխված պայմանագրերի դեպքում: Քանի որ որոշ վարձակալություններ կփոխվեն կամ կնորացվեն 2019թ., Ընկերությունը վերագնահատել է այդ վարձակալությունները և սահմանել, որ դրանք պետք է հաշվառվեն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ճանաչելով օգտագործման իրավունքը որպես ակտիվ,
- գնահատել է, որ ամենաէական ազդեցությունը կլինի Ընկերության կողմից ակտիվի՝ որպես օգտագործման իրավունքի և գրասենյակային ու արտադրական շենքերի վարձակալության գծով պարտավորությունը ճանաչելու անհրաժեշտությունը, որոնք ներկայում հաշվարկվում են որպես գործառնական վարձակալություն:
- կանխորոշել է, որ ընթացիկ ֆինանսական վարձակալությունը էական ազդեցություն չի ունենա ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա,

Ընկերությունը նախատեսում է ներդնել ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից սկսած՝ կիրառելով ստանդարտի նորացված հետադարձ մոտեցումը: Ըստ այս մոտեցման՝ ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման համապարփակ ազդեցությունը ճանաչվում է որպես սեփական կապիտալի ճշգրտում սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ: Համեմատական տեղեկատվություն չի ներկայացվում:

Այս անցումային մոտեցման ընտրությունը հանգեցնում է քաղաքականության վերաբերյալ Ընկերության կողմից հետագա որոշումների կայացմանը, քանզի կան մի քանի այլ անցումային մեղմացումներ, որոնք կարող են կիրառվել: Դրանք վերաբերում են այն վարձակալություններին, որոնք նախկինում գործել են և կարող են կիրառվել վարձակալություն առ վարձակալություն հիմքով: Ընկերությունը ներկայում գնահատում է անցումային այս մյուս մեղմացումների կիրառման ազդեցությունը:

ՖՀՄՍ 16-ը էական փոփոխություններ չի կատարել վարձատուների հաշվառման գծով, և, հետևաբար, Ընկերությունը չի ակնկալում որևէ փոփոխություն այն վարձակալությունների դեպքում, երբ ինքը հանդես է գալիս որպես վարձատու:

Այլ ստանդարտներ

- ՖՀՄՄԿ 23 «Անորոշություն շահութահարկի մոտեցումների շուրջ» (ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից),
- ՖՀՄՍ 9 (փոփոխություններ) «Ֆինանսական գործիքներ» - Կանխավճարների առանձնահատկությունները՝ բացասական փոխհատուցմամբ (ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից),
- ՀՀՄՍ 28 (փոփոխություններ) «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում» - Երկարաժամկետ ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում (ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից),
- ՀՀՄՍ 19 (փոփոխություններ) «Աշխատակիցների հատուցումներե - Պլանի փոփոխություն, կրճատում կամ մարում (ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից)
- 2015-2017թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ-(ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից):

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Ե՛վ ՖՀՄՍ 9-ի, և՛ ՀՀՄՍ 39-ի համաձայն՝ տոկոսային եկամուտը հաշվառվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ամորտիզացված արժեքով չափվող բոլոր ֆինանսական գործիքների, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, ինչպես նաև ՀՀՄՍ 39-ի համաձայն՝ մինչև մարման ժամկետը պահվող կամ վաճառքի համար մատչելի դասակարկգվող տոկոսակիր ֆինանսական ակտիվների տոկոսային եկամուտը նույնպես հաշվառվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքը ճշտությամբ զեղչում է գնահատված ապագա դրամական մուտքերը ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի կամ անհրաժեշտության դեպքում՝ ավելի կարճ ժամանակահատվածի ընթացքում, մինչև ֆինանսական ակտիվի զուտ հաշվեկշռային արժեք:

Արդյունավետ տոկոսադրույքը (և, հետեւաբար, ակտիվի ամորտիզացված արժեքը) հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ցանկացած զեղչ կամ հավելավճար, գանձումներ և ծախսեր, որոնք արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասն են: Ընկերությունը ճանաչում է տոկոսային եկամուտը՝ կիրառելով հատույցադրույքը, որը ներկայացնում է վարկի ակնկալվող գործողության ժամկետի նկատմամբ կայուն հատույցադրույքի լավագույն գնահատումը: Այսպիսով, այն ճանաչում է տարբեր փուլերում գանձվող պոտենցիալ տարբեր տոկոսադրույքների ազդեցությունը և գործիքի կյանքի ընթացքում այլ ազդեցությունները (ներառյալ կանխավճարները, տուգանքները և գանձումները):

Եթե ֆինանսական ակտիվի գծով դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ակնկալիքները վերանայվում են պարտքային ռիսկից չբխող պատճառներով, ապա հաշվեկշռում ճշգրտումը հաշվառվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի դրական կամ բացասական ճշգրտում տոկոսային եկամտի ավելացմամբ կամ նվազմամբ: Ճշգրտումը հետագայում ամորտիզացվում է տոկոսային և նմանատիպ եկամտի միջոցով շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս ծանոթագրություն 4.4.6-ում:

Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարչական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան: Ակտիվների կառավարման գծով վճարները ճանաչվում են ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում: Նույն սկզբունքն է կիրառվում կարողությունների կառավարման, ֆինանսական պլանավորման և ակտիվների պահպանման ծառայությունների դեպքում, որոնք ենթադրում են ծառայությունների մատուցման երկար ժամկետ:

Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ Ընկերության վճարը ստանալու իրավունքը հաստատված է:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժութային

տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

4.2 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված վաճառքի համար մատչելի դրամային արժեթղթերի իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերություններ միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են սեփական կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսերը, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնետոմսերը, ընդգրկվում են կապիտալի վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	483.75	484.10
ՀՀ դրամ/1 Եվրո	553.65	580.10

4.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում ընկերություններն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.4 Ֆինանսական գործիքներ

4.4.1 Ճանաչում և սկզբնական չափում

Ընկերությունն սկզբնապես ճանաչում է վարկերը և փոխատվությունները, ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և պարտավորությունները դրանց ստեղծման օրվա դրությամբ: Բոլոր այլ ֆինանսական գործիքները (ներառյալ ֆինանսական ակտիվների կանոնավոր գնումները և վաճառքները) ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, որը Ընկերության՝ գործիքի պայմանագրային կողմ դառնալու ամսաթիվն է:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են դրանց ձեռքբերմանը կամ թողարկմանը:

4.4.2 Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ- 2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնող քաղաքականություն

Սկզբնական ճանաչման դեպքում ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող (FVTPL):

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթները որոշակի ժամկետներում հանգեցնում են դրամական միջոցների հոսքերի, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթները որոշակի ժամկետներում հանգեցնում են դրամական միջոցների հոսքերի, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսագումարների վճարումներն են:

Առևտրային նպատակներով չպահվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր այլ ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը պորտֆելի մակարդակում գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանզի այս գնահատումը լավագույնս արտացոլում է բիզնեսի կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտ ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն

պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,

- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Ընկերության ղեկավարությանը.
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Ընկերությունը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)

Այս գնահատման նպատակով «մայր գումար» է սահմանվում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» կազմված է փողի ժամանակային արժեքի և պարտքային ռիսկի փոխհատուցումից, այլ ռիսկերի և ֆինանսական ակտիվի պահպանման հետ կապված ծախսերի փոխհատուցումից (օրինակ՝ իրացվելիության ռիսկ և վարչական ծախսեր), ինչպես նաև շահույթի մարժայից: Գնահատելու համար՝ արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ են, Ընկերությունը հաշվի է առնում գործիքի պայմանագրային պայմանները: Սա ներառում է նաև այն գնահատումը՝ արդյոք ֆինանսական ակտիվը ներառում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետն այնպես, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը: Գնահատման ժամանակ Ընկերությունը դիտարկում է.

- պայմանական դեպքեր, որոնք կարող են փոխել դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետը,
- լծակավորման առանձնահատկությունները,
- վաղաժամկետ մարման և երկարաձգման հնարավորությունը,
- պայմանները, որոնք սահմանափակում են որոշակի ակտիվների նկատմամբ Ընկերության պահանջը (օրինակ՝ առանց ռեգրեսի պահանջի իրավունքի ակտիվների պայմանավորվածություններ) և
- առանձնահատկությունները, որոնք փոխում են դրամի ժամանակային արժեքը, օրինակ, տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Ընկերությունն ունի երկարաժամկետ ֆիքսված տոկոսադրույքով վարկերի պորտֆել, որի համար Ընկերությունը հնարավորություն ունի վերանայել տոկոսադրույքը պարբերական թարմացման ժամկետներում: Այս թարմացումների իրավունքը սահմանափակվում է վերանայման պահին շուկայական դրույքով: Փոխառուները հնարավորություն ունեն կամ ընդունելու վերանայված դրույքը կամ մարել վարկը առանց տույժի: Ընկերությունը որոշել է, որ այդ վարկերի պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ են, քանի որ վերը նշված հնարավորությունը փոփոխում է տոկոսադրույքը այնպես, որ այդ փոփոխությունը իրենից

ներկայացնում է փողի ժամանակային արժեքի, պարտքային ռիսկի, այլ հիմնական պարտքային ռիսկերի և չմարված մայր գումարի հետ կապված ծախսերի փոխհատուցում:

Վերադասակարգումներ

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ Ընկերություն փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ֆինանսական ակտիվներ- մինչև 2018թ. հունվարի 1-ը գործող քաղաքականություն

Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական ակտիվները հետևյալ դասերից մեկում.

- վարկեր և դեբիտորական պարտքեր,
- վաճառքի համար մատչելի և
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և այս դասի շրջանակում՝ որպես
  - առևտրային նպատակներով պահվող կամ
  - նախորոշված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

4.4.3 Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (տես նաև ծանոթագրություն 4.4.4) կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված ակտիվի մասի վրա տարածվող հաշվեկշռային արժեքի) և (i)ստացված փոխհատուցման գումարի տարբերությունը (ներառյալ ցանկացած նոր ակտիվ հանած ցանկացած նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված ցանկացած կուտակված օգուտը կամ վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

2018 թվականի հունվարի 1-ից իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային բաժնային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված ցանկացած կուտակային օգուտ/վնաս չի ճանաչվում շահույթում կամ վնասում այդ արժեթղթերի ապաճանաչման դեպքում: Մասնակցությունն ապաճանաչման պայմաններին բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում, որն առաջանում է կամ պահպանվում է Ընկերության կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Ընկերությունը գործարքներ է կնքում, որոնց համաձայն՝ փոխանցում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահում է փոխանցված ակտիվների կա՛մ բոլոր, կա՛մ գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, կա՛մ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի՝ որպես փոխառության տրամադրման և վաճառքի ու հետգնման գործարքները:

Եթե ակտիվները վաճառվում են երրորդ կողմին համանման գնով հետգնման սվոպով, գործարքը հաշվառվում է որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարք, որը նման է վաճառքի և հետգնման գործարքներին, քանի որ Ընկերությունը պահպանում է նմանատիպ ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները:

Գործարքներում, որոնցում Ընկերությունը չի պահպանում և չի փոխանցում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները և պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով այն ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Որոշ գործարքներում Ընկերությունը պահպանում է փոխանցված ֆինանսական ակտիվը վճարի դիմաց սպասարկելու պարտավորությունը: Փոխանցված ակտիվը ապաճանաչվում է, եթե բավարարում է ապաճանաչման չափանիշներին: Ակտիվը կամ պարտավորությունը ճանաչվում են սպասարկման պայմանագրով, եթե սպասարկման վճարը ավելին է (ակտիվ) կամ պակաս (պարտավորություն), քան պասարկման դիմաց բավարար չափով հատուցումը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը երբ, նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

4.4.4 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխություն

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Ընկերությունը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են առոչինչ: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է (տես 4.4.3 ծանոթագրություն), իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով:

2018թ. հունվարի 1-ից կիրառվող քաղաքականություն

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը էականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում Ընկերությունը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում: Եթե նմանատիպ փոփոխությունը կատարվում է վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով (տես 4.4.6 ծանոթագրություն), ապա օգուտը կամ վնասը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Այլ դեպքերում՝ այն ներկայացվում է որպես տոկոսային եկամուտ:

Մինչև 2018թ. հունվարի 1-ը գործող քաղաքականություն

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվել են փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով և ակտիվը չի ապաճանաչվել, ապա ակտիվի արժեզրկումը չափվում է՝ օգտագործելով մինչև փոփոխությունը կիրառվող տոկոսադրույքը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը, ըստ էության, տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմաններով հիմնավորված նոր ֆինանսական պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

4.4.5 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն զտման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում, օրինակ՝ Ընկերության առևտրային գործունեության ընթացքում:

4.4.6 Արժեզրկում

2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնող քաղաքականություն

Ընկերությունը կանխատեսումների հիման վրա գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները («ECL») հետևյալ ֆինանսական գործիքների նկատմամբ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- ֆինանսական ակտիվներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ
- վարձակալության գծով դեբիտորական պարտքեր
- վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

Ընկերությունը չափում է կորուստների գծով պահուստները ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով, բացառությամբ ստորև նշված գործիքների, որոնց համար Ընկերությունը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին.

- հաշվետու ամսաթվի դրությամբ դեֆոլտի ցածր ռիսկով պարտքային ներդրումային արժեթղթեր,
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի աճել:

Ընկերությունը համարում է, որ պարտքային արժեթղթերը ունեն ցածր պարտքային ռիսկ այն դեպքում, երբ վեջինիս պարտքային ռիսկի վարկանիշը համապատասխանում է համընդհանուր ընդունված «ներդրումային» վարկանիշի սահմանմանը:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք պայմանավորված են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում տեղի ունեցող դեֆոլտ առաջացնող իրադարձություններով:

Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում դեֆոլտի բոլոր հնարավոր դեպքերի հետևանքով:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ե՛վ գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները, և՛ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են կա՛մ անհատական, կա՛մ խմբային հիմունքներով՝ կախված ֆինանսական գործիքների հիմքում ընկած պորտֆելի բնույթից:

Ընկերությունը մշակել է քաղաքականություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացած գործողության ժամկետի ընթացքում առաջացած դեֆոլտի ռիսկի փոփոխությունը: Ավելի մանրամասն բացատրվում է 32.1.2 ծանոթագրությունում:

Վերոնշյալի հիման վրա՝ Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2, փուլ 3 և ձեռքբերված կամ ստեղծման պահին արժեզրկված խմբերում, ինչպես նկարագրված է ստորև՝

- Փուլ 1 - երբ վարկերը ճանաչվում են առաջին անգամ, Բանկը ճանաչում է պահուստը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: Փուլ 1-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 2-ից:
- Փուլ 2 - երբ վարկը ստեղծման պահից ունեցել է պարտքային ռիսկի էական աճ, Բանկը ձևավորում է գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Փուլ 2-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 3-ից:
- Փուլ 3 – արժեզրկված վարկեր: Բանկը ձևավորում է գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ:
- Ձեռքբերված կամ ստեղծման պահին արժեզրկված խումբ - ձեռքբերված կամ ստեղծման պահին արժեզրկված ակտիվները սկզբնական ճանաչման պահին արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Ձեռքբերված կամ ստեղծված արժեզրկված ակտիվները հաշվարկվում են իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, իսկ տոկոսային եկամուտը, ըստ էության, ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են այն չափով, որքանով առկա է ակնկալվող պարտքային կորուստների հետագա փոփոխություն:

Ակնկալվող պարտքային կորուստները դեֆոլտի հավանականության, դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարի, դեֆոլտի ժամանակ վնասի զեղչված արդյունք են, որոնք սահմանվում են հետևյալ կերպ.

- **Դեֆոլտի հավանականություն (PD):** Այն տվյալ ժամանակահավածում դեֆոլտի հավանականության գնահատումն է: Դեֆոլտ կարող է տեղի ունենալ գնահատված

ժամանակաշրջանի միայն որոշակի ժամանակահատվածում, եթե պարտականությունը նախկինում չի ապաճանաչվել և շարունակում է մնալ պորտֆելում:

- **Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD):** Այն ներկայացնում է դեֆոլտի ապագա ամսաթվի դրությամբ ռիսկի ենթարկված գումարի չափի գնահատումը՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ռիսկի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսագումարների մարումը՝ անկախ նրանից պայմանագրով նախատեսված է, թե ոչ, պարտավորության սպասվող օգտագործումը և չկատարված վճարումների հաշվեգրված տոկոսները:
- **Վնասը դիֆոլտի ժամանակ (LGD):** Այն արտահայտում է վնասի չափը, որը առաջանում է տվյալ ժամանակահատվածում վարկի դիֆոլտային կարգավիճակում: Այն հիմնված է պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն հույս ունի ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից առաջացած դրամական հոսքերը: Որպես կանոն, այն արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարի (EAD) նկատմամբ տոկոսով:

Դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարը և դեֆոլտի ժամանակ վնասը ավելի մանրամասն բացահայտվում են 32.1.2 ծանոթագրությունում:

Վերանայված ֆինանսական ակտիվներ

Եթե փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով ֆինանասական ակտիվի պայմանագրային պայմանները վերանայվում կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով, ապա գնահատվում է ֆինանսական ակտիվի ապաճանաչման անհրաժեշտությունը (տես՝ ծանոթ. 4.4.4), և ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են հետևյալ կերպ.

- եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի պակասորդի հաշվարկում,
- եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես ապաճանաչման պահին գոյություն ունեցող ակտիվի վերջնական դրամական հոսք: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ֆինանասական ակտիվից ակնկալվող դրամական միջոցների պակասորդի հաշվարկում, որոնք ակնկալվող ապաճանաչման ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվ զեղչվում են գոյություն ունեցող ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները արժեզրկված են: Ֆինանսական ակտիվները համարվում են արժեզրկված, եթե տեղի են ունենում մեկ կամ ավելի իրադարձություններ, որոնք բացասաբար են անդրադառնում ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվի արժեզրկման վկայություններ են հանդիսանում ստորև նշված իրադարձությունների վերաբերյալ տվյալների առկայությունը.

- էմիտենտի կամ փոխառուի էական ֆինանսական դժվարություններ,
- պայմանագրային պայմանների խախտում, օրինակ՝ դեֆոլտ կամ վճարման ուշացում,
- վարկերի կամ փոխատվությունների պայմանների այնպիսի վերանայում, որը Ընկերությունն այլ պայմաններում չէր դիտարկի,

- փոխառուի հավանական սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմավորման հավանականություն,
- ֆինանսական դժվարությունների հետևանքով արժեթղթերի ակտիվ ֆինանսական շուկայի վերացում,

Փոխառուի ֆինանսական դժվարությունների հետևանքով վերանայված վարկը սովորաբար դիտարկվում է որպես արժեզրկված, միայն եթե առկա չէ վկայություն, որ պայմանագրային դրամական միջոցների հոսքեր չստանալու ռիսկը էականորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ:

Պետական պարտատոմսերում ներդրման արժեզրկված լինելը գնահատելիս՝ Ընկերությունը հաշվի է առնում հետևյալ գործոնները.

- վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությամբ,
- եկամտաբերության գնահատումը վարկանիշային գործակալությունների կողմից,
- երկրի կարողությունը մուտք գործել կապիտալ շուկաներ նոր պարտքի թողարկման համար:

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես ակտիվների ընդհանուր հաշվեկշռային արժեքից նվազում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների (FVOCI) արժեզրկումից կորուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ այդ ակտիվների հաարժեքը հավասար է իրենց իրական արժեքին: Այնուամենայնիվ, արժեզրկումից կորուստները բացահայտվում և ճանաչվում են իրական արժեքի ճշգրտման պահուստում,
- վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար, որպես կանոն, պահուստի տեսքով,
  - վարկային պարտավորվածության չօգտագործված մասի գծով գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների գնահատման ժամանակ, Ընկերությունը գնահատում է վարկային պարտավորվածությունների ամբողջ ժամանակահատվածի ընթացքում պորտֆելի այն մասը, որը ակտնկալվում է օգտագործել: Ակնկալվող պարտքային կորուստները հետագայում հիմնվում են դրամական հոսքերի ակնկալվող պակասորդի ներկա արժեքի վրա, եթե վարկը օգտագործվել է: Ակնկալվող դրամական պակասորդները զեղչվում են վարկի ակնկալվող պարտքային կորուստների մոտավոր հաշվարկով:
  - եթե ֆինանսական գործիքը ունի ինչպես օգտագործված, այնպես էլ չօգտագործված բաղադրիչ և Բանկը հնարավորություն չունի վարկերի տրամադրման պարտավորվածության ակնկալվող պարտքային կորուստները առանձնացնել օգտագործված բաղադրիչի ակնկալվող պարտքային կորուստներից, ապա Ընկերությունը ներկայացնում է ակնկալվող պարտքային կորուստների համախմբված պահուստ երկու բաղադրիչների համար: Համախմբված գումարը ներկայացվում է որպես օգտագործված բաղադրիչի ընդհանուր հաշվեկշռային արժեքից նվազում: Օգտագործված բաղադրիչի համախառն գումարի նկատմամբ արժեզրկումից կորուստների ցանկացած գերազանցում ներկայացվում է պահուստի տեսքով:

– Յուրաքանչյուր երաշխավորության վերաբերյալ Ընկերության պարտավորությունը չափվում է սկզբնապես ճանաչված գումարի առավելագույնով՝ հանած շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիան և ակնկալվող պարտքային կորուստների պահուստը: Այս նպատակով Ընկերությունը գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող վճարումների ներկա արժեքի հիման վրա՝ փոխառուի կրած կորուստները փոխհատուցելու նպատակով: Կրճատումները զեղչվում են ռիսկով ճշգրտված տոկոսադրույքով, որը ենթակա է բացահայտման: Ֆինանսական երաշխիքային պայմանագրերի հետ կապված ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են պահուստների շրջանակում:

Դուրսգրում

Վարկերը և պարտքային գործիքները դուրս են գրվում (մասնակի կամ ամբողջական), եթե չկան դրանց վերադարձման իրական հեռանկարներ: Դա, որպես կանոն, այն դեպքն է, երբ Ընկերությունը որոշում է, որ փոխառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնք կարող են առաջացնել բավարար դրամական հոսքեր՝ դուրսգրման ենթակա գումարը մարելու համար: Այդ ակտիվի ինչպես ընդհանուր հաշվեկշռային արժեքը, այնպես էլ արժեզրկման պահուստը (եթե առկա են) ուղղակիորեն դուրս են գրվում: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ճանաչման մասնակի կամ ամբողջական դադարեցում: Սակայն դուրսգրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթարկվել պահանջների կատարման՝ Ընկերության պարտքերի հավաքագրման ընթացակարգերի համապատասխան:

Մինչև 2018թ. հունվարի 1-ը գործող քաղաքականություն

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին՝ որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Արժեզրկումից կորստի օբյեկտիվ վկայության գոյությունը որոշվում է որոշ չափանիշներով, որոնք վկայում են, որ վարկառուն կամ վարկառուների խումբն ունեն զգալի ֆինանսական դժվարություններ (օրինակ՝ կապիտալի նորմատիվ, զուտ եկամտի և վաճառքների հարաբերակցություն), առկա են տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների, վարկային համաձայնության կամ պայմանների խախտումներ, գրավի արժեքի նվազում, հավանականություն, որ կլինի սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում և կա տեղեկատվություն ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի չափելի նվազման վերաբերյալ՝ կապված տնտեսական պայմանների փոփոխություններով, որոնք ազդում են վարկառուի և չվճարումների վրա:

Ընկերությունը սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են պարտքային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում:

Երբ առկա է վկայություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վերաբերյալ, արժեզրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, արժեզրկումից ծախսը արտացոլվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեզրկումից ծախս չափելու համար զեղչման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Բանկը կարող է արժեզրկումը չափել գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Ապահովված ֆինանսական ակտիվների դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքը ներառում է գրավների իրացումից փոխհատուցվող գումարները, հանած գրավի ձեռքբերման և իրացման ծախսերը, անկախ նրանից, թե գրավը կփոխանցվի Բանկին, թե ոչ:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով, ֆինանսական ակտիվները խմբավորվում են Բանկի ներքին վարկային դասակարգման հիման վրա, որը հաշվի է առնում պարտքային ռիսկի բնութագրիչները, ինչպես՝ ակտիվի տեսակը, արդյունաբերական ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետանց կարգավիճակը և այլ կապակցված գործոններ:

Ֆինանսական ակտիվների ապագա դրամական միջոցների հոսքերը, որոնց արժեզրկումը խմբային է գնահատված, որոշվում են խմբում գտնվող ակտիվների պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և նմանատիպ ակտիվների պատմական ծախսերի պրակտիկայի հիման վրա: Վերջինս ճշգրտվում է ընթացիկ տեսանելի տեղեկատվությամբ, որպեսզի արտացոլվեն ներկա պայմանները, որոնք չեն ազդել այն ժամանակահատվածում, որի վրա հիմնված է պատմական ծախսերի պրակտիկան, և պատմական ժամանակաշրջանում ներկայում գոյություն չունեցող պայմանների հետևանքները չեզոքացնելու նպատակով:

Ակտիվների խմբերի ապագա դրամական միջոցների հոսքերում փոփոխությունների գնահատականը պետք է արտացոլի և համապատասխան լինի դրանց հետ կապված տեսանելի տվյալների ժամանակաշրջանից ժամանակաշրջան փոփոխությունների հետ (օրինակ՝ փոփոխություններ գործազրկության դրույքներում, գույքի գնի, վճարումների կարգավիճակի կամ խմբում կորուստների հավանականությունը մատնանշող այլ գործոնների և կորուստների ծավալների մեջ): Ապագա դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդոլոգիան և վարկածները պարբերաբար վերանայվում են Բանկի կողմից՝ կորուստների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու համար:

Վարկերը համապատասխան պահուստների հետ միասին դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել Ընկերությանը: Եթե հաջորդող տարում, գնահատված արժեզրկման ծախսը ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ծախսը ավելացվում կամ նվազեցվում է պահուստի գումարը ճշտելով: Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստները ֆինանսական հաշվետվություններում ձևավորվել են գոյություն ունեցող տնտեսական պայմանների հիման վրա: Ընկերությունը չի կարող կանխատեսել՝ ինչպես Հայաստանում կարող են փոխվել տնտեսական պայմանները, և ինչ ազդեցություն կարող են ունենալ այդ փոփոխությունները ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստների ճշտության վրա հետագա ժամանակաշրջաններում:

Վերանայված վարկեր

Որտեղ հնարավոր է, Ընկերությունը փորձում է վերանայել վարկերը, քան բռնագանձել գրավը: Սա կարող է հանգեցնել վճարումների երկարաձգումների և վարկի մարման նոր պայմանների մասին համաձայնության: Երբ վարկի պայմանները վերանայված են, վարկն այլևս չի համարվում ժամկետանց: Ղեկավարությունը շարունակաբար վերանայում է վերանայված պայմաններով վարկերը, համոզվելու համար, որ բոլոր համաձայնությունները պահպանված են և որ ապագա վճարումները կկատարվեն: Վարկերը շարունակում են մնալ արժեզրկման անհատական կամ խմբային գնահատման առարկա՝ օգտագործելով վարկի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Երբ վաճառքի համար մատչելի ակտիվն արժեզրկվում է, ապա նրա արժեքի (նվազեցված մարումների և ամորտիզացիայի գումարներով) և ընթացիկ իրական արժեքի տարբերությունը, բացառությամբ նախկինում շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչված արժեզրկումից գումարների, սեփական կապիտալից վերաձևակերպվում է շահույթի կամ վնասի մասին մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի դասակարգված կապիտալ գործիքների արժեզրկումից կորուստների հակադարձումը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չի ճանաչվում, այլ հաշվառվում է կապիտալի առանձին բաժնում, որպես՝ այլ համապարփակ եկամուտ: Վաճառքի համար մատչելի պարտքային գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձումը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե ակտիվի իրական արժեքի բարձրացումը օբյեկտիվորեն կարելի է համարել հետագա իրադարձությունների արդյունք, որոնք կատարվել են կորուստը ֆինանսական արդյունքներով ճանաչելուց հետո:

4.5 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից և այլ բանկերում հաշիվներից:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.6 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Ֆինանսական կազմակերպություններին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Ընկերության ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7 Վարկեր և փոխատվություններ

Վարկերը և փոխատվությունները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Ընկերության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների

տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.8 Ներդրումային արժեթղթեր

2018թ. հունվարի 1-ից կիրառվող քաղաքականություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներդրումային արժեթղթերը ներառում են,

- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր և
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային ներդրումային արժեթղթեր:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով օգուտը և վնասը ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի, երբ ճանաչվում են շահույթում կամ վնասում, նույն ձևով, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում.

- տոկոսային եկամուտ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ,
- ակնկալվող պարտքային կորուստներ և վերադարձ
- արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս

Երբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթուղթը ապաճանաչվում է, նախկինում ակնկալվող պարտքային կորուստներում ճանաչված կուտակային օգուտը կամ վնասը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

Ընկերությունը կարող է ոչ առևտրային նպատակներով պահվող բաժնային գործիքներում որոշ ներդրումների իրական արժեքի փոփոխությունները ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Այսպիսի ընտրություն կայացվում է սկզբնական ճանաչման ժամանակ անհատական սկզբունքով և անշրջելի է:

Այսպիսի բաժնային գործիքների գծով օգուտ և վնասը երբեք չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում, իսկ արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե դրանք հստակ չեն հանդիսանում ներդրումների մի մասի վերադարձ, որի դեպքում նրանք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտը և վնասը ներդրումների օտարման դեպքում փոխանցվում են չբաշխված շահույթ:

Մինչև 2018թ. հունվարի 1-ը գործող քաղաքականություն

Ներդրումային արժեթղթերը սկզբնապես չափվել են իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով ուղղակի ծախսերը՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չչափվող ներդրումային արժեթղթերի դեպքում և հետագայում, հաշվարկվել են որպես վաճառքի համար մատչելի:

Վաճառքի համար մատչելի ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ակտիվները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Ընկերությունը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և որոնք կարող են վաճառվել իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույքների, փոխարժեքների կամ բաժնետոմսերի գների փոփոխությունների դեպքում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով, ընդ որում օգուտներն ու վնասները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներառված կուտակված շահույթը կամ վնասը վերադասակարգվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ամեն դեպքում, արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսները ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահաբաժինները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են այն ժամանակ, երբ Ընկերությունը իրավունք է ձեռքբերում ստանալու այդ շահաբաժինները:

Կարգավորվող ֆինանսական շուկաներում ակտիվորեն վաճառվող ֆինանսական ակտիվի իրական արժեքը որոշվում է հաշվետու ամսաթվին բորսայի փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գների միջոցով: Ակտիվ շուկա չունեցող գործիքների իրական արժեքը որոշվում է գնահատման մոդելների միջոցով: Նման մոդելները ներառում են վերջին շուկայական անկախ գործառնությունները, էականորեն չտարբերվող ակտիվների շուկայական գներին հղում կատարելը, զեղչված դրամական հոսքերի վերլուծությունը: Հակառակ դեպքում՝ ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կորուստները:

4.9 Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը գրանցվում է որպես առևտրային պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

4.10 Վարձակալություն

Գործառնական վարձակալություն – Ընկերությունը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես

գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

4.11 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Համակարգիչներ	3	33.33
Տրանսպորտային միջոցներ	8	20
Այլ հիմնական միջոցներ	1-8	20-100

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ այդ ծախսումները բավարարում են ակտիվի չանաչման չափանիշներին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

4.12 Գուդվիլ

Ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը սկզբնապես ճանաչվում է որպես փոխանցված հատուցման և ձեռքբերված որոշելի զուտ ակտիվների և ստանձնած պարտավորությունների տարբերություն:

Սկզբնական ճանաչումից հետո գուդվիլը հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները:

Գուդվիլը գնահատվում է արժեզրկման տեսանկյունից յուրաքանչյուր տարի կամ ավելի հաճախ, եթե ինչ-որ իրադարձություններ կամ հանգամանքների փոփոխություններ վկայում են հաշվեկշռային արժեքի արժեզրկման մասին:

Ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը« արժեզրկման տեսանկյունից գնահատելու նպատակով «ձեռքբերման ամսաթվից սկսած բաշխվում է Ընկերության դրամաստեղծ միավորների կամ դրամաստեղծ միավորների խմբերի միջև ,որոնք ակնկալվում է որ ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում

կստանան օգուտներ: Յուրաքանչյուր դրամաստեղծ միավոր կամ դրամաստեղծ միավորների խումբ, որին վերաբերում է գուդվիլը պետք է

- իրենից ներկայացնի ներքին կառավարման նպատակով գուդվիլի վերլուծության տեսանկյունից Խմբի կազմում առավել ցածր մակարդակի վարչական միավոր
- մինչ միավորումը չգերազանցի գործառնական սեգմենտի սահմանումը համաձայն ՖՀՄՍ 8 «Գործառնական սեգմենտներ» ստանդարտի:

Գուդվիլի արժեզրկումը գնահատվում է դրամաստեղծ միավորների (կամ դրամաստեղծ միավորների խմբի) փոխհատուցվող արժեքի հիման վրա: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են, եթե դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող արժեքը: Գուդվիլի արժեզրկումից կորուստները հետագայում չեն հակադարձվում:

4.13 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն: Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 13-ից 15 տարվա ընթացում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.14 Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.15 Ներգրաված միջոցներ

Ներգրաված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների հաշիվները, թողարկված արժեթղթերը սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրաված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.16 Ֆինանսական երաշխիքներ և վարկային պարտավորվածություններ

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիքը տրամադրողը փոխհատուցի երաշխիքը ստացողին կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Վարկային պարտավորվածությունները

նախապես որոշված պայմաններով և ժամկետներով վարկեր տրամադրելու պարտավորվածություններն են:

Ֆինանսական երաշխիքները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկեր տրամադրելու պարտավորվածությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, իսկ սկզբնական իրական արժեքը ամորտիզացվում է երաշխիքի կամ պարտավորվածության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Հետագայում նրանք չափվում են հետևյալ կերպ.

- 2018թ. հունվարի 1-ից՝ ամորտիզացված գումարից և կորուստների գծով պահուստների գումարից առավելագույնով,
- մինչև 2018թ. հունվարի 1-ը՝ ամորտիզացված գումարի և պայմանագրերից բխող հնարավոր վճարների ներկա արժեքի առավելագույնով,

Ֆինանսական երաշխիքների և վարկային պարտավորվածությունների գծով առաջացած պարտավորությունները ներառվում են պահուստներում:

4.17 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

4.18 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Պարտքային ներդրումների իրական արժեքի պահուստ (2017թ.՝ վաճառքի համար մատչելի)

Այս պահուստը արտացոլում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունները:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Բիզնես մոդել և մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներ

Բանկը գնահատում է այն բիզնես մոդելը, որի ընթացքում ակտիվները պահվում են և գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են (տես 4.4.2 ծանոթագրությունը):

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 29):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Ընկերությունը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա (տես՝ 28 ծանոթագրությունը):

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Բանկը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում կանխատեսվող տեղեկատվության ներառումը (տես 32.1.2 ծանոթագրություն), ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տես 4.4.6 ծանոթագրությունը):

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես՝ 27 ծանոթագրությունը:

Գուդվիլի արժեզրկում

Ընկերությունը գնահատում է գուդվիլը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք առկա են արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ: Գուդվիլի արժեզրկումը գնահատվում է դրամաստեղծ միավորների փոխհատուցվող արժեքի հիման վրա:

6 Անցման բացահայտում

Ստորև նկարագրվում է ՖՀՄՄ 9-ի ներդրման ազդեցությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվության և չբաշխված շահույթի վրա՝ ներառյալ ՀՀՄՄ 39-ի կրած պարտքային կորուստների հաշվարկների՝ ՖՀՄՄ 9-ի ակնկալվող պարտքային կորուստներով փոխարինման ազդեցությունը:

Հետևյալ աղյուսակում ներկայացվում են Բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար ՀՀՄՍ 39-ի համաձայն չափման դասերը և ՖՀՄՍ 9-ի ներքո նոր չափման դասերը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ	Սկզբնական դասակարգում ՀՀՄՍ 39-ի համաձայն	Նոր դասակարգում ՖՀՄ 9-ի համաձայն	Սկզբնական հաշվեկշռային արժեք ՀՀՄՍ 39-ի համաձայն	Նոր հաշվեկշռային արժեք ՖՀՄՍ 9-ի համաձայն
Ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեք	213,634	212,758
Ներդրումային արժեթղթեր	Վաճառքի համար մատչելի	Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող	370,317	370,317
Հետգնման պայմանագրերով գրավադրված պարտքային ներդրումային արժեթղթեր	Վաճառքի համար մատչելի	Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող	3,018,562	3,018,562
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեք	12,578,237	12,513,726
Այլ ակտիվներ-այլ ֆինանսական ակտիվներ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեք	29,209	23,612
Ընդամենը ֆինանսական ակտիվներ			16,209,959	16,138,975
Ֆինանսական պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	Ամորտիզացված արժեք	Ամորտիզացված արժեք	12,938,601	12,938,601
Թողարկված պարտքային արժեթղթեր	Ամորտիզացված արժեք	Ամորտիզացված արժեք	1,482,211	1,482,211
Այլ պարտավորություններ	Ամորտիզացված արժեք	Ամորտիզացված արժեք	105,966	105,966
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ			14,526,778	14,526,778

ՀՀՄՍ 39-ի համաձայն հաշվեկշռային արժեքների համադրումը ՖՀՄՍ 9-ի համաձայն 2018թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված մնացորդների միջև ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք ՀՀՄՍ 39-ի համաձայն 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Վերադասակարգում	Վերաչափում (ակնկալվող պարտքային կորուստներ)	Վերաչափում (այլ)	Հաշվեկշռային արժեք ՖՀՄՍ 9-ի համաձայն 2018թ. հունվարի 1-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ					
Ամորտիզացված արժեք					
Դրանմական միջոցներ և դրանց համարժեքներ					
Տարեսկզբի մնացորդ	213,634				
Վերաչափում		-	(876)	-	
Տարեվերջի մնացորդ					212,758

Հազար ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք ՀՀՄՍ 39-ի համաձայն 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Վերադասակարգում	Վերաչափում (ակնկալվող պարտքային կորուստներ)	Վերաչափում (այլ)	Հաշվեկշռային արժեք ՖՀՄՍ 9-ի համաձայն 2018թ. հունվարի 1-ի դրությամբ
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին					
Տարեսկզբի մնացորդ	12,578,237				
Վերաչափում		-	(64,511)	-	
Տարեվերջի մնացորդ					12,513,726
Այլ ակտիվներ-այլ ֆինանսական ակտիվներ	29,209				
Տարեսկզբի մնացորդ		-	(5,597)	-	
Վերաչափում					23,612
Տարեվերջի մնացորդ	12,821,080	-	(70,984)	-	12,750,096
Ընդամենը ամորտիզացված արժեք					
Վաճառքի համար մատչելի					
Ներդրումային արժեթղթեր	370,317				
Տարեսկզբի մնացորդ			-		
Վերաչափում					370,317
Տարեվերջի մնացորդ					
Ներդրումային արժեթղթեր-հետգնման պայմանագրերով գրավադրված պարտքային արժեթղթեր	3,018,562				
Տարեսկզբի մնացորդ			-		
Վերաչափում					3,018,562
Տարեվերջի մնացորդ	3,388,879	-	-	-	3,388,879
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափող պարտքային արժեթղթեր					
Ֆինանսական պարտավորություններ					
Ամորտիզացված արժեք					
Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	12,938,601	-	-	-	12,938,601
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,482,211	-	-	-	1,482,211
Այլ պարտավորություններ	105,966	-	-	-	105,966
Ընդամենը ամորտիզացված արժեք	14,526,778	-	-	-	14,526,778

ՖՀՄՄ 9-ի անցման ազդեցությունը պահուստների և չբաշխված շահույթի վրա ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Պահուստներ և չբաշխված շահույթ
Իրական արժեքի պահուստ	
Տարեվերջի մնացորդ ՀՀՄՍ 39-ի համաձայն (2017թ. դեկտեմբերի 31)	14,731
Իրական արժեքով՝այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում ՖՀՄՄ 9-ի համաձայն	3,041
Տարեսկզբի մնացորդ ՖՀՄՄ 9-ի համաձայն (2018թ. հունվարի 1)	17,772
Չբաշխված շահույթ	
Տարեվերջի մնացորդ ՀՀՄՍ 39-ի համաձայն (2017թ. դեկտեմբերի 31)	482,060
ՖՀՄՄ 9-ի համաձայն ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում՝ ներառյալ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվողները (տես՝ ստորև)	(83,215)
Հետաձգված հարկ	16,035
Տարեսկզբի մնացորդ ՖՀՄՄ 9-ի համաձայն (2018թ. հունվարի 1)	414,880
Ընդամենը սեփական կապիտալի փոփոխություններ ՖՀՄՄ 9-ի ներդրման հետևանքով	(64,139)

Հետևյալ աղյուսակը համադրում է.

- ՀՀՄՍ 39-ի համաձայն ֆինանսական ակտիվների արժեզրկումից և ֆինանսական երաշխիքների պայմանագրերի գծով վերջնական պահուստը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:
- ՖՀՄՄ 9-ի համաձայն ակնկալվող պարտքային կորուստների սկզբնական պահուստը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ	ՀՀՄՍ 39-ի համաձայն վարկերի գծով կորուստների պահուստ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Վերաչափում	ՖՀՄՍ 9-ի համաձայն ակնկալվող պարտքային կորուստներ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ
Արժեզրկումից պահուստ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	876	876
ՀՀՄՍ 39-ի համաձայն վարկեր և փոխատվություններ/ ՖՀՄՍ 9-ի համաձայն ամորտիզացված արժեքով ֆինանսական ակտիվներ	424,692	64,511	489,203
ՀՀՄՍ 39-ի համաձայն վաճառքի համար մատչելի ներդրումային պարտքային արժեթղթեր/ ՖՀՄՍ 9-ի համաձայն իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվներ	-	3,041	3,041
Այլ ակտիվներ	3,310	5,597	8,907
	428,002	74,025	502,027
Թողարկված ֆինանսական երաշխիքներ	-	9,190	9,190
Ընդամենը արժեզրկումից պահուստ	428,002	83,215	511,217

7 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	3,711,491	2,530,830
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	677,548	113,671
Հակադարձ ռեպո գործառնություններ	6,151	1,919
Տոկոսային եկամուտ ժամկետային ավանդներից	5,178	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	254	139
Անհատապես արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով հաշվեգրված տոկոսներ	-	61,139
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	4,400,622	2,707,698
Վարկեր և փոխառություններ	1,199,773	790,546
Ռեպո գործառնություններ	240,057	23,790
Թողարկված պարտքային արժեթղթեր	129,273	118,189
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	1,569,103	932,525

8 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Դրամարկղային գործառնություններ	45,135	14,749
Երաշխիքներ	7,150	7,150
Ապահովագրական գործակալի գործունեություն	2,589	7,562
Ֆակտորինգ	729	4,692
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	68	225
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	55,671	34,378
Վճարահաշվարկային ծառայություններ	24,748	19,714
Բանկային գործառնություններ	9,804	3,628
Թողարկվող պարտատոմսեր	9,600	5,000
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	44,152	28,342

9 Զուտ առևտրային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ	7,261	8,510
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	7,261	8,510

10 Այլ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Ստացված տույժեր և տուգանքներ	343,945	198,395
Այլ ակտիվների վաճառքից զուտ եկամուտ	846	-
Ոչ առևտրային ակտիվների արտարժույթի փոխարկումից զուտ եկամուտ	-	825
Այլ եկամուտ	4,981	2,194
Ընդամենը այլ եկամուտներ	349,772	201,414

11 Արժեզրկման ծախս/(հակադարձում)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում չարժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում արժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը 2018թ.	Ընդամենը 2017թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	85	-	-	85	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	5,454	-	-	5,454	-
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	17	4,503	-	-	4,503	-
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	18	156,330	265,700	1,375,561	1,797,591	811,462
Այլ ակտիվներ	22	(5,067)	-	9,488	4,421	12,666
Ֆինանսական երաշխիքներ	27	(3,550)	-	-	(3,550)	-
Ընդամենը արժեզրկման ծախս		157,755	265,700	1,385,049	1,808,504	824,128

12 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Աշխատակիցների հատուցումներ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	383,196	297,677
Անձնակազմի ուսուցման ծախսեր	2,266	402
Անձնակազմի գծով այլ ծախսեր	992	61
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	386,454	298,140

13 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2018թ.	2017թ.
Գովազդի ծախսեր	67,202	58,833
Վարձակալության գծով ծախսեր	55,320	31,180
Վարկերի հավաքագրման ծառայություն	52,436	30,691
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	45,617	27,552
Հիմնական միջոցների և մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	36,303	23,455
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	35,322	28,445
Գրասենյակային ծախսեր	29,996	25,672
Վարկերի մարման գծով ծախսեր	22,368	14,505
Ֆինանսական հաշտարարի գծով ծախսեր	11,668	8,455
Հիմնական միջոցների պահպանման ծախսեր	10,876	3,685
Ներկայացուցչական ծախսեր	4,316	5,201
Գործուղման ծախսեր	3,744	2,467
Ոչ առևտրային ակտիվների արտարժույթի փոխարկումից զուտ վնաս	3,135	-
Գուդվիլի արժեզրկում	-	7,734
Այլ ծախսեր	34,208	17,470
Ընդամենը այլ ծախսեր	412,511	285,345

14 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Ընթացիկ հարկի գծով ծախս	161,700	94,229
Նախորդ տարիների շահութահարկի ճշգրտում	(10,432)	-
Հետաձգված հարկ	(35,918)	31,443
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	115,350	125,672

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2017թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	2018	Արդյունավետ դրույքաչափ (%)	2017	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	619,535		601,917	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	123,907	20	120,383	20
Չնվազեցվող ծախսեր	1,248	-	10,598	2
Արտարժույթի (դրական)/բացասական փոխարժեքային տարբերություն	627	-	(165)	-
Չճանաչված հետաձգված հարկային ակտիվի ազդեցությունը կուտակված հարկային կորուստներից	-	-	(5,144)	(1)
Նախորդ տարվա ընթացիկ հարկին վերաբերող ճշգրտումներ	(10,432)	(2)	-	-
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	115,350	18	125,672	21

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցությունը	2018թ. հունվարի 1-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	175	175	(175)	-	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	-	-	70	-	70
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	12,903	12,903	(1,400)	-	11,503
Վարկեր և փոխառություններ	229		229	2,202	-	2,431
Հիմնական միջոցներ				2,151	-	2,151
Այլ պարտավորություններ	9,376	1,838	11,214	2,087	-	13,301
Այլ ակտիվներ	-	1,119	1,119	(1,119)	-	-
Համախառն հետաձգված հարկային ակտիվ	9,605	16,035	25,640	3,816	-	29,456

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցությունը	2018թ. հունվարի 1-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	-	-	(11)	-	(11)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(29,759)	-	(29,759)	29,759	-	-
Ներդրումներ արժեթղթերում	(7,150)	-	(7,150)	3,468	(25,933)	(29,615)
Այլ ակտիվներ	(286)	-	(286)	(1,114)	-	(1,400)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(37,195)	-	(37,195)	32,102	(25,933)	(31,026)
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	(27,590)	16,035	(11,555)	35,918	(25,933)	(1,570)

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերահաշվարկված)	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	9,380	(9,380)	-	-
Վարկեր և փոխառություններ	-	229	-	229
Այլ պարտավորություններ	4,279	5,097	-	9,376
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	13,659	(4,054)	-	9,605
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	(29,759)	-	(29,759)
Ներդրումներ արժեթղթերում	(5,687)		(1,463)	(7,150)
Այլ ակտիվներ	(1,422)	1,136	-	(286)
Վարկեր և փոխառություններ	(1,234)	1,234	-	-
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(8,343)	(27,389)	(1,463)	(37,195)
Զուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	5,316	(31,443)	(1,463)	(27,590)

15 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Կանխիկ դրամական միջոցներ	8,472	148,528
Ընթացիկ հաշիվներ բանկերում	100,768	65,106
	109,240	213,634
Արժեզրկումից պահուստներ	(961)	-
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	108,279	213,634

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 74,579 հազար դրամ գումարով (74%) հաշիվները կենտրոնացված են մեկ բանկում (2017թ. 37,399 հազար դրամ (57%)):

2018թ. ընթացքում իրականացված անկանխիկ գործառնությունները միայն վերաբերում են գրավների բռնագանձման միջոցով 121,971 հազար դրամ գումարով վարկերի մարմանը (2017թ.՝ 155,142 հազար դրամ):

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		
2018թ. հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	876	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	85	-
Մնացորդը տարվա վերջի դրությամբ	961	-

16 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Հակադարձ հետգնման պայմանագրեր	1,055,021	-
Այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկեր	450,416	-
	1,505,437	-
Արժեզրկումից պահուստներ	(5,454)	-
Ընդամենը պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,499,983	-

Այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկերը ներառում են կապակցված անձին տրամադրված կարճաժամկետ վարկը (2017թ.՝ ոչինչ):

Այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	5,454	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,454	-

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ ռեպո համաձայնագրերով գնված արժեթղթերի իրական արժեքը և տրամադրված վարկերի հաշվեկշռային արժեքը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.		31 դեկտեմբերի 2017թ.	
	Գրավի իրական արժեքը	Վարկի հաշվեկշռային արժեք	Գրավի իրական արժեքը	Վարկի հաշվեկշռային արժեք
ՀՀ պետական արժեթղթեր	1,059,980	1,055,021	-	-
Ընդամենը գրավադրված ակտիվներ և հակադարձ ռեպո պայմանագրերով տրամադրված վարկեր	1,059,980	1,055,021	-	-

17 Ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Ներդրումային արժեթղթեր		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր (բաժնային գործիքներ)	15,000	-
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր (պարտքային գործիքներ)	-	360,317
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր (բաժնային գործիքներ)	-	10,000
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր (2017թ.՝ վաճառքի համար մատչելի)	15,000	370,317
Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող (2017թ.՝ վաճառքի համար մատչելի) պարտքային գործիքներ	8,382,644	3,018,562
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող (2017թ.՝ վաճառքի համար մատչելի) ներդրումային արժեթղթեր	8,382,644	3,018,562

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, ինչպես նաև հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2018	2017
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	3,041	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	4,503	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,544	-

Վերոնշյալ կորուստների գծով պահուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանզի իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող (2017թ.՝ վաճառքի համար մատչելի) հետգնման պայմանագրերով գրավադրված պարտքային ներդրումային արժեթղթերի հաշվեկշռային արժեքը հենց իրենց իրական արժեքն է

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ.

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերն (2017թ.՝ վաճառքի համար մատչելի) ըստ արդյունավետ տոկոսադրույքների և մարմանը մնացած ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.		31 դեկտեմբերի 2017թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	9.3-11.8%	2019-2047	9.7-14.4%	2018-2047

Չցուցակված սեփական կապիտալի ներդրումները կազմված են Ընկերության՝ «Քոդինգպրո» ՓԲԸ-ում և «ԷյԱր ՄԵՋԻՔ» ՓԲԸ-ում ունեցած ներդրումներից (ներդրումը յուրաքանչյուրում կազմում է 9.99 %):

18 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.			31 դեկտեմբերի 2017թ.		
	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Հաշվեկշռային արժեք	Համախառն հաշվեկշռային արժեք	Արժեզրկման պահուստ	Հաշվեկշռային արժեք
Հիփոթեքային և սպառողական վարկեր						
Հիփոթեքային վարկեր	6,198,194	(5,314)	6,192,880	6,169,604	(76,274)	6,093,330
Սպառողական վարկեր	1,403,186	(305,972)	1,097,214	1,947,267	(128,343)	1,818,924
Ավտոմեքենայի ձեռքբերման վարկեր	6,361,054	(516,442)	5,844,612	828,244	(11,150)	817,094
Առևտրային վարկեր						
Գյուղատնտեսություն	1,811,235	(69,053)	1,742,182	1,547,046	(57,642)	1,489,404
Առևտուր	1,382,172	(40,797)	1,341,375	1,321,977	(13,220)	1,308,757
Արդյունաբերություն	663,521	(17,630)	645,891	451,658	(4,228)	447,430
Այլ	565,690	(21,007)	544,683	737,133	(133,835)	603,298
Ընդամենը	18,385,052	(976,215)	17,408,837	13,002,929	(424,692)	12,578,237

Վերոնշյալ աղյուսակում ակնկալվող պարտքային կորուստների պահուստները ներառում են նաև որոշ վարկային պարտավորվածությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները (վճարային քարտեր և օվերդրաֆտներ), քանզի Ընկերությունը չի կարող առանձնացնել վարկային պարտավորվածության բաղադրիչը ֆինանսական գործիքների բաղադրիչից:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ընթացքում Ընկերությունը ձեռք է բերել հաճախորդներին տրամադրված վարկերի դիմաց ստացած գրավը, այդ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 121,971 հազար դրամ (2017թ.՝ 155,142 հազար դրամ): Ընկերությունը մտադիր է վաճառել այս ակտիվները կարճ ժամանակահատվածում (ծանոթագրություն 21):

2018թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է ՀՀ դրամով վարկերի համար 44.2% (2017թ.՝41.1%) և ԱՄՆ դոլարով վարկերի համար 18.1 % (2017թ.՝ 22.4%):

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 6,309,713 հազար դրամ գումարով վարկերի նկատմամբ պահանջի իրավունքը (2017թ.՝ 5,619,339 հազար դրամ ընդհանուր գումարով) Ընկերության կողմից գրավադրվել են այլ կազմակերպություններից ստացված 6,443,917 հազար դրամ գումարով (2017թ.՝ 5,770,140 հազար դրամ) վարկերի և փոխառությունների դիմաց:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի միայն մեկ վարկառու, որին տրամադրված 233,242 հազար դրամ գումարով վարկերը գերազանցում են սեփական կապիտալի 10% տոկոսը (2017թ.՝ զրո):

Հիփոթեքային, սպառողական և առևտրային վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2018			
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	81,332	73,197	164,132	318,661
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- փոխանցում 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	16,724	(16,724)	-	-
- փոխանցում գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	(341)	341	-	-
- փոխանցում գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	(20,410)	(168,127)	188,537	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	154,184	266,541	1,203,912	1,624,637
Վերականգնում	-	-	216,227	216,227
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(1,331,797)	(1,331,797)
Մնացորդ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	231,489	155,228	441,011	827,728

Հազար ՀՀ դրամ	2018			
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	73,204	53,217	44,121	170,542
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- փոխանցում 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	4,438	(3,184)	(1,254)	-
- փոխանցում գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	(543)	543	-	-
- փոխանցում գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	(5,008)	(43,272)	48,280	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	2,146	(841)	171,649	172,954
Վերականգնում	-	-	76,665	76,665
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(271,674)	(271,674)
Մնացորդ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	74,237	6,463	67,787	148,487

Վարկային պորտֆելի ակնկալվող պարտքային կորուստների աճը պայմանավորված է եղել պորտֆելի համախառն չափի աճով և պարտքային ռիսկի աճի եւ տնտեսական պայմանների վատթարացման հետևանքով փուլերի միջև շարժով: Տնտեսական գործոնների հետագա վերլուծությունը ներկայացված է 32.1 ծանոթագրությունում:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀՄՍ 39-ի համաձայն վարկերի և փոխատվությունների արժեզրկումից կորուստների գծով պահուստի շարժն ըստ դասերի հետևյալն է.

	2017		
Հազար ՀՀ դրամ	Հիփոթեքային և սպառողական վարկեր	Առևտրային վարկեր	Ընդամենը
2017թ. հունվարի 1 դրությամբ	171,107	109,830	280,937
Տարվա ծախս	391,181	420,281	811,462
Դուրսգրում	(544,781)	(462,018)	(1,006,799)
Վերականգնում	198,260	140,832	339,092
2017թ. դեկտմբերի 31-ի դրությամբ	215,767	208,925	424,692
Անհատական արժեզրկում	41,945	121,073	163,018
Խմբային արժեզրկում	173,822	87,852	261,674
	215,767	208,925	424,692
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	93,147	254,238	347,385

19 Հիմնական միջոցներ

	Համակարգչային սարքավորումներ	Փոխադրա-միջոցներ	Գրասենյակային կահույք և այլ սարքավորումներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	32,615	11,400	68,115	112,130
Ավելացում	22,163	-	52,980	75,143
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	54,778	11,400	121,095	187,273
Ավելացում	3,731	-	1,287	5,018
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	58,509	11,400	122,382	192,291

	Համակարգչային սարքավորումներ	Փոխադրա-միջոցներ	Գրասենյակային կահույք և այլ սարքավորումներ	Ընդամենը
Կուտակված մաշվածություն				
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	23,253	8,383	25,688	57,324
Տարվա ծախս	5,931	1,578	14,554	22,063
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	29,184	9,961	40,242	79,387
Տարվա ծախս	9,992	1,439	23,247	34,678
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	39,176	11,400	63,489	114,065
Հաշվեկշիռային արժեք				
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,333	-	58,893	78,226
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,594	1,439	80,853	107,886

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկբնական արժեքը կազմում է 28,734 հազար դրամ (2017թ. 17,548 հազար դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2018թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների:

20 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Համակարգչային ծրագրերի արտոնագրեր	Գուդվիլ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	19,336	77,336	96,672
Ավելացում	3,135	-	3,135
Արժեզրկում	-	(7,734)	(7,734)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	22,471	69,602	92,073
Ավելացում	905	-	905
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	23,376	69,602	92,978

Հազար ՀՀ դրամ	Համակարգչային ծրագրերի արտոնագրեր	Գուդվիլ	Ընդամենը
Կուտակված ամորտիզացիա			
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	5,415	-	5,415
Մասհանումներ	1,392	-	1,392
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,807	-	6,807
Մասհանումներ	1,625	-	1,625
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,432	-	8,432
Հաշվեկշռային արժեք			
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	14,944	69,602	84,546
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	15,664	69,602	85,266

2018թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվների:

21 Բռնագանձված գրավ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Անշարժ գույք	190,415	155,142
	190,415	155,142

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարած վարկային պարտավորության հաշվեկշռային արժեքից և գրավի իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Ընկերության քաղաքականությունն է հետամուտ լինել այդ ակտիվների իրացմանը պատշաճ կերպով և սեղմ ժամկետներում: Ընկերությունը հիմնականում չի օգտագործում ոչ կանխիկ գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները նվազագույնով:

22 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Դեբիտորական պարտքեր և այլ ստացվելիք գումարներ	62,846	32,519
Արժեզրկման գծով պահուստներ	(3,840)	(3,310)
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	59,006	29,209
Կանխավճարներ	12,547	32,747
Այլ ակտիվներ	732	451
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	13,279	33,198
Ընդամենը այլ ակտիվներ	72,285	62,407

Այլ ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Ընդամենը
Այլ ֆինանսական ակտիվներ	
Արժեզրկման պահուստ 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	-
Տարվա ծախս	12,666
Դուրսգրում	(9,356)
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,310
ՖՀՄՄՍ 9-ի պահուստի սկզբնական մնացորդի ազդեցության ճշգրտում	5,597
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	8,907
Արժեզրկման պահուստի զուտ վերաչափում	4,421
Զուտ դուրսգրում	(9,488)
Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,840

23 Վարկեր և փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Վարկեր ՀՀ ԿԲ-ից	76,145	67,195
Վարկեր վերաֆինանսավորող վարկային կազմակերպություններից	4,982,842	4,300,856
Վարկեր բանկերից ռեպո համաձայնագրերով (ծանոթ. 17)	7,851,490	2,839,416
Բանկային վարկեր և վարկային գծեր	6,473,387	1,529,733
Վարկեր ՀՀ կառավարությունից միջազգային ծրագրերով	1,270,328	1,350,164
Փոխառություններ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններից	2,536,768	2,049,619
Փոխառություններ բաժնետերերից	800,777	801,618
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	23,991,737	12,938,601

2018թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամով վարկերի և փոխառությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 8.3 % (2017թ.՝ 8.6 %), ԱՄՆ դոլարով վարկերի և փոխառությունների համար՝ համար 9.0 % (2017թ.՝ 8.7 %):

2018թ. դեկտեբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի տասնմեկ կազմակերպությունից և մեկ ֆիզիկական անձից ստացված վարկեր և փոխառություններ (2017թ-ին՝ ութ կազմակերպությունից), որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 20%-ը: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 22,376,286 հազար դրամ (2017թ-ին՝ 9,792,245 հազար դրամ):

Բանկային վարկերի և վարկային գծերի դիմաց գրավադրված է Ընկերության ընթացիկ հաշիվների շրջանառությունը և բաժնետերերի երաշխիքները:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 6,390,713 հազար դրամ գումարով վարկերի և փոխառությունների (2017թ.-ին՝ 5,619,339 հազար դրամ) դիմաց գրավադրված է 6,443,917 հազար դրամ գումարով (2017թ.-ին՝ 5,770,140 հազար դրամ) հաճախորդներին տրված վարկերի գծով Ընկերության պահանջի իրավունքը:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2017: նույնպես):

24 Թողարկված պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Պարտատոմսեր	1,480,188	1,482,211
Ընդամենը թողարկված պարտքային արժեթղթեր	1,480,188	1,482,211

2018թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից թողարկված 1,467,500 հազար դրամ անվանական արժեքով պարտատոմսերը (2017թ.՝ 1,468,200 հազար դրամ) ցուցակված են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա»-ում:

2018թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից թողարկված ՀՀ դրամով պարտքային արժեթղթերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 10.2% (2017թ.՝ 11.9 %), ԱՄՆ դոլարով պարտքային արժեթղթերի համար՝ համար 8.2 % (2017թ.՝ 8.2 %):

Տարվա ընթացքում Ընկերությունը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ արժեթուղթ (2017թ.՝ նույնպես):

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2017թ.՝ ոչինչ):

25 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Վճարվելիք գումարներ	32,665	32,240
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	63,550	51,261
Սուբսիդավորված տոկոսներ	32,768	22,465
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	128,983	105,966
Երաշխիքների գծով ակնկալվող պարտքային կորուստներ	5,640	-
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	12,652	12,247
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	18,292	12,247
Ընդամենը այլ պարտավորություններ	147,275	118,213

26 Սեփական կապիտալ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 1,500,000 հազ. դրամ: Համաձայն Ընկերության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 1,500,000 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 1,000 դրամ անվանական արժեքով:

2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերն են.

Հազար ՀՀ դրամ	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %
Վարդանյան Գագիկ	502,949	33.53
Մարության Էդուարդ	499,971	33.33
Կարապետյան Արայիկ	421,779	28.12
Դարբինյան Կարեն	75,301	5.02
	1,500,000	100

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը ունեն մեկ ձայնի իրավունք Ընկերության տարեկան և ընդհանուր ժողովներում և իրավունք ստանալու շահաբաժին:

2018թ. ապրիլ ամսում բաժնետերերի ժողովի որոշմամբ՝ Ընկերությունը հայտարարել և վճարել է շահաբաժին 2017թ. տարվա համար 403,751 հազար դրամ ընդհանուր գումարով:

27 Պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Ընկերությանը ներկայացվող դատական հայցերի առումով Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Հետևաբար Ընկերության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստներ չեն ձևավորվել:

Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխիքներ

Իր գործունեության ընթացքում Ընկերությունը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն վարկային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ անվանական կամ պայմանագրային գումարները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Վարկային գծերի չօգտագործված մաս	73,991	38,795
Տրամադրված երաշխիքներ	400,000	650,000
	473,991	688,795

Ֆինանսական երաշխիքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև: Վարկային պարտավորվածությունների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը տես ծանոթագրություն 18-ում:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Ֆինանսական երաշխիքներ		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	9,190	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(3,550)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,640	-

Ֆինանսական երաշխիքների գծով պարտավորությունները ներառված են պահուստներում (տես ծանոթագրություն 25):

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով – Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունն իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր շենք և տարածքներ վարձակալելու նպատակով:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Մինչև 1 տարի	16,596	9,354
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	16,596	9,354

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն:

Քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Ընկերությունը չունի սխալների կամ բացթողումների հետևանքով առաջացած պարտավորությունների ապահովագրում: Ներկայումս, Հայաստանում առկա չեն պարտավորությունների գծով ապահովագրական ծառայություններ:

28 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերությանը կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Ընկերությունը չունի վերջնական վերահսկող անձ կամ ընկերություն:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն: Նշված գործարքները իրականացվել են՝ շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2018թ.		2017թ.	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով սպասվելիք գումարներ				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	-	-	101,136	-
Տարվա ընթացքում մարված	3,671,876	-	37,074	-
Տարվա ընթացքում կնքված պայմանագրեր	(2,616,855)	-	(138,210)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,055,021	-	-	-
Արժեզրկումից պահուստ	(950)	-	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,054,071	-	-	-
Վարկեր այլ ֆինանսական կազմակերպություններին				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-
Տարվա ընթացքում թողարկված	450,416	-	-	-
Տարվա ընթացքում մարված	-	-	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	450,416	-	-	-
Արժեզրկումից պահուստ	(4,504)	-	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	445,912	-	-	-

Հազար ՀՀ դրամ	2018թ.		2017թ.	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	50,290	48,427	161,270	42,871
Տարվա ընթացքում թողարկված	-	66,730	627,281	16,695
Տարվա ընթացքում մարված	(19,390)	(15,084)	(738,261)	(11,139)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	30,900	100,073	50,290	48,427
Արժեզրկումից պահուստ	(87)	(280)	(503)	(485)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	30,813	99,793	49,787	47,942
Վարկեր և փոխառություններ				
Վարկի մնացորդը 1 հունվարի դրությամբ	801,618	-	932,038	-
Տարվա ընթացքում ստացված վարկեր	406,583	-	671,578	-
Տարվա ընթացքում մարված վարկեր	(407,423)	-	(801,998)	-
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	800,778	-	801,618	-
Տրված կանխավճարներ	-	-	30,000	-
Շահույթ կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	3,735	9,165	18,125	5,696
Տոկոսային եկամուտ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով	6,151	-	1,919	-
Արժեզրկման (ծախս)/հակադարձում	(5,038)	205	1,110	(56)
Տոկոսային ծախսեր փոխառությունների գծով	(87,902)	-	(87,808)	-
Վարձակալության գծով ծախսեր	(55,320)	-	(31,180)	-
Այլ ծախսեր	(16,976)	-	(8,062)	-

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2018թ.	2017թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	115,796	72,226
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	115,796	72,226

Ընկերության հետ կապված անձանց տրամադրված վարկերը վճարման են ենթակա 1-ից մինչև 14 տարիների ընթացքում և դրանց տոկոսադրույքը կազմում է 9-ից 18% (2017թ.՝ 9-18%): Տրամադրված վարկերը ապահովված են անշարժ գույքով, երաշխիքներով:

29 Իրական արժեքի չափումը

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

29.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	108,279	-	108,279	108,279
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	1,499,983	-	1,499,983	1,499,983
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	17,668,484	-	17,668,484	17,408,837
Այլ ակտիվներ	-	59,006	-	59,006	59,006
Ֆինանսական պարտավորություններ					
Վարկեր և փոխառություններ	-	23,901,332	-	23,901,332	23,991,737
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	1,448,040	-	1,448,040	1,480,188
Այլ պարտավորություններ	-	128,983	-	128,983	128,983

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2017թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	213,634	-	213,634	213,634
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	12,578,237	-	12,578,237	12,578,237
Այլ ակտիվներ		29,209		29,209	29,209
Ֆինանսական պարտավորություններ					
Վարկեր և փոխառություններ	-	12,930,841	-	12,930,841	12,938,601
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	1,482,211	-	1,482,211	1,482,211
Այլ պարտավորություններ	-	105,966	-	105,966	105,966

Պահանջներ և պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Ներգրավված վարկերի և փոխառություններ, թողարկված արժեթղթեր

Ներգրավված վարկերի և փոխառությունների իրական արժեքը գնահատվում է օգտագործելով զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող վարկերի համար առաջարկվող դրույքաչափերը:

29.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթեր	-	8,397,644	-	8,397,644
Ընդամենը	-	8,397,644	-	8,397,644
Զուտ իրական արժեք	-	8,397,644	-	8,397,644

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2017թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	-	3,388,879	-	3,388,879
Ընդամենը	-	3,388,879	-	3,388,879
Զուտ իրական արժեք	-	3,388,879	-	3,388,879

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

30 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Ընկերությունը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2018թ.					
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր (ծանոթ. 16)	1,055,021	-	1,055,021	(1,055,021)	-	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	1,055,021	-	1,055,021	(1,055,021)	-	-
Ֆինանսական պարտավորություններ						
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ (ծանոթ.17, 23)	7,851,490	-	7,851,490	8,382,644	-	(531,154)
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	7,851,490	-	7,851,490	8,382,644	-	531,154

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսա-կան ակտիվների/ Պարտավո-րությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավո-րությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվու-թյունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավո-րությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվու-թյունում	Ֆինանսա-կան գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական պարտավորություններ						
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ (ծանոթ.17, 23)	2,839,416	-	2,839,416	3,018,562	-	(179,146)
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	2,839,416	-	2,839,416	3,018,562	-	(179,146)

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն արժեքները և դրանց զուտ արժեքները, որոնք ներկայացվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջև բացահայտվել են վերոնշյալ աղյուսակներում, ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ չափվում են համաձայն հետևյալ հիմունքների.

- վաճառքի և հետգնման պայմանագրերից, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերից և արժեթղթերի վարկավորումից և փոխառությունից առաջացած ակտիվներն ու պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով,

31 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Ընկերության չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 32.3-ում:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2018թ.						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	*Մինչև 12 ամիս, ենթահանրագումար*	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	*12 ամսից ավելի, ենթահանրագումար*	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	108,279	-	108,279	-	-	-	108,279
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,499,983	-	1,499,983	-	-	-	1,499,983
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	312,794	2,641,768	2,954,562	7,269,999	7,184,276	14,454,275	17,408,837
Ներդրումային արժեթղթեր							
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	-	-	15,000	-	15,000	15,000
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունի միջոցով չափվող հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	8,382,644	-	8,382,644	-	-	-	8,382,644
Այլ ակտիվներ	59,006	-	59,006	-	-	-	59,006
	10,362,706	2,641,768	13,004,474	7,284,999	7,184,276	14,469,275	27,473,749

Հազար ՀՀ դրամ

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	*Մինչև 12 ամիս, ենթահանրագումար*	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	*12 ամսից ավելի, ենթահանրագումար*	Ընդամենը
31 դեկտեմբերի 2018թ.							
Պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	7,932,342	8,229,358	16,161,700	5,549,373	2,280,664	7,830,037	23,991,737
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	496,438	496,438	983,750	-	983,750	1,480,188
Այլ պարտավորություններ	128,983	-	128,983	-	-	-	128,983
	8,061,325	8,725,796	16,787,121	6,533,123	2,280,664	8,813,787	25,600,908
Զուտ Դիրք	2,301,381	(6,084,028)	(3,782,647)	751,876	4,903,612	5,655,488	1,872,841
Կուտակված ճեղքվածք	2,301,381	(3,782,647)		(3,030,771)	1,872,841		

Հազար ՀՀ դրամ

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	*Մինչև 12 ամիս, ենթահանրագումար*	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	*12 ամսից ավելի, ենթահանրագումար*	Ընդամենը
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	213,634	-	*213,634*	-	-	-	213,634
Վաճառքի համար մատչելի ներդրումներ							
- Ընկերության կողմից պահվող	-	107,824	*107,824*	10,000	252,493	*262,493*	370,317
- Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	2,961,367	57,195	*3,018,562*	-	-	-	3,018,562
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	503,960	2,759,874	*3,263,834*	5,081,797	4,232,606	*9,314,403*	12,578,237
Այլ ակտիվներ	29,209	-	*29,209*	-	-	-	29,209
	3,708,170	2,924,893	*6,633,063*	5,091,797	4,485,099	*9,576,896*	16,209,959
Պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	2,870,465	1,965,909	*4,836,374*	6,184,123	1,918,104	*8,102,227*	12,938,601
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	514,208	*514,208*	968,003	-	*968,003*	1,482,211
Այլ պարտավորություններ	67,884	38,082	*105,966*	-	-	-	105,966
	2,938,349	2,518,199	*5,456,548*	7,152,126	1,918,104	*9,070,230*	14,526,778
Զուտ Դիրք	769,821	406,694	*1,176,515*	(2,060,329)	2,566,995	*506,666*	1,683,181
Կուտակված ճեղքվածք	769,821	1,176,515		(883,814)	1,683,181		

32 Ռիսկի կառավարում

Ընկերության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Ընկերությունն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Ընկերության շահութաբերության կայունության ապահովման գործում, և Ընկերության յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի, որն իր հերթին բաժանվում է առևտրային և ոչ առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Ընկերությունը նաև ենթարկվում է գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ կառավարման գործընթացը չի ներառում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի փոփոխությունները, տեխնոլոգիաների կամ արդյունաբերության փոփոխությունները: Դրանք կառավարվում են Ընկերության կողմից ռազմավարական պլանավորման գործընթացում:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի վերահսկմանն ուղղված պատասխանատվությունը կրում է Ընկերության խորհուրդը, սակայն, գոյություն ունեն ռիսկերի կառավարման և վերահսկման համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ռազմավարության և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Գործադիր տնօրեն

Գործադիր տնօրենը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի իրականացման և վերահսկման, ակտիվների և պարտավորությունների կառավարման համար: Գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում նաև Ընկերության իրացվելիության ռիսկի և ֆինանսավորման ռիսկի համար:

Վարկային կոմիտե

Վարկային կոմիտեն ընդհանուր պատասխանատվություն է կրում վարկերի տրամադրման գործընթացում ռիսկերի կառավարման համար:

Վերստուգիչ

Ընկերության կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի վերստուգման է ենթարկվում Ընկերության վերստուգիչի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Ընկերության գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Վերստուգիչն անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Ընկերության խորհրդին:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Ընկերության կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Ընկերության գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Ընկերությունը, ինչպես նաև Ընկերության համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Ընկերությունը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա: Բացի դրանից, Ընկերությունը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Ընկերության բոլոր մակարդակների համար կազմվում են ռիսկերի վերաբերյալ տարբեր հաշվետվություններ, որոնք տարածվում են, որպեսզի Ընկերության բոլոր բաժիններին ապահովեն հասանելիություն ընդհանուր, անհրաժեշտ և ժամանակին համապատասխան տեղեկատվությանը:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Ընկերության գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Ընկերության քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը:

32.1 Պարտքային ռիսկ

Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Ընկերությանը կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Ընկերության կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Ընկերության ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են, տրամադրված երաշխիքներ, վարկային պարտավորությունները: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Ընկերության ղեկավարության կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Ընկերության Խորհրդին:

Ընկերության ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

32.1.1 Վարկերի որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացնում է Ընկերության՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ: Ստանձնված պարտավորվածությունների կամ երաշխիքների գումարները

ներկայացնում են վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխիքային պայմանագրերի գումարները:

Հազար ՀՀ դրամ

Ներքին վարկանիշեր	31 դեկտեմբերի 2018թ.				31 դեկտեմբերի 2017թ.
	Փուլ 1 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Փուլ 2 Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Փուլ 3 Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ					
Բարձր	109,240	-	-	109,240	213,634
Համախառն հաշվեկշռային արժեք	109,240	-	-	109,240	213,634
Արժեզրկումից պահուստ	(961)	-	-	(961)	-
Զուտ հաշվեկշռային արժեք	108,279	-	-	108,279	213,634
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ					
Բարձր	1,505,437	-	-	1,505,437	-
Համախառն հաշվեկշռային արժեք	1,505,437	-	-	1,505,437	-
Արժեզրկումից պահուստ	(5,454)	-	-	(5,454)	-
Զուտ հաշվեկշռային արժեք	1,499,983	-	-	1,499,983	-
Հիփոթեքային և սպառողական վարկեր					
Բարձր	11,304,972	18,815	158,022	11,481,809	8,180,645
Ստանդարտ	690,239	588	21,165	711,992	172,429
Ցածր	-	651,077	105,762	756,839	198,173
Չաշխատող	-	-	1,011,794	1,011,794	393,868
Համախառն հաշվեկշռային արժեք	11,995,211	670,480	1,296,743	13,962,434	8,945,115
Արժեզրկումից պահուստ	(231,489)	(155,228)	(441,011)	(827,728)	(215,767)
Զուտ հաշվեկշռային արժեք	11,763,722	515,252	855,732	13,134,706	8,729,348
Վարկեր և փոխատվություններ կոմերցիոն հաճախորդներին					
Բարձր	4,147,411	-	65,275	4,212,686	3,874,450
Ստանդարտ	80,480	-	353	80,833	16,068
Ցածր	-	30,411	49,060	79,471	7,768
Չաշխատող	-	-	49,628	49,628	159,528
Համախառն հաշվեկշռային արժեք	4,227,891	30,411	164,316	4,422,618	4,057,814
Արժեզրկումից պահուստ	(74,237)	(6,463)	(67,787)	(148,487)	(208,925)
Զուտ հաշվեկշռային արժեք	4,153,654	23,948	96,529	4,274,131	3,848,889

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.				31 դեկտեմբերի 2017թ.
Ներքին վարկանիշեր	Փուլ 1 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Փուլ 2 Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Փուլ 3 Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը	Ընդամենը
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր՝ ներառյալ գրավադրվածները (2017թ.՝ վաճառքի համար մատչելի)					
Բարձր	8,382,644	-	-	8,382,644	3,388,879
Ստանդարտ	15,000	-	-	15,000	10,000
Իրական արժեք	8,397,644	-	-	8,397,644	3,398,879
Այլ ֆինանսական ակտիվներ					
Բարձր	62,846	-	-	62,846	32,519
Համախառն հաշվեկշռային արժեք	62,846	-	-	62,846	32,519
Արժեզրկումից պահուստ	(3,840)	-	-	(3,840)	(3,310)
Զուտ հաշվեկշռային արժեք	59,006	-	-	59,006	29,209
Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխիքներ					
Բարձր	473,991	-	-	473,991	688,795
Արժեզրկումից պահուստ**	(5,640)	-	-	(5,640)	-

*Ստանդարտ վարկանիշը ներառում է 15,000 ՀՀ դրամի չվարկանշված ներդրումներ (2017թ.՝ 10,000 հազար ՀՀ դրամ):

**Վերոնշյալ աղյուսակում բացահայտված ակնկալվող պարտքային կորուստների պահուստը վերաբերում է միայն տրամադրված երաշխիքներին, քանի որ Ընկերությունը չի կարող վարկային պարտավորվածության բաղադրիչը տարանջատել ֆինանսական գործիքի բաղադրիչից և ակնկալվող պարտքային կորուստները ճանաչել առանձին-առանձին:

32.1.2 Արժեզրկման գնահատում

2018թ. հունվարի 1-ից կիրառվող քաղաքականություն

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Ընկերության՝ արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցվի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տես 4.4.6 ծանոթագրությունը):

Պարտքային ռիսկի էական աճ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս, Ընկերությունը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում դեֆոլտի ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար, Ընկերությունը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ ապագային միտված որակական չափանիշներ:

Այնուամենայնիվ, եթե ապագային միտված տեղեկատվությունը (ինչպես անհատական, այնպես էլ խմբային կերպով) հասանելի չէ առանց չարդարացված ծախսերի կամ ջանքերի, Ընկերությունը օգտագործում է ժամկետանց օրերի վերաբերյալ տեղեկատվությունը որոշելու համար, թե արդյոք առկա է պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչման պահից հետո:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների չափանիշներ

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Դեֆոլտ («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքից, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես դեֆոլտային, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:
- Փորձաշրջանում գտվող վարկեր. գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ վերանայման պահին աշխատող կամ վերանայման պահին չաշխատող, այն վարկերի համար, որոնք գտնվում են փորձաշրջանում (առողջացման ժամանակաշրջանից հետո ընկած ժամանակաշրջան): Միաժամանակ այդ վարկերը չպետք է ունենան 30 օրից ավել ժամկետանց օր կամ քիչ հավանական վճարման որևէ չափանիշ:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների չափանիշներ

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները ներկայացված են հետևյալ պարագրաֆներում: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- 7 և ավել ժամկետանց օրեր հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար - Հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար 7 և ավել ժամկետանց օրերը վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը

30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:

- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում կորպորատիվ վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's и Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած BB մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և բանկը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ դեֆոլտի վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:
- Դեֆոլտ («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքի, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես դեֆոլտային, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:

Ներդրումային արժեթղթերի չափանիշներ

Ստորև ներկայացված են արժեթղթերի պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշը, որոնք բոլորն էլ որոշման մեջ ունեն հավասար կշիռ.

- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում երկրի (սուվերեն) վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's и Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած B2 մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և բանկը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ դեֆոլտի վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:

Էական վատթարացման կարգավիճակից դուրս գալու չափանիշներ

Եթե առկա չէ Ընկերության կողմից պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշներից որևիցէ մեկը, ապա տեղի է ունենում փուլ 2-ից անցում փուլ 1-ին, բացառությամբ վերանայված պարտքերի, որոնց համար կիրառվում է փորձաշրջան:

Պարտքային ռիսկի մակարդակներ

Ընկերությունը առանձնացնում է պարտքային ռիսկի մակարդակները տարբեր տվյալների հիման վրա, որոնք կանխատեսում են դեֆոլտի ռիսկը և հիմնվում են վարկային փորձված դատողության վրա: Պարտքային ռիսկի մակարդակները սահմանվում են որակական և քանակական (հիմնականում ժամկետանց օրերով պայմանավորված) գործոններով, որոնք մատնանշում են դեֆոլտի ռիսկը: Այս գործոնները տարբերվում են կախված ռիսկի բնույթից և փոխառուի տեսակից:

Խմբային կամ անհատական գնահատում

Ակտիվների դասերը, որտեղ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկները կատարվում են անհատական հիմունքներով, ներառում են.

- փուլ 3-ում գտնվող անհատապես նշանակալից վարկեր՝ ֆինանսական ակտիվների դասից անկախ,
- խոշոր և առանձնահատուկ վարկեր
- գանձապետական, առևտրային և միջբանկային հարաբերություններ, ինչպիսիք են բանկերում պահվող միջոցները, հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը և ամորտիզացված արժեքով/իրական արժեքով՝ այլ համապափակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքները,
- Մնացորդներ, որոնք դասակարգվել են որպես ձեռքբերված կամ ստեղծված արժեզրկված, եթե սկզբնական վարկը ապաճանաչվել է, իսկ նոր վարկը ճանաչվել է պարտքի վերակազմավորման արդյունքում:

Ընկերությունը խմբավորում է ակտիվները, որոնց ակնկալվող պարտքային կորուստները չեն հաշվարկվում անհատական հիմունքներով, ըստ համանման պարտքային ռիսկով առանձին դասերի՝ հիմնվելով վարկերի բնութագրերի վրա, ինչպես օրինակ՝

- վարկի տեսակը (կորպորատիվ, հիփոթեք, վարկային քարտ, սպառողական վարկ և այլն)
- հաճախորդի տեսակը (օրինակ՝ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կամ ըստ տնտեսության ճյուղի),
- գրավի տեսակը (օրինակ՝ գույք, ստացվելիք գումարներ և այլն),
- արժույթ
- այլ բնորոշ հատկանիշներ:

Դեֆոլտի սահմանում և «առողջացում»

Ընկերությունը համարում է ֆինանսական գործիքը դեֆոլտի ենթարկված, և, հետեւաբար, Փուլ 3-ում դասակարգված (արժեզրկված)՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պայմանագրային վճարումները 90 օր ժամկետանց են:

Ընկերությունը միջբանկային հաշիվները համարում է դեֆոլտի ենթարկված և անհապաղ գործողություններ է կատարում, երբ պահանջվող վճարումները չեն կատարվում մինչև աշխատանքային օրվա ավարտը, ինչպես նշված է անհատական պայմանագրերով:

Որպես որակական գնահատման մի մաս՝ առ այն՝ արդյոք հաճախորդը վճարունակ է, Ընկերությունը նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են մատնացույց անել «քիչ հավանական վճարման» կարգավիճակը: Նման դեպքերում Ընկերությունը մանրամասն դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը կարող է հանգեցնել հաճախորդի՝ դեֆոլտի ենթարկված լինելուն, և, հետևաբար, գնահատվում է՝ արդյոք պետք է վարկը դասակարգել Փուլ 3-ում՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, թե արդյոք Փուլ 2-ում դասակարգումը բավարարում է: Նման իրադարձությունները ներառում են.

- դատավարություն, պարտքի հավաքագրման համար իրավական գործողությունների կատարում կամ հարկադիր կատարում,
- պարտապանի լիցենզիայի կասեցում,
- վարկառուն համարվում է համավարկառու, երբ հիմնական վարկառուն դեֆոլտում է,
- նույն մնացորդի բազմակի վերաձևակերպում,
- կան հիմնավոր մտավախություններ վարկառուի ապագա ունակության վերաբերյալ՝ կայուն և բավարար դրամական հոսքերի ստեղծման հետ կապված,
- վարկառուի վարկերի օգտագործման մակարդակը՝ վարկային լծակը, զգալիորեն ավելացել է կամ առկա են վարկային լծակի նման փոփոխության համար արդարացված սպասումներ. հաշվետու ժամանակահատվածում կապիտալը 50%-ով կրճատվել է վնասների պատճառով,

- պարտքերի ծածկման գործակիցը ցույց է տալիս, որ պարտքը կայուն չէ,
- հիմնական հաճախորդի կամ վարձակալի կորուստ,
- փոխկապակցված և կարևոր հաճախորդ դիմել է սնանկ ճանաչվելու համար,
- վերաձևակերպում՝ վարկի զգալի մասի զիջմամբ,
- վարկային կազմակերպությունը սնանկության գործառույթ է սկսում փոխառուի նկատմամբ:

Ըստ Ընկերության քաղաքականության՝ ֆինանսական գործիքը համարվում է «առողջացած», և հետևաբար վերադասակարգվում Փուլ 3-ից, եթե առնվազն երեք անընդմեջ ամիսների ընթացքում դեֆոլտի սահմանված չափանիշներից որևէ մեկը բացակայել է: Ակտիվի՝ առողջանալուց հետո Փուլ 2-ում կամ Փուլ 1-ում դասակարգելու որոշումը կախված է առողջացման պահին ճշգրտված ռիսկի մակարդակից, և արդյոք սա նշանակում է, որ սկզբնական ճանաչման համեմատ եղել է պարտքային ռիսկի զգալի աճ: Ընկերության՝ ակնկալվող պարտքային կորուստների «առողջացման» չափանիշն ավելի մեղմ է, քան վերանայված և չաշխատող պարտքերի վերաբերյալ 12-ամսյա պահանջը:

Դեֆոլտի հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է վարկառուի կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի դեֆոլտ հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Ժամկետայնության կառուցվածքը հիմնված է պատմականորեն դիտարկված տվյալների վրա և ենթադրվում է, որ նույնն է պորտֆելի և վարկային դասի խմբի բոլոր ակտիվների համար: Սա հաստատվում է պատմական վերլուծությունների հիման վրա:

Վնաս դեֆոլտի ժամանակ (LGD)

LGD- ն որոշվում է այն գործոնների հիման վրա, որոնք ազդում են դեֆոլտից հետո իրականացվող վերականգնումների վրա: Դրանք տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- ապահովված ֆինանսական գործիքների համար սա առաջին հերթին հիմնված է գրավի տեսակի և դրա կանխատեսվող արժեքների, պարտադիր վաճառքների դեպքում շուկայական/հաշվեկշռային արժեքների պատմական զեղչերի, բռնագանձման ժամանակահատվածի և դիտարկվող փոխհատուցման ծախսերի վրա:
- Չապահովված ֆինանսական գործիքների դեպքում LGD- ն սովորաբար սահմանվում է ըստ գործիքի տեսակի՝ տարբեր փոխառուների վերականգնման սահմանափակ տարբերակման պատճառով: LGD-ի վրա ազդում է հավաքագրման ռազմավարությունը՝ ներառյալ պայմանագրային պարտքերի վաճառքը և գինը:

Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD- ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա: Սա նաև ճշգրտվում է փոխառուի կողմից կատարվելիք

ակնկալվող գերավճարներով: Հաշվարկի մեջ ներառվում են նաև վաղաժամկետ մարման/վերաֆինանսավորման հետ կապված ենթադրությունները:

- Վերականգնվող ֆինանսական գործիքի համար դեֆոլտի ռիսկին ենթարկվածությունը կանխորոշվում է՝ ընթացիկ մնացորդային հաշվեկշռին գումարելով «վարկի շրջանառելիության գործակիցը», ինչը հաշվի է առնում դեֆոլտի պահին մնացած սահմանաչափի ակնկալվող օգտագործումը: Այս ենթադրությունները տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի և ընթացիկ սահմանաչափերի օգտագործման՝ հիմնվելով Բանկի դեֆոլտների վերջին տվյալների վերլուծության վրա:

Կանխատեսվող տեղեկատվություն

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոտեցումը ներկայացվում է 4.4.6 ծանոթագրության գնահատումներում ու ենթադրություններում: Ամբողջականության և ճշգրտության ապահովման նպատակով Ընկերությունը օգտագործում է տեղեկատվություն երրորդ կողմի աղբյուրներից (ՀԲ, ԿԲ, ՀՀ Կառավարություն և այլն): Մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման նպատակով Բանկը որոշում է ընտրված մակրոտնտեսական գործոնների և կանխատեսված տարբեր սցենարների (բազային, լավատեսական և վատատեսական) կշիռները: Մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը ակնկալվող պարտքային կորուստների վրա հաշվարկելու համար Բանկն օգտագործում է կանխատեսվող տեղեկատվության լայն շրջանակ որպես ելակետային տվյալներ իր մոդելների համար, այդ թվում՝

- ՀՆԱ-ի աճ,
- Զուտ ընթացիկ արտասահմանյան տրանֆերտներ,
- Գործազրկության մակարդակ,
- Ընկերության չաշխատող վարկերի մասնաբաժինն ընդհանուր տրված վարկերում
- Արդյունաբերություն (աճի տեմպ %)
- Գյուղատնտեսություն (աճի տեմպ %)
- Արտարժույթի պաշտոնական փոխարժեք
- Անշարժ գույքի գները (միջին գինը Երևանում)

Արժեզրկման գնահատման քաղաքականությունը մինչև 2018թ. հունվարի 1-ը

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների 90 օրից ավել ուշացումները, վարկառուների դրամական միջոցների հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Ընկերությունը արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

Արժեզրկման անհատական գնահատում

Ընկերությունը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի կամ փոխատվության համապատասխան պահուստի չափը անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հասույթները և սպասվող շահաբաժինների վճարումները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական միջոցների հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

Արժեզրկման խմբային գնահատում

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով (ներառյալ կրեդիտ քարտերը, հիպոթեքները և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի և փոխատվությունների գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին:

Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանա պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա: Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական իրավիճակը, կորուստն առաջանալու և անհատապես բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները:

Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների արժեզրկման գնահատումը և պահուստավորումն իրականացվում է նույն կերպ՝ ինչ վարկերինը:

Չարժեզրկված, ոչ ժամկետանց վարկեր և փոխատվություններ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է չարժեզրկված և ոչ ժամկետանց վարկերի որակը՝ հիմնված կորուստների պատմության վրա:

Հազար ՀՀ դրամ	**2017**
Արդյունաբերություն	1.56%
Առևտուր	0.5%
Սպառողական	4.18%
Գյուղատնտեսություն	3.3%
Հիփոթեք	0.8%
Սպասարկում	0.47%
Այլ	14.8 %

Պարտքային ռիսկ պարունակող այլ ֆինանսական ակտիվների գծով 2017թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը կորուստներ չի ունեցել:

ժամկետանց, բայց չարժեզրկված վարկեր

Ժամկետանց են համարվում այն վարկերը և փոխատվությունները, որոնց գծով առկա են մի քանի օրյա չվճարումներ: Ժամկետանց վարկերի հիմնական մասն արժեզրկված չէ:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկերի ժամկետանց օրերի վերլուծությունն ըստ դասերի ներկայացվում է հետևյալ աղյուսակում.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2017թ.				
	Մինչև 30 օր	31-ից 60 օր	61-ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ					
Մասնավոր ձեռնարկություններ	16,068	-	3,292	14,942	34,302
Ֆիզիկական անձիք	172,429	100,981	97,192	300,721	671,323
Անհատ ձեռնարկատերեր	-	4,475	-	11,574	16,049
Ընդամենը	188,497	105,456	100,484	327,237	721,674

32.1.3 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Պարտքային ռիսկի ենթարկվող ակտիվներն ամբողջությամբ տեղաբաշխված են ՀՀ տարածքում:

Վարկերի տեղաբաշխումը ըստ տնեսության ճյուղերի ներկայացված է ծանոթագրություն 18-ում:

32.1.4 Գրավ և վարկային ապահովման այլ միջոցներ

Պահանջվող գրավի գումարը և տեսակը կախված են փոխառուի պարտքային ռիսկի գնահատումից: Գոյություն ունեն գրավադրման յուրաքանչյուր տեսակի ընդունելիության և գնահատման վերաբերյալ ուղեցույցեր:

Ստացված գրավի հիմնական տեսակները հետևալն են.

- արժեթղթերի փոխառոության և հակադարձ հետգնման գործարքների դեպքում՝, դրամական միջոցներ կամ արժեթղթեր,
- առևտրային վարկերի դեպքում՝ անշարժ և շարժական գույք, սարքավորումներ, պաշարներ և առևտրային դեբիտորական պարտքեր, իսկ հատուկ հանգամանքներում՝ պետական երաշխիքներ,
- գրավադրմամբ սպառողական վարկերի դեպքում՝ անշարժ գույք
- հիփոթեքային վարկերի դեպքում՝ անշարժ գույք:

Ղեկավարությունը վերահսկում է գրավի շուկայական արժեքը և անհրաժեշության դեպքում՝ ըստ հիմնական համաձայնագրի՝ պահանջում լրացուցիչ գրավ:

Ընկերությունը չի ունեցել որևէ ֆինանսական գործիք, որի կորուստների գծով պահուստը ճանաչված չէ գրավի առկայության պատճառով:

Կորպորատիվ կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են գրավով, ֆիզիկական անձանց գծով վերականգնվող վարկային գծերը հիմնականում ապահովված չեն: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Ընկերությունը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի և փոխատվությունների արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկեր և փոխատվություններից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական հաստատություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել ըստ հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Անշարժ գույք	6,354,568	6,821,223
Պաշարներ	1,545,612	1,095,733
Հիմնական միջոցներ	102,971	243,666
Փոխադրամիջոցներ	6,937,096	1,417,707
Ոսկյա զարդեր և ոսկյա այլ իրեր	11,737	53,360
Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց երաշխավորություններ	1,124,269	1,501,032
Ապահովվածություն չունեցող	1,210,195	851,212
Այլ	1,098,604	1,018,996
Ընդամենը վարկեր և փոխատվություններ (համախառն)	18,385,052	13,002,929

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

32.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները:

Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Ընկերությունը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

32.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Ընկերության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դրանք սահմանված շրջանակներում պահելու համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Ընկերության ֆինանսական արդյունքների զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է վերագնահատելով վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրույքով ակտիվները, 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները:

Հազար ՀՀ դրամ — **2018թ.**

		Կապիտալի զգայունություն				
Արտարժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույք-ներում	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ՀՀ դրամ	1	(292,828)	-	-	-	(292,828)
ՀՀ դրամ	-1	312,453	-	-	-	312,453

Հազար ՀՀ դրամ — **2017թ.**

		Կապտիալի զգայունություն				
Արժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույք-ներում	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ՀՀ դրամ	1	-	(325)	-	(10,176)	(157,179)
ՀՀ դրամ	(1)		327	-	10,355	175,454

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Ընկերության Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական միջոցների հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ) և կապիտալի վրա: Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.		31 դեկտեմբերի 2017թ.	
Արտարժույթ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար	5	(9,618)	5	(7,239)
Եվրո	5	31	5	107

Ընկերության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	2018թ.			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	103,384	4,644	251	108,279
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,499,983	-	-	1,499,983
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	13,877,543	3,531,294	-	17,408,837
Ներդրումային արժեթղթեր				
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	15,000	-	-	15,000
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	8,382,644	-	-	8,382,644
Այլ ակտիվներ	59,006	-	-	59,006
	23,937,560	3,535,938	251	27,473,749
Պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	21,174,995	2,816,742	-	23,991,737
Թողարկված պարտքային արժեթղթեր	504,697	975,491	-	1,480,188
Այլ պարտավորություններ	123,114	5,869		128,983
Ընդամենը	21,802,806	3,798,102	-	25,600,908
Զուտ դիրք 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,134,754	(262,164)	251	1,872,841

Հազար ՀՀ դրամ				2018թ.
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2018թ. դեկտեմբերի 31-ին	398,177	70,174		473,991
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	12,785,843	3,423,908	208	16,209,959
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	10,960,212	3,566,566	-	14,526,778
Զուտ դիրք 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,825,631	(142,658)	208	1,683,181
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2017թ. դեկտեմբերի 31-ին	651,798	36,997	-	688,795

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը և Եվրոն: Ոչ փոխարկելի արժույթն է ռուսական ռուբլին:

32.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Ընկերությունը կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական միջոցների հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական միջոցների հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Ընկերությունը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում:

Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Ընկերության հետ մասնավորապես:

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տես ծանոթագրություն 31-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2018թ.				
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ					
Վարկեր և փոխառություններ	7,946,484	8,690,776	6,831,046	2,566,293	26,034,599
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	610,785	1,117,613	-	1,728,398
Այլ պարտավորություններ	128,983	-	-	-	128,983
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	8,075,467	9,301,561	7,948,659	2,566,293	27,891,980
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	473,991	-	-	-	473,991

	31 դեկտեմբերի 2017թ.				
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1-12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ					
Վարկեր և փոխառություններ	2,888,974	2,349,545	7,290,088	2,143,167	14,671,774
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	635,281	1,079,636	-	1,714,917
Այլ պարտավորություններ	67,884	38,082	-	-	105,966
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	2,956,858	3,022,908	8,369,724	2,143,167	16,492,657
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	688,795	-	-	-	688,795

32.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Ընկերության ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային,

շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Ընկերության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Ընկերության Խորհուրդը, Գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

33 Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համադրում

Ընկերության պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.			
	Թողարկված պարտքային արժեթղթեր	Երկարաժամկետ փոխառություններ	Շահաբաժիններ	Ընդամենը
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	1,482,211	12,938,601	-	14,420,812
Դրամային հոսքերից	(2,660)	11,043,554	(403,751)	10,637,143
Ստացված գումար	708,171	11,395,664	-	12,103,835
Վճարված գումար	(710,831)	(352,110)	(403,751)	(1,466,692)
Ոչ դրամային հոսքերից	637	9,582	403,751	413,970
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	(637)	(2,180)	-	(2,817)
Տոկոսների հաշվեգրում	1,274	11,762	-	13,036
Շահաբաժինների հաշվեգրում	-	-	403,751	403,751
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,480,188	23,991,737	-	25,471,925

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2017թ.			
	Թողարկված պարտքային արժեթղթեր	Երկարաժամկետ փոխառություններ	Շահաբաժիններ	Ընդամենը
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	1,180,994	8,895,814	-	10,076,808
Դրամային հոսքերից	296,996	4,018,478	(310,000)	4,005,474
Ստացված գումար	783,860	5,981,354	-	6,765,214
Վճարված գումար	(486,864)	(1,962,876)	(310,000)	(2,759,740)
Ոչ դրամային հոսքերից	4,221	24,309	310,000	338,530
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	3,076	(2,473)	-	603
Տոկոսների հաշվեգրում	1,145	26,782	-	27,927
Շահաբաժինների հաշվեգրում	-	-	310,000	310,000
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,482,211	12,938,601	-	14,420,812

34 Կապիտալի համարժեքություն

Ընկերությունը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք իր գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Ընկերությունը կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով 1988թ. Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Ընկերությունը կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Ընկերության կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Ընկերությունը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու համար:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման պահուստները:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում իրականացնելու միջոցով ֆիզիկական անձանցից փոխառություններ ներգրավող (թողարկող) վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2018 և 2017թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտ չարված	
Հազար ՀՀ դրամ	2018թ.	2017թ.
Հիմնական կապիտալ	2,247,865	1,839,736
Լրացուցիչ կապիտալ	138,172	42,424
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	2,386,037	1,882,160
Ռիսկով կշռված ակտիվներ	16,499,017	11,637,326
Կապիտալի համարժեքության նորմատիվ	14.5%	16.2%

ՀՀ կենտրոնական բանկի կողմից կանխիկ ձևով արտարժույթի առուվաճառք իրականացնող, ինչպես նաև թողարկող վարկային կազմակերպությունների համար սահմանվել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 1,000,000 հազար ՀՀ դրամ գումարով:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ պահանջները:

35 Գործառնական սեգմենտներ

Ընկերության գործառնությունները բավականին ինտեգրված են և կազմում են մեկ գործարար սեգմենտ ՖՀՄՍ 8 Գործառնական սեգմենտներ ստանդարտի պահանջների:

Հաճախորդներից ստացվող եկամուտը վերաբերում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին: Ընկերությունը չունի առանձին հաճախորդ, որից ստանում է իր հասույթի 10%-ը կամ ավելին:

Ընկերության ոչ ընթացիկ ակտիվները գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:

Ֆինանսական հաշվետվություններ Անկախ աուդիտորի և եզրակացություն

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն

31 դեկտեմբերի 2017թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	10
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	11
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	13

Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2017թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության

Grant Thornton

համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

Վարկերի արժեզրկման գծով պահուստի ձևավորում

(ներկայացված է ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 17-ում)

Վարկերի արժեզրկման գծով պահուստը հանդիսանում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել վարկերի արժեզրկման գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական արդյունքների վրա: Դատողությունները և ենթադրությունները կարող են վերաբերել արժեզրկման օբյեկտիվ հայտանիշերի գնահատմանը, վարկառուների ֆինանսական վիճակի, ակնկալվող դրամական միջոցների հոսքերի, գրավների արժեքի և իրացման ժամկետների, ինչպես նաև կրած, սակայն դեռևս չբացահայտված վնասների գնահատմանը:

Անհատապես էական վարկերի գծով ձևավորված արժեզրկման պահուստների գնահատման համար մեր կողմից կիրառված ընթացակարգերը ներառել են արժեզրկման բացահայտման և քանակական գնահատման հիմքում ընկած դատողությունների և ենթադրությունների, գրավների շուկայական արժեքների ուսումնասիրությունները, ակնկալվող դրամական միջոցների հոսքերի կանխատեսումները և այլն:

Խմբային արժեզրկման արդյունքում ձևավորված պահուստների ճշգրտության գնահատման համար մենք ուսումնասիրել ենք գործող վերահսկողության մեխանիզմների կառուցվածքը և արդյունավետությունը, դուրսգրումների և ժամկետանց օրերի հաշվառումը, խմբային արժեզրկման հաշվարկի հիմքում ընկած մոդելները և ենթադրությունները:

Մեր կողմից նաև կիրառվել են ընթացակարգեր ուղղված ֆինանսական հաշվետվություններում վարկային ռիսկին, արժեզրկման պահուստի ձևավորման ենթադրություններին և դատողություններին վերաբերող բացահայտումների գնահատմանը:

Այլ հանգամանք

Ընկերության 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը չձևափոխված կարծիք է արտահայտել այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2017 թվականի մարտի 23-ին:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը ներառում է Ընկերության տարեկան հաշվետվությունը 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ բացի ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունից: Տարեկան հաշվետվությունը ենթադրաբար մեզ կտրամադրվի աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք չենք տրամադրում կարծիք, որը որևէ այլ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Մեր կողմից իրականացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերոնշյալ այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի

Grant Thornton

մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռքբերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու

Grant Thornton

և ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց տրամադրում ենք հավաստիացում, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք մեր բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց ներկայացված հարցերից մենք առանձնացնում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտորի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հանրային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցերը չպետք է ներկայացվեն աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրանց ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրանց ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Անկախ աուդիտի առաջադրանքի պատասխանատուն հանդիսանում է Արմեն Հովհաննիսյանը:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն

Արմեն Հովհաննիսյան
Առաջանդրանքի պատասխանատու

12 մարտի 2018թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերահաշվարկված)
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	2,707,698	1,812,496
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	(932,525)	(781,395)
Զուտ տոկոսային եկամուտներ		1,775,173	1,031,101
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	34,378	24,504
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(28,342)	(9,312)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		6,036	15,192
Զուտ առևտրային եկամուտ	8	8,510	6,629
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ օգուտ		18,397	-
Այլ եկամուտներ	9	201,414	151,422
Արժեզրկման ծախս	10	(824,128)	(397,530)
Անձնակազմի գծով ծախսեր	11	(298,140)	(223,124)
Այլ ծախսեր	12	(285,345)	(200,348)
Շահույթ մինչև հարկումը		601,917	383,342
Շահութահարկի գծով ծախս	13	(125,672)	(84,453)
Տարվա շահույթ		476,245	298,889
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն		5,858	3,956
Ընդամենը տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		5,858	3,956
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		482,103	302,845

13-ից 72 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերահաշվարկված)	2016թ. հունվարի 1-ի դրությամբ (վերահաշվարկված)
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	213,634	490,358	82,174
Վաճառքի համար մատչելի ներդրումներ				
- Ընկերության մոտ պահվող	15	370,317	291,754	270,135
- Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	15	3,018,562	-	-
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	16	-	101,136	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	17	12,578,237	11,003,130	9,683,729
Հիմնական միջոցներ	18	107,886	54,806	64,056
Ոչ նյութական ակտիվներ	19	85,266	91,257	91,186
Հետաձգված հարկային ակտիվ	13	-	5,316	1,629
Բռնագանձված գրավ	20	155,142	-	57,600
Այլ ակտիվներ	21	62,407	23,502	29,138
Ընդամենը՝ ակտիվներ		16,591,451	12,061,259	10,279,647
Պարտավորություններ և սեփական կապիտալ				
Պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	22	12,938,601	8,895,814	8,056,848
Թողարկված պարտքային արժեթղթեր	23	1,482,211	1,180,994	591,149
Փոխանցված, սակայն չապաճանաչված վարկերի գծով վճարվելիք գումարներ		-	69,858	191,307
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		28,045	8,256	34,548
Հետաձգված հարկային պարտավորություն	13	27,590	-	-
Այլ պարտավորություններ	24	118,213	81,649	83,952
Ընդամենը՝ պարտավորություններ		14,594,660	10,236,571	8,957,804

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերահաշվարկված)	2016թ. հունվարի 1-ի դրությամբ (վերահաշվարկված)
Սեփական կապիտալ				
Բաժնետիրական կապիտալ	25	1,500,000	1,500,000	1,000,000
Այլ պահուստներ		14,731	8,873	4,917
Չբաշխված շահույթ		482,060	315,815	316,926
Ընդամենը՝ սեփական կապիտալ		1,996,791	1,824,688	1,321,843
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		16,591,451	12,061,259	10,279,647

Ֆինանսական հաշվետվությունները՝ ներկայացված 7-ից 72 էջերում, ստորագրվել են Ընկերության գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից 2018թ. մարտի 12-ին:

Լուիզա Իգրարյան — Գործադիր տնօրեն

Սուսաննա Խաչատրյան — Գլխավոր հաշվապահ

13-ից 72 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնետիրական կապիտալ	Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2016թ. հունվար 1-ի դրությամբ	1,000,000	4,917	316,926	1,321,843
Բաժնետիրական կապիտալի ավելացում	500,000	-	-	500,000
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	(300,000)	(300,000)
Սեփականատերերի հետ գործարքներ	500,000	-	(300,000)	200,000
Տարվա շահույթ	-	-	298,889	298,889
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք				
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի զուտ փոփոխություն	-	3,956	-	3,956
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	3,956	298,889	302,845
Հաշվեկշիռը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերահաշվարկված)	1,500,000	8,873	315,815	1,824,688
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	(310,000)	(310,000)
Սեփականատերերի հետ գործարքներ	-	-	(310,000)	(310,000)
Տարվա շահույթ	-	-	476,245	476,245
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք				
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի զուտ փոփոխություն	-	5,858	-	5,858
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	5,858	476,245	482,103
Հաշվեկշիռը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,500,000	14,731	482,060	1,996,791

13-ից 72 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված տոկոսներ	2,607,656	1,764,212
Վճարված տոկոսներ	(905,742)	(766,360)
Ստացված կոմիսիոն և այլ վճարներ	34,378	24,504
Վճարված կոմիսիոն և այլ վճարներ	(28,342)	(9,312)
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ օգուտ	18,397	-
Զուտ առևտրային եկամուտ	8,510	5,142
Այլ եկամուտներ	200,589	138,904
Վճարումներ աշխատակիցների և նրանց անունից	(270,934)	(214,687)
Այլ ծախսեր	(254,156)	(180,067)
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	1,410,356	762,336
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(2,572,443)	(1,815,367)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	101,136	(100,913)
Այլ ակտիվներ	(51,572)	14,574
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Այլ պարտավորություններ	9,650	(10,775)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	(1,102,873)	(1,150,145)
Վճարված շահութահարկ	(74,440)	(115,421)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	(1,177,313)	(1,265,566)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների առք	(78,278)	(10,942)
Բռնագանձված գրավների իրացում	-	57,600
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացում	165,038	
Վաճառքի համար մատչելի ներդրումների ձեռքբերում	(3,194,725)	-
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	(3,107,965)	46,658

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	-	500,000
Մուտքեր պարտքային արժեթղթերի թողարկումից	783,860	686,510
Թողարկված պարտատոմսերի մարում	(486,864)	(100,000)
Վարկերի և փոխառությունների ստացում	5,981,354	9,633,179
Վարկերի և փոխառությունների մարում	(1,962,876)	(8,795,581)
Վճարված շահաբաժիններ	(310,000)	(300,000)
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	4,005,474	1,624,108
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	(279,804)	405,200
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	490,358	82,174
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	3,080	2,984
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (ծանոթ.14)	213,634	490,358

13-ից 72 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» Ունիվերսալ վարկային կազմակերպութուն ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է 2010թ. Հոկտեմբերի 26-ին «Վաշինգթոն Քափիթալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ և «Կրեդիտ Յունիոն» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի միաձուլման արդյունքում և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Ընկերությունը գրանցվել է 2010թ. Հոկտեմբերի 26-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N 35 արտոնագրային համարով:

Ընկերության հիմնական գործունեությունը միկրո և միջին չափի վարկերի տրամադրումն է անհատներին և իրավաբանական անձանց Հայաստանի Հանրապերտությունում:

Ընկերության գրասենյակը գտնվում է Երևանում: Ընկերությունը մասնաճյուղեր չունի: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Սասնա Ծռեր 2 շենք, թիվ 251 տարածք:

2 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական ու տնտեսական բարեփոխումները, և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս բարփոխումներից, ինչպես նաև Եվրասիական Տնտեսական Միությունում զարգացումներից, որի հետ շարունակվում է ՀՀ տնտեսության ինտեգրումը:

Ընկերության ղեկավարությունը կարծում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Ընկերության տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ընկերությունը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Ընկերության հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Ընկերության գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Ընկերությունը: Ընկերության գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

2017թ. ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերության ղեկավարությունը վերաներկայացրել է 2016թ. և 2015թ. ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները: Վերաներկայացման համար հիմք է հանդիսացել Ընկերության վաճառքի համար մատչելի արժեթղթերի վերագնահատման պահուստի, Ընկերության կողմից ներգրավված միջոցների ամորտիզացված արժեքների (ներառյալ նշված կետերի հետ կապված հետաձգված հարկերի) վերահաշվարկումը:

Տարաժամկետ վճարման պայմանով վաճառված գույքի գծով ձևավորված դեբիտորական պարտքերը «այլ ակտիվներից» և ֆակտորինգի գծով ստացվելիք գումարիները վերադասակարգվել են և սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացվել են «Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ» հոդվածում:

Ֆինանսական հաշվետվությունները, նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունը ներառյալ, ներկայացված են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը: Ֆինանսական հաշվետվությունների համադրելի տեղեկատվության նախորդող ժամանակաշրջաններին վերաբերող ուղղման գումարը ճշգրտվում է ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանում: Այնուամենայնիվ, կատարված ուղղումն ազդեցություն չի ունեցել 2015թ. ֆինանսական արդյունքի վրա:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Վերահաշվարկ	Վերադասա-կարգում	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերահաշվարկված)
Ակտիվներ				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	10,951,178	-	51,952	11,003,130
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	25,507	-	(25,507)	-
Հետաձգված հարկային ակտիվ	4,120	1,196	-	5,316
Այլ ակտիվներ	49,947	-	(26,445)	23,502
Պարտավորություններ և սեփական կապիտալ				
Վարկեր և փոխառություններ	8,903,132	(7,318)	-	8,895,814
Այլ պահուստներ	22,746	(13,873)	-	8,873
Չբաշխված շահույթ	293,428	22,387	-	315,815

Հազար ՀՀ դրամ

	2016թ. հունվարի 1-ի դրությամբ	Վերադասա-կարգում	2016թ. հունվարի 1-ի դրությամբ (վերահաշվարկված)
Ակտիվներ			
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	9,578,051	105,678	9,683,729
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	70,473	(70,473)	-
Այլ ակտիվներ	64,343	(35,205)	29,138

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	Վերահաշվարկ	Վերադասա-կարգում	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (վերահաշվարկված)
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	1,795,155	17,341	-	1,812,496
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(788,713)	7,318	-	(781,395)
Զուտ առևտրային եկամուտ	19,146	-	(12,517)	6,629
Այլ եկամուտներ	138,905	-	12,517	151,422
Շահութահարկի գծով ծախս	(82,181)	(2,272)	-	(84,453)

3.5 Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընթացիկ տարում Ընկերությունն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2017թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Ընկերությունն ավելի վաղ չէր ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որն ուժի մեջ էր մտել, բայց դեռ չէր կիրառվել: Չնայած ներքոհիշյալ ստանդարտներն ու փոփոխություններն առաջին անգամ կիրառվել են 2017թ-ին՝ դրանք որևէ էական ազդեցություն չունեն Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *Բացահայտման նախաձեռնություն (ՀՀՄՍ 7 փոփոխություններ)*
- *Հետաձգված հարկային ակտիվների ճանաչում չիրացված կորուստների համար (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*
- *2012-2014թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ տարբեր չափանիշներով (ՖՀՄՍ 12 փոփոխություններ)*

3.6 Ընկերության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

ՖՀՄՍ 9, Ֆինանսական գործիքներ (2014)

2014թ. հուլիսին Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (ՀՀՄՍԽ) թողարկել է ՖՀՄՍ 9-ի («Ֆինանսական գործիքներ») վերջնական տարբերակը: ՖՀՄՍ 9-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող

տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ նախապես կիրառելու թույլտվությամբ: Այն փոխարինում է *ՀՀՄՍ 39-ին («Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը»)*:

2017թ. հոկտեմբերին ՀՀՄՍԽ-ն թողարկել է *«Բացասական փոխհատուցմամբ կանխավճարի առանձնահատկությունները»* (ՖՀՄՍ 9 փոփոխություններ): Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2019թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ նախապես կիրառելու թույլտվությամբ:

Ընկերությունը կկիրառի 2014թ. հուլիսին թողարկված ՖՀՄՍ 9-ը սկզբնապես 2018թ. հունվարի 1-ին և նույն ամսաթվին կընդունի նաև 2017թ. հոկտեմբերին ՀՀՄՍԽ-ի թողարկած ՖՀՄՍ 9 փոփոխությունները:

Նոր ստանդարտի կիրառումը կարող է էական ազդեցություն ունենալ Ընկերության սեփական կապիտալի սկզբնական մնացորդի վրա 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

Ընկերության գնահատումը դեռ նախնական է, քանի որ ոչ բոլոր անցումային աշխատանքներն են ավարտված: Մասնավորապես Ընկերությունը դեռ չի ավարտվել ՖՀՄՍ 9-ի պահանջներին համապատասխան հաշվապահական գործընթացների վերանայման և ներքին վերահսկողության փոփոխությունների աշխատանքները, ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկման մոդելների մշակումը և ամփոփումը, ինչպես նաև կարող են փոփոխվել նոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, կիրառված ենթադրությունները, դատողությունները և գնահատման մեթոդները մինչև Ընկերությունը կամփոփի իր առաջին ֆինանսական հաշվետվությունները, որոնք կներառեն սկզբնական կիրառման ամսաթիվը:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգում

ՖՀՄՍ 9-ը ներառում է ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման նոր մոտեցում, որը արտացոլում է այդ ակտիվների կառավարման համար օգտագործվող բիզնես մոդելը և դրանց հետ կապված դրամական միջոցների հոսքերի առանձնահատկությունները:
ՖՀՄՍ 9-ը ֆինանսական ակտիվների համար ներառում է երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող (FVTPL):
Ընկերությունը, բաժնային գործիքների համար, որոնք չեն պահվում առևտրային նպատակներով, սկզբնական ճանաչման պահին կարող է կատարել իրականան արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (FVOCI) չափելու անհակադարձելի ընտրություն: Այս ընտրությունը յուրաքանչյուր ներդրման համար կատարվում է առանձին:
Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվները դասակարգվում են վերը նշված դասերից մեկում: ՖՀՄՍ 9-ի կիրառմամբ դադարեցվում են ՀՀՄՍ 39-ով սահմանվող՝ մինչև մարման ժամկետը պահվող, վարկեր և դեբիտորական պարտքեր, վաճառքի համար մատչելի և իրական արժեքով՝ շահույթ կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների դասակարգումները:

ՖՀՄՍ 9-ը կանդրադառնա 1 հունվարի 2018թ-ի դրությամբ պահվող ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վրա հետևյալ կերպ.

- Հաճախորդներին տրված վարկերը, որոնք ՀՀՄՍ 39-ի համաձայն դասակարգված են որպես վարկեր և դեբիտորական պարտքեր և չափվում են ամորտիզացված արժեքով, համաձայն ՖՀՄՍ 9-ի ընդհանուր առմամբ նույնպես կչափվեն ամորտիզացված արժեքով,
- Մինչև մարման ժամկետը պահվող պարտքային գործիքները (արժեթղթերը), որոնք ՀՀՄՍ 39-ի համաձայն չափվում են ամորտիզացված արժեքով, համաձայն ՖՀՄՍ 9-ի ընդհանուր առմամբ նույնպես կչափվեն ամորտիզացված արժեքով,
- ՀՀՄՍ 39-ի համաձայն վաճառքի համար մատչելի դասակարգված պարտքային գործիքները, համաձայն ՖՀՄՍ 9-ի կչափվեն ամորտիզացված արժեքով, իրականան արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (FVOCI) կամ իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով (FVTPL)՝ կախված կոնկրետ հանգամանքներից,

- Բաժնային գործիքների մեծ մասը, որոնք համաձայն ՀՀՄՍ 39-ի դասակարգված են որպես վաճառքի համար մատչելի, համաձայն ՖՀՄՍ 9-ի կչափվեն իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (FVOCI):

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ դասակարգման և չափման գնահատումը պարտադիր չէ, որ կներկայացնի ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա այնպես, ինչպես կլինի 2018թ-ի հունվարի 1-ին, քանի որ ՖՀՄՍ 9-ը պահանջում է, որ բիզնես մոդելի գնահատումը կատարվի սկզբնական կիրառման օրվա դրությամբ գոյություն ունեցող փաստերի և հանգամանքների հիման վրա, որը Ընկերության համար հանդիսանալու է 2018թ-ի հունվարի 1-ը:

ՖՀՄՍ 9-ը հիմնականում պահպանում է ֆինանսական պարտավորությունների դասակարգման համար ՀՀՄՍ 39-ի ներկա պահանջները:

Այնուամենայնիվ, համաձայն ՀՀՄՍ 39-ի ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի բոլոր փոփոխությունները սահմանված իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով (FVTPL-ով)՝ ճանաչվում են շահույթ և վնասում, մինչդեռ ՖՀՄՍ 9-ի համաձայն իրական արժեքի այդ փոփոխությունները հիմնականում կներկայացվեն հետևյալ կերպ.

- Պարտավորության սեփական վարկային ռիսկին վերագրելի իրական արժեքի փոփոխության գումարը կներկայացվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (OCI), և
- իրական արժեքի փոփոխության մնացած գումարը կներկայացվի շահույթ և վնասում:

Ֆինանսական ակտիվների, վարկերի տրամադրման պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի արժեզրկում

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ի «կրած կորուստների» մոդելը՝ ապագայի վրա հիմնված «ակնկալվող պարտքային կորուստների» մոդելով: Նոր արժեզրկման մոդելի կիրառումը Ընկերությունից կպահանջի զգալի մասնագիտական դատողություններ, թե ինչպես են տնտեսական գործոնների փոփոխություններն ազդում հավանականությամբ կշռված ակնկալվող պարտքային կորուստների վրա:

Բանկը ակնկալվող պարտքային կորուստների պահուստ կճանաչի ստորև նշված այն ֆինանսական գործիքների գծով, որոնք չեն հանդիսանում իրական արժեքով շահույթի և վնասի միջոցով հաշվառվող.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ,
- այլ համապարփակ եկամտի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ,
- վարձակալության գծով դեբիտորական պարտքեր,
- վարկերի տրամադրման պարտավորվածություններ,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր:

ՖՀՄՍ 9-ի համաձայն բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջները բարդ են և կպահանջեն ղեկավարության դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, հատկապես հետևյալ ոլորտներում.

- գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի վարկային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էական է աճել,
- ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մեջ կանխատեսվող մակրոտնտեսական տեղեկատվության ընդգրկում,
- դեֆոլտի սահմանում:

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման հիմնական մուտքային տարրերն են հանդիսանալու հետևյալ փոփոխականները.

- դեֆոլտի հավանականություն (PD),
- դեֆոլտի դեպքում վնասի գործակից (LGD),

- դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD):

Ընկերությունը այս ցուցանիշները կստանա ներքին վիճակագրական մոդելներից և այլ պատմական տվյալներից, որոնք օգտագործվում են կարգավորող մոդելներում: Կանխատեսվող տեղեկատվությունը արտացոլելու համար՝ դրանք կճշգրտվեն:

ՖՀՄՍ 9-ի ուժի մեջ մտնելու հետ կապված Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա ամենաէական ազդեցությունն ակնկալվում է, որ կլինի արժեզրկման նոր պահանջների հետևանքով: ՖՀՄՍ 9-ի նոր արժեզրկման մոդելի կիրառումը կհանգեցնի ֆինանսական գործիքների համար արժեզրկումից կորուստների ավելացմանը և փոփոխականությանը: Արժեզրկման նոր պահանջները առավել մեծ ազդեցություն կունենան երկարաժամկետ չապահովված վարկային գործիքների կորուստների պահուստի վրա:

Անցումային դրույթներ

ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները հիմնականում կկիրառվեն հետադարձ, բացառությամբ ստորև նշված դեպքերի.

- Ընկերությունը օգտվում է ընտրության առավելությունից, որը թույլ է տալիս չվերահաշվարկել նախորդ ժամանակաշրջանների համեմատական տվյալները ֆինանսական գործիքների դասակարգման և գնահատման (ներառյալ արժեզրկման) փոփոխությունների առումով: ՖՀՄՍ 9-ի ընդունման արդյունքում առաջացող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքների տարբերությունները հիմնականում ճանաչվելու են չբաշխված շահույթում և պահուստներում 2018թ-ի հունվարի 1-ի դրությամբ:
- Կիրականացվեն գնահատումներ այն փաստերի և հանգամանքների հիման վրա, որոնք առկա են սկզբնական կիրառման օրվանից՝ որոշելու բիզնես մոդելը, որի շրջանակում պահվում է ֆինանսական ակտիվը:

Եթե պարտքային գործիքները 2018թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեն ցածր վարկային ռիսկ, ապա Ընկերությունը որոշելու է, որ վարկային ռիսկը էական չի աճել սկզբնական ճանաչումից հետո:

ՖՀՄՍ 15, Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

ՖՀՄՍ 15-ը ներկայացնում է հասույթի ճանաչման նոր պահանջներ՝ փոխարինելով *ՀՀՄՍ 18 «Հասույթ», ՀՀՄՍ 11 «Կառուցման պայմանագրեր»,* և որոշ հասույթի հետ կապված մեկնաբանություններ: Նոր ստանդարտը սահմանում է հսկողության վրա հիմնված հասույթի ճանաչման մոդել և տրամադրում է հավելյալ ուղղորդում մանրամասնորեն չլուսաբանված տարբեր բնագավառներում գործող ՖՀՄՍ-ների ներքո, այդ թվում, թե պայմանավորվածությունների համար ինչպես հաշվառել բազմաթիվ կատարողական պարտավորությունները, փոփոխական գնագոյացումը, հաճախորդների փոխհատուցման իրավունքները, մատակարարների հետգնման տարբերակները և այլ ընդհանուր բարդություններ:

ՖՀՄՍ 15-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջաններում: Ընկերության ղեկավարությունը դեռ չի գնահատել ՖՀՄՍ 15-ի ազդեցությունը այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 16, Վարձակալություն

ՖՀՄՍ 16-ը ներկայացնում է վարձակալության հաշվառման նոր պահանջներ և փոփոխություններ: ՖՀՄՍ 16-ը սահմանում է, որ վարձակալները պետք է հաշվառեն վարձակալությունները «հաշվապահական հաշվեկշռում»՝ ճանաչելով «օգտագործման իրավունքը» որպես ակտիվ և վարձակալության գծով համապատասխան պարտավորությունը:

Միևնույն ժամանակ ՖՀՄՍ 16-ը՝

- փոփոխում է վարձակալության սահմանումը,
- սահմանում է ակտիվի և պարտավորության հաշվառման պահանջներ, այդ թվում՝ այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են ոչ-վարձակալական տարրերը, փոփոխվող վարձակալական վճարները և արտոնյալ (օպցիոն) ժամանակաշրջանները;
- ազատման հնարավորություն է տալիս կարճաժամկետ վարձակալությունների և ցածրարժեք ակտիվների համար,
- փոխում է «վաճառք հետադարձ վարձակալությամբ» պայմանավորվածությունների հաշվառումը,
- մեծապես պահպանում է ՀՀՄՍ 17-ի մոտեցումը՝ վարձատուների հաշվառման մասով;
- ներկայացնում է նոր բացահայտման պահանջներ:

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի վաղաժամկետ կիրառումը՝ պայմանով, որ ՖՀՄՍ 15-ը *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»*, նույնպես կիրառվի: Ընկերության ղեկավարությունը դեռևս չի գնահատել ՖՀՄՍ 16-ի ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այլ ստանդարտներ

Հետևյալ փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները զգալի ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- 2014-2016թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ-ՖՀՄՍ 1 և ՀՀՄՍ 28 փոփոխություններ (ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին)
- ՖՀՄՄԿ 22 «Արտարժույթով գործարքներ և կանխավճարներ» (ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին)
- ՖՀՄՄԿ 23 «Անորոշություն շահութահարկի մոտեցումների շուրջ» (ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին)

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող կամ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող գործիքների, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարչական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան: Ակտիվների կառավարման գծով վճարները ճանաչվում են ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում: Նույն սկզբունքն է կիրառվում կարողությունների կառավարման, ֆինանսական պլանավորման և ակտիվների պահպանման ծառայությունների դեպքում, որոնք ենթադրում են ծառայությունների մատուցման երկար ժամկետ:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից և արտարժութային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

4.2 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված վաճառքի համար մատչելի դրամային արժեթղթերի իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերություններ միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են սեփական կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսերը, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ վաճառքի

համար մատչելի դասակարգված բաժնետոմսերը, ընդգրկվում են կապիտալի վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	2017թ. դեկտեմբերի 31	2016թ. դեկտեմբերի 31	2016թ. հունվարի 1
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	484.10	483.94	483.75
ՀՀ դրամ/1 Եվրո	580.10	512.20	528.69

4.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում ընկերություններն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից և այլ բանկերում հաշիվներից:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.5 Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Ֆինանսական կազմակերպություններին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Ընկերության ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.6 Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է միայն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառված նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Ընկերության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են՝ ըստ հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական արդյունքներով ճշգրտվող, իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ,
- վարկեր և դեբիտորական պարտքեր,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Ընկերության ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա հաշվի առնելով ձեռքբերման նպատակները: Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության և հնարավորության դեպքում՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Այս կատեգորիայում հաշվառվում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները: Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս կատեգորիայում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով կամ եթե այդպես է որոշվում ղեկավարության կողմից նշված ակտիվի ձեռք բերման պահին:

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Ընկերությունը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, ֆորվարդներ, սվոպեր և օպցիոններ: Բոլոր ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող և դրանց հաշվառումը իրականացվում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք վերաչափվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշումներով կամ այնպիսի մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն:

Այլ ֆինանսական գործիքների բաղադրիչ հանդիսացող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ, եթե դրանց գծով ռիսկերը և առանձնահատկությունները խիստ կապված չեն հիմնական պայմանագրի ռիսկերից և առանձնահատկություններից, և հիմնական պայմանագիրը չի հաշվառվում իրական արժեքով՝ ճշգրտվող ֆինանսական արդյունքներով: Ներառված ածանցյալ գործիքը հանդիսանում է բարդ ֆինանսական գործիքի բաղադրիչ, որը ներառում է ինչպես հիմնական բաղադրիչը, այնպես էլ ածանցյալ բաղադրիչը, ինչի արդյունքում որոշ դրամական միջոցների հոսքեր հիմնական գործիքի և ինքնուրույն ածանցյալ գործիքի փոփոխվում են նույն ձևով:

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները դասակարգվում են որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, երբ

- Այդպես վարվելը զգալիորեն կնվազեցնի չափման անհամապատասխանությունները, որոնք կառաջանային, եթե կապված ածանցյալ գործիքները համարվեին առևտրական նպատակներով պահվող, իսկ հիմք հանդիսացող ֆինանսական գործիքները հաշվառվեին ամորտիզացված գումարով, ինչպես վարկերը կամ հաճախորդներին և բանկերին տրվող կանխավճարները, կամ պարտքային արժեթղթերի տեսքով թողարկված արժեթղթերը:
- Որոշ ներդրումներ, ինչպես օրինակ կապիտալի գործիքներում կատարված ներդրումները, որոնք փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային քաղաքականության համաձայն հաշվառվում են իրական արժեքով և կառավարչական անձնակազմին հաղորդվում են այդ արժեքով, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, և
- Ֆինանսական գործիքները, ինչպես պարտքային արժեթղթերը, որոնք պարունակում են մեկ կամ ավելի բաղադրիչ ածանցյալ գործիքներ, որոնք էականորեն ազդում են դրամական միջոցների հոսքերի վրա, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող:

Ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող, բացի այն դեպքերից, երբ դրանք օգտագործվում են հեջավորման նպատակով: Առևտրային նպատակներով պահվող ակտիվներից շահույթը և վնասը արտացոլվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Ընկերության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ակտիվները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Ընկերությունը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և որոնք կարող են վաճառվել իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույքներում, փոխարժեքներում կամ բաժնետոմսերի գներում փոփոխությունների դեպքում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած օգուտն ու վնասը վերագրվում է սեփական կապիտալին մինչև ֆինանսական ակտիվի օտարումը կամ արժեզրկումը, որի դեպքում կապիտալում ճանաչված օգուտը կամ վնասը վերաձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ամեն դեպքում, տոկոսները հաշվարկվում են արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահաբաժինները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են այն ժամանակ, երբ Ընկերությունը իրավունք է ձեռք բերում ստանալու այդ շահաբաժինները:

Ակտիվ ֆինանսական շուկաներում գործող Ֆինանսական ակտիվի իրական արժեքը հաշվետու ամսաթվին բորսայի փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գինն է: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը որոշվում է գնային մոդելների կամ զեղչված դրամական միջոցների հոսքերի տեխնիկայի միջոցով: Հակառակ դեպքում ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կորուստները:

4.7 Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով Ընկերությունն իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին՝ որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Արժեզրկումից կորստի օբյեկտիվ վկայության գոյությունը որոշվում է որոշ չափանիշներով, որոնք վկայում են, որ վարկառուն կամ վարկառուների խումբն ունեն զգալի ֆինանսական դժվարություններ (օրինակ՝ կապիտալի նորմատիվ, զուտ եկամտի և վաճառքների հարաբերակցություն), առկա են տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների, վարկային համաձայնության կամ պայմանների խախտումներ, գրավի արժեքի նվազում, հավանականություն, որ կլինի սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում և կա տեղեկատվություն ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի չափելի նվազման վերաբերյալ՝ կապված տնտեսական պայմանների փոփոխություններով, որոնք ազդում են վարկառուի և չվճարումների վրա:

Ընկերությունը սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են վարկային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում:

Երբ առկա է վկայություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վերաբերյալ, արժեզրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, արժեզրկումից ծախսը արտացոլվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեզրկումից ծախս չափելու համար զեղչման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Ընկերությունը կարող է արժեզրկումը չափել գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Ապահովված ֆինանսական ակտիվների դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքը ներառում է գրավների իրացումից փոխհատուցվող գումարները, հանած գրավի ձեռքբերման և իրացման ծախսերը, անկախ նրանից, թե գրավը կփոխանցվի Ընկերությանը, թե ոչ:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով, ֆինանսական ակտիվները խմբավորվում են Ընկերության ներքին վարկային դասակարգման հիման վրա, որը հաշվի է առնում վարկային ռիսկի բնութագրիչները, ինչպես՝ ակտիվի տեսակը, արդյունաբերական ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետանց կարգավիճակը և այլ կապակցված գործոններ:

Ֆինանսական ակտիվների ապագա դրամական միջոցների հոսքերը, որոնց արժեզրկումը խմբային է գնահատված, որոշվում են խմբում գտնվող ակտիվների պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և նմանատիպ ակտիվների պատմական ծախսերի պրակտիկայի հիման վրա: Վերջինս ճշգրտվում է ընթացիկ տեսանելի տեղեկատվությամբ, որպեսզի արտացոլվեն ներկա պայմանները, որոնք չեն ազդել այն ժամանակահատվածում, որի վրա հիմնված է պատմական ծախսերի պրակտիկան, և պատմական ժամանակաշրջանում ներկայում գոյություն չունեցող պայմանների հետևանքները չեզոքացնելու նպատակով:

Ակտիվների խմբերի ապագա դրամական միջոցների հոսքերում փոփոխությունների գնահատականը պետք է արտացոլի և համապատասխան լինի դրանց հետ կապված տեսանելի տվյալների ժամանակաշրջանից ժամանակաշրջան փոփոխությունների հետ (օրինակ՝ փոփոխություններ գործազրկության դրույքներում, գույքի գնի, վճարումների կարգավիճակի կամ խմբում կորուստների հավանականությունը մատնանշող այլ գործոնների և կորուստների ծավալների մեջ): Ապագա դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդոլոգիան և վարկածները պարբերաբար վերանայվում են Ընկերության կողմից՝ կորուստների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու համար:

Վարկերը համապատասխան պահուստների հետ միասին դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել Ընկերությանը: Եթե հաջորդող տարում, գնահատված արժեզրկման ծախսը ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ծախսը ավելացվում կամ նվազեցվում է պահուստի գումարը ճշտելով: Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստները ֆինանսական հաշվետվություններում ձևավորվել են գոյություն ունեցող տնտեսական պայմանների հիման վրա: Ընկերությունը չի կարող կանխատեսել՝ ինչպես Հայաստանում կարող են փոխվել տնտեսական պայմանները, և ինչ ազդեցություն կարող են ունենալ այդ փոփոխությունները ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստների ճշտության վրա հետագա ժամանակաշրջաններում:

Վերանայված վարկեր

Որտեղ հնարավոր է, Ընկերությունը փորձում է վերանայել վարկերը, քան բռնագանձել գրավը: Սա կարող է հանգեցնել վճարումների երկարաձգումների և վարկի մարման նոր պայմանների մասին համաձայնության: Երբ վարկի պայմանները վերանայված են, վարկն այլևս չի համարվում ժամկետանց: Ղեկավարությունը շարունակաբար վերանայում է վերանայված պայմաններով վարկերը, համոզվելու համար, որ բոլոր համաձայնությունները պահպանված են և որ ապագա վճարումները կկատարվեն: Վարկերը շարունակում են մնալ արժեզրկման անհատական կամ խմբային գնահատման առարկա՝ օգտագործելով վարկի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Երբ վաճառքի համար մատչելի ակտիվն արժեզրկվում է, ապա նրա արժեքի (նվազեցված մարումների և ամորտիզացիայի գումարներով) և ընթացիկ իրական արժեքի տարբերությունը, բացառությամբ նախկինում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված արժեզրկումից գումարների, այլ համապարփակ եկամուտներից վերաձևակերպվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վաճառքի համար մատչելի դասակարգված կապիտալ գործիքների արժեզրկումից կորուստների հակադարձումը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չի ճանաչվում, այլ հաշվառվում է կապիտալի առանձին բաժնում, որպես՝ այլ համապարփակ եկամուտ: Վաճառքի համար մատչելի պարտքային գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից

կորուստների հակադարձումը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե ակտիվի իրական արժեքի բարձրացումը օբյեկտիվորեն կարելի է համարել հետագա իրադարձությունների արդյունք, որոնք կատարվել են կորուստը ֆինանսական արդյունքներով ճանաչելուց հետո:

4.8 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- վերանում է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,
- Ընկերությունը փոխանցում է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն,
- և Ընկերությունը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Ընկերությունը փոխանցում է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցում ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը հաշվառվում է Ընկերության շարունակվող մասնակցության համապատասխան ֆինանսական ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, ապա այդպիսի մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ ակտիվի հաշվեկշռային արժեք կամ Ընկերության կողմից փոխհատուցվելիք առավելագույն գումար:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի դուրս գրված վաճառքի և/կամ գնման օպցիոնի ձև (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Ընկերությունը կարող է հետ գնել փոխանցվող ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված դուրսգրված վաճառքի օպցիոնի (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցվող ակտիվի իրական արժեքը կամ օպցիոնի կատարման գինը:

Իր գործառնական գործունեության ընթացքում Ընկերությունը արժեթղթավորում է ֆինանսական ակտիվներ, հիմնականում վաճառելով այդ ակտիվները հատուկ նշանակության կազմակերպությունների, որոնք արժեթղթեր են թողարկում ներդրողների համար: Կարող է անհրաժեշտություն առաջանալ փոխանցված ակտիվների ամբողջական կամ մասնակի ապաճանաչման: Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ պետք է հղում կատարվի «Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման» մասին: Արժեթղթավորված ֆինանսական ակտիվների տոկոսները կարող են պահվել Ընկերության կողմից և նախապես դասակարգվել որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, իսկ շահույթը կամ վնասը ներկայացվել «Զուտ առևտրային եկամուտ» հոդվածում: Արժեթղթավորումներից եկամուտները կամ ծախսերը հիմնված են ապաճանաչված ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքի և պահված մասնակցության իրական արժեքի վրա:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4.9 Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը գրանցվում է որպես առևտրային պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

4.10 Որպես գրավ տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերով գործարքները հիմնականում ապահովվում են արժեթղթերով կամ կանխիկ դրամով: Արժեթղթերի փոխանցումը մյուս կողմին արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, միայն եթե փոխանցվում են նաև ռիսկերը և օգուտները կապված սեփականության իրավունքի փոխանցման հետ: Վճարված կամ որպես գրավ ստացված կանխիկը գրանցվում է որպես ակտիվ կամ պարտավորություն:

Ձեռքբերված արժեթղթերը չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին, որի դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով որպես առևտրական նպատակներով պարտավորություն, իսկ գնման և վաճառքի տարբերությունը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Զուտ առևտրային եկամուտ» հոդվածում:

4.11 Վարձակալություն

Գործառնական վարձակալություն – Ընկերությունը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

4.12 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Համակարգիչներ և կապի միջոցներ	3	33.33
Տրանսպորտային միջոցներ	5	20
Այլ հիմնական միջոցներ	1-5	20-100

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ այդ ծախսումները բավարարում են ակտիվի չանաչման չափանիշներին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

4.13 Գուդվիլ

Ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը սկզբնապես ճանաչվում է որպես փոխանցված հատուցման և ձեռքբերված որոշելի զուտ ակտիվների և ստանձնած պարտավորությունների տարբերություն:

Սկզբնական ճանաչումից հետո գուդվիլը հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները:

Գուդվիլը գնահատվում է արժեզրկման տեսանկյունից յուրաքանչյուր տարի կամ ավելի հաճախ, եթե ինչ-որ իրադարձություններ կամ հանգամանքների փոփոխություններ վկայում են հաշվեկշռային արժեքի արժեզրկման մասին:

Ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը« արժեզրկման տեսանկյունից գնահատելու նպատակով «ձեռքբերման ամսաթվից սկսած բաշխվում է Ընկերության դրամաստեղծ միավորների կամ դրամաստեղծ միավորների խմբերի միջև ,որոնք ակնկալվում է որ ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում կստանան օգուտներ: Յուրաքանչյուր դրամաստեղծ միավոր կամ դրամաստեղծ միավորների խումբ, որին վերաբերում է գուդվիլը պետք է

- իրենից ներկայացնի ներքին կառավարման նպատակով գուդվիլի վերլուծության տեսանկյունից Խմբի կազմում առավել ցածր մակարդակի վարչական միավոր

- մինչ միավորումը չգերազանցի գործառնական սեգմենտի սահմանումը համաձայն ՖՀՄՍ 8 «Գործառնական սեգմենտներ» ստանդարտի:

Գուդվիլի արժեզրկումը գնահատվում է դրամաստեղծ միավորների (կամ դրամաստեղծ միավորների խմբի) փոխհատուցվող արժեքի հիման վրա: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են, եթե դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող արժեքը: Գուդվիլի արժեզրկումից կորուստները հետագայում չեն հակադարձվում:

4.14 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն: Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 13-ից 15 տարվա ընթացում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.15 Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.16 Ներգրաված միջոցներ

Ներգրաված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների հաշիվները, թողարկված արժեթղթերը սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրաված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ

ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.17 Ֆինանսական երաշխիքներ

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիքը տրամադրողը փոխհատուցի երաշխիքը ստացողին կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Նման ֆինանսական երաշխիքներ տրամադրվում են բանկերին, ֆինանսական և այլ կազմակերպություններին հաճախորդների վարկերը, օվերդրաֆտները և այլ բանկային գործիքները ապահովելու նպատակով:

Ֆինանսական երաշխիքները ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով «Այլ պարտավորություններ»-ում՝ որպես կոմիսիոն վճար: Սկզբնական ճանաչումից հետո Ընկերությունը յուրաքանչյուր երաշխավորության տակ պարտավորությունը չափում է ամորտիզացված վճարից և երաշխավորության արդյունքում առաջացած ցանկացած ֆինանսական պարտավորություն լուծելու համար անհրաժեշտ ելքերի լավագույն գնահատումից առավելագույնով:

4.18 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

4.19 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Վաճառքի համար մատչելի ներդրումների վերագնահատման պահուստ

Այս պահուստը արտացոլում է վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունները:

4.20 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ, կամ մի խումբ համանման գործարքների օգուտի և վնասի համար, ինչպիսին հանդիսանում է Ընկերության առևտրային գործունեությունը:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 0):

Ներդրումային արժեթղթերի դասակարգում

Ընկերության ներդրումային արժեթղթերը ներառում են պետական պարտատոմսերը, ոչ պետական բաժնետոմսերը: Սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը դասակարգում է արժեթղթերը որպես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականացվում է կապիտալում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը

զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Ածանցյալ գործիքներ

Ակտիվ շուկայում չհաշվառվող ֆինանսական ածանցյալ գործիքների իրական արժեքները սահմանվում են գնահատման մեթոդների կիրառմամբ: Ածանցյալ գործիքների գնահատումը ներառվում է մեկ արժութային տոկոսադրուքի սվոպի, բազմարժութային տոկոսադրույքի սվոպի գործարքներում և փոխարժեքի ֆորվարդային պայմանագրերում: Այս գործարքների իրական արժեքը սահմանվում է որպես հաստատուն դեբիտորական պարտքերի և լողացող պարտավորության ներկա արժեքների միջև տարբերություն կամ հակառակը: Լողացող պարտավորության ներկա արժեքը սահմանվում է ըստ զրոյական արժեկտրոնային կորից ստացված զեղչային գործոնների: Եթե գնահատման մեթոդները կիրառվում են իրական արժեքը սահմանելու համար, դրանք հաստատվում կամ պարբերաբար վերլուծության են ենթարկվում որակավորված մասնագետների կողմից՝ անկախ առաջացման պայմաններից: Այնքանով, որքանով գործնականում հնարավոր է, մոդելները կիրառում են միայն դիտարկելի տվյալները, այնուամենայնիվ, այնպիսի ոլորտներում, ինչպիսին պարտքային ռիսկն է (ինչպես սեփականատիրոջ, այնպես էլ պայմանագրային գործընկերոջ), փոփոխականությունները և կոռելյացիաները պահանջում են Ղեկավարության գնահատականը: Այս ապագա դրամական միջոցներից ցանկացածի գերագնահատումը և թերագնահատումը կարող է պահանջել այս ածանցյալների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտում:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Ընկերությունը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

Վարկերի և այլ փոխատվությունների արժեզրկում

Ընկերությունը գնահատում է խնդրահարույց վարկերը և փոխատվությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք առկա են արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական միջոցների հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբեր լինել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

Նշանակալի վարկերի և փոխատվությունների համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Ընկերությունը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ, այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության

մեջ և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թերությունները կամ դրամական միջոցների հոսքերի նվազումները:

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես՝ 26 ծանոթագրությունը:

Կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումների արժեզրկում

Ընկերությունը համարում է կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումն արժեզրկված, երբ դրա իրական արժեքի նվազումը էական է կամ կրում է երկարատև բնույթ: Որոշելու համար էական է կամ երկարատև նվազումը՝ Ընկերությունը կատարում է որոշակի դատողություններ: Այդ դատողությունները կատարելիս, այլ գործոնների հետ մեկտեղ, Ընկերությունը հաշվի է առնում նաև բաժնետոմսերի գնի փոփոխականությունը: Բացի դրանից, արժեզրկումը հնարավոր է, երբ առկա են ապացույցներ, որ վատացել է ֆինանսական վիճակը տվյալ կազմակերպության, արդյունաբերության կամ ճյուղի, որտեղ կատարվել է ներդրումը, կատարվել են փոփոխություններ տեխնոլոգիաներում և գործառնական կամ ֆինանսական դրամական միջոցների հոսքերում:

Գուդվիլի արժեզրկում

Ընկերությունը գնահատում է գուդվիլը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք առկա են արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ: Գուդվիլի արժեզրկումը գնահատվում է դրամաստեղծ միավորների փոխհատուցվող արժեքի հիման վրա:

6 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2017	2016 (վերահաշվարկված)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	139	1,481
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	2,530,830	1,752,358
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	113,671	39,519
Հակադարձ ռեպո գործառնություններ	1,919	9,676
Անհատապես արժեզրկված ակտիվների գծով հաշվեգրված տոկոսներ	61,139	9,462
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	2,707,698	1,812,496

Թողարկված պարտքային արժեթղթեր	118,189	59,060
Վարկեր և փոխառություններ	790,546	722,257
Ռեպո գործառնություններ	23,790	78
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	932,525	781,395

7 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Դրամարկղային գործառնություններ	14,749	1,596
Ապահովագրական գործակալի գործունեություն	7,562	5,123
Ֆակտորինգ	4,692	11,863
Երաշխիքներ	7,150	5,714
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	225	208
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	34,378	24,504
Վճարահաշվարկային ծառայություններ	28,342	9,312
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	28,342	9,312

8 Զուտ առևտրային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2017	2016 (վերահաշվարկված)
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ	8,510	5,142
Ածանցյալ գործիքներից զուտ եկամուտ	-	1,487
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	8,510	6,629

9 Այլ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2017	2016 (վերահաշվարկված)
Ստացված տույժեր և տուգանքներ	198,395	136,157
Հիմնական միջոցների վաճառքից զուտ եկամուտ	-	429
Ոչ առևտրային ակտիվների արտարժույթի փոխարկումից զուտ եկամուտ	825	12,517
Այլ եկամուտ	2,194	2,319
Ընդամենը այլ եկամուտներ	201,414	151,422

10 Արժեզրկման ծախս

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին (ծանոթագրություն 17)	811,462	390,902
Այլ ակտիվներ (ծանոթագրություն 21)	12,666	6,628
Ընդամենը ակտիվների արժեզրկման ծախս	824,128	397,530

11 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Աշխատակիցների հատուցումներ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	297,677	222,714
Անձնակազմի ուսուցման ծախսեր	402	410
Անձնակազմի գծով այլ ծախսեր	61	-
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	298,140	223,124

12 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Գովազդի ծախսեր	58,833	40,792
Վարձակալության գծով ծախսեր	31,180	31,180
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	27,552	21,193
Նյութական ակտիվների վերանորոգման և սպասարկման ծախսեր	24,222	17,124
Գրասենյակային ծախսեր	25,672	17,177
Հիմնական միջոցների և մաշվածության և նյութական ակտիվների ամորտիզացիա	23,455	20,280
Վարկերի հավաքագրման իրավաբանական ծառայություն	30,691	-
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր	14,505	15,441
Գործուղման ծախսեր	2,467	2,511
Ֆինանսական հաշտարարի գծով ծախսեր	8,455	7,113
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	7,908	5,200
Գուդվիլի արժեզրկում	7,734	-
Ներկայացուցչական ծախսեր	5,201	2,594
Այլ ծախսեր	17,470	19,743
Ընդամենը այլ ծախսեր	285,345	200,348

13 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2017	2016 (վերահաշվարկված)
Ընթացիկ հարկի գծով ծախս	94,229	78,644
Նախորդ տարիների շահութահարկի ճշգրտում	-	10,485
Հետաձգված հարկ	31,443	(4,676)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	125,672	84,453

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2016թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	2017	Արդյունավետ դրույքաչափ (%)	2016 (վերահաշվարկված)	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	601,917		383,342	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	120,383	20	76,668	20
Չնվազեցվող ծախսեր	10,598	1.8	1,822	0.5
Արտարժույթի դրական փոխարժեքային տարբերություն	(165)	-	(2,503)	(0.7)
Հարկային օրենդրության փոփոխությունների հետ կապված չճանաչված հետաձգված հարկային պարտավորություն ազդեցությունը	(5,144)	(0.9)	(2,018)	(0.5)
Նախորդ տարվա ընթացիկ հարկին վերաբերող ճշգրտումներ	-	-	10,485	2.7
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	125,672	20.9	84,454	22.0

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերահաշվարկված)	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հաճախորդներին տրված վարկեր, փոխատվություններ	9,380	(9,380)	-	-
Վարկեր և փոխառություններ	-	229	-	229
Այլ պարտավորություններ	4,279	5,097	-	9,376
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	13,659	(4,054)	-	9,605
Հաճախորդներին տրված վարկեր, փոխատվություններ	-	(29,759)	-	(29,759)
Ներդրումներ արժեթղթերում	(5,687)		(1,463)	(7,150)
Այլ ակտիվներ	(1,422)	1,136	-	(286)
Վարկեր և փոխառություններ	(1,234)	1,234	-	-
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(8,343)	(27,389)	(1,463)	(37,195)
Զուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	5,316	(31,443)	(1,463)	(27,590)

Հազար ՀՀ դրամ	2016թ. հունվարի 1-ի դրությամբ (վերահաշվարկված)	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերահաշ-վարկված)
Հաճախորդներին տրված վարկեր, փոխատվություններ	-	9,380	-	9,380
Այլ պարտավորություններ	3,217	1,062	-	4,279
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	3,217	10,442	-	13,659
Ներդրումներ արժեթղթերում	(1,230)	(3,468)	(989)	(5,687)
Այլ ակտիվներ	(358)	(1,064)	-	(1,422)
Վարկեր և փոխառություններ	-	(1,234)		(1,234)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(1,588)	(5,766)	(989)	(8,343)
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	1,629	4,676	(989)	5,316

14 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. հունվարի 1-ի դրությամբ
Կանխիկ դրամական միջոցներ	148,528	80,936	13,128
Ընթացիկ հաշիվներ բանկերում	65,106	409,422	69,046
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	213,634	490,358	82,174

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 37,399 հազար դրամ գումարով (57%) հաշիվները կենտրոնացված են մեկ բանկում (2016թ. 181,744 հազար դրամ (44%)):

2017թ. ընթացքում իրականացված անկանխիկ գործառնությունները միայն վերաբերում են գրավների բռնագանձման միջոցով 155,142 հազար դրամ գումարով վարկերի մարմանը (2016թ.՝ զրո):

15 Վաճառքի համար մատչելի ներդրումներ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. հունվարի 1-ի դրությամբ
ՀՀ պետական պարտատոմսեր	3,378,879	269,509	247,896
ՀՀ կազմակերպությունների բաժնետոմսեր	10,000	-	-
Մասնակցության վկայագրեր	-	22,245	22,239
Ընդամենը ներդրումներ	3,388,879	291,754	270,135

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վաճառքի համար մատչելի ներդրումներում ներառված են ռեպո համաձայնագրերով վաճառված պարտատոմսերը 3,018,562 հազար դրամ գումարով (2016թ., 2015թ.՝ զրո), (ծանոթագրություն 22):

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ.

Չգնանշվող վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը չափվում են իրական արժեքով, օգտագործելով գնահատման տեխնիկա՝ հիմնված տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքների վրա, որպես տվյալ ֆինանսական գործիքի ապագա դրամական միջոցների հոսքերի զեղչատոկոս:

Բոլոր չգնանշվող վաճառքի համար մատչելի բաժնեմասային արժեթղթերը գրանցված են ինքնարժեքով, քանի որ իրական արժեքը չի կարող արժանահավատորեն գնահատվել: Այս ներդրումների համար չկա գնանշվող շուկա:

Չցուցակված սեփական կապիտալի ներդրումները կազմված են Ընկերության՝ «Քոդինգպրո» ՓԲԸ-ում և «ԷյԱր ՄԵՋԻՔ» ՓԲԸ-ում ունեցած ներդրումներից (ներդրումը յուրաքանչյուրում կազմում է 9.99 %):

Վաճառքի համար մատչելի արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և մարմանը մնացած ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	9.7-14.4%	2018-2047	13.8-14.4%	2017-2018

Ընկերությունը 2015թ.-ին ձեռք է բերել Վարկային Պորտֆելի Արժեթղթավորման I Հիմնադրամի կողմից թողարկած մասնակցության վկայագրեր:
2017թ. նոյեմբերի 22-ին «Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ I-ի» ինքնալուծարման կապակցությամբ Ընկերությունը հիմնադրամի կառավարչից որպես Արժեթղթավորման հիմնադրամի C դասի դրամային և A դասի դոլարային մասնակցության վկայագրերի սեփականատեր ստացել է համապատասխանաբար 13,746 հազ. դրամ և 55,650 ԱՄՆ դոլար:

16 Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. հունվարի 1-ի դրությամբ
Ֆինանսական կազմակերպություններից ստացվելիք գումարներ	-	101,136	-

Գրավ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների դիմաց գրավադրված էին 101,796 հազար դրամ իրական արժեքով Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսեր:

17 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերահաշվարկված)	2016թ. հունվարի 1-ի դրությամբ (վերահաշվարկված)
Վարկեր	12,679,747	10,878,658	9,349,285
Օվերդրաֆտներ և վարկային գծեր	314,890	378,854	408,864
Ֆակտորինգ	8,292	26,555	74,100
	13,002,929	11,284,067	9,832,249
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	(424,692)	(280,937)	(148,520)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	12,578,237	11,003,130	9,683,729

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ընթացքում Ընկերությունը ձեռք է բերել հաճախորդներին տրամադրված վարկերի դիմաց ստացած գրավը, այդ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 155,142 հազար դրամ (2016թ.՝ զրո): Ընկերությունը մտադիր է վաճառել այս ակտիվները կարճ ժամանակահատվածում (ծանոթագրություն 20):

2017թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է ՀՀ դրամով վարկերի համար 41.1% (2016թ.՝28.93 %) և ԱՄՆ դոլարով վարկերի համար 22.4 % (2016թ.՝17.3 %):

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա չեն վարկառուներ, որոնց Ընկերության կողմից տրամադրված վարկերը կգերազանցեն սեփական կապիտալի տասը տոկոսը (2016թ.՝ երկու վարկառուներ, որոնց տրամադրված վարկերի մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 450,637 հազար դրամ):

Տրամադրված վարկերի և փոխառությունների վերլուծությունն ըստ տնտեսության ճյուղերի ներկայացված է ստորև.

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ									
Հազար ՀՀ դրամ	Արդյունաբերություն	Շինարարություն	Առևտուր	Սպառողական ոլորտ	Գյուղատնտեսություն	Հիփոթեք	Սպասարկում	Ոսկու գրավով	Այլ	Ընդամենը
Վարկեր	451,658	157,604	1,321,977	2,722,151	1,547,046	6,169,604	209,724	53,360	369,805	13,002,929
Արժեզրկումից պահուստներ վարկերի գծով	(4,228)	(28,421)	(13,220)	(138,959)	(57,642)	(76,274)	(2,097)	(534)	(103,317)	(424,692)
Զուտ վարկեր	447,430	129,183	1,308,757	2,583,192	1,489,404	6,093,330	207,627	52,826	266,488	12,578,237

	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ									
Հազար ՀՀ դրամ	Արդյունաբերություն	Շինարարություն	Առևտուր	Սպառողական ոլորտ	Գյուղատնտեսություն	Հիփոթեք	Սպասարկում	Ոսկու գրավով	Այլ	Ընդամենը
Վարկեր	628,459	190,387	1,090,419	1,321,551	1,405,090	5,462,194	221,519	148,079	816,369	11,284,067
Արժեզրկումից պահուստներ վարկերի գծով	(7,143)	(15,971)	(25,568)	(93,794)	(44,531)	(75,205)	(2,830)	(2,108)	(13,787)	(280,937)
Զուտ վարկեր	621,316	174,416	1,064,851	1,227,757	1,360,559	5,386,989	218,689	145,971	802,582	11,003,130

Վարկերի գծով արժեզրկման պահուստի շարժն ըստ դասերի հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Արդյունաբերություն	Շինարարություն	Առևտուր	Սպառողական ոլորտ	Գյուղատնտեսություն	Հիփոթեք	Սպասարկում	Ոսկու գրավով	Այլ	Ընդամենը
										2017
2017թ. հունվարի 1 դրությամբ	7,143	15,971	25,568	93,794	44,531	75,205	2,830	2,108	13,787	280,937
Տարվա ծախս/ (հակադարձում)	2,794	1,078	8,051	390,804	148,276	2,280	890	(1,903)	259,192	811,462
Զուտ (դուրսգրում)/ վերադարձ	(5,709)	11,372	(20,399)	(345,639)	(135,165)	(1,211)	(1,623)	329	(169,662)	(667,707)
2017թ. դեկտմբերի 31-ի դրությամբ	4,228	28,421	13,220	138,959	57,642	76,274	2,097	534	103,317	424,692
Անհատական արժեզրկում	-	27,467	-	26,820	8,749	15,125	-	-	84,857	163,018
Խմբային արժեզրկում	4,228	954	13,220	112,139	48,893	61,149	2,097	534	18,460	261,674
	4,228	28,421	13,220	138,959	57,642	76,274	2,097	534	103,317	424,692
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	-	62,208	-	38,451	70,805	54,696	-	-	121,225	347,385

Հազար ՀՀ դրամ	Արդյունաբերություն	Շինարարություն	Առևտուր	Սպառողական ոլորտ	Գյուղատնտեսություն	Հիփոթեք	Սպասարկում	Ոսկու գրավով	Այլ	Ընդամենը
									2016	
2016թ. հունվարի 1 դրությամբ	12,754	4,350	11,857	15,517	26,647	63,202	1,720	2,181	10,292	148,520
Տարվա ծախս/ (հակադարձում)	7,845	22,632	(2,418)	154,097	99,633	77,236	2,473	(296)	29,700	390,902
Ջուտ (դուրսգրում)/ վերադարձ	(13,456)	(11,011)	16,129	(75,820)	(81,749)	(65,233)	(1,363)	223	(26,205)	(258,485)
2016թ. դեկտմբերի 31-ի դրությամբ	7,143	15,971	25,568	93,794	44,531	75,205	2,830	2,108	13,787	280,937
Անհատական արժեզրկում	-	14,067	-	-	-	-	-	-	-	14,067
Խմբային արժեզրկում	7,143	1,904	25,568	93,794	44,531	75,205	2,830	2,108	13,787	266,870
	7,143	15,971	25,568	93,794	44,531	75,205	2,830	2,108	13,787	280,937
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	-	55,659	-	-	-	-	-	-	-	55,659

Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մասնավոր ձեռնարկություններ	1,904,135	2,027,288
Ֆիզիկական անձիք	10,216,498	7,916,539
Անհատ ձեռնարկատերեր	761,071	1,025,600
Ոչ առևտրային կազմակերպություններ	121,225	314,640
	13,002,929	11,284,067
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	(424,692)	(280,937)

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդամենը վարկեր և փոխատվություններ	12,578,237	11,003,130

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ներկայացվում են ստորև.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիփոթեքային	6,169,604	5,462,194
Սպառողական	2,722,151	1,321,551
Գյուղատնտեսություն	1,210,599	923,145
Ոսկու գրավով ապահովված վարկեր	53,360	148,079
Այլ	60,784	61,570
Ընդամենը ֆիզիկական անձանց տրամադրված վարկեր (համախառն)	10,216,498	7,916,539

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 5,619,339 հազար դրամ գումարով վարկերի նկատմամբ պահանջի իրավունքը (2016թ.՝ 5,964,620 հազար դրամ ընդհանուր գումարով) Ընկերության կողմից գրավադրվել են այլ կազմակերպություններից ստացված վարկերի և փոխառությունների դիմաց (ծանոթ. 22).

2015թ. դեկտեմբերի ամսին Ընկերությունը իրականացրել է վարկային պորտֆելի արժեթղթավորում: Որպես վարկային պորտֆելի արժեթղթավորման գործընթացի մաս Ընկերությունը ձեռք է բերել Վարկային Պորտֆելի Արժեթղթավորման I Հիմնադրամի կողմից թողարկած մասնակցության վկայագրեր (ծանոթագրություն 15):

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ I»-ին փոխանցված բիզնես և սպառողական վարկերի հաշվեկշռային արժեքը կազմում է համապատասխանաբար 50,410 հազար դրամ և 19,448 հազար դրամ: «Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ I»-ը հաստատություն է, որն ըստ էության չի վերահսկվում Ընկերության կողմից: Քանի որ Ընկերությունը չի փոխանցել ակտիվների սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, այս վարկերը ներառվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Ընկերությունը մինչև 2017թ. նոյեմբեր ամիսը շարունակել է հանդես գալ որպես այդ վարկերի սպասարկող:

Ինչպես նշված է 0 ծանոթագրությունում, 2017թ. դեկտեմբերի 31-ի և 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի և փոխատվությունների գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Վարկային պորտֆելին ներհատուկ այլ ռիսկերը բացահայտված են 31 ծանոթագրությունում:

Տեղեկատվությունը կապակցված անձանց վերաբերյալ բացահայտված է 27 ծանոթագրությունում:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների ժամկետային վերլուծությունը ներկայացված է 30 ծանոթագրությունում:

18 Հիմնական միջոցներ

	Համակարգչային սարքավորումներ	Փոխադրա-միջոցներ	Գրասենյակային կահույք և այլ սարքավորումներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	27,873	14,780	62,732	105,385
Ավելացում	4,742	-	5,383	10,125
Օտարում	-	(3,380)	-	(3,380)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	32,615	11,400	68,115	112,130
Ավելացում	22,163	-	52,980	75,143
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	54,778	11,400	121,095	187,273
Կուտակված մաշվածություն				
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	18,270	9,511	13,548	41,329
Տարվա ծախս	4,983	1,823	12,140	18,946
Օտարում	-	(2,951)	-	(2,951)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	23,253	8,383	25,688	57,324
Տարվա ծախս	5,931	1,578	14,554	22,063
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	29,184	9,961	40,242	79,387
Հաշվեկշիռային արժեք				
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	9,603	5,269	49,184	64,056
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,362	3,017	42,427	54,806
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,594	1,439	80,853	107,886

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկբնական արժեքը կազմում է 17,548 հազար դրամ (2016թ. 14,738 հազար դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների:

19 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Համակարգչային ծրագրերի արտոնագրեր	Գուդվիլ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	17,931	77,336	95,267
Ավելացում	1,405	-	1,405
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,336	77,336	96,672
Ավելացում	3,135	-	3,135
Արժեզրկում	-	(7,734)	(7,734)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	22,471	69,602	92,073
Կուտակված ամորտիզացիա			
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	4,081	-	4,081
Մասհանումներ	1,334	-	1,334
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,415	-	5,415
Մասհանումներ	1,392	-	1,392
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,807	-	6,807
Հաշվեկշռային արժեք			
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	13,850	77,336	91,186
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	13,921	77,336	91,257
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	15,664	69,602	85,266

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվների:

20 Բռնագանձված գրավ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. Հունվարի 1-ի դրությամբ
Անշարժ գույք	155.142	-	57,600
	155,142	-	57,600

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարած վարկային պարտավորության հաշվեկշռային արժեքից և գրավի իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Ընկերության քաղաքականությունն է հետամուտ լինել այդ ակտիվների իրացմանը պատշաճ կերպով և սեղմ ժամկետներում: Ընկերությունը հիմնականում չի օգտագործում ոչ կանխիկ գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները նվազագույնով:

21 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերահաշվարկված)	2016թ. հունվարի 1-ի դրությամբ (վերահաշվարկված)
Դեբիտորական պարտքեր և այլ ստացվելիք գումարներ	32,519	17,179	51
Ներդրումային հիմնադրամից ստացվելիք գումարներ	-	-	24,427
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	32,519	17,179	24,478
Արժեզրկումից պահուստներ այլ ակտիվների գծով	(3,310)	-	-
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	29,209	17,179	24,478
Կանխավճարներ	32,747	5,823	4,660
Այլ ակտիվներ	451	500	-
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	33,198	6,323	4,660
Ընդամենը այլ ակտիվներ	62,407	23,502	29,138

Այլ ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Ընդամենը
1 հունվար 2016	-
Տարվա ծախս	6,628
Դուրսգրում	(6,628)
31 դեկտեմբեր 2016	-
Տարվա ծախս	12,666
Դուրսգրում	(9,356)
31 դեկտեմբեր 2017	3,310

22 Վարկեր և փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերահաշվարկված)	2016թ. հունվարի 1-ի դրությամբ (վերահաշվարկված)
Վարկեր ՀՀ ԿԲ-ից	67,195	114,224	188,619
Վարկեր վերաֆինանսավորող վարկային կազմակերպություններից	4,300,856	4,350,213	3,574,194
Վարկեր բանկերից ռեպո համաձայնագրերով	2,839,416	-	-
Բանկային վարկեր և վարկային գծեր	1,529,733	558,436	621,090
Վարկեր ՀՀ կառավարությունից միջազգային ծրագրերով	1,350,164	1,488,025	1,270,079
Փոխառություններ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններից	2,049,619	1,583,592	1,091,447
Փոխառություններ բաժնետերերից	801,618	801,324	1,311,419
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	12,938,601	8,895,814	8,056,848

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամով վարկերի և փոխառությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 8.6 % (2016թ.՝ 7.8 %), ԱՄՆ դոլարով վարկերի և փոխառությունների համար՝ համար 8.7 % (2016թ.՝ 8.8 %):

2017թ. դեկտեբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի տասնմեկ կազմակերպությունից և երկու ֆիզիկական անձից ստացված վարկեր և փոխառություններ (2016թ-ին՝ տասը կազմակերպությունից), որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 9,634,482 հազար դրամ (2016թ-ին՝ 8,092,390 հազար դրամ):

Բանկային վարկերի և վարկային գծերի դիմաց գրավադրված է Ընկերության ընթացիկ հաշիվների շրջանառությունը և բաժնետերերի երաշխիքները:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 5,770,140 հազար դրամ գումարով վարկերի և փոխառությունների (2016թ.-ին՝ 6,005,567 հազար դրամ) դիմաց գրավադրված է 5,619,339 հազար դրամ գումարով (2016թ.-ին՝ 5,964,620 հազար դրամ) հաճախորդներին տրված վարկերի գծով Ընկերության պահանջի իրավունքը:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2016: նույնպես):

23 Թողարկված պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. հունվարի 1-ի դրությամբ
Պարտատոմսեր	1,482,211	1,180,994	591,149
Ընդամենը թողարկված պարտքային արժեթղթեր	1,482,211	1,180,994	591,149

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից թողարկված 1,468,200 հազար դրամ անվանական արժեքով պարտատոմսերը (2016թ.՝ 1,167,880 հազար դրամ) ցուցակված են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա»-ում:

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից թողարկված ՀՀ դրամով պարտքային արժեթղթերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 11.9% (2016թ.՝ 14 %), ԱՄՆ դոլարով պարտքային արժեթղթերի համար՝ համար 8.2 % (2016թ.՝ 9.3 %):

Տարվա ընթացքում Ընկերությունը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ արժեթուղթ (2016թ.՝ նույնպես):

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2016թ.՝ ոչինչ):

24 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. հունվարի 1-ի դրությամբ
Վճարվելիք գումարներ	32,240	35,137	41,960
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	51,261	24,055	15,457
Սուբսիդավորված տոկոսներ	22,465	22,387	19,022
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	105,966	81,579	76,439
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	12,247	70	7,513
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	12,247	70	7,513
Ընդամենը այլ պարտավորություններ	118,213	81,649	83,952

25 Սեփական կապիտալ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 1,500,000 հազ. դրամ: Համաձայն Ընկերության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 1,500,000 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 1,000 դրամ անվանական արժեքով:

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերն են.

Հազար ՀՀ դրամ	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %
Վարդանյան Գագիկ	502,949	33.53
Մարության Էդուարդ	499,971	33.33
Կարապետյան Արայիկ	421,779	28.12
Դարբինյան Կարեն	75,301	5.02
	1,500,000	100

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը ունեն մեկ ձայնի իրավունք Ընկերության տարեկան և ընդհանուր ժողովներում և իրավունք ստանալու շահաբաժին:

2016թ. Ընկերությունը բաժնետիրական կապիտալը ավելացրել է 500,000 հազար դրամ գումարով:

2017թ. ապրիլ ամսում բաժնետերերի ժողովի որոշմամբ, Ընկերությունը հայտարարել և վճարել է շահաբաժին 2016թ. տարվա համար 310,000 հազար դրամ ընդհանուր գումարով:

26 Պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Ընկերությանը ներկայացվող դատական հայցերի առումով Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Հետևաբար Ընկերության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստներ չեն ձևավորվել:

Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ, երաշխիքներ և այլ ֆինանսական պայմանագրեր

Իր գործունեության ընթացքում Ընկերությունը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն վարկային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ անվանական կամ պայմանագրային գումարները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկային գծերի չօգտագործված մաս	38,795	55,703
Տրամադրված երաշխիքներ	650,000	1,085,072
Ընդամենը պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	688,795	1,140,775

Վարկային պարտավորությունների, երաշխիքների և այլ ֆինանսական միջոցների պարտքային ռիսկի առավելագույն չափը լավագույնս ներկայացված է այս պարտավորությունների և պայմանական պարտավորությունների ընդհանուր գումարով:

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով – Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունն իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր շենք և տարածքներ վարձակալելու նպատակով:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 1 տարի	9,354	9,354
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	9,354	9,354

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն:

Քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Ընկերությունը չունի սխալների կամ բացթողումների հետևանքով առաջացած պարտավորությունների ապահովագրում: Ներկայումս, Հայաստանում առկա չեն պարտավորությունների գծով ապահովագրական ծառայություններ:

27 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերությանը կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Ընկերությունը չունի վերջնական վերահսկող անձ կամ ընկերություն:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն: Նշված գործարքները իրականացվել են՝ շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2017		2016	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնա-կազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնա-կազմը և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	101,136	-	-	-
Տարվա ընթացքում մարված	37,074	-	1,397,832	-
Տարվա ընթացքում կնքված պայմանագրեր	(138,210)	-	(1,296,696)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	101,136	-

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ				
Վարկի մնացորդը 1 հունվարի դրությամբ, համախառն	161,270	42,871	250,383	25,762
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	627,281	16,695	506,641	29,310
Տարվա ընթացքում մարված վարկեր	(738,261)	(11,139)	(595,754)	(12,201)
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	50,290	48,427	161,270	42,871
Արժեզրկումից պահուստ	(503)	(485)	(1,613)	(429)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	49,787	47,942	159,657	42,442
Վարկեր և փոխառություններ				
Փոխառության մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	932,038	-	1,311,419	-
Տարվա ընթացքում ստացված	671,578	-	255,620	-
Տարվա ընթացքում վճարված	(801,998)	-	(635,001)	-
Փոխառության մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	801,618	-	932,038	-
Տրված կանխավճարներ	30,000	-	-	-
Շահույթ կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյուքների մասին հաշվետվություն				
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	18,125	5,696	19,385	3,925
Տոկոսային եկամուտ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով	1,919	-	9,676	-
Արժեզրկման (ծախս)/հակադարձում	1,110	(56)	891	(172)
Տոկոսային ծախսեր փոխառությունների գծով	(87,808)	-	(125,451)	-
Վարձակալության գծով ծախսեր	(31,180)	-	(31,180)	-
Այլ ծախսեր	(8,062)	-	(5,000)	-

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Աշխատավարձ և պարգևատրումներ	72,226	56,001
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	72,226	56,001

Ընկերության հետ կապված անձանց տրամադրված վարկերը վճարման են ենթակա 1-ից մինչև 14 տարիների ընթացքում և դրանց տոկոսադրույքը կազմում է 9-ից 18% (2016թ.՝ 10-18%): Տրամադրված վարկերը ապահովված են անշարժ գույքով, երաշխավորություններով:

28 Իրական արժեքի չափումը

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

28.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	213,634	-	213,634	213,634
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	12,578,237	-	12,578,237	12,578,237
Այլ ակտիվներ		29,209		29,209	29,209
Ֆինանսական պարտավորություններ					
Վարկեր և փոխառություններ	-	12,930,841	-	12,930,841	12,938,601
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	1,482,211	-	1,482,211	1,482,211
Այլ պարտավորություններ	-	105,966	-	105,966	105,966

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	490,358	-	490,358	490,358
Հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	-	101,136	-	101,136	101,136
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	11,003,130	-	11,003,130	11,003,130
Այլ ակտիվներ	-	17,179	-	17,179	17,179
Ֆինանսական պարտավորություններ					
Վարկեր և փոխառություններ	-	8,890,839	-	8,890,839	8,895,814
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	1,180,994	-	1,180,994	1,180,994
Փոխանցված, սակայն չապաճանաչված վարկերի գծով վճարվելիք գումարներ	-	69,858	-	69,858	69,858
Այլ պարտավորություններ	-	81,579	-	81,579	81,579

Պահանջներ և պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Ներգրավված վարկերի և փոխառություններ, թողարկված արժեթղթեր

Ներգրավված վարկերի և փոխառությունների իրական արժեքը գնահատվում է օգտագործելով զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող վարկերի համար առաջարկվող դրույքաչափերը:

28.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	-	3,378,879	-	3,378,879
Ընդամենը	-	3,378,879	-	3,378,879
Զուտ իրական արժեք	-	3,378,879	-	3,378,879

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	-	269,509	-	269,509
Ընդամենը	-	269,509	-	269,509
Զուտ իրական արժեք	-	269,509	-	269,509

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Չցուցակված սեփական կապիտալի ներդրումներ

Սեփական կապիտալի այս ներդրումի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար տես ծանոթագրություն 15-ը:

29 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Ընկերությունը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների ամախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների ամախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր (Ծանոթ. 15,22)	2,839,416	-	2,839,416	3,018,562	-	(179,146)
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	2,839,416	-	2,839,416	3,018,562	-	(179,146)

Հազար ՀՀ դրամ

	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների ամախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների ամախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ (Ծանոթ.16)	101,136	-	101,136	(101,136)	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	101,136	-	101,136	(101,136)	-	-

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն արժեքները և դրանց զուտ արժեքները, որոնք ներկայացվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջև բացահայտվել են վերոնշյալ աղյուսակներում, ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ չափվում են համաձայն հետևյալ հիմունքների.

- վաճառքի և հետգնման պայմանագրերից, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերից և արժեթղթերի վարկավորումից և փոխառությունից առաջացած ակտիվներն ու պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով,

30 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Ընկերության չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 31.3-ում:

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	213,634	-	213,634	-	-	-	213,634
Վաճառքի համար մատչելի ներդրումներ							
- Ընկերության մոտ պահվող	-	107,824	107,824	10,000	252,493	262,493	370,317
-Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	2,961,367	57,195	3,018,562	-	-	-	3,018,562
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	503,960	2,759,874	3,263,834	5,081,797	4,232,606	9,314,403	12,578,237
Այլ ակտիվներ	29,209	-	29,209	-	-	-	29,209
	3,708,170	2,924,893	6,633,063	5,091,797	4,485,099	9,576,896	16,209,959
Պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	2,870,465	1,965,909	4,836,374	6,184,123	1,918,104	8,102,227	12,938,601
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	514,208	514,208	968,003	-	968,003	1,482,211
Այլ պարտավորություններ	67,884	38,082	105,966	-	-	-	105,966
	2,938,349	2,518,199	5,456,548	7,152,126	1,918,104	9,070,230	14,526,778
Զուտ Դիրք	769,821	406,694	1,176,515	(2,060,329)	2,566,995	506,666	1,683,181
Կուտակված ճեղքվածք	769,821	1,176,515		(883,814)	1,683,181		

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	490,358	-	490,358	-	-	-	490,358
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	175,530	175,530	116,224	-	116,224	291,754
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	101,136	-	101,136	-	-	-	101,136
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	287,775	2,465,230	2,753,005	4,396,664	3,853,461	8,250,125	11,003,130
Այլ ակտիվներ	17,179	-	17,179	-	-	-	17,179
	896,448	2,640,760	3,537,208	4,512,888	3,853,461	8,366,349	11,903,557
Պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	174,927	1,054,586	1,229,513	5,215,352	2,450,949	7,666,301	8,895,814
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	497,054	497,054	683,940	-	683,940	1,180,994
Փոխանցված, սակայն չապաճանաչված վարկերի գծով վճարվելիք գումարներ	7,457	45,994	53,451	16,407	-	16,407	69,858
Այլ պարտավորություններ		81,579	81,579	-	-	-	81,579
	182,384	1,679,213	1,861,597	5,915,699	2,450,949	8,366,648	10,228,245
Զուտ Դիրք	714,064	961,547	1,675,611	(1,402,811)	1,402,512	(299)	1,675,312
Կուտակված ճեղքվածք	714,064	1,675,611		272,800	1,675,312		

31 Ռիսկի կառավարում

Ընկերության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Ընկերությունն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Ընկերության շահութաբերության կայունության ապահովման գործում, և Ընկերության յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի, որն իր հերթին բաժանվում է առևտրային և ոչ

առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Ընկերությունը նաև ենթարկվում է գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ կառավարման գործընթացը չի ներառում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի փոփոխությունները, տեխնոլոգիաների կամ արդյունաբերության փոփոխությունները: Դրանք կառավարվում են Ընկերության կողմից ռազմավարական պլանավորման գործընթացում:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի վերահսկմանն ուղղված պատասխանատվությունը կրում է Ընկերության խորհուրդը, սակայն, գոյություն ունեն ռիսկերի կառավարման և վերահսկման համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ռազմավարության և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Գործադիր տնօրեն

Գործադիր տնօրենը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի իրականացման և վերահսկման, ակտիվների և պարտավորությունների կառավարման համար: Գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում նաև Ընկերության իրացվելիության ռիսկի և ֆինանսավորման ռիսկի համար:

Վարկային կոմիտե

Վարկային կոմիտեն ընդհանուր պատասխանատվություն է կրում վարկերի տրամադրման գործընթացում ռիսկերի կառավարման համար:

Վերստուգիչ

Ընկերության կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի վերստուգման է ենթարկվում Ընկերության վերստուգիչի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Ընկերության գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Վերստուգիչն անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Ընկերության խորհրդին:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Ընկերության կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Ընկերության գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Ընկերությունը, ինչպես նաև Ընկերության համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Ընկերությունը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա: Բացի դրանից, Ընկերությունը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Ընկերության բոլոր մակարդակների համար կազմվում են ռիսկերի վերաբերյալ տարբեր հաշվետվություններ, որոնք տարածվում են, որպեսզի Ընկերության բոլոր բաժիններին ապահովեն հասանելիություն ընդհանուր, անհրաժեշտ և ժամանակին համապատասխան տեղեկատվությանը:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Ընկերության գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Ընկերության քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը:

31.1 Պարտքային ռիսկ

Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Ընկերությանը կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Ընկերության կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Ընկերության ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են, տրամադրված երաշխիքներ, վարկային պարտավորությունները: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Ընկերության ղեկավարության կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Ընկերության Խորհրդին:

Ընկերության ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

31.1.2 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Պարտքային ռիսկի ենթարկվող ակտիվներն ամբողջությամբ տեղաբաշխված են ՀՀ տարածքում:

Վարկերի տեղաբաշխումը ըստ տնեսության ճյուղերի ներկայացված է ծանոթագրություն 15-ում:

31.1.3 Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Ընկերությունը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է պարբերաբար վերանայման: Վարկային ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Ընկերության Խորհրդի կողմից:

Վարկային ռիսկը կառավարվում է վարկառուների և պոտենցիալ վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման կարողությունը պարբերաբար վերլուծելով և անհրաժեշտության դեպքում վարկի տրամադրման սահմանաչափերը փոխելով:

Ստորև ներկայացված են հատուկ հսկողության և զսպողական մի քանի այլ միջոցներ:

Գրավ

Ընկերությունը կիրառում է բազմաթիվ միջոցներ վարկային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը: Ընկերությունը կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ ռիսկերի զսպման վերաբերյալ: Վարկերի և փոխատվությունների համար գրավի հիմնական տեսակներն են.

- Հիպոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույքը,
- Կազմակերպությունների գործառնական ակտիվները՝ շենքերը, պաշարները և դեբիտորական պարտքերը,
- Շարժական գույքը
- Թանկարժեք զարդեր, ոսկու ջարդոն

Վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Ընկերությունը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ և երաշխավորություններ է պահանջում:

Կորպորատիվ կազմակերպությունների, ֆիզիկական անձանց երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են, ֆիզիկական անձանց գծով փոքրածավալ և կարճաժամկետ վարկերը հիմնականում չեն ապահովվում: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Ընկերությունը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի և փոխատվությունների արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկեր և փոխատվություններից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Անշարժ գույք	6,821,223	6,645,121
Պաշարներ	1,095,733	505,939
Արժեթղթեր	-	34,803
Հիմնական միջոցներ	243,666	388,548
Փոխադրամիջոցներ	1,417,707	900,211
Ոսկյա զարդեր և ոսկյա այլ իրեր	53,360	148,079
Կազմակերպությունների և ֆիզիկական ածանց երաշխավորություններ	1,501,032	1,898,079
Ապահովվածություն չունեցող	851,212	676,845
Այլ	1,018,996	86,442
Ընդամենը վարկեր և փոխատվություններ (համախառն)	13,002,929	11,284,067

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական

արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

Պարտքային ռիսկ պարունակող պայմանական պարտավորություններ

Այս գործիքների հիմնական նպատակը անհրաժեշտության դեպքում հաճախորդներին միջոցներ տրամադրելն է:

Վարկի տրամադրման պայմանական պարտավորություններն իրենցից ներկայացնում են վարկային գծերի չօգտագործած մասերը:

Այս դեպքում, հնարավոր կորուստների գումարը, որ Ընկերությունը կարող է կրել, հավասար է չօգտագործված վարկային գծերի գումարին:

Սակայն հնարավոր վնասի իրական գումարն ավելի փոքր է, քան չօգտագործված վարկային գծերի ընդհանուր գումարը, քանի որ վարկային պարտավորությունները տրամադրվում են վարկառուների կողմից վարկերի տրամադրման որոշակի ստանդարտների պահպանման դեպքում: Ընկերությունը հետևում է պարտավորությունների մարման ժամկետներին, քանի որ երկարաժամկետ պարտավորությունները պարունակում են ավելի բարձր վարկային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

31.1.4 Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություն

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների 90 օրից ավել ուշացումները, վարկառուների դրամական միջոցների հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Ընկերությունն արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

Արժեզրկման անհատական գնահատում

Ընկերությունը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի կամ փոխատվության համապատասխան պահուստի չափը անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հասույթները և սպասվող շահաբաժինների վճարումները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական միջոցների հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

Արժեզրկման խմբային գնահատում

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով, ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի և փոխատվությունների գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին:

Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանա պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա: Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական իրավիճակը, կորուստն առաջանալու և անհատապես բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները:

Չարժեզրկված, ոչ ժամկետանց վարկեր և փոխատվություններ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է չարժեզրկված և ոչ ժամկետանց վարկերի որակը՝ հիմնված կորուստների պատմության վրա:

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ		
Արդյունաբերություն	0.9%	1%
Արդյունաբերություն	1.56%	1.2%
Շինարարություն	-	1.7%
Առևտուր	0.5%	-
Սպառողական ոլորտ	4.18%	2.5%
Գյուղատնտեսություն	3.3%	0.8%
Հիփոթեք	0.8%	0.7%
Սպասարկում	0.47%	0.2%
Այլ	14.8 %	1.2%

Պարտքային ռիսկ պարունակող այլ ֆինանսական ակտիվների գծով 2017 և 2016թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը կորուստներ չի ունեցել:

ժամկետանց, բայց չարժեզրկված վարկեր

Ժամկետանց են համարվում այն վարկերը և փոխատվությունները, որոնց գծով առկա են մի քանի օրյա չվճարումներ: Ժամկետանց վարկերի հիմնական մասն արժեզրկված չեն:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկերի ժամկետանց օրերի վերլուծությունն ըստ դասերի ներկայացվում է հետևյալ աղյուսակում.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մինչև 30 օր	31-ից 60 օր	61-ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ					
Մասնավոր ձեռնարկություններ	16,068	-	3,292	14,942	34,302
Ֆիզիկական անձիք	172,429	100,981	97,192	300,721	671,323
Անհատ ձեռնարկատերեր	-	4,475	-	11,574	16,049
Ընդամենը	188,497	105,456	100,484	327,237	721,674

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մինչև 30 օր	31 –ից 60 օր	61 –ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ					
Մասնավոր ձեռնարկություններ	781	-	2,144	76,841	79,766
Ֆիզիկական անձիք	85,952	26,579	37,511	154,601	304,643
Անհատ ձեռնարկատերեր	9,712	-	12,699	25,699	48,110
Ընդամենը	96,445	26,579	52,354	257,141	432,519

31.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները:

Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Ընկերությունը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

31.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Ընկերության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դրանք սահմանված շրջանակներում պահելու համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Ընկերության ֆինանսական արդյունքների զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է վերագնահատելով վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրույքով ակտիվները, 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները:

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
		Կապիտալի զգայունություն				
Արտարժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ՀՀ դրամ	1	-	(325)	-	(10,176)	(157,179)
ՀՀ դրամ	(1)		327	-	10,355	175,454

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
		Կապիտալի զգայունություն				
Արժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ՀՀ դրամ	1	(541)	(1,225)	-	-	(1,766)
ՀՀ դրամ	(1)	545	1,247	-	-	1,792

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Ընկերության Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական միջոցների հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ) և կապիտալի վրա: Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
Արտարժույթ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար	5	(7,239)	5	25,794
Եվրո	5	107	5	21

Ընկերության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	2017			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	121,484	91,942	208	213,634
Վաճառքի համար մատչելի ներդրումներ				
- Ընկերության մոտ պահվող	370,317	-	-	370,317
- Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	3,018,562	-	-	3,018,562
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	9,246,271	3,331,966	-	12,578,237
Այլ ակտիվներ	29,209	-	-	29,209
	12,785,843	3,423,908	208	16,209,959
Պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	10,348,263	2,590,338	-	12,938,601
Թողարկված պարտքային արժեթղթեր	505,983	976,228	-	1,482,211
Այլ պարտավորություններ	105,966	-	-	105,966
Ընդամենը	10,960,212	3,566,566	-	14,526,778
Զուտ դիրք 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,825,631	(142,658)	208	1,683,181
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2017թ. դեկտեմբերի 31-ին	651,798	36,997	-	688,795
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	7,560,127	4,343,430	-	11,903,557
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	6,401,123	3,827,122	-	10,228,245
Զուտ դիրք 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,159,004	516,308	-	1,675,312
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2016թ. դեկտեմբերի 31-ին	975,592	165,183	-	1,140,775

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը և Եվրոն: Ոչ փոխարկելի արժույթը՝ ռուսական ռուբլին:

31.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Ընկերությունը կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական միջոցների հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական միջոցների հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Ընկերությունը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում:

Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Ընկերության հետ մասնավորապես:

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տես ծանոթագրություն 30-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար:

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ					
Վարկեր և փոխառություններ	2,888,974	2,349,545	7,290,088	2,143,167	14,671,774
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	635,281	1,079,636	-	1,714,917
Այլ պարտավորություններ	67,884	38,082	-	-	105,966
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	2,956,858	3,022,908	8,369,724	2,143,167	16,492,657
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	688,795	-	-	-	688,795

	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1-12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ					
Վարկեր և փոխառություններ	186,447	1,390,727	6,271,053	2,710,286	10,558,513
Թողարկված պարտքային արժեթղթեր		609,040	791,796	-	1,400,836
Փոխանցված, սակայն չապաճանաչված վարկերի ծով վճարվելիք գումարներ	7,457	45,994	16,407	-	69,858
Այլ պարտավորություններ	-	81,579	-	-	81,579
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	193,904	2,127,340	7,079,256	2,710,286	12,110,786
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	1,140,775	-	-	-	1,140,775

31.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Ընկերության ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Ընկերության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Ընկերության Խորհուրդը, Գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,

- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

32 Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համադրում

Ընկերության պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Թողարկված պարտքային արժեթղթեր	Երկարաժամկետ փոխառություններ	Ընդամենը
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	1,180,994	8,895,814	10,076,808
Դրամային հոսքերից			
Վճարումներ	-	-	-
Ստացված գումար	783,860	5,981,354	6,765,214
Վճարված գումար	(486,864)	(1,962,876)	(2,449,740)
Ոչ դրամային հոսքերից			
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	3,076	(2,473)	603
Տոկոսների հաշվեգրում	1,145	26,782	27,927
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,482,211	12,938,601	14,420,812

33 Կապիտալի համարժեքություն

Ընկերությունը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք իր գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Ընկերությունը կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով 1988թ. Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Ընկերությունը կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Ընկերության կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Ընկերությունը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու համար:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման պահուստները:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում իրականացնելու միջոցով ֆիզիկական անձանցից փոխառություններ ներգրավող (թողարկող) վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2017 և 2016թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտ չարված	
Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիմնական կապիտալ	1,839,736	1,848,617
Լրացուցիչ կապիտալ	42,424	26,428
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	1,882,160	1,875,045
Ռիսկով կշռված ակտիվներ	11,637,326	11,135,985
Կապիտալի համարժեքության նորմատիվ	16.2%	16.8%

ՀՀ կենտրոնական բանկի կողմից կանխիկ ձևով արտարժույթի առուվաճառք իրականացնող, ինչպես նաև թողարկող վարկային կազմակերպությունների համար սահմանվել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 1,000,000 հազար ՀՀ դրամ գումարով:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ պահանջները:

34 Գործառնական սեգմենտներ

Ընկերության գործառնությունները բավականին ինտեգրված են և կազմում են մեկ գործարար սեգմենտ ՖՀՄՍ 8 Գործառնական սեգմենտներ ստանդարտի պահանջների:

Հաճախորդներից ստացվող եկամուտը վերաբերում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին: Ընկերությունը չունի առանձին հաճախորդ, որից ստանում է իր հասույթի 10%-ը կամ ավելին:

Ընկերության ոչ ընթացիկ ակտիվները գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ
բաժնետերերի (հիմնադիր) ընդհանուր ժողովի
30/09/2010թ. թիվ 1 արձանագրությամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ Կենտրոնական բանկում

Փոփոխված է՝

բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի
29/08/2011թ. թիվ 7 արձանագրությամբ
Գրանցված է՝ 27/09/2011թ. ՀՀ ԿԲ թիվ 1/1063Ա որոշմամբ

բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի
30/05/2012թ. թիվ 2 արձանագրությամբ
Գրանցված է՝ 25/06/2012թ. ՀՀ ԿԲ թիվ 1/602Ա որոշմամբ

բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի
03/09/2012թ. թիվ 3 արձանագրությամբ
Գրանցված է՝ 26/09/2012թ. ՀՀ ԿԲ թիվ 1/959Ա որոշմամբ

բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի
31/10/2012թ. թիվ 4 արձանագրությամբ
Գրանցված է՝ 04/12/2012թ. ՀՀ ԿԲ թիվ 1/1282Ա
որոշմամբ

բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի
18/05/2013թ. թիվ 3 արձանագրությամբ
Գրանցված է՝ 07/06/2013թ. ՀՀ ԿԲ թիվ 1/468Ա որոշմամբ

բաժնետերերի/մասնակիցների համատեղ ընդհանուր
ժողովի 09/06/2014թ. թիվ 3 արձանագրությամբ
Գրանցված է՝ 15/07/2014թ. ՀՀ ԿԲ թիվ 1/763Ա որոշմամբ

բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի
28/08/2014թ. թիվ 7 արձանագրությամբ
Գրանցված է՝ 12/09/2014թ. ՀՀ ԿԲ թիվ 1/953Ա որոշմամբ

բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի
03/02/2015թ. թիվ 1 արձանագրությամբ
Գրանցված է՝ 10/04/2015թ. ՀՀ ԿԲ կողմից

բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի
05/06/2015թ. թիվ 3 արձանագրությամբ
Գրանցված է՝ 24/06/2015թ. ՀՀ ԿԲ կողմից

բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի
08/09/2016թ. թիվ 3 արձանագրությամբ
Գրանցված է՝ 22/09/2016թ. ՀՀ ԿԲ կողմից

բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի
18/07/2019թ. թիվ 2 արձանագրությամբ

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ՝

Արթուր Ջավադյան _____

Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախագահ՝

Էդուարդ Մարության _____

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ»
ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է «ԿՐԵԴԻՏ ՅՈՒՆԻՈՆ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ և «ՎԱՇԻՆԳԹՈՆ ՔԱՓԻԹԱԼ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ փակ բաժնետիրական ընկերությունների միաձուլման ձևով վերակազմակերպման արդյունքում՝ մասնակիցների/բաժնետերերի համատեղ (հիմնադիր) ժողովի 2010թ. սեպտեմբերի 30-ի որոշմամբ (արձանագրություն թիվ 1), ինչպես նաև ընդլայնվել է «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ փակ բաժնետիրական ընկերության և «Ջի-էֆ-Սի Ջեներալ Ֆայնենշլ ընդ Քրեդիթ Քոմփանի» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միացման ձևով վերակազմակերպման արդյունքում՝ մասնակիցների/բաժնետերերի համատեղ ընդհանուր ժողովի 2014 թ. հունիսի 09-ի որոշմամբ (արձանագրություն թիվ 3): Ընկերությունը հանդիսանում է «ԿՐԵԴԻՏ ՅՈՒՆԻՈՆ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, «ՎԱՇԻՆԳԹՈՆ ՔԱՓԻԹԱԼ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ փակ բաժնետիրական ընկերությունների և «Ջի-էֆ-Սի Ջեներալ Ֆայնենշլ ընդ Քրեդիթ Քոմփանի» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավահաջորդը:

1.2. Ընկերության ֆիրմային անվանումն է.

1.2.1. լրիվ՝
հայերեն՝ «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական
ընկերություն
ռուսերեն՝ Закрытое акционерное общество Универсальная кредитная организация
" ГЛОБАЛ КРЕДИТ"
անգլերեն՝ “GLOBAL CREDIT” closed joint-stock company universal credit organization

1.2.2. կրճատ՝
հայերեն՝ «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ
ռուսերեն՝ ЗАО УКО "ГЛОБАЛ КРЕДИТ"
անգլերեն՝ “GLOBAL CREDIT” UCO CJSC

1.3. Ընկերությունը ունի իր ֆիրմային անվանմամբ և խորհրդանիշով կլոր կնիք, դրոշմներ և ձևաթղթեր:

1.4. Ընկերության իրավաբանական և փոստային հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, 0054, Սասնա Ծռեր 2 շենք, թիվ 251 տարածք:

1.5. Ընկերության ստեղծման և գործունեության հիմնական նպատակն է հանդիսանում իր կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների միջոցով շահույթի ստացումը:

1.6. Ընկերության գործունեությունն իրականացվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից տրված գրանցման վկայականի և լիցենզիայի հիման վրա: Ընկերության գործունեության ժամկետը սահմանափակված չէ:

1.7. Ընկերությունը հանդիսանում է իրավաբանական անձ, ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում, կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.8. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների, ինչպես նաև իր բաժնետերերի պարտավորությունների համար: Հայաստանի Հանրապետությունը, համայնքները և Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար, իսկ Ընկերության բաժնետերերն իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

1.9. Ընկերության բաժնետերերը և ղեկավարները պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասի, այդ թվում՝ սնանկության համար՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Ընկերությունը ՀՀ օրենսդրությանը համապատասխան և օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է իրականացնել հետևյալ գործառնությունները՝

ա) ներգրավել փոխառություններ և (կամ) կնքել նմանատիպ գործարքներ,

բ) տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,

գ) տրամադրել երաշխիքներ,

դ) թողարկել, գնել (զեղչել), վաճառել արժեթղթեր, կատարել նման այլ գործառնություններ,

ե) մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ,

զ) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորային) կառավարում, պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն (դիլերային, բրոքերային, գործակալական, ենթապահառուական),

է) գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի եւ արտարժույթի ֆյուչերսներ եւ նման այլ գործարքներ,

ը) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

թ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,

ժ) մատուցել ֆինանսական խորհրդատվություն,

ժա) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ,

ժբ) իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն.

ժգ) ՀՀ Կենտրոնական Բանկի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ:

2.2. Ընկերությունն իր կողմից մշակված և որդեգրած ռազմավարությամբ պայմանավորված կարող է հրապարակային օֆերտայի միջոցով ներգրավել միջոցներ:

2.3. Ընկերությունը կարող է փոխառություններ ներգրավել և նմանատիպ գործարքներ կնքել իրավաբանական անձանց, իրենց մասնակիցների, անհատ ձեռնարկատերերի, Հայաստանի Հանրապետության և համայնքների, այլ պետությունների, միջազգային կազմակերպությունների հետ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պահանջներին համապատասխան:

2.4. Ընկերությունն իր անունից ՀՀ օրենսդրության համաձայն ՀՀ դրամով և արտարժույթով թողարկված պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում իրականացնելու միջոցով կարող է ներգրավվել փոխառություններ ֆիզիկական անձանցից՝ օրենսդրությամբ և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

3.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 2,000,000,000 (երկու միլիարդ) ՀՀ դրամ:

3.2. Ընկերության կանոնադրական կապիտալը բաժանված է 2,000,000 (երկու միլիոն) հատ սովորական բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

3.3. Ընկերությունը կարող է լրացուցիչ տեղաբաշխել 5,000,000 (հինգ միլիոն) հատ սովորական բաժնետոմս (հայտարարված սովորական բաժնետոմսեր)՝ յուրաքանչյուրը 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով և 1,750,000 (մեկ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) հատ արտոնյալ բաժնետոմս (հայտարարված արտոնյալ բաժնետոմսեր)՝ յուրաքանչյուրը 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

3.4. Ընկերության կողմից տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը չի կարող գերազանցել Ընկերության կանոնադրական կապիտալի ընդհանուր ծավալի 25 (քսանհինգ) տոկոսը:

3.5. Ընկերության կանոնադրական կապիտալը կարող է ավելացվել բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.6. Ընկերության կանոնադրական կապիտալը կարող է նվազեցվել՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ

4.1. Ընկերության բոլոր բաժնետոմսերը հանդիսանում են հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսեր: Տեղաբաշխված յուրաքանչյուր հասարակ բաժնետոմս իր սեփականատիրոջը տալիս է մեկ ձայնի իրավունք (բացառությամբ այն դեպքերի, երբ քվեարկությունն իրականացվում է գումարային սկզբունքով):

4.2. Ընկերությունն իրավունք ունի իր անունից թողարկել և տեղաբաշխել պարտատոմսեր՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

4.3. Ընկերության պարտատոմսերը կարող են շրջանառվել ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

4.4. Ընկերության սովորական բաժնետոմսի սեփականատերն իրավունք ունի՝

ա) մասնակցել Ընկերության կառավարմանը՝ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով,

բ) մասնակցել շահույթի բաշխմանը, ստանալ շահաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,

գ) առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը՝ նախապատվության իրավունքի իրականացման հնարավորության մասին ծանուցումն ստանալուց հետո 60 (վաթսուն) օրվա ընթացքում,

դ) նախապատվության իրավունքով ձեռք բերել Ընկերության մյուս բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը,

ե) ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, այդ թվում՝ ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին, Ընկերության տնտեսական գործունեությանը: Տեղեկատվությունը պետք է տրամադրվի բաժնետիրոջ գրավոր պահանջը ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր ձևով,

զ) բաժնետերերի ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,

է) հանդես գալ առաջարկություններով բաժնետերերի ընդհանուր ժողովում,

ը) բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,

թ) դիմել դատարան՝ Ընկերության կառավարման մարմինների կողմից ընդունված և գործող օրենսդրությանը հակասող որոշումների բողոքարկման նպատակով,

ժ) Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը,

ժա) օգտվել ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

4.5. Ընկերության արտոնյալ բաժնետոմսի սեփականատերն իրավունք ունի՝

ա) ստանալ շահաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից Կանոնադրությամբ սահմանված կարգով,

բ) օգտվել ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

4.6. 4.6. Ընկերությունը կարող է թողարկել հաստատագրված շահութաբաժնով, փոփոխական շահութաբաժնով, կումուլյատիվ, ոչ կումուլյատիվ, մարվող, հետ գնման իրավունքով, փոխարկելի, ոչ փոխարկելի մի քանի դասի արտոնյալ բաժնետոմսեր: Յուրաքանչյուր դասով ամրագրված իրավունքները սահմանվում են այդպիսի արտոնյալ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման պայմաններով, որը հաստատվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ: Ընկերության կողմից տեղաբաշխված հաստատագրված շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսերն իրավունք են տալիս դրանց սեփականատերերին ստանալ հաստատագրված շահութաբաժին՝ բաժնետոմսերի անվանական արժեքից որոշված տոկոսներով: Ընկերության կողմից տեղաբաշխված փոփոխական շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսերի շահութաբաժնի չափը հաշվարկվում է ելնելով որևէ գործոնից (այդ թվում՝ ՀՀ Կենտրոնական բանկի հաշվարկային դրույք, գնաճ և այլն): Տվյալ դասի բաժնետոմսերի շահութաբաժինների վճարման պայմանները, շահութաբաժնի չափը, մարման գինը, հետգնման պայմանները, լուծարային արժեքը սահմանվում են այդպիսի արտոնյալ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման պայմաններով սահմանված կարգով: Ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ՀՀ Կենտրոնական Դեպոզիտարիայի կողմից:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

5.1. **Ընկերության կառավարման մարմիններն են՝**

ա) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը,

բ) Ընկերության խորհուրդը,

գ) Ընկերության գործադիր տնօրենը:

5.2. **Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը**

5.2.1. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը նրա բաժնետերերի ընդհանուր ժողովն է:

5.2.2. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում.

ա) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Ընկերության վերակազմակերպումը (խորհրդի ներկայացմամբ),

գ) Ընկերության լուծարումը,

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,

ե) Ընկերության խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

է) Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը,

ը) Ընկերության վերստուգողի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը,

թ) Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

ժ) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվետվության, տարեկան շահաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահաբաժինների չափի և վճարման կարգի հաստատումը,

ժա) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը,

ժբ) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության միջոցով (խորհրդի ներկայացմամբ),

ժգ) բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը (խորհրդի ներկայացմամբ).

ժդ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը (խորհրդի ներկայացմամբ),

ժե) Ընկերության խորհրդի անդամների և վերստուգողի վարձատրության պայմանների և ծախսերի հատուցման կարգի ու պայմանների որոշումը:

5.2.3. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում նաև հետևյալ հարցերը, որոնց որոշումների ընդունումը, ժողովի որոշմամբ, կարող է փոխանցվել Ընկերության խորհրդին.

ա) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում,

բ) դուստր, կախյալ, հոլդինգային ընկերությունների, այլ կազմակերպությունների, առևտրային կազմակերպությունների միությունների ստեղծումը և մասնակցությունը դրանց, եթե դա ժողովի կողմից հաստատման ենթակա խոշոր գործարք չի հանդիսանում:

5.2.4. Տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է Ընկերության յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:

5.2.5. Անհետաձգելի հարցերի քննարկման նպատակով կարող է գումարվել բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով: Արտահերթ ժողովի որոշումը կարող է ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել է Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

5.2.6. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա կարգով անցկացված նիստ չի համարվում:

5.2.7. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն.

ա) Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով,

բ) Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը)՝ իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով.

գ) Ընկերության բաժնետեր չհանդիսացող խորհրդի անդամները և գործադիր տնօրենը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,

դ) Ընկերության վերստուգողը,

ե) Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձը (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում):

5.2.8. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակը կազմվում է խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա և անհապաղ տրամադրվում Ընկերության հասարակ բաժնետոմսերի առնվազն 10 (տասը) տոկոսին տիրապետող և բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված բաժնետերերին: Ընկերությունը պարտավոր է բաժնետիրոջ պահանջով հնգօրյա ժամկետում նրան տեղեկանք տրամադրել բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում նրա ընդգրկման մասին:

5.2.9. Սույն կանոնադրության 5.2.7 կետում նշված անձինք ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցվում են ժողովի գումարումից առնվազն 5 (հինգ) օր առաջ, իսկ անհետաձգելի դեպքերում նաև ավելի կարճ ժամկետում՝ նրանց համապատասխան գրավոր կամ բանավոր ծանուցում ուղարկելու միջոցով:

5.2.10. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 50-ից (հիսունից) ավելի տոկոսին:

Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է Ընկերության բաժնետերերի նոր ընդհանուր ժողովի գումարման ամսաթիվը: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:

5.2.11. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնադրության 5.2.12 և 5.2.13 կետերում նշված հարցերով որոշումների:

5.2.12. Հետևյալ հարցերով ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով.

ա) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

բ) Ընկերության վերակազմակերպումը,

գ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,

դ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

ե) ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում շահագրգռվածության առկայության դեպքում գործարքների կնքման մասին որոշման ընդունումը,

զ) Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 (հիսուն) տոկոսը գերազանցող արժեքով, ինչպես նաև Ընկերության արդեն տեղաբաշխված հասարակ բաժնետոմսերի 25 (քսանհինգ) և ավելի տոկոսը կազմող բաժնետոմսերի տեղաբաշխման հետ կապված խոշոր գործարք կնքելու մասին որոշման կայացումը:

5.2.13. Հետևյալ հարցերով ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի 2/3-ից.

ա) Ընկերության լուծարումը.

բ) Ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցումը:

5.3. **Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի վարման կարգը**

5.3.1. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցող անձանց վերապահվում է օրակարգում ընդգրկված հարցերի քննարկմանը մասնակցելու հավասար իրավունք:

5.3.2. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը բացվում է ժողովի նախագահի համապատասխան հայտարարությամբ, որի ժամանակը պետք է համընկնի ընդհանուր ժողովի գումարման ծանուցման մեջ նշված ժամանակին:

5.3.3. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը փակվում է ժողովի նախագահի համապատասխան հայտարարությամբ:

5.4. **Ընկերության խորհուրդը**

5.4.1. Ընկերության խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ իր իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում: Ընկերության խորհրդի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատված խորհրդի կանոնակարգով:

5.4.2. Ընկերության խորհուրդը կազմված է առնվազն երեք անդամից, որոնց լիազորությունների ընդհանուր տևողությունը սահմանափակված չէ:

Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է որոշում կայացնել Ընկերության խորհրդի ցանկացած անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

5.4.3. Ընդհանուր ժողովին Ընկերության խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 2 (երկու) տոկոսի բաժնետերերը, ինչպես նաև Ընկերության խորհուրդը:

5.4.4. Ընկերության խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները իրենց կազմից՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների 3/4-ով: Ընկերության խորհրդի նախագահը չի կարող Ընկերությունում այլ վճարովի պաշտոն զբաղեցնել՝ բացառությամբ այն դեպքի, երբ համատեղությամբ հանդիսանում է նաև Ընկերության գործադիր տնօրեն: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել խորհրդի նախագահին կամ ընտրել նոր նախագահ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների 3/4-ով:

5.4.5. Ընկերության խորհրդի նախագահն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ա) կազմակերպում է խորհրդի աշխատանքները,

բ) գումարում է խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,

գ) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը,

դ) սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում նախագահում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովներում,

5.4.6. Ընկերության խորհրդի իրավասություններն են՝

ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը և Ընկերության քաղաքականությունների ու ներքին կանոնակարգերի հաստատումը,

բ) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատումը,

գ) Ընկերության ամենամյա ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը,

դ) Ընկերության բաժնետերերի տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը, դրանց օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,

ե) Ընկերության գործադիր տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների ու կարգի հաստատումը,

զ) Ընկերության վերստուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների, ինչպես նաև Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ բաժնետերերի ընդհանուր ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը,

է) Ընկերության բաժնետոմսերի դիմաց միջանկյալ շահաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը,

ը) սույն կանոնադրության 5.2.2 կետի (բ), (ժբ)-(ժե) կետերով նախատեսված հարցերի ներկայացումը բաժնետերերի ընդհանուր ժողովի քննարկմանը.

թ) Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը՝ բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով, եթե տեղաբաշխվող բաժնետոմսերը չեն կազմում Ընկերության արդեն տեղաբաշխված բաժնետոմսերի 25 (քսանհինգ) և ավելի տոկոսը, և դրանով պայմանավորված Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը կամ կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

ժ) Ընկերության պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,

ժա) Ընկերության գույքի շուկայական արժեքի որոշումը՝ օրենքով սահմանված կարգով,

ժբ) Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,

ժգ) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,

ժդ) Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը,

ժե) Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 (քսանհինգ) - 50 (հիսուն) տոկոսը կազմող արժեքով խոշոր գործարք կնքելու մասին որոշման կայացումը,

ժզ) շահագրգռվածության առկայության դեպքում գործարք կնքելու մասին որոշման կայացումը,

ժէ) Ընկերության տարեկան հաշվետվության նախնական հաստատումը,

ժը) Ընկերության վերստուգողի կողմից իրականացվող ստուգումներին հատուկ մասնագետների ներգրավմանը հավանություն տալը:

5.4.7. Ընկերության խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը առնվազն 3 (երեք) ամիսը մեկ անգամ՝ իր նախաձեռնությամբ կամ խորհրդի անդամի, Ընկերության գործադիր տնօրենի, վերստուգողի, Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի, ինչպես նաև Ընկերության քվեարկող բաժնետոմսերի 5 (հինգ) կամ ավելի տոկոս ունեցող բաժնետիրոջ պահանջով:

5.4.8. Խորհրդի նախագահը և (կամ) խորհրդի նիստի գումարման պահանջ ներկայացնող անձը կարող են պահանջել նաև որևէ երրորդ անձի մասնակցությունը խորհրդի նիստին: Նման դեպքում խորհրդի նախագահը ծանուցում է ուղարկում նաև այդ անձին՝ պայմանով, որ խորհուրդն իր որոշմամբ կարող է մերժել այդ անձի մասնակցությունը խորհրդի նիստին:

5.4.9. Խորհրդի նիստի գումարման մասին խորհրդի նախագահը ծանուցում է խորհրդի անդամներին և այլ մասնակիցներին՝ նիստից առնվազն 5 (հինգ) օր առաջ, իսկ անհետաձգելի դեպքերում՝ նաև ավելի կարճ ժամկետում: Խորհրդի նախագահը պարտավոր է խորհրդի նիստ գումարել սույն կանոնադրության 5.4.7. կետում նշված անձանց պահանջն ստանալուց հետո ոչ ուշ, քան 10 (տաս) օրվա ընթացքում, բացառությամբ սույն կանոնադրության 5.4.11 կետի:

5.4.10. Խորհրդի նիստն իրավասու է, եթե նիստին ներկա են խորհրդի անդամների կեսից ավելին:

5.4.11. Խորհրդի որոշումները խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կարող են ընդունվել հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով): Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է քվեաթերթիկների օգտագործմամբ, որոնք նիստի գումարման մասին ծանուցմանը ներկայացվող պահանջների պահպանմամբ խորհրդի նախագահի կողմից ուղարկվում են խորհրդի անդամներին: Խորհրդի նախագահը խորհրդի անդամներին նաև ծանուցում է լրացված քվեաթերթիկների ընդունման վերջնաժամկետի մասին, որը չի կարող քվեաթերթիկների ուղարկման պահից սկսած 10 (տասը) օրից պակաս լինել: Հեռակա քվեարկությամբ ընդունված խորհրդի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել է խորհրդի անդամների կեսից ավելին:

5.4.12. Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:

5.4.13. Խորհրդի յուրաքանչյուր անդամ խորհրդի նիստերում քվեարկության ժամանակ ունի մեկ ձայնի իրավունք: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ Խորհրդի նախագահի ընտրության և սույն կանոնադրության սույն կանոնադրության 5.4.14 կետում նշված հարցերով որոշումների:

5.4.14. Հետևյալ հարցերով խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի կողմից միաձայն.

ա) Կանոնադրական կապիտալի ավելացմամբ պայմանավորված՝ Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը կամ կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 (քսանհինգ) - 50 (հիսուն) տոկոսը կազմող արժեքով խոշոր գործարք կնքելու մասին որոշման կայացումը:

5.4.15. Ընկերության խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հնգօրյա ժամկետում և ստորագրվում է նիստին մասնակցող անդամների կողմից, որոնք պատասխանատվություն են կրում արձանագրության մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

5.5. **Ընկերության Գործադիր տնօրենը**

5.5.1. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գործադիր տնօրենը: Ընկերության գործադիր տնօրենի հետ աշխատանքային պայմանագիրն Ընկերության անունից կնքում է Ընկերության խորհրդի նախագահը: Ընկերության գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալ(ներ):

5.5.2. Ընկերության գործադիր տնօրենն իրականացնում է հետևյալ գործառույթները,

ա) ներկայացնում է Ընկերությունը երրորդ անձանց հետ հարաբերություններում, պետական և այլ մարմիններում, այլ կազմակերպություններում,

բ) տնօրինում է Ընկերության գույքը և ֆինանսական միջոցները, Ընկերության անունից կնքում է գործարքներ,

գ) գործում է Ընկերության անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր,

դ) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

ե) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության խորհրդի կողմից հաստատվող ներքին կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը,

զ) իրականացնում է Ընկերության գործունեության ղեկավարման հետ կապված այլ գործառույթներ, որոնց կատարումը վերապահված չէ Ընկերության մյուս կառավարման մարմինների իրավասությանը:

5.5.3. գործադիր տնօրենի բացակայության ժամանակ նրան փոխարինում է գործադիր տնօրենի տեղակալը:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Ընկերությունը հաշվապահական հաշվառումը վարում է ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ կառավարության լիազորված մարմնի հետ համաձայնեցված կարգով՝ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխան:

6.2. Ընկերության գործադիր տնօրենը և գլխավոր հաշվապահը պատասխանատվություն են կրում Ընկերության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և այլ հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

6.3. Ընկերության գլխավոր հաշվապահն իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

6.4. Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում տարեկան հաշվետվության, տարեկան հաշվապահական հաշվեկշռի, շահույթի և վնասների հաշվետվության հաստատման ժամանակ Ընկերության վերստուգողի և արտաքին աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը պարտադիր է:

6.5. Ընկերության տարեկան հաշվետվությունը ենթակա է նախնական հաստատման Ընկերության խորհրդի կողմից բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի գումարման ամսաթվից առնվազն 30 (երեսուն) օր առաջ:

6.6. Ընկերությունը ֆինանսական տարվա ավարտից հետո վեցամսյա ժամկետում մամուլում հրապարակում է իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը և արտաքին աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը: Ընկերությունը հրապարակում է իր եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը (տասնհինգը):

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

7.1. Ընկերությունը ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացվում է Ընկերության վերստուգողի կողմից, որն իրականացնում է վերստուգիչ հանձնաժողովի (խմբի) գործառույթները:

7.2. Վերստուգողն ընտրվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ 3 (երեք) տարի ժամկետով: Վերստուգողը չպետք է ընդգրկված լինի Ընկերության որևէ կառավարման մարմնի կազմում:

7.3. Ընկերության վերստուգողն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ա) Ընկերության ֆինանսական փաստաթղթերի ստուգում, գույքագրմանը վերաբերող փաստաթղթերի վերլուծություն, նշված փաստաթղթերի համեմատություն առաջնային հաշվապահական հաշվառման տվյալների հետ,

բ) Ընկերության անունից կնքված պայմանագրերի, կատարվող գործարքների և կոնտրագենտների հետ կատարվող հաշվարկների օրինականության ստուգում,

գ) վարվող հաշվապահական հաշվառման՝ ՀՀ օրենսդրությանը և միջազգային ստանդարտներին համապատասխանության վերլուծություն,

դ) Ընկերության ֆինանսական դրության, վճարունակության, ակտիվների լիկվիդայնության, սեփական և փոխառու միջոցների հարաբերակցության վերլուծություն և Ընկերության կառավարման մարմիններին ուղղված առաջարկությունների նախապատրաստում,

ե) բյուջե կատարվող վճարումների ճշգրիտ և ժամանակին կատարման, շահաբաժինների վճարման, այլ պարտավորությունների մարման ստուգում,

զ) Ընկերության տարեկան հաշվետվության, հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների հաշվետվության, ֆինանսական և այլ հաշվետվությունների կազմման ճշգրտության ստուգում,

է) Ընկերության խորհրդի, գործադիր տնօրենի, այլ ստորաբաժանումների կողմից ընդունված որոշումների՝ ՀՀ օրենսդրությանը, Ընկերության կանոնադրությանը և կառավարման մարմինների որոշումներին համապատասխանության ստուգում,

ը) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումների վերլուծություն,

թ) օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

7.4. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն իրականացվում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան և եռամսյակային արդյունքների հիման վրա, ինչպես նաև կարող է իրականացվել վերստուգողի սեփական նախաձեռնությամբ, Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, Ընկերության խորհրդի որոշմամբ կամ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի 10 (տասը) և ավելի տոկոսին տիրապետող (այդ թվում՝ համատեղ) բաժնետերերի պահանջով:

7.5. **Արտաքին աուդիտը**

7.5.1. Յուրաքանչյուր տարի Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը ներգրավում է օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր:

7.5.2. Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձին նշանակում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը, իսկ նրա վճարման չափը սահմանում է Ընկերության խորհուրդը:

7.5.3. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն աուդիտորի կողմից կարող է իրականացվել նաև Ընկերության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 (հինգ) տոկոսի սեփականատեր բաժնետերերի պահանջով: Այդ դեպքում Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձին ընտրում, նրա հետ պայմանագիր են կնքում և վճարումը կատարում են ստուգում պահանջող բաժնետերերը, ընդ որում՝ նրանք կարող են Ընկերությունից պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, եթե ստուգման արդյունքում բացահայտվել են Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող էական խախտումներ:

7.5.4. Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում պետք է նախատեսվի աուդիտորական եզրակացության և աուդիտորական հաշվետվության կազմում:

7.5.5. Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրի դրույթները, բացառությամբ ՝ պայմանագրի գնի, համաձայնեցնում է գործադիր տնօրենը, իսկ պայմանագիրը կնքում է խորհրդի նախագահը:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ

8.1. Ընկերությունը շահույթից կատարվող մասհանումների հաշվին ստեղծում է գլխավոր պահուստ (պահուստային հիմնադրամ) կանոնադրական կապիտալի 15 (տասնհինգ) տոկոսի չափով:

Ընկերության պահուստային հիմնադրամը ձևավորվում է Ընկերության տարեկան կտրվածքով զուտ շահույթի մեծություններից 5 (հինգ) տոկոսի չափով մասհանումներ կատարելու հաշվին՝ մինչև հիմնադրամի կանոնադրական կապիտալի 15 (տասնհինգ) տոկոսի չափով լրանալը:

8.2. Ընկերության պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմանադրամի միջոցները չեն կարող օգտագործվել այլ նպատակներով:

8.3. Ընկերությունը կարող է ստեղծել այլ պահուստներ և հիմնադրամներ ՀՀ օրենսդրության և Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Պահուստային և այլ հիմնադրամների օգտագործման մասին որոշումը ընդունում է Ընկերության Խորհուրդը:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

9.1. Ընկերությունը կարող է վերակազմակերպվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

9.2. Ընկերությունը կարող է լուծարվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

ՀԱՎԵԼՎԱԾ 5

Գրանցված է
ՀՀ ԿԲ խորհրդի 26.10.2010թ. թիվ 267Ա որոշմամբ
Փոփոխված է
10.04.2015 թվականին

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ թիվ 107

Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությանը

Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Սասնա Ծռեր 2շենք, թիվ 251 տարածք

Գրանցման համարը՝ 35

Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ՝ 26.10.2010թ.

Հարկ վճարողի հաշվառման համարը՝ 01013781

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝

Արթուր Ջավադյան

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ 6

«02» հոկտեմբերի 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 233-Լ

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-Ի ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՂԵԿԱՎԱՐՎԵԼՈՎ «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-Ի ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ և ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՎ՝ «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-Ի ԽՈՐՀՈՒՐԴԸ՝

ՈՐՈՇԵՑ

1. Թողարկել անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ 1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար և 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ թողարկման ընդհանուր ծավալով սույն որոշման Հավելվածում նշված էական պայմաններով:
2. Հաստատել Ընկերության անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության, արժեկտրոնների վճարման և մարման կարգն ու պայմանները՝ համաձայն սույն որոշմանը կից Հավելվածի:
3. Հանձնարարել Ընկերության գործադիր տնօրեն Լուիզա Իգրարյանին կատարել անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման ու ցուցակման կազմակերպչական աշխատանքները, մասնավորապես՝
   - կազմակերպել «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ-ի կողմից «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերության հետ «Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման» պայմանագրերի կնքումը,
   - բանակցել և կնքել պարտատոմսերի լավագույն ջանքերի սկզբունքով չերաշխավորված տեղաբաշխման ծառայությունների մատուցման պայմանագիր,
   - ապահովել պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերի առևտրի նպատակով ցուցակման հայտի ներկայացումը «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Խորհրդի նախագահ՝ Էդուարդ Մարության

02 հոկտեմբերի 2019թ.
ժամը 16:00
Ք.Երևան

ՀԱՎԵԼՎԱԾ 6

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի
«02» հոկտեմբերի 2019թ.
Թիվ 233-Լ որոշմամբ
Խորհրդի նախագահ՝

Է.Մարության _____

ՀԱՎԵԼՎԱԾ

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության, արժեկտրոնների վճարման և մարման կարգն ու պայմանները

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒնիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության, արժեկտրոնների վճարման և մարման կարգն ու պայմանները (այսուհետ՝ Կարգ) սահմանվում են Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ Օրենքի, «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ Օրենքի, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ Օրենքի (այսուհետ՝ Օրենք), Կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվ իրավական ակտերի և Ընկերության Կանոնադրության համապատասխան:

1. <u>*Հիմնական տեղեկատվություն*</u>

Ընկերության անվանական պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցները օգտագործվելու են բացառապես վարկային քաղաքականության ընդլայնման ուղղությամբ, այդ թվում նոր վարկատեսակների մշակման և ներդրման, ինչպես նաև գործող վարկատեսակներով առավել ակտիվ վարկավորման ուղղությամբ: Ընկերությունը նախատեսում է գործող և նոր վարկատեսակների տրամադրմամբ մեծացնել վարկային պորտֆելի ծավալը, բավարարել մատուցվող ֆինանսական ծառայությունների նկատմամբ հաճախորդների աճող պահանջարկը:

2. <u>*Տեղեկատվություն թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ*</u>

2.1 Ընկերության կողմից թողարկվող արժեթղթերն անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային ու առանց ապահովվածության պարտատոմսեր են:

Առաջին տրանշ. Թողարկվող և տեղաբաշխվող պարտատոմսերի ծավալը 1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար է, քանակը՝ 10,000 (տասը հազար) հատ: Մեկ պարտատոմսի անվանական արժեքը 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար է: Շրջանառության ժամկետը 24 (քսանչորս) ամիս է: Արժեկտրոնի տոկոսադրույքը կկազմի տարեկան ֆիքսված 6.5% (վեց ամբողջ հինգ տասնորդական տոկոս), որը կվճարվի կիսամյակային պարբերականությամբ: Թողարկվող պարտատոմսերը փոխարկելի չեն և չունեն հետգնման հնարավորություն: Թողարկման արժույթն ԱՄՆ դոլարն է:

Երկրորդ տրանշ. Թողարկվող և տեղաբաշխվող պարտատոմսերի ծավալը 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ է, քանակը՝ 50,000 (հիսուն հազար) հատ: Մեկ պարտատոմսի անվանական արժեքը 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ է: Շրջանառության ժամկետը 12 (տասներկու) ամիս է, արժեկտրոնի տոկոսադրույքը տարեկան ֆիքսված 9 (ինը) տոկոս է՝ արժեկտրոնների կիսամյակային վճարումների պարբերականությամբ: Թողարկվող պարտատոմսերը փոխարկելի չեն և չունեն հետգնման հնարավորություն: Թողարկման արժույթը ՀՀ դրամն է:

2.2 Պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ, պարտատոմսերի ձեռքբերման քանակի, ազատ շրջանառության հետ կապված որևէ սահմանափակումներ չեն սահմանվում՝ բացառությամբ օրենքով և ենթաօրենսդրական ակտերով սահմանված դեպքերի: Մասնավորապես, կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալուց հետո տվյալ շուկայից դուրս առևտուրը արգելվում է, բացառությամբ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի հոդված 129-ի 4-րդ կետին առնչվող դեպքերի:

2.3 Թողարկողը առաջին և երկրորդ տրանշների տեղաբաշխումն իրականացնելու է միևնույն օրը: Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը տեղի կունենա ՀՀ ԿԲ-ի կողմից պարտատոմսերի Ազդագրի գրանցումից հետո մինչև 2019թ.-ի դեկտեմբերի 25-ը ներառյալ: Թողարկման և տեղաբաշխման օրերը նույնն են: Թողարման և տեղաբաշխման օրը կսահմանվի Ընկերության գործադիր տնօրենի որոշմամբ: Այդ մասին տեղեկատվությունը կհրապարակվի տեղաբաշխումից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օր առաջ Թողարկողի և Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքերում՝ www.globalcredit.am և www.renesa.am:

2.4 ***Պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքները***

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ինքնուրույն տնօրինել, տիրապետել և օգտագործել սեփականության իրավունքով իրենց պատկանող պարտատոմսերը: Պարտատոմսերից բխող իրավունքներն են՝

- ստանալ մարման գումարը անվանական արժեքով, ինչպես նաև պարտատոմսերով նախատեսված արժեկտրոնային եկամուտները

- Ընկերության կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենքով թույլատրվող գործողություններ
- իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը կարգավորվող շուկայում (ֆոնդային բորսայում ցուցակված լինելու դեպքում) կամ կարգավորվող շուկայից դուրս (արտաբորսայում)՝ օրենքով սահմանված կարգով, ընդ որում կարգավորվող շուկայում առևտրի թույլտվության ստացումից և ցուցակումից հետո չի իրականացվում պարտատոմսերի արտաբորսայական առք ու վաճառք
- ՀԿԴ հաշվի օպերատորների միջոցով ստանալ իր արժեթղթերի հաշվից քաղվածք
- օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը
- օրենքով և իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ

Ընկերության լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարվում են «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ, որի համաձայն Ընկերության կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են 4-րդ հերթին: Ընդ որում, յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո:

2.5 *Պարտատոմսերի անվանական տոկոսադրույքը և վճարման պայմանները*

Առաջին տրանշ.

Պարտատոմսերի նկատմամբ արժեկտրոնային եկամուտը սահմանվում է տարեկան 6.5% (վեց ամբողջ հինգ տասնորդական տոկոս), որը վճարվելու է կիսամյակային պարբերականությամբ: Արժեկտրոնային եկամուտների կուտակումը կկատարվի թողարկման/տեղաբաշխման օրից սկսած, իսկ արժեկտրոնների հաշվարկման և վճարման օր է հանդիսանում պարտատոմսերի տեղաբաշխման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ և 24-րդ ամիսների համապատասխան օրերը: Եթե արժեկտրոնային եկամտի վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարումը կկատարվի այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու է ԱՄՆ դոլարով, սակայն վճարումը կկատարվի ՀՀ դրամով անկանխիկ եղանակով՝ վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից ԱՄՆ դոլարի նկատմամբ հրապարակված փոխարժեքով:

Երկրորդ տրանշ

Պարտատոմսերի նկատմամբ արժեկտրոնային եկամուտը սահմանվում է տարեկան 9 (ինը) տոկոս, որը վճարվելու է կիսամյակային պարբերականությամբ: Արժեկտրոնային եկամուտների կուտակումը կկատարվի թողարկման/տեղաբաշխման օրից սկսած, իսկ արժեկտրոնների հաշվարկման և

վճարման օր է հանդիսանում պարտատոմսերի տեղաբաշխման օրվան հաջորդող 6-րդ և 12-րդ ամիսների համապատասխան օրերը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու և վճարվելու է ՀՀ դրամով

Արժեկտրոնային եկամտի գումարը վճարվում է վճարման նախորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձանց (սեփականատերեր կամ անվանատերեր)՝ վերջիններիս բանկային հաշվին համապատասխան վճարումների մուտքագրման միջոցով:

Արժեկտրոնային եկամտի գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$I = (FV \times C)/f$$

որտեղ՝

I – արժեկտրոնային եկամուտ

FV – մեկ պարտատոմսի անվանական արժեք

C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույք

f – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվ (կիսամյակային վճարման դեպքում f=2)

Արժեկտրոնների կուտակված եկամուտը հաշվարկվում է հետևյալ բանաձևով ՝

$$AI = FV * \frac{C}{f} * \frac{DCS}{DCC}$$

որտեղ՝

AI – կուտակված արժեկտրոնային եկամուտ

FV –պարտատոմսի անվանական արժեք

C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույք

f – արժեկտրոնի վճարման հաճախականություն (կիսամյակային վճարումների դեպքում f=2)

DCS – գործարքի կատարման (settlement) օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած փաստացի օրերի քանակն է (օրերի հաշվարկման պայմանականությունը՝ Փաստացի/փաստացի)

DCC – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի վճարման օրը եղած փաստացի օրերի քանակն է (օրերի հաշվարկման պայմանականությունը՝ Փաստացի/փաստացի)

2.6 *Պարտատոմսերի մարումը*

Առաջին տրանշ. Պարտատոմսերի մարումը կկատարվի թողարկման և տեղաբաշխման օրվանից հաշվարկված 24-րդ ամսվա համապատասխան օրը: Եթե մարման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարումը կկատարվի տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պարտատոմսերի մարման և վճարման ամսաթվերը նույնն են:

Պարտատոմսերի մարման գումարների վճարումը կատարվում է մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձանց՝ վերջիններիս բանկային հաշիվներին համապատասխան վճարումների մուտքագրման միջոցով: Բանկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունների բացակայության դեպքում Թողարկողը երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ սեփականատերերի վճարումները փոխանցում է նոտարի դեպոզիտ:

Պարտատոմսերի մարման դիմաց վճարումները կատարվելու են ԱՄՆ դոլարով անկանխիկ եղանակով:

Թողարկողի կողմից պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

Երկրորդ տրանշ. Պարտատոմսերի մարումը կկատարվի թողարկման և տեղաբաշխման օրվանից հաշվարկված 12-րդ ամսվա համապատասխան օրը: Եթե մարման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարումը կկատարվի տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պարտատոմսերի մարման և վճարման ամսաթվերը նույնն են:

Պարտատոմսերի մարման գումարների վճարումը կատարվում է մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձանց՝ վերջիններիս բանկային հաշիվներին համապատասխան վճարումների մուտքագրման միջոցով: Բանկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունների բացակայության դեպքում Թողարկողը երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ սեփականատերերի վճարումները փոխանցում է նոտարի դեպոզիտ:

Պարտատոմսերի մարման դիմաց վճարումները կատարվելու են ՀՀ դրամով անկանխիկ եղանակով:

Թողարկողի կողմից պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

3. *Առաջարկի ժամկետները և պայմանները*

3.1 Ընկերության պարտատոմսերը տեղաբաշխվելու են «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի (այսուհետև՝Բորսա) տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ մեկանգամյա աճուրդի (եվրոպական) անցկացման միջոցով՝ համաձայն Բորսայի «Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններ»-ի, ընդ որում աճուրդին ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտեր չեն կարող ներկայացվել:

Տեղաբաշխման աճուրդը կարող է հետաձգվել, ընդմիջվել կամ դադարեցվել, աճուրդի ընթացքում տեխնիկական ընդմիջում կարող է հայտարարվել, ինչպես նաև

տեղաբաշխումը կարող է չեղյալ համարվել Բորսայի՝ «Առևտրի ընդհանուր կանոններ»-ով և «Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններ»-ով սահմանված ընթացակարգերով և սահմանված դեպքերում:

Ազդագիրը կհրապարակվի տեղաբաշխումից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օր առաջ Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.globalcredit.am: Նշված տեղեկությունը կարող է հրապարակվել/տարածվել նաև այլ միջոցներով:

Ընկերությունն իր պաշտոնական ինտերնետային կայքում տեղաբաշխման ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հրապարակում է աճուրդի արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես՝ ներկայացված առաջարկությունների ընդհանուր ծավալը, բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը, տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված գինը (եկամտաբերությունը):

3.2 Պարտատոմսերի առաջարկն ուղղված է ֆիզիկական և իրավաբանական անձանց (այդ թվում որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողներին), Ընկերության բաժնետերերին և անհատ ձեռնարկատերերին:

3.3 Պարտատոմսի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$P = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{f*100}\right)^{i-1+\tau}} + \frac{A}{\left(1+\frac{y}{f*100}\right)^{N-1+\tau}}, \tau = \frac{DSN}{DCC}$$

որտեղ՝

P – պարտատոմսի գինն է,

f – արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

y– պարտատոմսի մինչև մարում եկամտաբերությունն է,

C – տարեկան արժեկտրոնի չափն է,

A - պարտատոմսի անվանական արժեքն է,

N – հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվն է,

i – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոփոխվում է տվյալ պահից մինչև վերջնական մարում մնացած արժեկտրոնների վճարումների քանակից կախված, ընդ որում՝ i արժեքը փոփոխվում է ըստ աճման և ընդունում է 1-ից մինչև N արժեքները (երբ N-ը ընդունում է 1 արժեք, i-ն նույնպես ընդունում է 1 արժեքը),

DSN – գործարքի կատարման օրվան (settle date) հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած փաստացի օրերի քանակն է (օրերի հաշվարկման պայմանականությունը՝ Փաստացի/փաստացի),

DCC – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի վճարման օրը եղած փաստացի օրերի քանակն է (օրերի հաշվարկման պայմանականությունը՝ Փաստացի/փաստացի):

3.4 Առաջարկվող պարտատոմսերի տեղաբաշխման համար նախատեսված է չերաշխավորված տեղաբաշխում՝ լավագույն ջանքերի սկզբունքով: Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնելու նպատակով Ընկերությունը «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ ներդրումային ընկերության հետ կնքելու է «Տեղաբաշխման ծառայությունների մատուցման» պայմանագիր: Վերջինս պարտավորվում է պայմանագրի դրույթներին համապատասխան իրականացնել Ընկերության անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային 1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար և 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ թողարկման ծավալով պարտատոմսերի չերաշխավորված տեղաբաշխում՝ առանց աճուրդի ժամանակ չտեղաբաշխված պարտատոմսերը ձեռք բերելու պայմանի:

3.5 Թողարկվող և տեղաբաշխվող անվանական պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրը կվարի «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ն (ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն, 5-րդ հարկ, հեռ.՝ +(37460) 615555, էլ"փոստ՝ info@cda.am)՝ ըստ «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի համապատասխան կանոնների, ընթացակարգերի և Ընկերության ու Դեպոզիտարիայի միջև կնքվելիք անվանական պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի վարման պայմանագրի:

4. ***Առևտրի թույլտվություն և առևտրի կազմակերպում***

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո կարգավորվող շուկայում թողարկված պարտատոմսերի առևտրի նպատակով Ընկերությունը հնարավորինս սեղմ ժամկետում կդիմի Բորսա: Բորսայի կողմից տեղաբաշխված պարտատոմսերի ցուցակման դիմումի մերժման պարագայում թողարկումը չեղյալ է համարվում և Ընկերությունը պարտավորվում է 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում հետ վերադարձնել պարտատոմսերի սեփականատերերի վճարած գումարները՝ ներառյալ կուտակված տոկոսները: Թողարկողը, պարտատոմսերի ցուցակումից հետո, մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին կհրապարակի իր ինտերնետային կայքում:

Ընկերությունը պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիությունն ապահովելու նպատակով կօգտվի շուկա ստեղծողի (market maker) ծառայություններից:

ՀԱՎԵԼՎԱԾ 7

RENESA
investment company

ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 002

ք. Երևան «03» հոկտեմբերի 2019թ.

«ՌԵՆԵՍԱ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Տեղաբաշխող)՝ ի դեմս գործադիր տնօրեն *Վաղինակ Սարոյանի*, ով գործում է Տեղաբաշխողի կանոնադրությամբ, մի կողմից, և *«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը* (այսուհետ՝ Թողարկող)՝ ի դեմս գործադիր տնօրեն *Լուիզա Իգրարյանի*, ով գործում է Թողարկողի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ նաև՝ Կողմ կամ Կողմեր), կնքեցին տեղաբաշխման ծառայությունների մատուցման սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն Պայմանագրով Տեղաբաշխողը պարտավորվում է իրականացնել Թողարկողի 1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար ծավալով 24 ամիս ժամկետայնությամբ և 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ ծավալով 12 ամիս ժամկետայնությամբ պարտատոմսերի չերաշխավորված հրապարակային տեղաբաշխում՝ հիմնվելով լավագույն ջանքերի սկզբունքի վրա: Այն իր մեջ ներառում է՝

1.1.1. Թողարկողի կողմից արժեթղթեր թողարկելու գործընթացի ժամանակացույցի և պայմանների վերաբերյալ գրավոր առաջարկության մշակումը և տրամադրումը, ինչպես նաև արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման ձևերի, ժամկետների, ծավալների ու մեխանիզմների համակարգումը,

1.1.2. Աջակցություն թողարկվող արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման ազդագրի (այսուհետև՝ Ազդագիր) պատրաստմանը և գրանցմանը,

1.1.3. Մարքեթինգային միջոցառումների անցկացման միջոցով հնարավոր ներդրողների բացահայտման աշխատանքների կազմակերպումը,

1.1.4. Թողարկված արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման կազմակերպումը,

1.1.5. Աջակցություն տեղաբաշխումից հետո պարտատոմսերը կարգավորվող շուկայի (այսուհետ՝ Բորսա) համապատասխան հարթակում ցուցակման համար,

1.1.6. Օրենքով և սույն Պայմանագրով նախատեսված Տեղաբաշխողին վերաբերող այլ գործողությունները:

1.2 Տեղաբաշխողը արժեթղթերի տեղաբաշխման աշխատանքները իրականացնում է սույն Պայմանագրով և Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Տեղաբաշխողի «Արժեթղթերի տեղաբաշխման կանոնակարգի» դրույթներին համապատասխան:

1.3 Տեղաբաշխման աշխատանքների իրականացման համար հիմք են հանդիսանում արժեթղթերի թողարկման մասին Թողակողի տնօրենների խորհրդի/Բաժնետերերի ժողովի կամ այլ իրավասու մարմնի որոշումները:

2 ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Թողարկողը պարտավոր է՝**

2.1.1. Տեղաբաշխման գործընթացի շրջանակներում պատշաճ կերպով կատարել սույն Պայմանագրի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր պարտականությունները:

RENESA investment company

2.1.2. Տեղաբաշխողին ներկայացնել հանձնարարական (պատվեր) տեղաբաշխման սկզբի օրվանից առնվազն մեկ օր առաջ,

2.1.3. Տեղաբաշխողի կողմից ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում դրանց ստացման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր հայտնել այդ մասին Տեղաբաշխողին: Հակառակ դեպքում հաշվետվությունը համարվում է ընդունված,

2.1.4. Հնարավորություն ընձեռել Տեղաբաշխողի ներկայացուցիչներին ծանոթանալու անհրաժեշտ փաստաթղթերին, տրամադրել տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման համար,

2.1.5. Նախապես և պատշաճ կերպով տեղեկացնել Տեղաբաշխողին բոլոր այն փոփոխությունների կամ լրացումների մասին, որոնք էական/նշանակալի ազդեցություն կարող են ունենալ Տեղաբաշխողի կողմից ծառայությունների իրականացման համար:

2.1.6. Փոխհատուցել Տեղաբաշխողի ծառայությունների կատարման հետ կապված մարքեթինգային ու ներկայացուցչական ծախսերը Պայմանագրի 3.1.2 կետով սահմանված գումարի վճարման հետ միասին,

2.1.7. Բորսայի կողմից պարտատոմսերի ցուցակման դիմումի մերժման դեպքում արժեթղթերը ձեռքբերողներին վերադարձնել 3.2 կետի համաձայն փոխանցված գումարը, ինչպես նաև մինչև մերժման ակտի ստացման օրը կուտակված տոկոսները,

2.1.8. Վճարել Տեղաբաշխողին 3.1.1 և/կամ 3.1.2 կետերով սահմանված գումարը անկախ պարտատոմսերի տեղաբաշխման/ցուցակման գործընթացի արդյունքներից,

2.1.9. Դիմել Տեղաբաշխողին (պրոֆեսիոնալ հաճախորդ լինելու դեպքում)՝ իրեն *պարտատոմսերի չերաշխավորված հրապարակային տեղաբաշխման* գծով որպես *ոչ պրոֆեսիոնալ* հաճախորդ վերաբերվելու համար (ինչը հնարավորություն կտա օգտվել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջներից), եթե կարծում է, որ ի վիճակի չէ գնահատել և կառավարել ներդրումային ծառայություններից կամ ներդրումներից բխող ռիսկերը,

2.1.10. Տեղեկացնել Տեղաբաշխողին (Պրոֆեսիոնալ հաճախորդ լինելու դեպքում) այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել Թողարկողի որպես պրոֆեսիոնալ դասակարգման վրա:

2.2. **Տեղաբաշխողը պարտավոր է՝**

2.2.1. Տեղաբաշխման գործընթացի շրջանակներում պատշաճ կերպով կատարել Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր պարտավորությունները,

2.2.2. Արժեթղթերի Ազդագիրը հրապարակել իր ինտերնետային կայքում, ինչպես նաև արժեթղթերի գնորդների պահանջով նրանց անվճար տրամադրել արժեթղթերի Ազդագրի տպագիր տարբերակը,

2.2.3. Մինչ տեղաբաշխման ծառայությունների հետ կապված մարքեթինգային և ներկայացուցչական միջոցառումներ իրականացնելը, համաձայնեցնել վերջիններիս հետ կապված ծախսերը Թողարկողի հետ,

2.2.4. Թողարկողին տրամադրել տեղաբաշխման արդյունքների մասին հաշվետվություն արժեթղթերի տեղաբաշխման ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում թղթային կամ էլեկտրոնային ֆորմատներով,

2.2.5. Պայմանագրի շրջանակներում գործել բարեխիղճ, ելնելով Թողարկողի և ներդրողների շահերից,

2.2.6. Անհապաղ դադարեցնել Թողարկողի որպես պրոֆեսիոնալ դասակարգումը (այդ մասին 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Թողարկողին), եթե վերջինիս կողմից տրամադրված կամ այլ կերպ Տեղաբաշխողին հասանելի դարձած տեղեկատվության

RENESA investment company

հիման վրա Տեղաբաշխողի գնահատականով Թողարկողն այլևս չի բավարարում այն պայմաններին, որոնց հիման վրա դասակարգվել է պրոֆեսիոնալ հաճախորդ, կամ եթե Տեղաբաշխողը պարզում է, որ Թողարկողի կողմից տրամադրված տեղեկությունները եղել են անարժանահավատ:

2.3. **Թողարկողն իրավունք ունի՝**

2.3.1. Տեղաբաշխողից պահանջել սույն Պայմանագրով վերջինիս ստանձնած պարտավորությունների պատշաճ և ամբողջովին կատարումը,

2.3.2. Տեղաբաշխողից պարբերաբար ստանալ ծառայությունների կատարման ընթացքի մասին տեղեկություններ և կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ:

2.4. **Տեղաբաշխողն իրավունք ունի՝**

2.4.1. Թողարկողից պահանջել սույն Պայմանագրով վերջինիս ստանձնած պարտականությունների պատշաճ և ամբողջովին կատարում:

2.4.2. Թողարկողից պահանջել և սահմանված կամ ողջամիտ ժամկետներում ստանալ սույն Պայմանագրի առարկային վերաբերող լիարժեք և հավաստի տեղեկատվություն,

2.4.3. Սույն Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով ստանալ իր կողմից կատարված աշխատանքների համար վարձատրություն,

2.4.4. Տեղաբաշխման մասնակցության պայմանագրեր կնքել ներդրումային ծառայություններ մատուցող այլ անձանց և ինստիտուցիոնալ ներդրողների հետ, ստեղծել տեղաբաշխման խմբեր,

2.4.5. Պրոֆեսիոնալ համարվող Թողարկողի նախաձեռնությամբ, կամ եթե առկա է վերջինիս համաձայնությունը՝ իր նախաձեռնությամբ, պրոֆեսիոնալ համարվող Թողարկողին վերաբերվել որպես ոչ պրոֆեսիոնալ և վերջինիս նկատմամբ կիրառել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջները:

3. ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Թողարկողը Տեղաբաշխողին սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների դիմաց վճարում է *7,000,000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ* (ներառյալ ԱԱՀ) հաստատուն վճար, որը ենթակա է վճարման երկու փուլով.

3.1.1. Առաջին փուլով վճարվող գումարը կազմում է 1,120,000 *ՀՀ դրամ* որպես կանխավճար, ենթակա է վճարման սույն Պայմանագրի ստորագրումից հետո և Տեղաբաշխողի կողմից տրված համապատասխան փոխանցման հաշվի ստացմանը հաջորդող 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

3.1.2. Երկրորդ փուլով վճարվող գումարը կազմում է 5,880,000 *ՀՀ դրամ* և ենթակա է վճարման պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ձևավորված սեփականատերերի առաջին ռեեստրի ստացումից հետո, Տեղաբաշխողի կողմից տրված համապատասխան հաշիվ ապրանքագրի ստացմանը հաջորդող 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

3.2. Սույն Պայմանագրի 2.2.4 կետով սահմանված հաշվետվությունը Թողարկողի կողմից ընդունված համարվելու պահից Տեղաբաշխողը Թողարկողին է փոխանցում արժեթղթերը ձեռքբերողների վճարած գումարը մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Տեղաբաշխողի կողմից ներդրողների բացահայտմանը ուղղված ներկայացուցչական և մարքեթինգային միջոցառումների համար անհրաժեշտ վճարումները կատարվում են Թողարկողի կողմից: Տվյալ վճարները սույն Պայմանագրի 3.1 կետով սահմանված գումարի մաս չեն կազմում և կկատարվեն ըստ Տեղաբաշխողի և Թողարկողի միջև ձեռք բերված գրավոր համաձայնության:

RENESA
investment company

3.4. Տեղաբաշխված արժեթղթերի գրանցման և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարումները կատարվում են Թողարկողի կողմից:

4. ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ԿԱՊԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Կողմերի միջև կապն իրականացվում է էլեկտրոնային փոստի, ֆաքսի կամ անձնական հանդիպումների միջոցով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Սույն Պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերը ենթակա են պատասխանատվության ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

5.2. Կողմերից որևիցե մեկի նախաձեռնությամբ Պայմանագրի ժամկետից շուտ լուծարման դեպքում նախաձեռնող Կողմը մյուս Կողմին վճարում է տուգանք թողարկման անվանական ծավալի *0.2%*-ի (զրո ամբողջ երկու տասնորդական տոկոս) չափով,

5.3. Կողմերից որևէ մեկի պարտավորությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով մյուս կողմի կրած բոլոր վնասները պետք է վճարի վնաս պատճառած Կողմը:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Կողմերը պարտավոր են Պայմանագրով իրենց ստանձնած պարտավորությունների կատարմանը խոչընդոտող անհաղթահարելի ուժի ազդեցության ի հայտ գալու դեպքում անհապաղ տեղեկացնել այդ մասին մյուս Կողմին: Ինչպես նաև, եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով տաս աշխատանքային օրվա ընթացքում: Համաձայնության չգալու դեպքում վեճերի լուծումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դա կատարված է գրավոր և ստորագրված Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

8.2. Կողմերի միջև փոխանցվող և այլ կերպ հայտնի դարձած հրապարակային չհամարվող տեղեկությունները հանդիսանում են գաղտնի և ենթակա չեն հրապարակման:

8.3. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների լրիվ և պատշաճ կատարումը:

8.4. Պայմանագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, կամ մեկ Կողմի՝ մյուս Կողմին նախօրոք՝ 10 (տասը) օր առաջ ուղարկված գրավոր պահանջով, եթե Կողմերը միմյանց հանդեպ չունեն ֆինանսական կամ այլ պարտավորություններ:

8.5. Պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից՝ հայերեն լեզվով: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Տեղաբաշխող

«ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 16

Հեռ.՝ (+37410) 54 87 87, 54 83 87
Էլ. փոստ՝ info@renesa.am
Բանկ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ,
Հ/Հ 1510001674531700
ՀՎՀՀ 02556638

Գործադիր տնօրեն՝

Վարինակ Սարոյան

Կ.Տ.

Թողարկող

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Սասնա Ծռեր 2 շենք, թիվ 251 տարածք
Հեռ.՝ (+37411) 70 01 00, 70 02 00
Էլ. փոստ՝ info@globalcredit.am
Բանկ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ,
Հ/Հ 1510007874330100
ՀՎՀՀ 01013781

Գործադիր տնօրեն՝

Լուիզա Իգրարյան

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ 8

ՈՒԹԵՐՈՐԴ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 101019/1

ք. Երևան **«10» հոկտեմբեր 2019թ**

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն /այսուհետ՝ Պատվիրատու/, ի դեմս գործադիր տնօրեն Լուիզա Իգրարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ն /այսուհետ՝ Դեպոզիտարիա/ ի դեմս գլխավոր տնօրեն Վահան Ստեփանյանի և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն, /այսուհետ՝ Հաշվի օպերատոր/, ի դեմս ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Զարգացում մասնաճյուղի կառավարիչ Դավիթ Օհանյանի, որը 30.01.2019թ.-ին տրված թիվ 791 լիազորագրի հիման վրա հանդես է գալիս ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ գործադիր տնօրեն Աշոտ Օսիպյանի անունից , որը, ղեկավարվելով 18.04.2017թ. կնքված «ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԴԱՄԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՇՆՈՐՀՄԱՆ» թիվ ՀԱ09/1 պայմանագրով և Դեպոզիտարիայի կանոններով, սույն պայմանագրի կնքման շրջանակներում գործում է նաև Դեպոզիտարիայի անունից, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Դեպոզիտարիան պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ և Հաշվի օպերատորի միջնորդությամբ Պատվիրատուին մատուցել ՀՀ օրենսդրությամբ և Դեպոզիտարիայի կանոններով նախատեսված ռեեստրի վարման ծառայությունները /այսուհետ՝ Ծառայություններ/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել մատուցվող Ծառայությունների գինը:

1.2. Սույն պայմանագրով մատուցվող բոլոր ծառայությունները Պատվիրատուին են մատուցվում Հաշվի օպերատորի միջնորդությամբ:

1.3. Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունները, ինչպես նաև սույն պայմանագրի առարկայի հետ կապված կողմերի իրավունքների և պարտականությունների ամբողջությունը սահմանվում և կարգավորվում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» թիվ 5/10 կանոնակարգով և դրանց հիման վրա ընդունված Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի կանոններով և կանոնակարգերով (այսուհետ՝ Իրավական ակտեր), որոնց Պատվիրատուն ծանոթ է:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ***Դեպոզիտարիան պարտավոր է***.

2.1.1. Ապահովել անհրաժեշտ տեխնիկական և իրավական պայմաններ, որպեսզի Ծառայությունները մատուցվեն պատշաճ որակով, և ամբողջ ծավալով՝ ՀՀ կենտրոնական բանկում գրանցված Դեպոզիտարիայի կանոններով սահմանված ժամկետներում և կարգով:

2.2. Հաշվի օպերատորը պարտավոր է.

2.2.1. Դեպոզիտարիայի ծառայությունները միջնորդավորել և Պատվիրատուին մատուցել պատշաճ որակով և ժամանակին՝ համաձայն ՀՀ նորմատիվ իրավական ակտերի, Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի կանոնների.

2.2.2. օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց և Դեպոզիտարիայի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո եռօրյա ժամկետում Պատվիրատուին տեղեկացնել Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի այն կանոնների մեջ կատարվող փոփոխությունների մասին, որոնք վերաբերվում են սույն պայմանագրով մատուցվող Ծառայությունների մատուցման ժամկետներին, կարգին և գնին: Սույն կետի իմաստով պատշաճ տեղեկացում է համարվում համապատասխան տեղեկությունները Հաշվի օպերատորի պաշտոնական ինտերնետային կայքերում զետեղելը:

2.3. <u>Պատվիրատուն պարտավոր է.</u>

2.3.1. Հայտնի դառնալու պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Հաշվի օպերատորի միջոցով Դեպոզիտարիային տեղեկացնել իր կողմից տրամադրված տվյալների (այդ թվում նաև՝ սույն Պայմանագրի 8.5 կետում նշված լիազորված անձանց վերաբերյալ տվյալների) հետ կապված անճշտությունների, դրանց փոփոխությունների, լրացումների մասին, և տրամադրել դրանց վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր.

2.3.2. Հայտնի դառնալու պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Հաշվի օպերատորի միջոցով Դեպոզիտարիային տեղեկացնել Պատվիրատուի վերակազմակերպման, լուծարման կամ սնանկ ճանաչման գործընթացների սկսման, ինչպես նաև այդ գործընթացների ավարտի մասին.

2.3.3. մատուցված Ծառայությունների դիմաց վճարել սույն պայմանագրի 3.1-րդ կետում նշված կարգով և չափով:

2.4. <u>Դեպոզիտարիան իրավունք ունի.</u>

2.4.1. հրաժարվել սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների կատարումից, եթե Պատվիրատուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3-րդ կետի պահանջները:

2.4.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված, ինչպես նաև Դեպոզիտարիայի կողմից իրականացվող՝ արժեթղթերի ռեեստրի վարման գործունեությունը կարգավորող իրավական ակտերով սահմանված դեպքերում (այդ թվում՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված ռիսկերը բացառելու և օտարերկրյա պետությունների նկատմամբ հարկային պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվության համադրման նպատակով) և կարգով Պատվիրատուի վերաբերյալ տեղեկություններ տրամադրել Դեպոզիտարիայի կոնտրագենտներին և/կամ ՀՀ և օտարերկրյա իրավասու մարմիններին:

2.5. <u>Հաշվի օպերատորն իրավունք ունի.</u>

2.5.1. Հետևել Պատվիրատուի կողմից սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարմանը.

2.5.2. հրաժարվել սույն պայմանագրի 2.2.1 կետով սահմանված կարգով ծառայությունները մատուցելուց, եթե Պատվիրատուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3-րդ կետի պահանջները:

2.6. <u>Պատվիրատուն իրավունք ունի.</u>

2.6.1. Դեպոզիտարիայից և Հաշվի օպերատորից պահանջել սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների ժամանակին, պատշաճ որակով և լրիվ ծավալով մատուցում:

3. ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պատվիրատուն սույն պայմանագրով մատուցված /մատուցվող/ Ծառայությունների համար վճարումները կատարում է Դեպոզիտարիայի «Սակագների մասին» գործող կանոններին և դրանց հիման վրա ընդունված Հաշվի օպերատորի սակագներին համապատասխան՝ դրանցով սահմանված կարգով ու ժամկետներում: Դեպոզիտարիայի «Սակագների մասին» կանոնները և Հաշվի օպերատորի սակագները զետեղված են Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի պաշտոնական ինտերնետային կայքերում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է վճարել տույժ՝ սույն պայմանագրի 3.1 կետով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում «ՀԱՅԱՍՏԱՆԻ Դեպոզիտարիայի «Սակագների մասին» գործող կանոններով և Հաշվի օպերատորի սակագներով սահմանված չափով և կարգով:

3.3. Հաշվի օպերատորը իրավունք ունի Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3.1 կետով սահմանված վճարումները ուշացնելու դեպքում վճարման ենթակա գումարները անակցեպտ կարգով գանձել Պատվիրատուի՝ Հաշվի օպերատորի մոտ գտնվող այլ դրամային, արտարժութային կամ դեպո հաշիվներից:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Պատվիրատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Դեպոզիտարիային տրամադրված տվյալների հավաստիության համար:

4.2. Դեպոզիտարիան պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման հետ կապված գործողությունների իրականացման հետևանքով Պատվիրատուի կրած վնասների համար, եթե նշված գործողությունները կատարվել են կանոններով սահմանված հանձնարարականների հիման վրա:

4.3. Դեպոզիտարիան պատասխանատվություն չի կրում Հաշվի օպերատորի միջնորդությամբ սույն Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման հետ կապված գործողությունների իրականացման հետևանքով Պատվիրատուի կրած վնասների համար:

4.4. Հաշվի օպերատորը պատասխանատվություն է կրում իր միջնորդությամբ սույն Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման հետ կապված՝ ոչ օրինաչափ

գործողությունների իրականացման հետևանքով Պատվիրատուին պատճառած վնասների համար:

4.5. Դեպոզիտարիան և Հաշվի օպերատորը պատասխանատվություն չեն կրում մինչև սույն պայմանագրի կնքումը Պատվիրատուի արժեթղթերի ռեեստրը վարող անձանց գործողությունների համար:

4.6. Եթե Դեպոզիտարիան չի կատարել կամ ոչ պատշաճ կերպով է կատարել սույն պայմանագրով ստանձնած իր պարտականությունները, ապա այն Պատվիրատուի առջև պատասխանատվություն է կրում նրան պատճառված վնասների համար, եթե դրանք առաջացել են Դեպոզիտարիայի մեղքով:

4.7. Սույն պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով և կարող է լուծվել միայն ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով:

6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Դեպոզիտարիան և Հաշվի օպերատորը պարտավոր են պահպանել սույն պայմանագրի համաձայն պահպանվող տեղեկատվության գաղտնիությունը և իրավունք ունեն այն տրամադրել երրորդ անձանց միայն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

6.2. Դեպոզիտարիան և Հաշվի օպերատորը, յուրաքանչյուրն իր կողմից կատարված գործողությունների համար, պատասխանատվություն են կրում նշված տեղեկատվության ոչ իրավաչափ օգտագործման կամ տարածման համար:

7. ԾԱՆՈՒՑԱԳՐԵՐ

7.1. Պայմանագրի կողմերի միջև, բացառությամբ սույն պայմանագրի 2.2.2. կետի, ծանուցումները և հաղորդագրությունները պետք է ձևակերպված լինեն գրավոր, ստորագրված իրավասու անձանց կողմից և կնքված ընկերության կնիքով (առկայության դեպքում), հանձնված անձնապես (ուղարկողի օրինակի վրա ստացողի կողմից ստանալու վերաբերյալ նշում կատարելով), ուղարկված ֆաքսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով (ստանալու վերաբերյալ ֆաքսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկողին տեղյակ պահելով) կամ ուղարկված «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն պայմանագրում փոփոխություններ կամ լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ՝ գրավոր ձևով:

8.2. Սույն պայմանագրի կողմը իրավունք ունի այլ անձի փոխանցել սույն պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտավորությունները միայն մյուս կողմի գրավոր համաձայնությամբ, եթե ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով այլ բան սահմանված չէ:

8.3. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների վերաբերյալ կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

8.4. Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով՝ երեք հավասարազոր օրինակից՝ մեկ օրինակ Դեպոզիտարիային, մեկը՝ Հաշվի օպերատորին, մյուսը՝ Պատվիրատուին:

8.5. Պայմանագրի կողմերի լիազորված անձանց տվյալները կցված են սույն պայմանագրին և հանդիսանում են դրա անբաժանելի մասը:

8.6. Պատվիրատուն հավաստում է, որ սույն պայմանագիրը կնքելուց առաջ ծանոթացել է Դեպոզիտարիայի կանոններին, Հաշվի օպերատորի կանոններին և անհրաժեշտ այլ իրավական ակտերին:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ ,ք. Երևան, Սասնա Ծռեր 2 շենք, թիվ 251 տարածք

Հեռ. +374-11-700100, +374-11-700200,

Էլ. հասցե. www.globalcredit.am

էլ. փոստ. info@globalcredit.am

Գործադիր տնօրեն՝

_____ Է. Իգիթարյան

ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1

Հեռ.՝ +374 60 615555

Էլ. հասցե՝ www.cda.am

էլ. փոստ՝ info@amx.am

Հաշվի օպերատոր

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Հասցե՝ ՀՀ ,ք. Երևան, Պուշկինի 19

ՀՀ ԿԲ Հ/Հ՝ 103002101519

Հեռ.՝ +374 10 59 15 27

Էլ. հասցե՝ www.araratbank@araratbank.am

էլ. փոստ՝ brokerage@aratbank.am

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Զարգացում մասնաճյուղի կառավարիչ՝

_____ Դ. Օհանյան

Կ.Տ

ՀԱՎԵԼՎԱԾ 8

ԻՆՆԵՐՈՐԴ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 101019/2

ք. Երևան **«10» հոկտեմբեր 2019թ**

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն /այսուհետ՝ Պատվիրատու/, ի դեմս գործադիր տնօրեն Լուիզա Իգրարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ն /այսուհետ՝ Դեպոզիտարիա/ ի դեմս գլխավոր տնօրեն Վահան Ստեփանյանի և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն, /այսուհետ՝ Հաշվի օպերատոր/, ի դեմս ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Զարգացում մասնաճյուղի կառավարիչ Դավիթ Օհանյանի, որը 30.01.2019թ.-ին տրված թիվ 791 լիազորագրի հիման վրա հանդես է գալիս ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ գործադիր տնօրեն Աշոտ Օսիպյանի անունից , որը, ղեկավարվելով 18.04.2017թ. կնքված «ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԴԱՄԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՇՆՈՐՀՄԱՆ» թիվ ՀԱ09/1 պայմանագրով և Դեպոզիտարիայի կանոններով, սույն պայմանագրի կնքման շրջանակներում գործում է նաև Դեպոզիտարիայի անունից, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Դեպոզիտարիան պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ և Հաշվի օպերատորի միջնորդությամբ Պատվիրատուին մատուցել ՀՀ օրենսդրությամբ և Դեպոզիտարիայի կանոններով նախատեսված ռեեստրի վարման ծառայությունները /այսուհետ՝ Ծառայություններ/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել մատուցվող Ծառայությունների գինը:

1.2. Սույն պայմանագրով մատուցվող բոլոր ծառայությունները Պատվիրատուին են մատուցվում Հաշվի օպերատորի միջնորդությամբ:

1.3. Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունները, ինչպես նաև սույն պայմանագրի առարկայի հետ կապված կողմերի իրավունքների և պարտականությունների ամբողջությունը սահմանվում և կարգավորվում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» թիվ 5/10 կանոնակարգով և դրանց հիման վրա ընդունված Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի կանոններով և կանոնակարգերով (այսուհետ՝ Իրավական ակտեր), որոնց Պատվիրատուն ծանոթ է:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ***<u>Դեպոզիտարիան պարտավոր է</u>***.

2.1.1. Ապահովել անհրաժեշտ տեխնիկական և իրավական պայմաններ, որպեսզի Ծառայությունները մատուցվեն պատշաճ որակով, և ամբողջ ծավալով՝ ՀՀ կենտրոնական բանկում գրանցված Դեպոզիտարիայի կանոններով սահմանված ժամկետներում և կարգով:

2.2. <u>Հաշվի օպերատորը պարտավոր է.</u>

2.2.1. Դեպոզիտարիայի ծառայությունները միջնորդավորել և Պատվիրատուին մատուցել պատշաճ որակով և ժամանակին՝ համաձայն ՀՀ նորմատիվ իրավական ակտերի, Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի կանոնների.

2.2.2. օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց և Դեպոզիտարիայի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո եռօրյա ժամկետում Պատվիրատուին տեղեկացնել Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի այն կանոնների մեջ կատարվող փոփոխությունների մասին, որոնք վերաբերվում են սույն պայմանագրով մատուցվող Ծառայությունների մատուցման ժամկետներին, կարգին և գնին: Սույն կետի իմաստով պատշաճ տեղեկացում է համարվում համապատասխան տեղեկությունները Հաշվի օպերատորի պաշտոնական ինտերնետային կայքերում զետեղելը:

2.3. <u>Պատվիրատուն պարտավոր է.</u>

2.3.1. Հայտնի դառնալու պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Հաշվի օպերատորի միջոցով Դեպոզիտարիային տեղեկացնել իր կողմից տրամադրված տվյալների (այդ թվում նաև՝ սույն Պայմանագրի 8.5 կետում նշված լիազորված անձանց վերաբերյալ տվյալների) հետ կապված անճշտությունների, դրանց փոփոխությունների, լրացումների մասին և տրամադրել դրանց վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր.

2.3.2. Հայտնի դառնալու պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Հաշվի օպերատորի միջոցով Դեպոզիտարիային տեղեկացնել Պատվիրատուի վերակազմակերպման, լուծարման կամ սնանկ ճանաչման գործընթացների սկսման, ինչպես նաև այդ գործընթացների ավարտի մասին.

2.3.3. մատուցված Ծառայությունների դիմաց վճարել սույն պայմանագրի 3.1-րդ կետում նշված կարգով և չափով:

2.4. <u>Դեպոզիտարիան իրավունք ունի.</u>

2.4.1. հրաժարվել սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների կատարումից, եթե Պատվիրատուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3-րդ կետի պահանջները:

2.4.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված, ինչպես նաև Դեպոզիտարիայի կողմից իրականացվող՝ արժեթղթերի ռեեստրի վարման գործունեությունը կարգավորող իրավական ակտերով սահմանված դեպքերում (այդ թվում՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված ռիսկերը բացառելու և օտարերկրյա պետությունների նկատմամբ հարկային պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվության համադրման նպատակով) և կարգով Պատվիրատուի վերաբերյալ տեղեկություններ տրամադրել Դեպոզիտարիայի կոնտրագենտներին և/կամ ՀՀ և օտարերկրյա իրավասու մարմիններին:

2.5. <u>Հաշվի օպերատորն իրավունք ունի.</u>

2.5.1. Հետևել Պատվիրատուի կողմից սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարմանը.

2.5.2. հրաժարվել սույն պայմանագրի 2.2.1 կետով սահմանված կարգով ծառայությունները մատուցելուց, եթե Պատվիրատուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3-րդ կետի պահանջները:

2.6. <u>Պատվիրատուն իրավունք ունի.</u>

2.6.1. Դեպոզիտարիայից և Հաշվի օպերատորից պահանջել սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների ժամանակին, պատշաճ որակով և լրիվ ծավալով մատուցում:

3. ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պատվիրատուն սույն պայմանագրով մատուցված /մատուցվող/ Ծառայությունների համար վճարումները կատարում է Դեպոզիտարիայի «Սակագների մասին» գործող կանոններին և դրանց հիման վրա ընդունված Հաշվի օպերատորի սակագներին համապատասխան՝ դրանցով սահմանված կարգով ու ժամկետներում: Դեպոզիտարիայի «Սակագների մասին» կանոնները և Հաշվի օպերատորի սակագները զետեղված են Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի պաշտոնական ինտերնետային կայքերում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է վճարել տույժ՝ սույն պայմանագրի 3.1 կետով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում «ՀԱՅԱՍՏԱՆԻ Դեպոզիտարիայի «Սակագների մասին» գործող կանոններով և Հաշվի օպերատորի սակագներով սահմանված չափով և կարգով:

3.3. Հաշվի օպերատորը իրավունք ունի Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3.1 կետով սահմանված վճարումները ուշացնելու դեպքում վճարման ենթակա գումարները անակցեպտ կարգով գանձել Պատվիրատուի՝ Հաշվի օպերատորի մոտ գտնվող այլ դրամային, արտարժութային կամ դեպո հաշիվներից:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Պատվիրատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Դեպոզիտարիային տրամադրված տվյալների հավաստիության համար:

4.2. Դեպոզիտարիան պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման հետ կապված գործողությունների իրականացման հետևանքով Պատվիրատուի կրած վնասների համար, եթե նշված գործողությունները կատարվել են կանոններով սահմանված հանձնարարականների հիման վրա:

4.3. Դեպոզիտարիան պատասխանատվություն չի կրում Հաշվի օպերատորի միջնորդությամբ սույն Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման հետ կապված գործողությունների իրականացման հետևանքով Պատվիրատուի կրած վնասների համար:

4.4. Հաշվի օպերատորը պատասխանատվություն է կրում իր միջնորդությամբ սույն Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման հետ կապված՝ ոչ օրինաչափ գործողությունների իրականացման հետևանքով Պատվիրատուին պատճառած վնասների համար:

4.5. Դեպոզիտարիան և Հաշվի օպերատորը պատասխանատվություն չեն կրում մինչև սույն պայմանագրի կնքումը Պատվիրատուի արժեթղթերի ռեեստրը վարող անձանց գործողությունների համար:

4.6. Եթե Դեպոզիտարիան չի կատարել կամ ոչ պատշաճ կերպով է կատարել սույն պայմանագրով ստանձնած իր պարտականությունները, ապա այն Պատվիրատուի առջև

պատասխանատվություն է կրում նրան պատճառված վնասների համար, եթե դրանք առաջացել են Դեպոզիտարիայի մեղքով:

4.7. Սույն պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով և կարող է լուծվել միայն ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով:

6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Դեպոզիտարիան և Հաշվի օպերատորը պարտավոր են պահպանել սույն պայմանագրի համաձայն պահպանվող տեղեկատվության գաղտնիությունը և իրավունք ունեն այն տրամադրել երրորդ անձանց միայն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

6.2. Դեպոզիտարիան և Հաշվի օպերատորը, յուրաքանչյուրն իր կողմից կատարված գործողությունների համար, պատասխանատվություն են կրում նշված տեղեկատվության ոչ իրավաչափ օգտագործման կամ տարածման համար:

7. ԾԱՆՈՒՑԱԳՐԵՐ

7.1. Պայմանագրի կողմերի միջև, բացառությամբ սույն պայմանագրի 2.2.2. կետի, ծանուցումները և հաղորդագրությունները պետք է ձևակերպված լինեն գրավոր, ստորագրված իրավասու անձանց կողմից և կնքված ընկերության կնիքով (առկայության դեպքում), հանձնված անձնապես (ուղարկողի օրինակի վրա ստացողի կողմից ստանալու վերաբերյալ նշում կատարելով), ուղարկված ֆաքսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով (ստանալու վերաբերյալ ֆաքսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկողին տեղյակ պահելով) կամ ուղարկված «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն պայմանագրում փոփոխություններ կամ լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ՝ գրավոր ձևով:

8.2. Սույն պայմանագրի կողմը իրավունք ունի այլ անձի փոխանցել սույն պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտավորությունները միայն մյուս կողմի գրավոր համաձայնությամբ, եթե ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով այլ բան սահմանված չէ:

8.3. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների վերաբերյալ կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

8.4. Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով՝ երեք հավասարազոր օրինակից՝ մեկ օրինակ Դեպոզիտարիային, մեկը՝ Հաշվի օպերատորին, մյուսը՝ Պատվիրատուին:

8.5. Պայմանագրի կողմերի լիազորված անձանց տվյալները կցված են սույն պայմանագրին և հանդիսանում են դրա անբաժանելի մասը:

8.6. Պատվիրատուն հավաստում է, որ սույն պայմանագիրը կնքելուց առաջ ծանոթացել է Դեպոզիտարիայի կանոններին, Հաշվի օպերատորի կանոններին և անհրաժեշտ այլ իրավական ակտերին:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ ,ք. Երևան, Սասնա Ծռեր 2 շենք, թիվ 251 տարածք

Հեռ. +374-11-700100, +374-11-700200,

Էլ. հասցե. www.globalcredit.am

էլ. փոստ. info@globalcredit.am

Գործադիր տնօրեն՝

Լ. Իգիթարյան

ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1

Հեռ.՝ +374 60 615555

Էլ. հասցե՝ www.cda.am

էլ. փոստ՝ info@amx.am

Հաշվի օպերատոր

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Հասցե՝ ՀՀ ,ք. Երևան, Պուշկինի 19

ՀՀ ԿԲ Հ/Հ՝ 103002101519

Հեռ.՝ +374 10 59 15 27

Էլ. հասցե՝ www.araratbank@araratbank.am

էլ. փոստ՝ brokerage@aratbank.am

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Զարգացում մասնաճյուղի կառավարիչ՝

Դ. Օհանյան

Կ.Տ

ՀԱՎԵԼՎԱԾ 9

Տպված է «ՀԾ-Բանկ 4.0» համակարգով - "09" հոկտեմբերի 2019թ.

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ N 000184 [626007500]
PAYMENT ORDER

ՊԿ\ID 80
Ամսաթիվ\Date 09/10/19 11:06

Դեբետ\Debit	Կրեդիտ\Credit	Գումար\Amount	
1510007874330100	900005016119	AMD	50,000.00

Վճարող\Remitter
ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ
Վճարողի բանկ\Remitter's Bank
Արարատ Բանկ
Վճարողի ՀՎՀՀ\Remitter's Tax Code **2301013781**

Հաիառու\Beneficiary
Կենտրոնական Բանկ
Հաիառուի բանկ\Beneficiary's Bank
Կենտրոնական գանձապետարան

Գումարը բառերով\Amount in Words
Հիսուն հազար դրամ
Նպատակ\Details
Արժեթղթերի ազդագրերի գրանցման համար

Գլխավոր հաշվապահ Chief-Accountant
Գործադիր տնօրեն Executive manager
Կ.Տ. ST.

ՀԱՇԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՕՐԴԵՐ\ACCOUNTING ENTRY N 000184 [626007500]

Դեբետ\Debit		Կրեդիտ\Credit		Արժ	Գումար\Amount Նիշ
3921000	37340040700	1021000	00001510100	AMD	50,000.00